

19692

891.99-82

P-98

Printed in Turkey
ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

Ե Ր Փ Ե Ր

ՏԱՂԵՐ, ԵՂԵՐԵՐԳԵՐ, ՍԻՐԱՎԷՊԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ

ԴԱՍԲԱՆԱԿԱՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒՆՆԵՐ

معارف نظارت جلیله سنه ۱۹۹ نومبر ولی رخصتنامه سیله طبع اولمشدر



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1892

891.542-8

Թ-92

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

391-99-82

10-98


Ե Ր Գ Ե Ր

ՏԱՂԵՐ, ԵՂԵՐԵՐԳԵՐ, ՍԻՐԱՎԷՊԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ
ԴԱՄԲԱՆԱԿԱՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

معارف نظارت جلیله سنک ۱۹۹۹ نومردی رخصتنامه سیله طبع اولمشدر

59



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
1899

2446



9321
39

9 0 0 3



Չ Օ Ն

ՆՈՒՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՈՐԴԵԿԱՅ ԻՄՈՅ ՍԻՐԵՅԵԼՈՅ

Մ Ա Ր Ե Մ Ա Յ

Թառամեղոյ ի ծաղիկ հասակի երից ամաց

Ի 26 Յուլիսի 1889 ամի

Ե Ի


ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱԶԲԵՐՈՒՆԻՈՅ

Թառամեղոյ ի միամեայ զեղափրիք հասակին

Ի 1 Օգոստոս 1889 ամի



ՄԱՐԻԱՄ • ՅԱՐՈՒԹԻՒՆ



Ե Ղ Ե Ր Ք

Ա.

Մարեցա՛ն, Տէ՛ր, որպէս նանանչի լուսափայլ.
Նոցա մի ժպիս վանէ՛ր զամեն սուգ, մրռալլ.
Լո՛յս, նառագա՛յր ողղէր նոցա սուրբ նակաս.
Ի վայրկենի՛ շիջաւ ամեն բոց - հրբաս.
Աշկունքդ, աչերդ, ի՛նչ Յարութիւն, Մարիա՛մ,
Ո՞չ եւս, ո՞չ եւս պիտի բացուին անբառամ:

Պյտերդ՝ վարդ, շուրքերդ՝ մեխակ բուրէին.
Դէմքդ կաթէր զանմեղուքի՛ն շուշանին.
Ա՛ն, ա՛ն, հագիւ ծաղկի չափ կեանք ունեցաւ.
Անկա՛յք, որդեա՛կք, զերդ նեհանար զոյգ սասրակք.
Եւ այժմ այնքան անմեղ խաղերդ միայն
Ո՛վ դառն աղէտ, մեզ յո՞ւշ քողով առ յապայն:

Ք ածիւտն ահա՛, որդեա՛կք, աչել դեղձանիկ,
Ըզփաղցր անուանող հընչէ՛ յանոյշ դալալիկ.
Ա՛ն, չէ՞ք զարթնուր, ծաւի աչերդ չէ՞ք բանար.
Հառաչանացս յեփն դարձուած մ՛ալ չէ՞ք տար.
Ա՛յսպէս, ո՛վ իմ հոգւոյս հասորք սիրական.
Այսպէս դուք յո՞ւն պիտի մընայք յաւիտեան:

Ի զո՛ւր, ի զո՛ւր ուրեմն, հրեշտակի իմ փաղցրիկ,
 Կողկողագին հեծեն հայրիկդ ու մայրիկ .
 Պիտի չբացուի՞ այդ ձեռ լեզուակի սիրունակ՝
 Մըմընջելու ըզմանկային ձեռ նուագ .
 Եւ մեք՝ բռնա՛ն ծընողիդ՝ ըզձեզ յուսաբեկ՝
 Արսասուայեղ սըգամք, կոծե՛մք ո՛հ ցերեքէ։...

Պ՛հ, ի՛մա որդեակի, այդքա՛ն զերկին սիրէիք .
 Մինչ յս՛նո բնաւին առ սուգ ծնողացդ յուսալիք՝
 Ո՛չ իսկ բառ մի, ո՛չ իսկ ժըպիտ մ՛արձակած
 Լուռ մունջ մեկնիք բողո՛ւմ ըզմեզ յամբաւ լաց .
 Հրեշտականման գէթ ժըպեղո՛ւմ միանգամ .
 Ո՛հ նընջէիք դուք, Յարութի՛ւն, Մարիա՛մ.

Մանկիկ հրեշտակի, լուսրի՛նդ ուրեմն սառնորակ՝
 Մօր ձեռ եւ հօր քողով յետին յիշատակ .
 Այս, ի՛նչ կըսակ, ի՛նչ յիշատակ, Աստուած իմ,
 Ա՛հ, այնքան սէր անծիլ քաղուի՞ ի շիրիմ...
 Բայց ի՛նչպէս, ա՛խ, ի՛նչպէս հայրիկդ ու մայրիկ,
 Ըզձեզ մոռնամք, ո՛ւմ իմ քոչնեակի գեղեցիկ։

Բ.

Թո՛ւյլ տուք ինձ, քո՛ւյլ տուք, Յարութի՛ւն, Մարիա՛մ,
 Զերթ ուխտաւոր ծունր իջնեմ եւ այս անգամ,
 Մեղո՛յժ աչացդ ճամ ըզհամբո՛յր իմ ջերմին,
 Մինչդեռ ծամ կայ՝ կարօ՛սս առնում արագին։...

Թո՛ւյլ տուք հառաչքս խառնեմ փայլի՛ն այն ոսկեայ՝
 Ուր Զեր հոգի լիւրեղատի՛ղ ցոլանայ .
 Ընկնիմ առաջդ, բռնեմ աչքես լոյս հակսիդ՝
 Ուր կարդայի մերթ ապագայ՝ մը վնիս։

Թո՛ւյլ տուք, որդեա՛կի, զերդ չարաբաստ սարագիր
 Վըսօֆ խամբեալ լանջացքս վրայ ցաւալի,
 Գրկեմ պաղած մարմինսդ՝ քերեւս հայրական՝
 Շունչովս բացուին քառամ աչքերդ այդ բուրեան։

Թո՛ւյլ տուք ինձ, ա՛հ, զերթ սիրահար կարոզի
 Զեզ մօտենամ հառաչանօ՛ք մեղմակի .
 Դեռափրքիք կամ շուրթերուդ ի զընին,
 Ուր կէս օրին դեռ շողայր կայ՝ կենսածին։

Թո՛ւյլ տուք, Որդեա՛կի, մահու տօգոյն նրազն, ա՛հ
 Իրեւ օրհաս գլխոցդ վերեւ պըլպըլայ .
 Համբոյրներովս զամբիծ քուշերդ ողորեմ,
 Ծաղկեփունջեր հակասուցդ վրայ զետեղեմ։

Բայց դուք ձայն չէ՛ք տար, Յարութի՛ւն, Մարիա՛մ,
 Աչերդ, քարերդ սեղմեմ, դուք կայք միշտ քառամ .
 Աչերդ, ո՛հ, խուփ, եւ անխօս է յար լեզուդ՝
 Վա՛խ, ա՛յս էր, ա՛ս վախճանն անո՛յժ խաղերուդ։...

Գ.

Յանկարձ այսպէս քուայք յասեացս, ուր կան լոկ ցաւեր .
 Ժըպիտներովդ չե՛ւ պըսակած մեր կեանքն աւեր .
 Թռա՛յք, յարսասուս քողով մեզ՝ ծնողսդ վըսակիր՝
 Որ խենթի պէս պաշտեն ձեռացդ հպած ամեն իր։

Պ՛հ, ի՛նչ փաղցր էր օրն, երբ դիմօք ուրախալի՛ր՝
 Տարեմեկէն յեղիսան քո՛ւնք՝ սիրո՛ւմ արբէի .
 Ըզձեզ տեսողք բիւր երանիս մեզ կարդային,
 Ա՛յնքան գրաւիչ էր դէմքդ լ՛աչկունքդ այդ արփային։

Ք ախճանք, պարեր փայլ չ՛ունէին բնաւ մեզ համար,
 Յորմէ հետէ քեւածէիք դուք ի յաշխարհ։

Ժպսօֆդ ամեն ցրուէր ամպ, մռայլ, կսկիծ եւ սուգ .
Գոհ էինք ձեօք, ո՛րչափ իսկ մեր բաղդն էր անշուք :

Ո՛հ, Յարութիւն, Մարիա՛մ, աստակք զոյգ երկոքին,
Ո՛ր ձեր խաղեր, ո՛ր զգուանցներդ այն կարողին .
Ուխտե՛ր էիք, Որդեա՛կք, այնքան խաղ, ծիծաղներ՝
Հայրենեաց մէջ յանձնել զամեն հողո՛յ աննուէր : ...

Դ՛ իւսապայծառ պսակք պակսէին ձեզ անդամօր
Ուր Ձեր տեսնեմ, ա՛հ, խենք կ'ըլլար մամդ ամեն օր .
Այդ լոյս նակասք, խաւքազեղ այդ գանգուրներ
Ձե՛ւ պըսակուած վարդեփունջովք շիրիմ գրկել : ...

Քազ ու պսակ զոր մամն հիւսէր, ա՛հ, ձեր գլխուն՝
Կախեալ գորմոց՝ արտասուքով կան ողորունք .
Եւ մեք, աւա՛ղ, յէս յանձնելոյ զՁեզ սե՛ւ հողին՝
Ի տար աշխարհ մեկնիմք անդ Ձե՛զ լալ դառնագին :

Բ՛նջ այլանդակ այս բաղդ, ո՛վ Տէր, գէթ մի եօթնեակ՝
Ա՛հ չեւ շիրիմսն ի ցօղ քրջած մեկնի՛լ արագ ...
Յէս քաղելոյ մի զոյգ աստակքն այն փառելի՝
Կարօ՛ճ քաշել շիրմացն յարտուք, ա՛հ, քրջելի ... :

Դ՛ արդ որբացեալ ի Ձեց, Որդեա՛կք իմ դեռաբոյս,
Լա՛մք, կողկողամք ձեռն ի ձեօքի, տխու՛ր, անյո՛յս .
Կեա՛նք՝ ծո՛վ լալեաց, եւ արեւ մուր է մեզ համար .
Ձեր յիշատակն, ա՛հ, ա՛հ, քաւ մեզ խելագար, ...

Նըմանալի՛ւն Յովբայ, ընկնեա՛լ արդ վրէժաց չակ՝
Դառն արտասուս ձօնեմք առ Ձեր սուրբ յիշատակ .
Եւ քէ ժպտի՛ բաղդն եւ ապրի՛ այս իմ մասեան՝
Թող «Յարութիւն, Մարիա՛մ» կրկնէ՛ մինչ յաւիտեան :

1891 Դեկտ. 1 ի Մէլիտինէ

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

Ն Ա Բ Ա Գ Ա Ն



Որիւնոտ սիրտով կ'իջնեմ գրական ասպարէզ .
Ա՛յնքան արհամարհոտ սառն դէմքերու պատահած
Եմ յընթացս վարժապետական կեանքիս, որ այժմէն
Իսկ կ'սկսիմ շուարիլ եւ մտահոգութեանց մէջ ա-
յեծփիլ սոյն անդրանիկ երկիս համար :

Արդեօք ներողամիտ աչօք պիտի նկատուի՞ն սոյն
առաջին երկունք մի գաւառացի երիտասարդ խեղճ
վարժապետի, որ զինքը նուիրել ուխտեր է գրական
կեանքի : Չ'գիտեմ : Դիտեմ սակայն թէ՛ զայս դոյզն
աշխատասիրութիւնն ի լոյս հանելու համար նիւթա-
կան այնքան դժուարութեանց բաղխեցայ, լքուցիչ
այնքան զոհողութեանց եմթարկուեցայ, որ չեմ կա-
րող ծիրանի յոյսերով սնանիլ :

Մինչեւ ցարդ ստացած դառն փորձառութեամբս՝
կ'եզրակացնեմ թէ՛ այն, որ ի գաւառս վարժապե-
տական կամ գրական կեանքն ընդգրկած է,
պարտի դատապարտեալ մը նկատել զինք : Գաւա-
ռացի հայ հարուստն — անշուշտ կան յարգելի բա-
ցառութիւնք — այնքան արհամարհանք ունի առ
գրագէտն ու առ վարժապետն, որ պարզապէս զայ-
նըս ապուշներու կարգն կը դասէ :

Հարուստն՝ ի գաւառս ընդհանրապէս՝ քսակին բերանը Գորդեան հանգոյց մ'ուէնի գողցես: Զայս հանգոյց ո՛չ ոք կարէ քակել, ո՛չ իսկ Ալէքսանդրի սո՛ւրն անփշրելի: Գրականութեան համար դրամ խնդրել ի նմանէ եւ ստանալ՝ պէտք է հրաշք մը համարի: Իզմիր այս տեսակէտով անշուշտ չկրնար գաւառ նկատուիլ: Գաւառացի հայ մեծատունէն գրական գործոյ մը յաջողութեան համար աջակցութիւն սպասելն՝ անկարելոյն ձեռնարկել է:

Ի զո՛ւր խեղճ գրագէտն ամէն ճիգ կ'ընէր ազգասէր, կրթասէր, բարերար համբաւեալ մեծահարուստ հայ դրամատէրի մը ուշն հրաւիրել իւր այնքան խանդով, այնքան հովերով գրած մի գործոյն տպագրութեան Մեկենասն լինել, կամ գէթ քաջալերել զայն. մի հեգնական ժպիտն այդ անզոյգ ազգասիրին բա՛ւ է ամեն խօսք լռեցնել, ամեն յոյս մեռցնել, ամեն պատրանք փարատել: Այսպէ՛ս է, աւա՛ղ, ի գաւառս այդ կրթասէրն, այդ բարեսէրն, այդ մեծ ազգասէրն, որ սակայն միշտ սիրայօժար նուիրած է զիւր ոսկին ի յագուրդ այնպիսի քմահաճոյից, որք հանգամանք ունին որպէս մի նոր կրեսոս փայլեցնելոյ զայն յաջս հասարակաց,

Ուրախական երեւոյթ մ'է միւս կողմէն տեսնել մատաղ երիտասարդներ՝ համեստ դրից տէր՝ որք չ'են վարանիր իրենց սիրտն ու հոգին ընծայել այս օրինակ գործոց: Այսպիսի ազնիւ երիտասարդք սրբունակ գործոց: Այսպիսի ազնիւ երիտասարդք սրբունակ գործոց: Այսպիսի ազնիւ երիտասարդք սրբունակ գործոց: Այսպիսի ազնիւ երիտասարդք սրբունակ գործոց:

Կ'արժէ ուրեմն յիշատակել աստանօր տեարք Յ. Նահապետեան, Ս. Զէպիշեան եւ այլք ազնիւ սատարողք, որք գործոյս յաջողութեան սկզբնապատճառքն են եղած: Այսպիսի գործօն երիտասարդք ապրի՛ն միշտ՝ ի պատիւ ազգ. երիտասարդութեան եւ ի փառս այն ազգին, որում կ'պատկանին:

Այսպիսի համակրական ցոյցերու առջեւ ի բաց կ'վանեմ ամեն տիտէր նախագագցում, եւ սիրտ կ'առնում մտածելով թէ՛ սոյն դժուարին ձեռնարկիս մէջ պիտի քաջալերուիմ եթէ ո՛չ նիւթապէս գէթ բարոյապէս եւ թէ՛ համակիր դէմքեր գէթ պիտի հաճին ոգեւորել զիս՝ ինչպէս ոգեւորած են ամեն նոր գրիչ: Այժմէ՛ն իսկ՝ լի՛ք քաղցր երազովք կ'փորձուիմ տեսնել ազգ. գրականութեան չքնաղ պարծանքներն:

Բազմահմուտն Մամուրեան, որ կ'ժպտի հէք գրչակիս:

Ազնուախոհն Զիլինկիրեան որ կ'համակրի գործոյս:

Բոցեռանդն Պէրպէրեան, որ կ'խայտայ:

Մեղամաղծիկն Տէմիրճիպաշեան, որ կ'քննադատէ:

Կորովախօսն Հրանտ Ասատուր, որ կ'խորհի բան մը գրել,

Փափկալեզուն Հրանդ, որ կ'գուրգուրայ խանդալի:


Քաղցրաժպիտն Խապայեանց վերջապէս, իմ սի-

րեցեալ դաստիարակս որ ուրախական արտասուօք կ'որդոլէ զայս մատենիկ :

Այս'քան սիրեցեալ, այսքան համակիր դէմքերով շրջապատեալ՝ կ'որդորուիմ ընծայել Ազգիս զայս դոյզն երկ' նմոյշ մը այն բազմամիւլ քերթուածոց, զորս վարժապետական կեանքիս պարապոյ ժամերուն մէջ գրած եմ, վստահ լիապէս ազգիս քաջալերութեան :

1891 Դեկ. 13. Ի Մելիսիներ.

ՄԿՐՏԻՉ Ա ԹՈՒՐԵԱՆ



Տ Ա Ղ Ե Ր

Ի ԴԷՄՍ ՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ

Մինչ հոգք ճնշեն զիս, ո՛վ Աստուած իմ զըթած,
Եւ թըռիչներ կասին մըտացս ապստամբ,
Ես՝ իմ սըրտի հոգւոյ համայն զօրութեամբ,
Քո սրբավայր սրանամ ձեպով, ո՛վ Աստուած.
Եւ նուաղեալ մտացս անդէն՝
Խնդրեմ իմաստս հոգեղէն :

Հաւատա՛մ, Տէ՛ր, ցօղով մարես բոց հնոցի,
Թռչնիկն յա՛նկարծ առիւծ առնես՝ թէ կամիս.
Ալպեանն՝ բըլուր դառնայ և ծով՝ վեհ Մասիս.
Բա՛ւ է, բաւ թէ գոչես միայն. — Եղիցի՛. —
Իսկ ես ի տե՛ս քոց փառաց,
Գոչեմ. զըթա՛ ինձ, Աստուա՛ծ : ...

Ո՛վ, քանի՛ վեհ են աքանչելի՛քդ, Եհովա՛յ,
Յօ՛ղըն՝ կայծակ, կայծակն՝ ի ծով փոխարկես.

Ի Բաբելոն Դու լեզուներ խառնակես,
Հրեղէն բոցեր շնորհես՝ յափուռնս Սելովայ.
Իսկ մարդ՝ միշտ մնայ զմայլուն,
Հոս՝ զերդ անբան, հոն՝ զուարթուն:

Անքըննի՛ն է խմաստութիւնդ, անքըննի՛ն,
Ես՝ ահաբեկ՝ դողով ի ծունկսդ անկանիմ.
Դարձո՛ւ, գըթա՛ծ, դարձո՛ւ զակնարկդ ի վրայ իմ.
Եւ թող անմահ բուրմունքդ զինե՛ւ զեղանին,
Եւ շնորհացդ անմահ շունչ՝
Ինձ տայ զԵդեմն հոգեշունչ:

Մանո՛ւկ Յիսուս, ո՛հ, ես քանի՛ առ Քո Սաչ
Ուղերձեցի սըրտի՛ս կարօս, իղձ և սուգ.
Քանի՛ցս ի խինդ փոխարկեցիր զիմ արտասուք.
Եւ տրտմազին խոկերուս մէջ զիմ հառաչ՝
Քանի՛ցս անգամ հեղ Փրկիչիդ
Պըսակեցի՛ր ի ժըպիտ:...

Դո՛ւ ինձ, Փրկիչ, պաշտպան եղեր ամեն տեղ,
Երբ գըրիչն իմ կրճիմներու ընդհարի,
Շընչես հոգիդ սուրբ և խմաստք՝ սուրբ, բարի,
Ուղիսինահոս զերդ վտակ բղխես շնորհագեղ.
Եւ ընդ մըտացս անապատ՝
Գընան աղբերք յորդառատ:

Ո՛վ Հայր Աստուած, անե՛ղ Որդի, սուրբ Հոգեակ,
Անփորձ հասակս միշտ կարօտ է Ձեր շնորհաց.
Երբ վըտանդներ ոսոխն հանէ՛ իմ առաջ՝
Մուր ու ծուխով օծէ զիմ հո՛ւսի յիշատակ,
Դո՛ւք, փառակի՛ցք անբաժան,
Եղէ՛ք ինձ վիգ և վահան:

Ամենիմաստ շնորհօքդ փայլի՛ իմ ճակատ,
Եւ փթթի՛ յար միտս անմահից զինչ եդեսմ.
Թո՛ղ գգուեն զիս սուրբ զգացմունք, խո՛հք վըսեմ,
Եւ արբենամ իղձերով ջինջ անարատ,
Եւ միշտ օրհնեմ կաթողի,
Հայր, Որդի և Սուրբ Հոգի: (1)



Ե Ր Գ

Ի ՄԱՆՈՒԿՆ ԵՐԿԱՄԵՆՑ

Յայգուն դեռ, ո՛վ յուշ անմոռաց,
Ժըմիտս ածեալ ի քոց շրթանց,
Քաղցր ի մընչիւնս թւատարած,
Կաթն առնուիր մօրդ ի ստեանց:

Իղձք իմ քանի՛օն առ քեզ, մանկիկ,
Սաւառնէին սըրտաբախիկ.

Երբ քո գլխիկ՝ վերայ բարձի,
Ըզըն՝ ննջէր յօրորցի.

Քանի՛ս յայնժամ համբոյրս հեղիկ
Տայի շրթանցդ շընչածըփիկ.

Այդ քո դոհար աչկունք վըճիտ,
Այդ քո բըբունք դեռափըթիթ.

Որ ի ջերմին մօրդ ի ծոցիկ,
Մերթ շարժէին, ո՛հ, բացխըփիկ.

(1) Սոյն տաղ տպեալ է Բիւրակնի Դ. տարւոյ 13/14 Յունվար
ամսաթուոյն մէջ:

Ո՞չ եւս, ո՞չ եւս բացցին ի լոյս,

Ո՞ սիրասուն ծաղիկ հոգւոյս:

Է՞ր վաղ այսքան թողեր, մանկի՛կ,

Ըզմօրդ գիրկ սիրատարիկ.

Այսքան նրբի՛ն էր թել կենացդ,

Սակա՞ւ այսքան սէր գգուանացդ.

Ես երանե՛մ դքե՛զ, Աստղի՛կ,

Դու սուրբ սիրոյ նախկին ծաղիկ.

Որ չեւ զմեղաց քաղեալ բաժակ,

Յադին դըրախտ թըռեար արագ.

Այո՛, թըռեար դերդ թիթեռնիկ,

Կոխեցեր զկեանս այս վաղանցիկ.

Անդ զինչ գարնան մի ծիլ փափուկ,

Ի կեանս փթթել մըշտամանուկ.

Եւ տիպ զուարթնոց ձիւնակերպիկ՝

Բըջե՛լ ի բիւր դեռաբացիկ,

Ե՛րթ, ո՛վ մանկիկ, անմե՛ղ հրեշտակ,

Եւ ես՝ աղու զինչ աղանեակ՝

Առ քեզ թռուցից զիմ դայլայլիկ,

Տատրակն՝ ի լուր՝ տխրազգեցիկ՝

Ի ցուրտ շիրմիդ վերայ բազմած՝

Աչքըն՝ տըխուր, սիրաըն՝ ցաւած,

Աւանդեսցէ՛ արձագանգաց

Զողորմ հառաչս հեծեծ անաց: (1)

Մայիս 1879

(1) Տպուած է 1884 տարւոյ Օգոստ. ամսոյ Բիւրակնի մէջ:

Ք Ա Ր Ո Ւ Ն

Ծաղկահո՛տ գարուն

Մինչ կ'այցէ զընութիւն

Ամա՛յք իսկ ծարւած՝

Ծիծաղին, Աստուա՛ծ:

Անմահ բուրումներ

Ծածկեն ծով, եթեր.

Այն ի՛նչ զուարթութիւն

Ծաւալես, գարո՛ւն:

Հոս՝ մեղմ մանուշակ՝

Դիմօքն անուշակ,

Աչե՛րն առնու վար

Զինչ կո՛յս սիրաւառ:

Հոն՝ ամբիծ, խարտէչ,

Շուշա՛ն գեղադէչ,

Շողա՛յ նազելի՝

Որպէս թագուհի:

Վարդք՝ կարմիր-ձերմակ՝

Զերդ քորք երկուորեակ՝

Համբոյրո՛վք հեշտին,

Յիրեար փաթտուին:

Մեխակ սիրաբոյր՝

Շրթու՛նքն ի համբոյր՝

Երկնի՛ցն իսկ ուրհեաց,

Շարժէ զնախանձ:

Մին՝ համեստութեան

Տիպա՛ր աննըման.

Միւսն անմեղութեան՝

Խընկասփի՛ւռ խորան:

Եւ թռչո՛ւնք թեթեւ
 Ճախրեա՛լ թեւ ի թեւ՝
 Ծաղկանց խանդն ու խինդ ,
 Տօնե՛ն թինդ ի թինդ :

Քնքո՛յշ դեղձանիկ՝
 Ընտրէ՛ դուռնանիկ .
 Բայց թառի՛ սոխակ՝
 Ի վարդ կարմրորակ :

Եւ թռչո՛ւնք ամեն՝
 Արբշիւ նուագեն .
 Քընարն խակ հնչուն՝
 Այնքան չէ՛ դրաւուն :

Փափկիկըն Փլո՛րայ՝
 Միշտ կը թըրթըռայ .
 Որպէս սիւք մ՛արագ՝
 Շնչեա՛լ ի վարագ :

Ո՛չ մի տխրութիւն՝
 Չունի՛ սիրտ մարդուն .
 Գոգ թռչունք, ծառեր՝
 Լեզու են առեր :

Ընդ բնաւս եղեմեան՝
 Հրապո՛յրք ի տես դան .
 Ընդ բնաւս եռանդուն՝
 Ծաղկի՛ մանկութիւն :

Այլ զի՛ անկայուն ,
 Է աշխարհս համբուն .
 Կ'անցնի՛ գեղն , աւա՛ղ ,
 Իբր երա՛ղ չըքնաղ :

Իցի՛ւ կեանքդ պերճ՝
 Չունենար բնաւ վերջ .
 Այլ ընդ բնաւս եւ դուն՝
 Կ'անցնիս , ո՛ դարուն :

1888 Ապրիլ 4.



Ո Ղ Ջ Ո Յ Ն

Ա Ռ Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Ողջո՛յն քեզ , ողջո՛յն ,
 Նո՛ր օր նոր տարւոյն .
 Իցի՛ւ քո ծիծաղ , ժպիտն անդրանիկ ,
 Առնէ՛ր՝ ու տանէր սրտէս ամէն միշտ .
 Բայց բաղդէ՞ս արդեօք , քնքոյշն խակ ծաղիկ՝
 Գեղովն ու հոտով կը խոցէ՛ զիմ սիրտ .
 Ձայն մը միշտ լըսեմ՝ լո՛ւռ , խորհրդաւոր՝
 « Նո՛ր տարւոյն հետ քեզ կ'սպասեն ցա՛ւք նոր ,
 Իսկ դու յուսա՛ միշտ , թշուառ պատանի .
 Բաւ չէ՞ քեզ համար յո՛յս մը գեղանի » :

Ողջո՛յն քեզ , ողջո՛յն ,
 Արե՛ւ նոր տարւոյն .
 Յաճախ կը կրկնէր մամիկս քեզ համար՝
 Թէ դու կը սիրես լո՛յս , յո՛յս , խի՛նդ համակ .
 Թէ մինչ կ'ողբես ձիւն շողերով պայծառ՝
 Յանկա՛րծ հոն բացուի գարո՛ւն կենսունակ .
 Եւ այս հաւատքով ես դո՛հ եւ ուրախ ,

Քե՛զ կ'սպասէի բոլոր տարին ա՛խ .
Բայց դու միշտ եկար ու անցա՛ր անհոգ ,
Միշտ նո՛յն թողլով զիս անտէ՛ր ու անոք . . . :

Ողջո՛յն քեզ , ողջո՛յն ,
Լուսի՛ն նոր տարւոյն .

Երբ նայիմ տժգոյն քո դէմքն , ո՛վ լուսին ,
Ուր թախծութիւն , խոհք անձայն կը սահին .
Կարծեմ հո՛ն պատէ զիս վե՛հ մի սարսուռ ,
Որ լընու հոգիս և ա՛նդ թաղուի լուռ .
Ա՛հ , այն վե՛հ սարսուռ , այն սուրբ արհաւիր՝
Ինձ այնքան կ'աղղէ յոյզե՛ր սխրալիւր ,
Մինչ կ'զգամ թէ զիս գգուե՛ն սուրբ հաճոյք .
Օ՛չ թէ չ'անցնէ՛ր բնաւ այն սիրոյ խաբոյկ . . . :

Ողջո՛յն քեզ , ողջո՛յն ,
Հաճո՛յք նոր տարւոյն .

Ես ամենուրեք ահա՛ կը տեսնամ
Անմեղ մանկիկներ՝ երա՛մբ հրեշտակաց ,
Խնդա՛ն ու ժպտին , կայտուե՛ն խուռներամ .
Եւ աղբի՛ւրն ա՛յդքան խնդից , ո՛վ Աստուած :
Կա՛մ խաղալի՛կ մ'է և կամ մի պէպէք .
Բայց թէ վիշտն ի՛նչ է , չեն ճանչեր երբէք .
Անոնց կեանք կաղմեն խաղե՛ր եռանդուն .
Ո՞վ քեզ երանի չժտար , մանկութիւն . . . :

Ողջո՛յն քեզ , ողջո՛յն ,
Մանկութիւն տարւոյն .

Ա՛հ , ե՛ւ ես երբեմն էի մի մանուկ ,
Կը վայելէի՛ հաճոյք , սէ՛ր միայն .
Ունէի՛ և ես մայր , որոյ յիշուի՛
Սըրտին ե՛ս էի միակ առարկայն .

Բոլորեցա՛ն շատ ամաց անիւներ ,
Մայր , քոյր զո՛հ դացին բաղդին աննուէր .
Եւ հիմակ մնացած անո՛ք , անտերունչ՝
Հեծեմ ցանգ . — Ե՛րբ , տէ՛ր , հատնի՛ հուսկ իմ
շունչ — :

Ողջո՛յն քեզ , ողջո՛յն ,
Նո՛ր օր նոր տարւոյն .

Է՛հ , դժուարին է անշուշտ մի ողջոյն
Ծածկե՛լ կոծերով մի այսպիսի օր .
Բայց կրնա՞յ երկնել խոհեր վարդագոյն
Մարդ մ'ոյր կեանքն եղած է միշտ սրգաւոր .
Կըզգամ դժպէսի՛ է ինքնին այս հարկ .
Այլ կ'երդնում չ'է՛ այս վէպ , ո՛չ կեղծ հընարք .
Իսկ չը հատաացողք թէ կան տակաւին ,
Մաղթեմ իրե՛նք ալ վարժապետ լինին :

20 Յունիս 1888

Հ Ա Յ Ո Ւ Հ Ի Ն

Առաւօ՛տ է , արեւե՛լքն է կարմրած՝
Արշալուսին ցոլումներո՞յն ջինջ ոսկի .
Դեռ բընութիւն զիւր վե՛հ լուսթիւն չ'է խըղած .
Մի կոյս կ'անցնի , կոյս , հով մ'է , որ սողոսկի .
Երբ նէ կը շարժի ,
Կարծես կը թռչի :

Թեթեւ սալիոր մ'է անցուցած իւր թեւեր .
Լըռիկ մընջիկ կ'անցնի՛ , կ'երթա՛յ դէպ աղբիւր .

Մի հրեշտակ է, որ անշնչունչ, աներեր՝
Հեզիկ հեզիկ սըլիռէ գիւր շունչ վարդասփիւռ .
Եւ երբ կը նայի՝
Կարծես նուաղի :

Ա՛յնքան հե՛ղ են փափկիկ այտերն իւր կարմիր՝
Մինչ հոն ծագած կարծես մի կա՛յծ վառվռուն .
Քնքուշ մարմինն ու շրջազգեստն հովալիր՝
Կը ծըփծըփան օդապարկի՛ պէս թրթռուն .
Եւ աչե՛ր իւր վառ՝
Փա՛լլիլին դողահար :

Իւր սիրային նազանքին մէջ այն կուսան՝
Գոգ մոռցե՛ր է գիւր կանացի բնութիւն .
Մերթ կը ժմտի, մերթ կը նայի աստեղց նման,
Եւ ի դիմացն բըխի գութ, սէ՛ր զուարթուն .
Հայե՛աց իւր անձառ՝
Ո՛հ, կ'արծէ՛ մի դար :

Վարդափըթիթ այտերուն վրայ մի ճաճանչ
Կը թըրթըռայ – ժըմի՛տ – որ սէ՛ր կը կաթէ .
Տրտիէ՛ իւր սիրտ և թո՛ւնդ կ'ուտայ ներա լանջ .
Եւ արտասուէ՛լ կ'ուզեն աչե՛ր մարդարտէ .
Երբ նէ կը փղձկի՛
Կարծես կը մարի՛ . . . :

Մերթ հիացմամբ աչս ածելով նէ իւր շուրջ՝
Գոգցես անտե՛ս ոգիներո՛ւ կ'աղերսէ .
Եւ ամօթխած դէմքերն յերկիր յառած լուրջ՝
Մերթ պաշտեցեալ սիրելոյ մ'աջ կարկառէ .
Եւ քանի՛ կարմրի,
Սիրտն այնքան կ'էրէ :

Կը կարկառէ աչեր եւ օ՛դ գրկելով՝
Փախչի՛լ կ'ուզէ, փախչի՛լ հէք կոյսն այլայլմէ .
Եւ նեղ դալով բնութիւնն առ իւր սէր, գորով .
Հոգեկտո՛ւր հառաչանքներ կ'արձակէ .
Եւ մինչ կը տիրի՝
Կարծես թէ կ'անցնի :

Իւր լոյս ճակտին վերայ նաղէ՛ հեղ լուսին .
Բիւր բիւր կայծեր թափին քաղցրի՛կ ժըպիտէն .
Բոյն է դըրեր Աստղիկ ի շուրթն այն կուսին,
Եւ աչերէն սիրոյ հրեշտակը սաւառնեն .
Գիտես երբ գըթայ՝
Համբոյրնե՛ր կըտայ :

Ներա հառաչ՝ անհուն թախիծ կը բուրէ .
Ներա լեզու ձօնէ սփռի բուրազուարթ .
Լեզու չէ՛ նա, կայծակնացով մի հո՛ւր է,
Հո՛ւր՝ որ ամեն տեղ կը ցանէ խինդ ու վարդ .
Ներա մէն մի բառ,
Զմայլո՛ւմ է անձառ :

Թէ նէ խօսի՝ պիւլպիւլն անգամ կ'զմայլի .
Թէ երգէ նէ, զուարթունք իւր շուրջ բոլորին .
Գո՛ւթ, պատկառանք դէմքին վերայ կը փայլի .
Եւ ինք պատած է խոհերով յոյժ խորին .
Երբ զերկին դիտէ՝
Կարծես կը ննջէ :

Շաղուպուխնու նկարած անհո՛ւն տխրութեան՝
Նէ տիպարն է, օ՛հ, խո՛ց է սիրտը ներա .
Ամէլի՛ հոգին, որ լայ ի մըթան՝
Զանյո՛յս իւր սէր, մենաստանի՛ որմոց վրայ .

Կամ տխրագեղն Յուրիա,
Եւ կամ գողտրիկն Աթալա:

Մի ժըմիտով յա՛նկարծ կարծես թէ կ'անցնի.
Իւր ժմիտ' նի՛նջ է և նի՛նջն ունի հըրապոյր,
Որ զամեն սիրտ կ'առնէ գեղոյն իւր գերի.
Ի՞նչ ըսեմ, օ՛հ, գերե՛ց զիս իւր մի համբոյր.
Դեռ զիւր — սիրեմ՝ քեզ —
Կը պաշտեմ որպէս: (1)

4 Ապրիլ 1882

Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Ա Ռ Վ Հ Ա Տ Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ Ն

Լա՞ւս, հա՛յ մանուկ, թէ հորիզոնն աղօ՛տ է. —
Աղօթէ՛.
Վա՛յ, որ ըրաւ մեր տաճարներն աղաւաղ.
ա՛խ, աւա՛ղ.
Լա՞ւս թէ վերուց ողջոյն սերունդն հայկական՝
Ա՛հ, կական.
Կամ թէ ասե՞ս. — Աստուած ա՛լ մեզ չ'ելներ յայց,
Է՛լ մեռայց.
Մոռնա՞ւս, կ'օգնէ Տէրն այնմ, որ մէջ տառապի՝
Տառապի.
Մի՛տ դիր, աշխարհ լուսով, սիրով առողի.
Ա՛ռ ոգի.

(1) Տպեալ Մամուլ Ազգ. հանդիսին մէջ. 1882 թիւ 920.

Մի՛ վհատիր, ծագի՛ լուսահոս արեգ.
Հո՛ս ար՛ ե՛կ.
Ջա՛յն տանք, չ'ունի՞մք մեք սիրտ անյաղթ,
Է՞ր կաթի՛
Արտսուք յաչացս. բա՛ւ ծածկի մեր համբաւ, շուք.
Յամբաւ սուգ.
Գոչե՛նք ուժգին, կեցցէ՛ ահեղ մեր արքայ.
Է՞ր առ դահ՛
Նորին հըզօր չ'ուղղեմք մեր իղձ և հառաչ.
Է՛, յառա՛ջ.
Մատչի՛մք վեհին, մեզ չը մերժեր, տա՛յ խրախոյս.
Խրա՛խ, յո՛յս.
Նա՛ հէգ Հայուն, նա՛ հորթէ խոթ , առապար՛
Հայրաբար.
Լուսո՛յ, սիրո՛յ Նա միշտ տայ կեանք, օ՛ն, ուրախ,
Հո՛ն, ո՞ւր ա՛խ.
Որո՞ւ դիմել, Սուլթա՛նն տայ մեզ մըխիթար.
Մի՛ խիթար.
Ա՛հ, որ ի փառս տանն Օսմանեան մեռանի՛
Երանի՛.
Աստուած, տո՛ւր այնմ արժան իւր վեհ տոհմի շուք.
Ո՛, մի՛ սուգ.
Եւ պճնելով փառօք զիւր գա՛հ մեծանուն՝
Մե՛ծ, անհո՛ւն.
Պանծացո՛ վեհ Սուլթա՛նն ի վեր քան ամեն.
Ա՛ն, ամէն: —

44 Նոյեմ. 1891

Ա Ռ Ա Ի Օ Տ

ՏԱՐԷՆՏԷԻ ՊԱՐՏԷՋՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Երգե՛լ ցանկայր հոգիս տըխո՛ւր մի միմունջ .

Իջի՛ պարտեղ, ուստ գայր ինձ հովն հեղաշունչ .

Բնութեան ի խոր խաղաղութեան ննջէր քուն ,

Ողջ հորիզոն շողշող փայլէր յերկնից հուն .

Երկնածեմիկ դըշխոյ՝ լուսին ոսկեհեր՝

Յարեւելից պատըզգամբէն նո՛ր ծագէր .

Ի՛ ի թեւս հողմոց յարաթռեւոց ի ծագաց

Շաղ ցանէր զով առաւօտին մարգարտաց :

Բո՛յսք համօրէն , ձորք և հովիտք հովասուն .

Ձանուշարար ըմպէին ցօղ շողշողուն .

Նուաղէին տակաւ աստեղց բերք հրամաղ .

Ի ծագելոյ լուսնին փառաց գեղանաղ ,

Աչք իմ ի ծուփս յածէր ալեացն ի տատան ,

Միտք իմ խոկմանց սուղէր յաշխարհն աննրման .

Թըռչէի՛ մերթ յԱդին դրախտին ի կատար .

Բանաստեղծի՛ց ըղձիցն ի կէտ անկատար .

Եւ մերթ զերկնիցն չափէի ըզպարոյր ,

Յառեալ գաչս իմ յեթերին ծով լուսաթոյր :

Հողմ հիւսիսի հծըծէր , հեւայր , հեղանայր ,

Ոգւոյս թեւոց ծալք պարզէին հեղաբար .

Չըքնաղ աստղունք ի գահոյից բուրազուարթ

Չհուսկ զովութիւնն հեղունին ծաղկանց ի դարաստ :

Լուսին՝ աւա՛ղ, զգացեալ ծագունմս արփենւոյն՝

Թագչէր , նուաղէր , ո՛հ , թալկանայր յամօթոյն .

Առուակն հովտին մերթ հառաչէր տխրաճայն ,

Մերթ սողոսկէր լըռիկ յափո՛ւնս բացական :

Գող ծառք յանկամս տատանէին բնաւին ,

Ստուե՛րք անդամ նոցուն հանգչել ցանկային ,

Սիրտս՝ յայն տխուր միայնութեան բացարձակ՝

Անմոռնչ հեծէր , ա՛հ , սխրացեալ կայր համակ :

Թռչո՛ւնք կարծես կասկածաւոր

Ընդ լըռութի՛ւնս այս ահաւոր

Մին քան զմիւսն ձեպէր արագ՝

Լըսելի առնել զիւրըն դաշնակ :

Սոխակն եւեթ յայն մեծ վըսեր՝

Լո՛ւս կայր , երգել դեռ չախորժէր .

Եւ ա՛հ ամեն թռչունք ծառոց՝

Ո՛վ հրաչք անձառ , լըռին յերգոց :

Անդ , ի սօսւոյն պերճ ի դիտակ՝

Ղօղեալ րաժիշտն աչեղ սոխակ ,

Սկըսանէր առ վարդ բուրեան՝

Նուաղել զիւր երգ գուսանական :

Թռչունք կային անդ մունջ եւ լուռ՝

Նուագաւոր յերգոցն ի լուր ,

Մեղմ սօսաւիւնք լռէին ծառոց ,

Պիշ յայն դետակն և թեւք հողմոց :

Ճաճանչք անդամ գոհար լուսնին՝

Ի բեհեղ ջուրցն նընջէին .

Խօսուն աղբիւրք խոխոջաճայն

Գամ մ՛ի գնացիցն անդ ման ի ման՝

Ըզկայ առեալ յիւրն ի գեղգեղ՝

Մարգէին վտակսն՝ ջինջ բիւրեղ :

Այսպէս համայն բնութիւն խաղաղ
ի պիւլպիւլին գրաւեալ վեհ տաղ՝
Յակճիւս յայթիւս սկէր անքուն՝
Խաղաղական ժամեր յայգուն: (1)

1880 Յուլիս 4



ՄԱՏԱՂ ԲԱՆԱՍՏԵՂԾՆ

ՏՐՏՈՒՆՋԻ

Որպէս նժդեհ ի հայրենեաց տարագիր՝
Մրկի՛ր յաւէտ յիւր սիրելեաց ի խընդիր .
Ըզնո՛յն և ես , ահա՛ , քանի՛ ամբ եմ , Տէր ,
Պընդիմ՝ ըզհէտ ունայն բաղձից՝ կարեմէր :
Այլ ինձ աւա՛ղ , չե՛ւ ևս հասեալ սրտակաթ՝
Յուսոցս , ըզձիցս , նըպատակացս ի գաղաթ՝
Տըխրաթաթաւ կընքի՛ կենաց իմ նըկար ,
Դողա՛մ , տերե՛ւ հողմավար :

Քանի՛ս տեսի ի շո՛ւք , ի փառս պսակազարդ .
Ամենեքի՛ն արդ ննջեն լուռ և հանդարտ .
Բա՛րէ ցնորիցս , չիք ինչ աստէն մընայուն .
Զամենայնիւ դրողմեալ կընիք վէս մահուն .
Հանճարներու դափնինե՛րն իսկ վեհաշուք՝
Ե՛ւ յաղթութիւն , ե՛ւ պարտութիւն , ւ՛արտասուք՝
Անագորոյն ժամանակի՛ն եմ աւար . . .

Ա՛հ , դողդոջեմ դալկահար :

(1) Տպեալ ի Բիւրակն , Ե. տարի , Թիւ 105 1886 Նշ. 1/13 ,

Ողջոյն իմ սէր կեդրոնացեալ էր միայն՝
Յարուե՛ստն այն վեհ քերթողութեան , որ զհամայն
Յինքըն ձըգէ ի լուր տաղիցն իւր վըսեմ :
Այլ չ'աջողեաց աւա՛ղ , բաղդիկն իմ դժխեմ ,
Ո՛չ փայլեցաւ անունս յայն մեծ ասպարէս .
Ուր Ալիւն , Դուրեան մարտեան առնապէս .
Անդ ուր կուռի դեռ Պէրպէրեան , Մամուրեան
Որպէս անյա՛ղթ ախոյեան :

Ո՛վ սրտեռանդն իղձք իմ , փափաղք անսահման .
Զոր սնուցի առ Պէշիքթաշլեան , Ալիւն ,
էր ո՛ւմ ամուլ թառամեցայք յիմ հոգւոյ ,
Այս քանի՛ ամբ եմ բորբոքիմ զերդ հընոց .
Գրաւել վայր մի բանաստեղծից ի պարուն ,
Սրբադործել հէք Դուրեանին քաղցր անուն .
Ա՛հ , չեւ հասած այնքան ըզձիցս ի կատար
Ընկնիմ տերեւ հողմավար . . . :

Աւա՛ղ , դողա՛մ որպէս ծաղիկ ինչ բուրեան ,
Զե՛ւ կեանքի մէջ չեւ քայլ մ'առած յաղթական .
Քանի՛ երազք , քանի՛ անուրջք ոսկեղէն՝
Ընդ իս չիջցին ի փոս մահուն , զոր պեղեն՝
Ահա՛ մարդիկ՝ բնաւին անգէ՛տք այն վտաց՝
Որով համակ լըցաւ կեանքն իմ թառամած .
Այժմէ՛ն իսկ վախ զգամ , մոռնայ՝ զիս աշխարհ .
Զի՛ս՝ հէ՛ք տերեւ հողմավար . . . :

Բայց ես մինչ դառն վշտաց քամեմ հուսկ բաժակ՝
Դեռ յամեցա՛յց , զիմ արտասուաց ըզկայլակ ,
Առ քեզ , Տէ՛ր , յոտըս քո բերել արգաղիր .
Առ քեզ , առ գուլթե ասպաւնիմ , յերկնաձիր
Մի՛ զիս շնորհացդ զրկեր յերկնից դրգարան .

Խնդրեմ, ի լոյսդ յաւերժութեան անվախճան՝
Հաճեա՛ց ինձ կեալ. և թէ՛ մեռա՛յց իսկ աստէ՛ն՝
Անմա՛հ կեցից գէթ անդէ՛ն . . . :

1886 Հոկ. 10

Ս ՈՒ Պ ՈՒ Ե ՈՒ Պ

Ձիս չը՛ գրաւեր լուսափայլ գունտ արեւուն,
Որ զօշոտէ աչերս, չըտա՛ր գովութիւն.
Ես կը սիրեմ լուսինն նշոյլ արծաթեայ՝
Երբ գիշերներ կուսին այտից վրայ խայտայ.
Քերթողական խանդ զիս յայնժամ կ'ողողէ,
Զուարթնոց ելամ գըլխուս վերեւ գեղգեղէ՝
Լուսին, լուսին աննրման
Ձե՛ս դու ոգի տխրութեան:

Երբ ես տեսնեմ համատարածն այն խեռ ծով,
Սիրտս՝ արհաւրօք լըցուի և միտքըս՝ կոծով.
Ես կը սիրեմ յառիւ տըխուր յա՛յն լըճակ՝
Որ միշտ թուի վիշտեր ծածկել յիւր յատակ.
Նորա ատեր ես թափառիմ ժամերով,
Հոն ձեռն ի ձեռն կողքան թախիծ ու գորով.
Լըճա՛կ, կապոյտդ այդ խոհուն
Խորհուրդ, գաղտնիք չէ՞ համբուն:

Ձիս չը՛ շարժեր գոռում գոչում հանող գետ,
Որ ծառ, ծաղիկ առնէ՛, տանի՛ իրեն հետ՝
Ես կ'զգածուիմ ի տես վտակին լուսաթոյր՝
Որ մէ՛կ վարդին, մէ՛կ շուշանին տայ համբոյր.

Որ սահելով ի մէջ ծաղկանց հոյլ ի հոյլ՝
Նոցա ծոցիկ ցանէ լուսնին ջինջ նշոյլ.
Վըտա՛կ, չէ՞ քո հառաչանք
Անմեղութեան արձագանդ:

Ձիս փոթորկին կը սարսէ ձա՛յն մահառիթ,
Ձի ցամքեցնէ ամեն ծիծաղ ու ժըպիտ.
Ես կ'ախորժիմ հովտին հովիկն հառաչող՝
Ամեն առտու ընդառաջել դողն ի դող.
Կըրակն հոգւոյս այնո՛ւ և եթ՛ զովանայ.
Նա՛ հառաչանքս այնու մի քիչ մեղմանայ.
Ըսէ՛, հովիկդ հեղաշունչ՝
Ձե՛ս դու սիրոյ սուրբ միմունջ:

Ես չե՛մ սիրեր ելնել լերանց այն սարեր
Ուր զոհերովն խայտայ արծի՛ւ անվհեր
Կ'ուզե՛մ ննջել ներքեւ մայրեաց շուքերուն
Լըսել տրուփուն սըրտիս, հոգւոյս երերուն.
Եւ երազել նոցա բուրեան ոստոց մէջ
Քեզ, որ պճնես, Տէ՛ր, բնաւս ի գեղ թարմ, անչէ՛ջ.
Ըսէ՛ք, դու՛ք, պերճ մայրիներ,
Վսեմութեան չէ՞ք պատկեր:

Ձիս չ'սիրուիւր դաշտն, ուր կայ սոսկ խնձիղ, պար,
Առանձնութիւն խնդրէ սիրտն իմ վշտահար.
Ես կը ցանկամ հովիտներու մէջ խաղաղ՝
Երգել տխուր եւ սրտեռանդն գոչել – ա՛խ –
Անդ, բնութիւն չը խռովեր յո՛յզն հոգւոյս,
Հոն թեւարկէ զինեւ հրճիւ, խանդ, սէր, յոյս.
Հովիտք եմա՛կը հովասուն,
Ի՛նչ քաղցր է ձեր լուսութիւն:

Կ'ատեմ'մ, մերժեմ' տաք տաք շողեր իրիկուան,
 Որ պատեն միտքս ստուերներով խօլական.
 Ես կը սիրեմ այգուէն ցօղն այն զովակայլ՝
 Որ կը շողայ ի ծոց վարդին փայլ ի փայլ.
 Հողւոյս առջեւ մարգարիտներն այն փողփողուն՝
 Վըսեմ խոկմանց պարզեն զեզեմ գրգասուն.
 Ասէ՛ք, փափկիկ ցօղեր, դուք
 Զէ՛ք պլլւալիւլին արտասուք:

Զիս չը յուզեր կակաջ, ոյր դէմքն անպատկառ՝
 Արհամարհէ՛ ըզսուգ և զըոյր խանդավառ.
 Ես կը խնդրեմ զանմահարոյր մանուշակ,
 Որ ծըմակաց ի ծոց ծաղկի անուշակ.
 Նորա աչեր խորհրդաւոր բան մ'ունին.
 Որ միշտ խօսին ըզսիրելեացս թախծագին.
 Բացուի՛ առ ա՛յն իմ աւաչ,
 Խամբի՛ առ այն իմ հառաչ:

Հրապոյր չունի վասն իմ ամառն՝ երբ արեւ՝
 Խամբէ՛ զվարդ, շուշան, ծաղիկ ու տերեւ,
 Անձկաւ սպասեմ մեղրանուշիկն ես աշնան,
 Որ կ'ողողէ՛ զիս յոյզերով վսեմական,
 Ա՛խ, այդ անո՛ւշ աւուրց հաճոյքն անմոռաց՝
 Ես չեմ փոխեր տիեզերաց հետ, Աստուած.
 Ե՛կ, մեղանոյճ դու աշուն,
 Հրահրէ՛ սիրտըս արտամասուն:

Ի բա՛ց, ի բա՛ց յինէն, ամպե՛ր մըթագին.
 Զեր որոտում սարսուացնէ՛ զիմ հոգին,
 Ես կ'ախորժիմ դիտել զերկին կապուտակ.
 Անմեղուծիւն կա՛յ հոն, հաւա՛տք վեհունակ.

Հոն ես կարծեմ տեսնել պատկերքն այն սիրուն՝
 Զորս ժամանակ, զորս մահ խըլէ՛ց ապառու.
 Երկնից կապոյտ լուսալիր,
 Դու հողւոյս մէջը լեցուիր:

Զիս չեն դիւթեր շքեղազարդ այն վայրեր,
 Ուր արուեստ կայ, ուր բնութեան մատն չեմ տեսներ
 Միակ հաճոյքս է սուզիլ լո՛ւռ անտառներ,
 Ուր լո՛կ հեծեն կոծեն թռչունք մենասէր.
 Ա՛հ կ'ախորժիմ հոն ժամերով մենանալ,
 Գրաւուիլ, ո՛վ Տէր, խոկալ, տխրի՛լ և՛ անձայն լա՛ւ..
 Անտառք, բացուէ՛ք, ծոցոյդ խոր՝
 Ծածկուիմ օտար սրգաւոր:

1886 Նոյ. 26

ՅԱԿՈԲԻԿ

Յառեցա՞յք դուք ի խաժ ալեաց յայն լընակ,
 Ուր կը ցոյայ ողջոյն երկնից կապուտակ.
 Տեսէ՛ք, ի՞նչպէս հոն կը փքրքի հեզ տուտան,
 Ի բոյր, ի բոյր նորազան.
 Անդ չըկա՛յ սուգ, հոն շանքն երբէք չ'որոտար.
 Անմեղութիւն, նա կը բուրէ անդադար.
 Յառեցէ՛ք յայն, քող յօրանան ձեր աչեր,
 Եւ մինչ դիւքուած զայն հարցնէ՛ք սիրս յերեւ
 Խաղաղ լուրքիւն պիտի գտնէ՛ք դուք միայն,
 Նա խօսք չ'ունի, գեղ, ժըպի՛ս է նա համայն.

Ժպտէ՛ միտս
Յակոբի՛կ ,
Ո՛վ անվիտս
Հրեշտակիկ :

Առաւօտուն երկնից քեքել քոչուններ

Երբ քեզ տեսնեն ի պարտէ՛զն այն զովաստուներ՝
Ուր ինքնոյս մօրդ՝ այն զուարթնոյն հողեղէն՝

Համբոյրք զայտերդ ողողեն ,

Մինչ դու , փափկի՛կ տառակ , անմեղ ժըպիտով

Կը պսակես ըզմայրենին սուրբ գորով ,

Հոն կարծելով շուրթերդ՝ ծաղիկ . Լ՛աչֆդ՝ աստղիկ ,

Տենջան քառիլ գիրկըդ տոխակ , դեղձանիկ .

Իսկ քէ անուշ ձայնիկդ յանկա՛րձ արձակես ,

Ինչ՝ երկնային խանդով դու զայնքս վառես .

Ձայնէ՛ միտս

Յակոբի՛կ ,

Ո՛վ անվիտս

Հրեշտակիկ :

Կենաց , սիրոյ դու նախընծայ գիրդ ծաղիկ

Ո՛հ , ի՛նչ փայլուն , ի՛նչ երազներ գեղեցիկ

Վեհագուն հօրդ , անուշակ մօրդ ներշնչես

Տառակի՛ փուն երբ նրնջես .

Հայրիկդ համբո՛յր մը դրօժելով նակասիդ՝

Կարծէ կարդալ հոն մի հանճար գեղաժպիտ .

Իսկ մայրենին աչեր կացեալ ի զընին՝

Ինչ՝ փառհերով պննազարդեն քեզ լըռին .

Քանի՛ հրնիւ անմեղունակ , սիրավառ

Կ՛ազդես նոցա շունչիդ յանձնիւր տուրեալ .

Ննջէ՛ դուն

Յակոբի՛կ ,

Ո՛վ սիրուն

Հրեշտակիկ .

Ո՛վ մեծ սիրոյն , եւ մինչ մանկիկ դու փափկիկ ,

Թողով ըզմունդ ձայնես ողորմ առ մայրիկ ,

Մինչ մանկային յոյր յոյր քաթերդ մեղմագին

Ձգես ի խընդիր մօր կաթին .

Եւ աչերէդ քափին արտաւժ շիր առ շիր ,

Որպէ՛ս բընդան սիրտ ծընողացդ նորափրիք .

Քաղցր արտաւժդ , որ կը հոսի աչֆդ ի վար ,

Այգուն կարծեն լինիլ ցօղերն զովարար .

Եւ նուրբ ձայնիկդ , որ կը հնչէ գերդ ինճար՝

Քերովբէից կարծեն երգեր արտահար .

Երգէ՛ միտս

Յակոբի՛կ ,

Ո՛վ անվիտս

Հրեշտակիկ .

Բա՛բէ , արտաւժդ , որ կաքկոքի աչերէդ ,

Ջինջ քան ըզցօղն է այն վարդին բուրաւէս ,

Որ բիւրակնեայց ափեր բացուի գեղաշօղ .

Այգն հոն տղայ դողն ի դող .

Մագի՛ արեւ , վարդըն բացուի մեծահրաւ ,

Բայց ժամ մի ե՛տք , ա՛հ , մինչ հրաշից վայրն երբաս՝

Ի՞նչ տեսնես հոն , ցօղըն՝ ցամաք բիւրեղեայ ,

Վարդըն՝ խամրած , տոխակ՝ լըփուած , որ կուլայ .

Մանկի՛կ , աչերդ չըփնաղ եւս են քան զասղեր .

Այդ քաղցր այտերդ անմահութիւն չեն բուրեր .

Ժպսէ՛ միւս ,
Յակոբի՛կ ,
Ո՛վ անվիւս
Հրեւեակիկ :

Ի՛նչ պըսակներ , ի՛նչ նուագներ հիւսեմ քեզ ,
Որ դեռ ա՛յսքան մանուկ՝ Ժպսիս ծաղկի պէս ,
Մէ՛ն մի ակնարկդ արփիանոյս այդ աչաց ,
Զե՞ն ամփոփեր բիւր մատնաներ նուագաց .
Եւ այդ խարտեաւ խոպուպիներ , Յակոբի՛կ ,
Որ գեղածուփ կը հովհարեն քո գըլխիկ ,
Քան ըզգափնեայ պըսակներ պերն , ոսկեհուն
Բարձրիկ նակսիդ լաւ եւս շուքն չե՞ն յաւելուր .
Եւ բանահիւս՛ն իսկ այն խոհուն , վեսամեռ՝
Ժպսիդ սիրուն չը՞ սիրերգեր զայս տղեր .
 Խնդա՛ միւս
 Յակոբի՛կ ,
 Ո՛վ անվիւս
 Հրեւեակիկ :

Կը ցանկայի նստիլ , անմե՛ղ հրեւեակիկ ,
Գըլխուդ վերեւ , մինչ կը ննջես դու հեզիկ .
Տալ մի համբոյր քաւմ՝ այսերուդ՝ ուր ներմակ
Կարապն հանգչի , որպէս վարդին վրայ սոխակ .
Պիսի դիտե՛մ երբեք նակասդ այդ շողուն՝
Ուր կուսին շնորհ գրկէ նկարին փափկութիւն ,
Պիսի կրնա՞մ երբեք շուքնդդ ես արքած՝
Աչերուդ մէջ սուգիլ , երգել սէ՛ր , զլստուած .
Հա՛ քեզ ձօնեմ , մանկի՛կ , համեստ զայս նուագ .
Պահէ՛ զայն , ո՛հ , ա՛յն իմ սիրոյս յիշատակ .

Եւ կե՛աց միւս ,
Յակոբի՛կ ,
Ո՛վ անվիւս
Հրեւեակիկ :

10 Ապրիլ 1887.

ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ ԵՒ ԳՈՌԻՐԵԱՆ

Ներեցէ՛ք ինձ՝ հէ՛ք գըրչակիս , յանշուք , յանձուկս յայս մատենկան
Առ Զեղ ուղղել զիմ նուագ՝ նուագ խորին զմայլանաց՝
Նուա՛գ՝ չքոտի՛ մտացս , նուա՛գ անզուպ սիրոյս , բաղձիցս . . .
Ա՛հ , բոցք ի յիս եռան , զեռան զանուանսդ կըցե՛լ յիմ արեւուր երգս ,
Երգք՝ որ չ՛իցեն իսկ ձեզ արժանք՝ գէթ Զեօք ի լուր արժանասցին ,
Ա՛հ , զանուանսդ իսկ յեղեղել ինձ մեծագոյն պատիւ եւ փառք
Դո՛ւք խոհուն զոյգ բանաստեղծք , նուա՛գք ձեր փափկիկք եւ
սրտառուչք՝

Առաւել՛ խօսին ի սիրտ՝ ի լուութիւնս գերեզմանաց . . . :
Պէշիկթաշլեա՛ն , վե՛հ սիրահար բնութեան , գեղոյ եւ մենութեանց
Դու ուստի՞ ուսար զա՛յդքան կեղերջական ողբոց միմունջս ,
Մինչ զանյա՛գս իսկ խընդամոլս յափշտակեալ տաղիցդ զճեա՛
Փոխարկե՛ս յողբերգակ կամ յերազուն ինչ սիրահար ,
Հոգեակդ համբուն յողբոս շաղեալ , սիրտդ խոցեալ ի սէր կուսի՞ն
Անվե՛րջ եւ անսպառ տրեւրեգութեանց պարզեւ հանգէս ,
Դու զո՞յր , ասա՛ , անհո՛ւն հանճար , զո՞յր զգեցեալ Հոգի կամ սիրտ .
Եղերերգե՛ս մեծամաղձիկ ի խռովութիւն ուրախ ոգւոց՝
Սակայն եւ ոչ մեծ ողբերգուն բաւեր տիրել ըզբնութիւն ,
Դեր քան զքեզ , Պէշիկթաշլեա՛ն , սիրելագոյնդ սիրող ոգւոց՝
Դո՛ւ զանսիրտն իսկ հըմայես , յափշտակե՛ս նուաղեալ ձայնիւդ ,
Թէ՛ զլամարդին փորձեմ ի քեզ անձնաւորել , Պէշիկթաշլեա՛ն ,

կամ ըզնուենկ, կամ Շադոպրիան՝ սակայն ըզքեզ ես գտանեմ՝
Յուսակտու՛ր քան զնոսին լ'առաւել՝ եւս տիրանուշիկ:

Առաւել կամ նուազ՝ գտանեմ՝ նոցուն ի չքնաղ տաղս՝
Հետըս ինչ հրճուանաց, գո՛նեա ստուե՛րս ինչ հաճոյից,
Այլ ըզքոյսդ՝ ընդ ձիդ ժամս հետազոտեա՛լ մանրակրկիտ՝
Ո՛չ գտանեմ տող մի կամ բառ, ուր չիցեն վիշտ եւ հառաչանք...:

Դու զԱլթրէտ Միւսէին, Լամարդինայն, Շադոպրիանուն
Ունի՛ս ի քեզ մըթերեալ միանգամայն ըզտիրութիւն.

Քե՛զ Օսեան իսկ բաւէ ո՛չ զուգակշռել տխուր երգօքն,
Ա՛յնքան դղրդես դու զՏոգիս, ո՛վ արտասուաց գե՛տ վըսեմ:
Թէ ծաղկանց ի բուրաստանս շըրճադայե՛ս դու մտազբաղ՝
Ա՛յնքան հեղիկ՝ արձակես ըզգըրաւուն քո զհայեցուածս՝
Մինչ ծաղկունք իսկ պատկառոտ տեղի տուեալ ամբաւ վըշտացդ՝
Ժըպիտս ի սուգ փոխարկեն, լա՛ւ եւս ազգելքեզ տըտուծ խոսս:

Դու ե՛ւ զլուսին հնչուն քնարաւդ ա՛յնքան ուժգին սրտացուցեր՝
Մինչեւ զամբիծ իւր պատկեր տըպաւորեաց ի քոյդ ճակատ:
Դեռ ցոլան աչկունք քոյին ըզլուսնեկին՝ քաղցրութիւն,
Դեռ ի վերայ քաղցըր դիմացդ եւ ի բարձրիկ ճակատուդ՝
Քանդակեալ կայ խոր տխրութիւն՝ հանգոյն ցողից վարդին ի թերթ:
Ո՛հ եւ վարսքդ են ողողեալ նըշուագեղն ի տարափից՝
Ձոր լուսին՝ կոյս տըխրագեղ՝ մայրօրինակ եհեղ ի գլուխդ:

Տաղք քոյին երգեն համրուն սէր, կոյս, զերկին եւ զծաղկունս,
Ոյց խառնումս քանչիւն՝ ձեւակերպէ զքոյդ տըխրութիւն,
Որ ընդ իւր առեալ ձրգէ զմեզ յիտեալն անծայրածիր,
Ուր չեն սակայն սուգ եւ թախիծ, այլ խինդ, ծաղիկ եւ կուսի ժպիտք:

Ա՛նդ ըքե՛զ, ո՛վ խանձարուրդ նուիրական հառաչանաց
Գտանեմ բազմեալ առ հէք Դուրեան՝ վաղամեռիկն այն բանաստեղծ,
Որպէս զոյգս տատրակաց ի գլուխ աղբերն բազմեցելոց՝
Կամ երկուց ջինջ վտակաց ի միում աղբեր բղխեցելոց,
Կամ թերթից զոյգ վարդենեաց՝ ի մի ցողնոյ փթթեցելոց:

Անդ ահնապիշ դիտեմ զձեզ, որ համաշունչ համափիշտ

Ըզխանդ, զվիշտ եւ ըզգորով շուրջ զվայրօքն ծաւալէր:
Ո՛հ, ցանկամ մերթ թօթափել ըզհողեղեն զայս բնութիւն
Յանմահութիւն սաւառնիւ, բնականից լինել զուարթնոց,
Կամ գոլ անխոնջ ինչ թիթեռնիկ եւ թռիչս առեալ թեթեւակի՝
Գալ առ ձեզ, փարել ըզձօք անդ ի կայանս անմահութեան,
Լալ ընդ Ձեզ եւ երազել ոսկեղինիկ անուրջս եւ խոկս:

Այլ, ով ցընորք, ահա՛ հոգք ստիպեն առ ֆնարն ինձ տալ
հրաժեշտ
Քերթողական խոյս տան երազք հանդէպ զըաղմանց աշխարհայնոց:
Մնացէ՛ք բարեաւ, սուրբ թագակիրք իմաստութեան եւ բարոյից,
Յոյց աչաց ցայտին ցընցուղք ի մարդկային ցամաքեալ սիրտ:

Քանի՛ արփին կենդանարար ընդ տինգերս գայցէ ի հիւ-
հոցք ի տաղիցդ հատանիցին արեգական ճառագայթից,
Ժա՛մ մի, վայրկեան մի գէթ ըզնիւթն յաննիւթ շըջել ի կերպ՝
Փողփողեն է՛ջն իմաստիւք կայտուել զոսկերս վշտակրելոց:

Կեցջիք դուք դարս յաւիտենից, անմահ՛ ի սիրտս, անմահ հոգիս,
Ո՛վ արշալոյսք հրաժոր խանդից եւ երկնաշունչ խրաթուսանց:
Անմահութիւն, Պէշիկթաշլեան, եւ քե՛զ, Դուրեան, քերթո՛ղ
մանուկ,

Կեցջիք դուք, ժի՛ր պաշտօնեայք արդարութեան եւ սրբութեան:
Ձա՛հք յաւերժալոյսք յաւիտենի՛ն վառեալ ձեռօք:
Անցցեն՝ դարք, դուք եւս քան զեւրս պանծաջիք յաւերժութեամբ
Որպէս զաստղի՛կ բեւեռական՝ խորհրդաւոր եւ միշտ անհուն...:

1887 Յունիս 25 Տարեցիկ



Ա Շ Ո Ւ Ն

Անցա՛ն ամարան տաղտուկներ երկար,
Ո՛չ եւ թալկանան սիրտեր ապիկար:
Վերածին յոյզեր ոգւո՛յս անհանդարտ,
Դարձեալ իմ աչեր՝ ժամերով անթարթ՝

Ա՛հ, կը սեւեռին հողմոց մահացան...
 Որոց շունչին տակ կեանքեր մահացան...
 Գեղեցկութիւն, շող յա՛նկարծ խաւարի,
 Բնութիւն զո՛հ կ'երթայ տարտամ խաւարի.
 Ոգի՛ն տըխրութեան՝ գըղուէ՛ մեղմանոյ՝
 Թշուառներն անյոյս...:

Ի զո՛ւր ես, բա՛բէ, դառնամ յայս յայն կոյս՝
 Տեսնել թէ ծաղկի՞ դեղձ, նուշ եւ ընկոյզ.
 Զո՛ւր յափուենս աղբերոց կ'առնեմ ես թափօր՝
 Տեսնել գա՛յ գեղջուկ լընուկ զիւր սափօր.
 Ո՛չ ես պարտէ՛ցներ տեսնեմ ծառաւէտ.
 Հրաժեշտ են տուեր խանդ, խինդն առ յաւէտ.
 Տեսնեմ տըղայքներ՝ որբացա՛ծ մօրէն՝
 Հա՛ց մուրան, ոյց կեանք՝ վիշտ է համօրէն.
 Դոքա մատնուած լքմա՛ն վիրապին՝
 Նօթի տառապի՛ն...:

Բոկո՛տն օրն ի բուն՝ քայլեն լալադին՝
 Ա՛հ, աղեկըտուր աչեր ի յերկին.
 Եւ հացէն ետք՝ Տէ՛ր, մե՛րկ են ցուրտին դէմ,
 Արեւն իսկ լըբեր ծածկեր է զիւր դէմ.
 Գիշերը աստղերն ցանեն շող ոսկի,
 Բայց մահու շո՛ւնչն է, որ լո՛ւռ սողոսկի՛...
 Ճոխն անհոգ պարպէ կըրակոտ օդին,
 Մինչ որբեր մահու քրտամբը ողողին.
 Եւ լալո՛վ ըզմահ կանչեն ապաւէն՝
 Յաւոցն՝ « ա՛հ, բա՛ւ են »...:

Զըկա՛յ իսկ արեւ՝ պաշտպա՛ն չուառաց՝
 Գոռա՛ն հողմք, որբեր կըծկի՛ն շուարած.
 Հէ՛ք որբք, ի՞նչ անձկաւ դիտեն զայն խարոյկ՝

Ոյր շուրջ հարուստին կարմրի դէմքն առոյգ.
 Երկի՛ն խընայէ՛, ա՛հ, գըթա՛ վայր մի,
 Զունի՛ մարդն աղիք, օգնել չը կամի՛...
 Աշո՛ւն, ընդունայն հեծեծ տրտմօրէն.
 Զազդուկ՛ր բընաւ փարթամն անօրէն.
 Դու լա՛ս, նա խընդայ, հառա՛ջը դառնադոյն՝
 Զազդեր իւր հոգւոյն:

Աւա՛ղ, ի նանիր առ քեզ, ո՛վ աշուն,
 Զօնեն բանաստեղծք տաղեր փափկասուն,
 Ո՛րքան ներշնչես խոհեր թախծալի՝
 Տըխրասէրն ո՛րքան շունչովդ այլայլի՝
 Տեսական պատկե՛ր մ'ես լսկ տըխրաբոյր.
 Խոհո՛ւն, տըծգո՛յն ես, այս չէ՞ քո հրապոյր,
 Է՛հ, քեզ խընդամուք պիտի՝ չ'զգա՛ն երբէք.
 Կոյսք ըզքեզ պիտի դիտեն յուսաբեկ,
 Որբք ի քեզ տեսնեն սկիզբն աղէտից՝
 Կենա՛ց վըշտալից...:

Այսպէս դու բնաւից գուժես դառն օրհաս.
 Խռովես խինդն՝ որոյ խուկ վըրէժ գոռաս.
 Հեգնես զայրին իւր գրգռեկին ներքեւ,
 Ոյր գեղածիծաղն իսկ խըլես զարեւ.
 Կապտե՛ս յաղթ ծառերն, խըղես երգ, դաշնակ,
 Խաթարես բնութեան գեղը ներդաշնակ.
 Առ ի՛նչ նուիրել քեզ սէր մի ամբաւ.
 Զե՛ս զուգակըշներ դու գըր պերճ համբաւ.
 Դալիահա՛ր, սեա՛ւ ես, ա՛յս քո շնորհք ողջոյն,
 Է՛հ, բայց այս չէ՛ բաւ.
 Բոյր չ'ունիս դու բնաւ,
 Անցի՛ր, ո՛ աշուն:

Մ Ա Ր Դ Ն

ԻՐ ԿՆՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Ի՛նչ քաղցր է, ո՛հ, մանկի՛կն այն գիրդ,
 Որ փափկանոյշ մօրը իւր գիրկ,
 Հանգչի՛ անմեղ՝ աչեր ի քուն.
 Արդեօք ճաճա՞նչ մ'է դա այգուն.
 Անմեղութի՛ւն գոգ ժըպտի հոն,
 Որպէս մի շաղ ի վարդ կոկոն.
 Ըսէ՛ք, կա՞յ գրաւուն՝
 Մի բան քան զայն փափկութիւն:

Ո՛հ, ի՛նչ կայտառ այն պատանի,
 Յոյր գեղ ամեն սիրտ տատանի.
 Համակ աշխոյժ, խանդ ու կորով՝
 Յի՛նքըն ձըգէ զբնաւից գորով.
 Գործօն՝ հանգոյն ժիր կուսանի,
 Տիւ և գիշեր միշտ կ'ուսանի.
 Ըսէ՛ք, ի՞նչ զուարթուն՝
 Քան զայդ մատղաշ առուգութիւն:

Տեսէ՛ք, ի՛նչպէս լայ, կ'աղաչեմ,
 Սա օրիորդ-կոյս գեղաճեմ.
 Արդ ու զարդեր նա մերկացած՝
 Վէրքե՛ր պատէ, վէրքե՛ր վըտած.
 Տըգխտութեա՛ն, ռազմին գեղարդ՝
 Կո՛ղդ են մըխեր զայդ վէրք, ո՛վ մարդ.
 Քան զայդ եռանդուն՝
 Կա՞յ գերազանց գըթութիւն:

Ո՛հ, ի՛նչ անուշ սա ծերունի,
 Որ մանկան վառ աչեր ունի.
 Ուսուցանէ իւր հէք թոռանց
 Սիրե՛լ զԱստուած և զազգ, առանց
 Դոցա՝ արդեօք այս սուտ աշխարհ
 Իւրեան ո՛րքան դառն պիտի գար.
 Եւ ի՛նչ վըսեմ է այնքան՝
 Քան զայդ չըքնաղ տեսարան:

Եւ այս ամեն, Աստուած բարի,
 Այս ամեն քե՛զ կը բարբառի.
 Մանուկ թէ ծեր, կոյս, պատանի,
 Քեզ՝ Տէ՛ր Աստուած՝ խոստովանի.
 Իսկ խորագո՛յնս եւս կ'զգամ ես
 Երբ քեզ ընդ բնաւ քննեմ այսպէս.
 Եւ գոչեմ գեղուն.

— Կեա՛ց միշտ, ո՛վ սուրբ Երրորդութիւն — : (1)

15 Հոկ. 1888

Մ Ո Ւ Ր Ա Յ Ի Կ Ն

ԱՌ ՏԻԱՐ ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ա.

Եւ կ'երթայր նա՝ լըքուն որպէս ուրուական.
 Կ'երթայր լըպին որպէս ահեղն ուրական
 Աչերն չ'ունին ո՛չ իսկ մի չիթ արտասուք,
 Խո՛ւլ է առ բնաւ խինդ և սուգ:

(1) Տպեալի Բիւրակն 1888

Տաղտուկ, ձանձիր դժոխքեր է աշխարհէն՝
Ուր թըշուառներ իւր պէս անհա՛ց կ'աշխարհեն .
Տոչորէ՛ զինք մի խուլ զայրոյթ ահագին .

Նա կը գոչէ . — « ահա՛ գին

« Այնքան վըշտացս . բայց ո՛չ, պէ՛տք է դադրի ալ
« Ասոր անոր ա՛հ, ձեռք բանալ և մուրալ... »

« Բաւ չէ՞ ցածնալ ստակի համար, ո՛վ Աստուած,
« Մերժուի՛լ, ա՛հ, զիս կ'սպաննէ՛ այս հարուած .

Կա՛մ տէրտիս տէրման,

Կա՛մ դաթլիս ֆէրման :

« Ճոխն ամեն օր մինչ նոր կեանքով նորոգի,
Մինչ կ'ողողեն զայն նոր հաճոյք, նո՛ր ոգի .
Ի՞նչ ինձ նըման մուրացիկներ արտասուն՝

Թո՛ղ ճամբուի՞ն իբրեւ շուն... »

« Այո՛, դըժուար է անսուաղ տառապիլ,
Այլ չո՛ւն կոչուիլ, բրածեժ եղած դուրս փախչիլ...
Ի տես այսքան գըճճանաց դեռ ո՞վ անի,

Չըլլար նօթւոյն հովանի... »

« Այլ մեծատունն հաճոյք կ'զգայ՝ սիգօրէն՝
Վըռնտեղով զայն պալատան իւր դուռնէն .

Անտանելի՛, դառն է քան զմահ այս, ո՛վ Տէր .

Խնդրեմ, վախճան տո՛ւր այս կեանքիս աննուէր,

Կա՛մ տէրտիս տէրման,

Կա՛մ դաթլիս ֆէրման :

« Մինչև ցե՞րք, Տէ՛ր, ցե՛րք արտասուքն՝ աղքատի
Մարած աչքէն յորդահեղեղ ա՛խ, կաթի... »

Ցե՞րք վիշտ և սուգ՝ զինչ կերակո՛ւր մահանոյ՛

Ցաւօք լընու սիրտն անյոյս... »

« Ցե՞րք մուրացիկն ըլլայ ճոխից արհամարհ .

Արդար չէ՞ս մի, ինչո՞ւ կենաս, ա՛ռ համար .

Ցե՞րք տանիմք, ցե՞րք, Տէ՛ր, անոնց ծանր բեռին,
Ճոխք ի՞նչ պատիւ քեզ բերին :

« Բայց նոքա քե՛զ իսկ չէ՞ն գըրեր արհամարհ .

Արդ է՞ր լընես, ա՛հ, ո՞ր բարեացը համար .

Արի՛, շանթէ՛ զնոսա ցասամբդ երկնառաք .

Իսկ թէ՛ դա՛րձեալ լընես՝ մեռցո՛ւր զիս արագ .

Կա՛մ տէրտիս տէրման,

Կա՛մ դաթլիս ֆէրման :

« Երբ օրն ի բուն տաժանքէն ետք՝ տուն դառնաւ,
Առ փոքրի՛կն, որ հաց պուռայ ամեն ժամ,
Հացի՛ մը կտոր երբ զետեղեմ գըլխուն տակ՝
Փակե՛մ աչերն կապուտակ .

« Ո՛հ, սիրտս յայնժամ ի՛նչ հեշտութեամբ կ'ողողի .
Հոգս՞ է թէ՛ ճոխք պարպեն գինի կամ օղի .

Բոլոր հաճոյքս՝ քնացընել է զիմ փոքրիկ՝

Չըսած . — նօթի՛ եմ հայրիկ — :... »

« Իսկ երբ աշխարհ սեւ պատա՛ռն իսկ զըլանայ .
Երբ դժոխքի պէս սեւցած ունայն տո՛ւն դառնայ .

Իւր միտքն ու սիրտ ո՛հ, ի՞նչ եղեռն կը խորհին .

Ո՛վ Տէր, լըսէ՛ հառաջանքնե՛րն իմ խորին .

Կա՛մ տէրտիս տէրման,

Կա՛մ դաթլիս ֆէրման : »

Բ.

Բայց դու ի զո՛ւր կոծես, լո՛ւռ է գթութեանց Տէր .
Մարդն իր գըլխուն նազատ բնաւին է ձըգեր :
Մարդի՛կ՝ Աստուած են դարձեր :

Ո՛չ ևս ձաղկէ Տէր զամբարի՛շտն անօրէն .

Ո՛չ եւս հիբին աջ կարկառէ հայրօրէն .

Մարդն ակնածի՛, բայց որմէ՛ն :

Ուսի՛ր զօրէնս այս անցաւոր աշխարհի ,

Որ իւր անուամբ արդարութիւն բարբառի

Է՞ր լաս հանգոյն յիմարի :

Ուսի՛ր հզօրի՛ն է իրաւունք գերագոյն .

Մարդիկ , աւա՛ղ , ծառայ եղեր են ոսկոյն .

Սին ցնո՛րք մի՛ է լոկ բարութիւն :

Արդարութի՛ւն հալածական զերդ գերի՛

Օրինադրոց խորչերն անձայն դեգերի .

Աստուած , նա յոյժ է հեռի : ...

Ողորմութիւն , դո՛ւթ և համե՛ստն հեզութիւն՝

Տաճարաց մէջ հաղիւ ցնցեն զսիրտ մարդուն .

Այլուր՝ մայրե՛րն իսկ փափուկ՝

Ա՛հ , կոյսե՛րն իսկ ողորմուկ

Չ՞ունին երբէք գըթութիւն : ...

Գ.

« Ուրեմն ի զո՛ւր այլ ևս չափել փողոցներ .

Արտսուք , հառաչք մարդոց ըզսիրտ չեն շարժեր .

Չե՛ն տար մարդիկ նո՛յն իսկ պատառ մը չոր հաց .

Չը կա՛յ մի սիրտ ողորմած ...

« Երկու օրե՛ր անցան , փոքրի՛կն իմ սիրուն՝

Նօթի նուաղի , հասէ՛ք Փրկչին մեր սիրուն ,

Պիտի մեռնի թէ չ՞ողորմիս , ո՛վ Աստուած .

Ահա՛ կ'ընկնի նուաղած ...

« Խօսի՛լ կ'ուզէ , այլ շունչն յետին կ'սպառի .

Եւ դաւիհաճար կ'ընկնի զերդ վարդն անտառի .

Մեռնի՛, մեռա՛ւ նա , ա՛հ , իսկ ես դեռ չնչե՛մ :

Այս մեղապարտ , այս անիծեալ կեանք դժխեմ .

Մեռցո՛ւր , Տէր ա՛ռ զիմ հոգին .

Ձի՞ եւս ցաւերս բորբոքին ,

Ընդ այս լանջօք զայրագին : ...

« Ա՛հ , թո՛ղ մեռնիմ , թո՛ղ զիս ծածկեն սեն ու սուգ .

Է՛հ , ա՛լ պէտք չէ՛ այս կեանք , այս լոյս սրտաշուք ,

Բայց չե՛ւ մեռած՝ անէ՛ծք մո՛ռնիմ ձեր գլխուն՝

Ձե՛զ , որ չ՞ունիք գըթութիւն :

« Գոչե՛մ ուժգին որպէս առիւծ կարեւէր .

Անէ՛ծք ձեզ , դուք որ տապալէք հիմն ի վեր

Խաղաղութիւն թշուառներու ապիկար՝

Ջորջս վանէ՛ք անպատկառ :

« Անէ՛ծք , պատրէ՛ք զանմեղս ի դէմս գըթութեան՝

Կլանէք ամեն ինչ որ յանձնել ձեզ փութան .

Անէ՛ծք , դուք չէ՛ք , որ կ'ընծայէք առ աշխարհ՝

Մուրացիկներ՝ ինձ պէս անտէր ու անձար .

Մաղթեմ , սիրտե՛ր անողորմ ,

Անգեղձութի՛ւնք ձեզ անհոգ .

Այս իմ անէ՛ծք , ա՛յս՝ բողոք :

« Անէ՛ծք ձեզ , ո՛վ վաշխառուներ ահարկու ,

Որ հրեշտակաց ա՛հ , փոխ առած դէմքն աղու ,

Որբոց , այրեաց խըմէք զարիւն . ձեզ երբէ՛ք

Մարդ չէ՛ ըրած ահաբեկ .

« Դուք հագած էք սարսափելի՛ն զայն զըրահ՝

Ջոր մեծամեծք իսկ խորտակել չ'իշխեն , ա՛հ .

Եւ ոսկի՛ն է անփըշրելի՛ն այն սուսեր՝

Որ բո՛ւռն իսկ է քան ըզսէր ...

« Դո՛ւք էք գրաւած իրաւունքն ու զօրութիւն .

Ձե՛զ պաշտպանեն , ո՛վ ցաւք , օրէնքն իսկ մարդուն .

Եւ դուք՝ աղատ արձակ վարէք զայն կեղծ դէր՝
 Որ շաղախէ զմարդիկ ի տիւմ... իսկ դու, Տէր,
 Ա՛հ, դիտե՛ս լըռիկ,
 Զայսքանն, մինչ մարդիկ
 Դառնան մուրացիկ:...

«Անէ՛ծք ձեզ, դուք պատուհաս էք մարդկութեան.
 Կտտէ՛ք ծրծէք ըզմարդ զերդ կով մի կըլթան.
 Մըծէ՛ք անյա՛գ տղրուկք, մինչեւ հոռակ կաթիլ
 Մինչեւ դառնա՛յ նա մի ծիլ՝

« Զորցած ծաղիկն՝ անբո՛յր, անթո՛յր և անջուր.
 Ի՞նչ անէ՛ծք տամ, ձեզ քի՛չ ևս է դժոխոց հուր.
 Դուք ըզմարդուն կապտէք ոսկի պատմուճան.
 – Պատույ զգացումն աննըման –

« Կապտէ՛ք ամօթն անոր և վեհն արժանիք.
 Դո՛ւք, որ յոբեան հարուածո՛ցն էք արժանիք.
 Եւ գլորելով զայն խոր յանդո՛ւնդ տըլմասիկ՝
 Վա՛հ, անվըրէպ առնէ՛ք գըճուճ մուրացիկ... »

Անէ՛ծք, անէ՛ծք ձեզ,
 Սադա՛նք աներես,
 Դժո՛խք ձեզ մշտապէս:»

Դ.

Յետին վանկին հետ կ'ըսպառի կեանքն անոր,
 Մինչ պատրաստ էր խօսիլ դեռ ցաւս նորանոր,
 Միանա՛յ որդւոյն, զոր ամիսփեց իւր ձեռքով,
 Զո՛խք, ա՛լ չըգար նա ձեր քով:
 Որքն ու այրին և մուրացիկն այն տօգոյն,
 Կ'երթան մի օր ննջել մահուան ա՛հ, դուժ քուն.
 Բայց դուք անմա՞հ կարծէք մընալ յաւիտեան,
 Է՛հ չէ՞ք յիշեր Դաւիթեան՝

Փառաց չքնաղ բողբո՛ջն իսկ մեծ Սողոմոն,
 Միթէ՛ չ'անցա՛ւ զերդ ասող յերկնից հորիզոն,
 Նա՛, չը մեռա՛ւ Յիսո՛ւս՝ Աստուա՛ծն այն վըսեմ՝
 Բայց ես դեռ զո՞ր մէկն ըսեմ:

Ըսէ՛ք, մահուն դէմ ո՞վ տարաւ յաղթանակ.
 Աշխարհադժո՛րդն այն Աղեքսանդր յիւր բանակ.
 Թէ Պոնաբա՛րդն անյաղթ, և կամ գահասէ՛ր
 Անդո՛ւսպ Կեսար. ա՛հ, ա՛ս էր՝

Ուրեմն այն կեանք, ում ա՛յնքան ջերմ էք փարած,
 Մինչ խիղճ, ազդ, կրօն անհոգ զոհէք ձեր փառաց-
 Է՛հ, ա՛լ հերիք, մեծատուններ, ա՛լ հերիք՝
 Ձեր եղբարք չե՛ն ձեր գերիք.

Յուշ չ'ածէ՛ք դուք փառաց՝ Աստուած չուզեր բնաւ
 Փառք, մեծութիւն, այլ գութ, գորով, սէ՛ր անբաւ.
 Շուք, պերճութիւն սին երա՛զ մ'է խօլական՝
 Մէ՛րն է ևեթ տեւական:

Է՛հ, թո՛ղ տեղի տան այդ սիրտեր լեռնանման՝
 Եղբայրական գորովալի՛ր զգացման.

Ինչո՞ւ չուառն յետ տուայտելոյ անսրաղ՝
 Մեռնի մըթին խորշ մ'աւաղ:

Ոսկւոյ այգեքան մոլեղնութեամբ է՞ր փաթիք.
 Մի՛ զեղծանիք, գործեցէ՛ք քիչ մ'ալ բարիք.
 Բա՛ւ է ալ, բա՛ւ, նօթի ծարաւ մահանայ՝
 Թըշուառն. տեսէ՛ք, ահա՛ նա.

Է՛հ, ո՛ր գիտէ նա յո՞ր գձձանս է՞ր մըլուած,
 Որ քան ըզկեանս նախընտրեց մահն, ո՞վ Աստուած,
 Ա՛լ մեռած է, բայց դեռ չուրթեր մահաքուն՝
 Անէ՛ծք ժայթքեն ձեր գլխուն:

Խաղաղ գիշեր և լըռութիւն, խօլ խաւար՝
 Ընդ սիրելոյն կը հանգչեցնեն զայն չուառ.
 Ո՛չ ոք ցօղէ սակայն մի չիթ տաք արտսուր.
 Ա՛հ, ի պատիւ կամ ի սուգ...

Այլ ստուե՛ր մը կ'ուգայ զինչ հով, ո՞վ է նա .
 Լուռ թի՛ւն, ճանչեմ, նա Բարձրելոյն քահանայ .
 Տեսէ՛ք, ի՞նչպէս խըմէ աղօթքն անհամբեր .

Դէմքըն աղօ՛տ քան ամպեր :

Նա՛ ևս անշուշտ գիտէ ո՞ւմ հետ է իւր բան ,
 Թէ ոսկիներ պիտ' չ'ողջունեն զիւր գըրպան .
 Ճեպով հրամա՛ն կուտայ փոսել գերեզման .

Տա՛լ զայն շիրմի՛ն մոռացման . . . :

Բարի՛ երէց , վախճա՛ս թէ նա չ'արթըննայ .
 Թէ անիծե՛ալն այն քեզ կըրկին բե՞ռ կ'ըլլայ .
 Է՛հ , մի՛ վախճար , թո՛ղ քո անդոյր չը խռովի ,
 Կե՛ր , ա՛րբ , լե՛ր չէն կորովի :

Շը՛ , դու սէր , գութ եղբայրութիւն պիտ' խօսիս .
 Քեզ ի՞նչ պէտք են գըճուճ բաներն աշխարհիս .
 Թըշուառն արդէն թըշու՛առ է դու ի՞նչ ընես ,
 Դու տիրոջ դէ՞մ պիտ' դընես :

Մեր կըղերներ թերեւս ա՛յսպէս կը խորհին ,
 Մինչ աղքատի՛ն համար փորեն փոս խորին .
 Եւ երբ յետին յո՛յսն ալ ցնդի առ յաւէտ՝

Խուլ , զայրացկոտ , տրտմաւէտ՝

Կա՛րգն իսկ թաղման չ'աւարտած հէ՛ք քահանայ ,
 Լըքեալ վայրն այն թողո՛ւ , ընդ փոյթ հեռանա՛յ .
 Եւ կը գլորեն զայն ի շիրմին խորութիւն .

Ա՞յս է , Տէ՛ր , ա՛յս փառք մարդուն : . . .

25 Հոկ. 1888.



ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՍԱՆՆ ԻՄ

ՍԱՄՈՒԷԼ Յ. ՆԱԶԱԿԵՏԱՆ

Դո՞ւ ես , ազնի՛ւդ իմ , դո՞ւ , որ պուէսիս՝
 Կ'ուտաս աւետիս .

Եւ ցընծագի՛ն կ'ընծայես առ քոյդ թուրեան՝
 Վա՛րդ քաղմարութեան :

Այդ վա՛րդ՝ բացուած ի ձեռատունկդ ի պարտէզ՝
 Վա՛րդ գիրգ ու խարտէշ .

Այդ վա՛րդ՝ կ'ողղէ յա՛նկարծ դալուկն իմ ճակտին
 Յօղով երկնային : . . .

Դո՛ւ եւս այժմիկ ինձ կարկառես ա՛ջդ արի՝
 Ուր կե՛անք կը թառի .

Եւ ներշնչե՛ս թախծեալ սրտիս՝ առո՛յգ յոյս ,
 Խա՛նդ՝ բեկեալ հոգւոյս :

Բա՛բէ , ինչպէ՛ս զիս կը զեղուն խո՛կք անճառ՝
 Զի՛ս՝ որ խեղճ , անճար՝

Կայի շուարած ի մէջ կենաց եւ մահուն՝
 Հոգսերո՛վ անհուն : . . .

Երանի՛ քեզ , որ դեռ մանո՛ւկ՝ կեա՛նք , խրախոյս ,
 Ուսուցչի՛դ հեղուս .

Եւ դո՛յզն երկոցն ի յոյս՝ այժմէն կը ցանկաս ,
 Լի՛նե՛լ մեկե՛նաս :

Ի՞նչ մեծ փառք է այս ինձ , որ քեզ քրսնաջան՝
 Մարգեցի՛ յուսման .

Ինձ՝ որ բարւոյն բողբոջ կանուխ տընկեցի՝
 Յա՛յդ սիրտ հայեցի :

Այսպէս, ազնիւդ իմ, Բեւ՝ բուժէ, Բեւ՝ երկին՝
Յաւե՛րն իմ վերքին.

Եւ ի մի սուրբ ժրպիտդ, Որդեա՛կ իմ անոյշ՝
Նորի սի՛րտս անյոյս:

Թո՛ղ տուր ապա հիանալ հեզիկդ յայդ բընոյթ,
Ուր միշտ սէր եւ գուժ՝

Զիրեա՛ր գըլեն համբոյրներով սիրազեղ,
Զինչ ալիք բիւրեղ:

Թո՛ղ տուր, Ազնիւդ իմ, վայրկեան մի ինձ թոյլ տո՛ւր
Դիտե՛լ զերկնատուր՝

Զայն հասանչներ՝ զոր բարձրելոյն վըսե՛մ մատ՝
Հե՛ղ ի քոյդ հակատ:

Թո՛ղ յաւիտեան այդ հասանչներ խանդակած՝
Պսակեն քո հակատ.

Եւ միշտ փծծին՝ որպէս գարուն՝ կենսաբեր՝
Բիւր վա՛րդ-շուշաններ:

Թո՛ղ խանդ, աւիւն յորդեով, ջինջ գերդ վըտակ՝
Հոգւոյդ ի պուրակ.

Քո սըրտի՛ն մէջ վառ պահեն զայն վե՛հ յուզում,
Զոր պարտիս յուսում.

Փայլի՛ս որպէս զարեւ, դո՛ւ հոսսկ հարազատ՝
Մեծ հո՛րդ պայազատ.

Կեանք՝ ազնիւ մօրդ, խի՛նդ՝ սիրելեացդ շիրիսես միշտ,
Եւ ինձ՝ փառք անվիշտ.

Այ՛ս իմ նուագ, այս եւ վերջին յիշատակ՝
Սիրո՛յս՝ որ արագ՝

Թըռչի՛ յանցեալն, ուր միշտ պաշտեմ ես զանհուն
Լ՛անմե՛ղ քաղցրութիւն...

20 փետ. 1889 Տաւեմսէ

Մ Ո Յ Լ Ն

ՎԱՆԻԴ

Երբ տեսնեմ մի ազա՛հ հարուստ,
Որ յոսկւոյն տենջ հալի՛ անկուշտ.
Քրտի՛նք թափէ մինչև իրիւն,
Զոհեւո՛վ խկ հանգիստ և քուն.
Հո՛ն զարմանքէս ու սարսափէս
Կըրա՛կ կտրիմ ես պարզապէս.
Ոսկի՛ն սառկի, բոլոր իմ հոգ,
Ապրի՛լ է միայն՝ ուրախ, անհոգ.
Ըսեն. — մի քիչ թէ զոհես քուն՝
Ոսկի՛ շահիս տունով լեցուն. —
Ես յօրանջեմ, և՛ անհոգ սըրտիւ
Կը գոչեմ — վաղի՛ւ...
Զըկա՛յ մի բան ա՛յնքան ազնիւ՝
Քան զայս բառ — վաղի՛ւ: —

Երբ տեսնեմ թէ՛ մի խե՛ղճ գրագէտ
Ժի՛ր՝ մեղուի՛ պէս՝ գըրէ՛ յաւէտ.
Ոյր լեզուի՛ն՝ բոց և խանդ՝ խօսքին,
Շնորհէ անխօս, դեղի՛ն ոսկին.
Ոյր դէմքի՛ն տակ անայլալակ՝
Սի՛րտ մը ծըխի խրո՛խտ զինչ փայլակ.
Ոյր կերպարան՝ լըքո՛ւն, տըժգո՛յն՝
Վառի՛ յանկարծ ի փայլ ոսկւոյն.

Հո՛ն սիգօրէն թօթուեմ ուսերս .
Ըսեն – գրի՛չդ է լա՛ւ քան սուսերս ,
Ա՛ռ մէկ տողիդ՝ ոսկի՛ անթիւ . —

Ես գոչեմ – վաղի՛ւ –
Կ'երդնում չի՛ք բան մ'այնքան աղնիւ՛
Քան զայս բառ – վաղիւ – :

Արի՛ւն քրտնի թող փաստաբան .
Յուզե՛լ ձայնիւն ըզդատարան .
Թո՛ղ խեղճ կղերն մաչէ ուղեղ
Գրաւել ուսեալն , ուսմիկն անմեղ ,
Գրադէտն անխոնջ թափէ՛ նախճիր՝
Շատկեկ հանել թուղթին վրայ գիր .
Հէ՛ք վարժապետն թող աշխատի՛
Հրահանդել զիւր սան դեռատի .
Ես պիտ' անցնիմ նոյն խկ դրախտէն .
Փա՛ռք , սէ՛ր , ի՞նչու հաւատս խախտեն .
Իմ համարս է գիշեր ու տիւ՛

Մրմնջել – վաղիւ –
Կա՞յ բան մ'այնքան վեհ կամ աղնիւ՛
Քան զայս բառ – վաղիւ :

Անշո՛ւշտ եմ թէ՛ գրերկրանս ո՛վ որ՝
Ճանչէ՛ չ'ըսեր խօսքս անսովոր .
Եւ է՞ր , մինչ ճոխք խընդան քըթիդ ,
Յողնի՛ն անդուլ աչքդ անքըթիթ :
Թուղթի՛ն վրայ՝ ոսկւո՛յ սիրուն .
Ի՞նչ է ոսկին , թէ չը՛տար քուն՝
Քո՛ւն , դուն օրրես զինչ քանարիկ
Հաճոյքներով սիրտս անառիկ .
Թէ՛ զոհելով մի ժամ զիմ քուն՝

Ինձ տան մի մեծ իշխանութիւն
Ոչ խկ լըսող կ'ըլլամ , մեղմիւ
Գոչե՛մ ես – վաղիւ –
Եւ ի՛նչ այնքան է գերազնիւ
Քան զայս բառ – վաղիւ – :

Թող չը պանծա՛ն լորտք մեծագոր .
Թէ՛ մեծարունին հանապագոր .
Ճառերն իրենք չեն խմբագրեր .
Է՛ , է՛ , սին են նոցա փառքեր .
Ես այնպիսի շո՛ւք մը կ'ուզեմ ,
Զոր վայելէն ետք՝ խորխտ , վսեմ ,
Միտքէս անցածն՝ առանց խօսքի՛
Շո՛ւտ կատարուի . սատկի՛ ոսկի .
Ի՛նչ շահ լինել ճոխ փառաւոր ,
Երբ ընդմիջտ մարդն չէ շահաւոր .
Լորտերն չ'ունին զիմ շուք , պատիւ՛
Երբ գոչեմ – վաղիւ –
Զէ՛ , չիք մի բան այնքան աղնիւ՛
Քան զիմքս – վաղիւ – :

Որպէս աղբերն հէ՛ք եղջերու ,
Կամ կաթին՝ դառն անմեղ ջեռու .
Նոյն անյազ տենջ յիս բորբոքի ,
Մեղկութեամբ զիմ վառէ հոգի .
Նինջն է որ զիմ պսակէ հաճոյք .
Նինջո՛վ դառնամ մանուկ մ'առողջ .
Քո՛ւնն ունի գոգ թեւ թըռչունի ,
Առանց այնր սիրան իմ թիւ չ'ունի .
Հոն տեսնեմ զայն սուրբ աւազան՝
Ուր տայ հաճոյք զիւր դաւազան .

Եւ զիս մարդէ հեշտ համբուրիւ
 Մըմնջել - վաղիւ -
 Ա՛հ, ի՛նչ քաղցրը է եւ ի՛նչ ազնիւ
 Սերտել միշտ - վաղիւ - :

Արդ ծուլութիւն եւ փափկութիւն
 Ձոյդ քոյրեր են. — վա՛յ խեղճ մարդուն. —
 Քրտնի՛լ, վազե՛լ և մի խրախճան
 Ձը վայելե՛լ... ա՞յս իւր վախճան.
 Առ ի՛նչ այսքան քրտինք ու ճիգ.
 Երբ մա՛հն է իւր հուսկ դատակնիք.
 Է՛հ, չե՛մ հոգար, չե՛մ խակ մտածեր.
 Ծուլութիւնն է՛ իմ կեանք ու սէր.
 Է՛ր զիս խռովէ փառաց շըշուկ.
 Կորի՛ մտածմանց հո՛գ սրտմաշուք.
 Ես՝ քո՛ւն թաղուած՝ դիշերն ու տիւ՛
 Սերտե՛մ միշտ - վաղիւ -
 Ոչի՛նչ այնքան մեծ, ազնիւ
 Քան զի՛մս - վաղիւ - :

10 փետ. 1889 Տարեցիտ

Յ Ի Շ Է՝ Ձ Ի Ս

Յիշե՛ զիս, դո՛ւ, սիրո՛յ, դեղո՛յ նուազահան,
 Յիշե՛, հասնիս երբ մի ժեւոտ կող լերան,
 Ուր մենասէր կ'երգեն տրտում տատրակներ,
 Քեզ բարի երթ մաղթեն երգովք տխրանուէր.

Աչերդ անոնց երբ ուղղես՝
 Լա՛ց, լա՛ց մեր սէրն աղեկէդ...:

Յիշե՛ դու, ո՛ միայնութեան սիրահար,
 Յիշե՛ ծովու երբ ափն հասնիս վեհափառ.
 Ուր լուսափայլ յասմիկի նման ալիներ
 Ողջոյն տալով կուգա՛ն շոյել քո ոտներ.
 Լա՛ց, միմունջներն երբ լըսես՝
 Թուրե՛անդ՝ նուաղո՛ւն ալեաց պէս...:

Յիշե՛, մտերի՛մ, երբ նաւակներ իւրեանց թե՛
 Ալեա՛ց վրայէն նա՛ւ թըռցրենք քեզ թեթեւ.
 Ինչպէս խլեն մօր մը գիրկէն զիւր մանկիկ,
 Որ կը ճըչէ, հա՛ բնութիւն լա՛յ յուշիկ.
 Հա՛ կ'արտասուէ հէ՛ք Թուրեան,
 Ահա՛ ծնողքդ որ կ'ողբան...:

Յիշե՛, Բիւրա՛տ, զուարթամիտ նաւն երբ ելնես,
 Ձանեգրութիւնն լուռ Ովկիանուն երբ դիտես
 Երբ տեսնես բարք լուսաւորեալ աշխարհի,
 Երբ Մամուրեանն տեսնես, սեղմես աջն արի.
 Յիշե՛ քո տխուր բարեկամ,
 Որ քեզ խորհի ամեն ժամ:

Եւ նաւն ահեղ երբ զիւր ընթացքն սկըսի,
 Եւ փրփուրներ ցանուին - միասցես՝ս բարեաւի.
 Յայնժամ մատներդ դի՛ր միանգամ վրայ կուրծքիդ,
 Տե՛ս, չը՞ տրուիր, տե՛ս, չա՞յլայիր հուր հողիդ.
 Ա՛հ, երբ զգաս՝ թէ հեծէ,
 Հո՛ն ևս, հո՛ն ևս զիս յիշե՛...:

Յիշե՛ Ձմիւռի նաւակայքը երբ հասնիս
 Յիշե՛ ցամաքը թրթռալով երբ ցատըխս.

Վերջին անգամ՝ յիշէ՛ զմտերիմդ , անծանօթ՝
Արք երբ սեղմեն աջդ և լինին քեզ ծանօթ .
Յիշէ՛ և մի շիթ արտասուք՝
Յօղէ՛ սիրոյս արտամասուգ :

Երբ սիրելի՛ Նաւասարդեա՛նն ողջունես .
Երբ իւր առջին թափես իղձե՛րս աղեկէ՛ղ .
Հո՛ն եւս յիշէ՛ , և ալ մոռցի՛ր ըզթուրեան .
Մոռնա՛ս դու զիս , գիտցիր մինչեւ յաւիտեան
Դեզ հալածէ՛ , իմ ստուեր
Վըրդովելո՛վ քո օրեր :

13 փետ. 1882 Էյպիսսան

ԱՌ ԿՈՅՆ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԱՄԵԱՅ

Հ Ա Ռ Ա Ձ Է

Յիշէ՛ զիս , ո՛ր կոյս ,
Դոյր ցաւած հոգւոյս .
Տըխուր աչնան երբ դալուկ , ո՛հ թափթըփէ՛ ծաղիկներ ,
Երբ դու՝ տրտո՛ւմ , ահլնկոր՝ զխտես կապո՛յտն ու
Եթեր ,
Զմբան հովերն երբ մռնչեն և բընութիւն երբ սառի ,
Եւ դու խոկաս , ա՛հ , լըռիկ , ձեռն՝ ի ծնօտի զերդ այրի :

Յիշէ՛ , գըթո՛տ կոյս ,
Ձանբաղդիկս անյոյս ,

Զուարթ հովեր դարնայնի երբ քո պարտէ՛ղ այցելեն ,
Եւ բուրումնէ՛ր քեզ բերեն եթերակա՛ն վայրերէն .
Յիշէ՛ զիս , երբ ծաւալես հովուն դէմ՝ վա՛րսքդ բուրա-
զուարթ .
Եւ զմայլո՛ւն սէ՛ր շընչես , արբին շունչովդ շուշան ,
Վարդ :

Յիշէ՛ զիս , ո՛ր կոյս ,
Անյո՛յս եմ , անյո՛յս՝
Տըխուր օրէն այն ի վեր՝ երբ սիրտդ զլացար ինձ շնոր-
հէլ ,
Երբ ըզճակատ քո մըթնած տեսայ երկնից զերդ ամպեր ,
Անիոյթ մ՛ըլլար , գէթ յիշէ՛ , մ՛ըլլար զինչ բաղդ ան-
նուէր ,
Ժըմիտ ի շուրթ երբ տեսնես , որ թըռչին զոյգ տառ-
րակներ :

Յիշէ՛ , գըթո՛տ կոյս ,
Կմախ՝ք եղայ անյոյս .
Յիշէ՛ զթշուառս յուսահատ , որ քեզ տեսաւ , հարա՛ւ
քեզ .
Յիշէ՛ , ո՛հ զայն հէք պանդուխտ , որ գիշերներն դառ-
նապէս
Լուսնին առաջ սիրէր լալ , և հառաչներն իւր տըխուր՝
Նորա բեկբեկ թեւերով առ քէ՛ղ յըղէր յուսակառուր : . . .

Յիշէ՛ զիս , ո՛ր կոյս ,
Հատաւ ամեն յոյս .
Յիշէ՛ զայն , որ ամեն օր արշալուստյն կ'ախորժէր՝
Դիտել զերկնից կապուտակ և անդ՝ զարփի քո աչեր ,
Այն որ սիրէր քո յուշով մինչ առաւօտ մնալ անբուն ,
Եւ երազել , քեզ , ո՛վ կոյս , արդեօք մոռցա՞ր զիւր ա-
նուն :

Յիշէ՛, անգո՛ւթ կոյս,

Պանդո՛ւխտս այս անյոյս,

Որ սովոր էր փարատել հոգսերն ամեն քո վերայ.

Զի լոյս ճակտի՛դ վերայ բազմած տեսնէր զհաստիչ
գերակայ,

Այն՝ որ ի մէն մի բառ քո տեսնե՛լ, գտնե՛լ կ'երագէր,

Մի նո՛ր հըրաչք, նո՛ր հրապոյր, նո՛ր գեղ եւ նո՛ր
չնորհներ.

Յիշէ՛, զիս, ո՛ր կոյս

Քնար, շիրմիս անլոյս.

Ահա՛ մեկնիմ ես անյոյս, մեկնիմ ի քէն առ յաւէտ.

Կեանքըս աւա՛ր քեզ թողած՝ անվերջ ցաւերս տանիմ
հետ,

Մեկնիմ ի քէն, ո՛վ աղէտ, մեկնիմ խնդրել ինձ շիրմի,
Ի զձե՛րս ամեն թաղել հոն, թաղել և սէր ոխերիմ:...

Յիշէ՛ զիս, ո՛ր կոյս,

Օրհաս կենցաղւոյս.

Մի՛ խրոսովիր, ո՛վ անգութ, ալ մի՛ հոգար գոռող կոյս,

Ո՛չ ես, ո՛չ ես տեսնես զիս, շիջուցիր հո՛ւրն իմ հոգ-
ւոյս.

Այսուհետեւ, բրաբիո՛ն, թող չը խռովեն, կ'աղաչեմ,
Իմ այս յետին հառաչքներ, զոր նուազ ձայնիւ քեզ
կ'ուղղեմ:

Յիշէ՛, չքնա՛ղ կոյս,

Դահիճ արեւուս.

Ա՛լ մի խռովիր, զի լացերս մինչ քեզ հասնին, ա՛հ,
չիրիմ,

Ի ցուրտ շիրիմ ես վաղուց արդէն մշտած կը լինիմ,

Երբ անըզգոյշ մի մտերիմ անունս հընչէ՛ մի դողար,
Ահա՛ կ'ընկնիմ, ա՛խ, աչնան հո՛ւսկ ես տերեւ դաւիւ-
հար...

Յիշէ՛, անգո՛ւթ կոյս,

Վարդն իմ անցելոյս.

Սըրտասարսուռ, մեղանոյշ ա՛խ, ա՛խ, հովերն երբ
աչնան,

Մեռելական կոծերով քեզ ցուրտ շիրմն իմ ցոյց տան.

Արհամարհո՛ւտ որպէս խոտ՝ սա՛ռն աչերով մի՛ նայիր

Գէթ շիրմիս մէջ մի՛ խռովեր ա՛հ, զիմ հանգիստ սրբո-
մալիր:

Յիշէ՛, գոռո՛ղ կոյս,

Արջալոյս հոգւոյս.

Խնդրեմ աղերսքս մի՛ մերժեր և գէթ յայնժամ կաթ
մ'արտասուք,

Անշո՛ւք շիրմի վրայ հիքիս թափե՛, ցոյճ՝ աչք՝ ի սուգ.

Պաղ շիրմին մէջ՝ թո՛ղ հոգիս հանգստեան քուռն իւր
ննջէ.

Եւ թող այլ ևս մոռնա՛յ զքեզ լո՛ւս ևս սիրովդ հա-
ռաչէ՛:...

1880 Մարտ 4 Երուսաղէմ

ՓՈԳՐԻԿՆ ՍՍՐԳԻՍ

Սաղապաճեմ լուսնին նըստա՞ք
 Սուզիլ յայն վեհ եղանակ
 Զոր հընչէ թուրք նուագախումբ մը ճարտար
 Բամազանի զով գիշերներն անդադար .

Ի՛նչ կ'զգաս հոն , ի՛նչ կարօտ
 Մինչ կոխես մարդ ու արօտ . . .

Այդ գիշերներն ի յո՛ւշ կ'ածեմ երբ լըսեմ
 Զանուշի՛կ ձայն հըրեշտակի՛ն վըսեմ .

Յոյր վերայ ճակտին
 Կը նազէ լուսին .
 Մանկի՛կ , բե՛ր ճակատդ
 Պագնեմ խանդակաթ :

Արդ յադինեան դեղն յառէ՛ք ,
 Ի՞նչպէս ծագի հոն արեգ .

Ի՞նչպէս գարուն շաղ , շող և խինդ ու հրապոյր՝
 Յանէ ի յասմ , ի մանուշա՛կ քաղցրաբոյր .

Կամ ի՛բր աղբերք հոն սահլին
 Համբոյրներով մանկային .

Տեսնել կարծեմ զայդ լոյս աղբերքն ու գարուն՝
 Երբ տեսնեմ զայն հրեշտակ մանկանց ի պարուն ,

Յակն ցոլայ արեւ
 Զերդ ցօղ ի տերեւ .
 Մանկի՛կ , 'մ'ամաչեր՝
 Պագնեմ զայդ աչեր :

Րոպէն՝ երբ ծնաւ քեզ քօ մայրիկ ,
 Ի՞նչքան խնդաց քօ հէք հայրիկ .
 Ժամն , որ ծննդեանդ հընչեց քաղցրիկն աւետիս ,
 Ի՛նչ սուրբ խոհեր զարթեան ի միտ պուէտիս .
 Հոգեակդ՝ փոխուած ի զեփիւռ՝
 Խաղայր ի սիւք խընկասփիւռ .
 Բա՛րէ , ո՛չ ևս հծծէ հովիկ ծառոց վրան
 Խնդրէ զգլխիկդ , ուր հոյլ ի հոյլ թըրթըռան
 Խոստով քանդադարեղ՝
 Զերդ ցօղք ի բիւրեղ .
 Ե՛կ տամ ջերմ համբոյր՝
 Գըլխո՛ւդ կաթնաթոյր :

Գողտրիկ կեանքդ է դեռ ամսօրեայ ,
 Թուշերդ վառեալ՝ դոյն բոսորայ .
 Բայց մի շարժամբդ մեզ ի՛նչ յոյսեր կը ծագես .
 Դո՛ւ որ զանցեալն համակ ծրարեր ես ի քեզ .
 Հրեշտակք հըսկեն թո՛ղ քու վրայ .
 Լոյս քեզ յականց տան սափիրայ .
 Եւ մայրդ անոյշ ի խինդ և թինդ սիրտ յերեր՝
 Պիշ պիշ քօ հօր պատմէ զանմեղ այն խօսքեր
 Զոր մեղրածորան
 Բըխէ քոյդ բերան .
 Ե՛կ , տամ ըզհամբոյր
 Բերնի՛դ չնորհաբոյր :

Ի՞նչպէս մանկի՛կ ես քեզ օժտեմ .
 Գոհա՞ր կ'ուզես թէ տաղ վըսեմ .
 Այլ ի՛նչ կ'արժէ գոհարն , որ լոկ փայլ ունի ,
 Ի՛նչ է գոհարն , առ այն ցօղեր սիրունի ,

Որ աչերէդ թափի չքնաղ .

Զէ՛, երգ կ'ուզես դու, նուա՛գ, տա՛ղ,
Որ սուրբ գեղոյդ նկարուի ցոլումն այն անձառ,

Որ մարմնացնէ՛ ի քեզ հաւուդ ըզհանձար .

Մտադիւր շնորհեմ քեզ

Զայս տաղ սիրակէզ .

Ա՛ռ զայս քեզ մանեակ՝

Զինք ոսկեայ պըսակ :

Աին չէ՛ն իղձերն, զոր մեզ կ'ազդես .

Ապագայիդ մընամք ի տես .

Հո՛ն կայ, մընայ քեզ պերճաշուք մի համբաւ,

Որպէս երկին պսակեալ ի քեզ ինչ ամբաւ .

Մատներդ ահա գրիչ շարժեն,

Լեզուդ, ձայնիդ զԱստուած հընչեն,

Պարտք, իրաւունք քեզ կը փարին անձկանօք .

Ըջքեզ օրհնեն թշուառ այրին, որբն անօք .

Ծնողացդ կեանքն ու սէր,

Հրեշտակ կենսաբեր .

Լե՛ր խինդն հօրդ աղնիւ

Ազգիդ փառք պատիւ :

30 Յունվար 1889



ԱՌ ՆՈՐԱԾԻԼ ՏԵՐԵՒ ԳԱՐՆԱՆ

Ողջո՛յն քեզ, գարնան նորածիլ տերեւ,
Քե՛ւ վերածընին յոյսե՛րն ի դերեւ .

Աշուն՝ իմ ճակտիս տուաւ թափութիւն,
Եւ ձըմեռ՝ կապտեց խոհե՛րն իմ զուարթուն .
Դու՛, իմ սէր, ա՛հ, քե՛ւ՝ խայտայ իմ հոգին
Խանդո՛վ կաթողին :

Կա՛ր մի ժամանակ, երբ մա՛յրն իմ անոյշ,
Քեզմո՛վ պըսակէր ճակա՛տն իւր քնքոյշ .
Եւ ես եղբօրս հետ՝ ա՛խ, այն ժամանակ,
Կ'իյնայի՛նք արբէլո՛ւ յիւր գի՛րկ սիրունակ .
Անցա՛ն այն օրեր, զանոնք արդ չիրի՛մ՝
Ծածկէ՛ ոխերիմ . . .

Ա՛խ, յորմէ հետէ յանշո՛ւք մի անկեան՝
Մոռացման քունով մայրս, եղբայրս հանգեան՝
Ես անմըխիթար հեծեծեմ եւ լամ
Իմ երջանկութեանս ծաղիկնե՛ր թառամ .
Եւ այժմ յուսաբեկ՝ աչերս քե՛զ դառնան,
Ո՛վ տերեւ գարնան :

Ո՛չ ես վարդագեղն վառէ արշալոյս,
Ա՛հ, զաճիւնացեալ իղձերն եղկելոյս .
Զիս մահուան պատէ խորհո՛ւրդն ու ստուեր,
Զայն ձըգուի հոգիս յուշո՛վք սրբանուէր .
Հո՛ն դու, տրամանո՛յշ, մօրս շիրմին վերեւ,
Բացուիս, ո՛վ տերեւ :

Թող չողա՛յ արեւ, նազի՛ պայծառ այգ,
Թո՛ղ խինդ քարոզեն խըրո՛խտ չեփորայք .
Ես ընդ բնաւս ըզքեզ խնդրեմ, ո՛վ տերեւ,

Դու ցօ՛ղ, բո՛յր հեղուս չիրմա՛ց տրամարե ,
 Օ՛ն , բուրէ՛ քաղցրիկ , դո՛ւ լընուս միայն ,
 Սիրտս ու միտս համայն :

Ես ցանգ խոհերովս՝ թէպէտ ընդունայն ,
 Պիտի սեւեռի՛մ ի լուս չիրիմն այն ,
 Հո՛ն երազեմ զայն եղբայր անարեւ .
 Առանց ոյր կեանքս է տանջա՛նք մ'արդարեւ .
 Գարնա՛ն տերեւիկ , դո՛ւ գոնէ հոգւոյս
 Մեղմէ՛ զվիշտն անյոյս :

Քանի՛ մայրս , եղբայրս սեւ հո՛ղն են իջեր՝
 Դո՛ւ հըսկես նոցա վրայ զտիւ և զգիշեր .
 Դու խորհըրդաւոր բան մ'ունիս ինձ միշտ .
 Որ սրբագործէ զիմ դառնադառն վիշտ .
 Երնէ՛կ , որ նոցա՝ քեզ բաղդ է ընկեր՝
 Լինիլ հուսկ ընկեր :

Ընկա՛լ ցօղաթուրմ տերեւ՝ գարնայնի
 Արտասուքս , որ իտեսդ աչքէս հեղանի .
 Ա՛ռ հուր հառաչներս և ցօղերու՛դ հետ՝
 Թափէ՛ սիրեւեացս հողո՛յն վրայ անհետ .
 Ըսէ՛-զայս չիրմացդ ձօնէ՛ զինչ բուրեան՝
 Վարդ՝ Մ. Ա. Թուրեան : . . .

20 փետ. 1890. Տարեմէկ .

Գ Ո Ն Ա Ր Ի Կ

Տեսա՞ծ էք
 Դուք երբէք
 Նորափըթիթ գարնան մէջ
 Հուսնին քընքոյշ ելլէջ .
 Յայնժամ ին՛չ
 Փայլ սուրբ ջինջ
 Կ'առնու երկնից կապուտակ .
 Կարմիր , կանաչ , մանուշակ .
 Այո՛ , չըքնա՛ղ է լուսին մինչ կը շողայ ,
 Յանհունութեան՝ որպէս մի հարս նորընծայ .
 Այլ զի՛ մութ է առ հողեղէնն այն հրեշտակ ,
 Որ վա՛ռ քան զայն և նուրբ է քան զարուսեակ .
 Յաշխարհի այն կուսան ,
 Չէ՛ , չ'ունի՛ զիւր նման .
 Գոհարի՛կն է այն կոյս ,
 Գիրկ ու նուրբ , թարմ զերդ լոյս :

Ելած է՞ք
 Դուք երբէք
 Առաւօտներն զով աշնան
 Երբ դեռ աստեղք պըլպըլան .
 Դիտել հոն
 Ձհորիզոն .

Ի՞նչպէս արփին այն պայծառ
 Կ'ողղէ այգուն ծոցեր վառ .
 Այո՛ , գրաւուն է յար երկնից հորիզոն .
 Ձի անդ փթթի վարդից փափկիկ բիւր կոկոն ,

Այլ, հորիզոն և ո՛չ ծաղկունք երփներփին՝
 Ձէ՛, չեն կրնար հասնիլ գեղոյ այն կուսին :
 Այգն իւր ըւրիւր պըջրանքով
 Շառափնի՛ անոր քով .
 Գոհարի՛կն է այն կոյս .
 Գեղաշող իբրեւ լոյս :

Դիտա՞ծ էք
 Շանթկն ետք
 Անճրեւոյ զով մի կաթիլ,
 Ի ծոց վարդին փափկածիլ,
 Այն ի՛նչ փայլ
 Երկնակայլ .
 Կուգայ յա՛նկարծ ի հանգէս,
 Բնութեան յանհուն ասպարէս .
 Այլ քանի՛ քաղցր է քան զայդ այն տեսարան ,
 Ձոր կուսիկն այն պարզէ աչացս յանդիման ,
 Ի՛նչ խոհք, հայիմ երբ ես ներս աչաց շուրջ,
 Ձոր բոլորէ մի ծիր՝ չըքնա՛լ զերդ անուրջ :
 Հըրեշտա՛կ մի սիրով
 Անդ հեզու սէր , գորով ,
 Եւ Գոհարն է այն կոյս ,
 Գեղեցի՛կ իբրեւ լոյս :

Յառեւ է՞ք
 Դուք երբէք
 Յականակիտ մի վտակ
 Որ կը սահի անապակ՝
 Շուշանաց
 Մէջ բացուած

Այն ի՛նչ հեշտին թոյր եւ բոյր
 Եւ գըրկախառն ի՛նչ համբոյր .
 Քան զայդ անուշ բուրէ կոյսն այն վարսահուր ,
 Ո՛հ, կոյս չէ նա , այլ զուարթնո՛ց է դա քոյր .
 Թաթքն երբ ձըգունին առ մայրենին համբոյրներ՝
 Կարծես թէ հոն շուշան վարդեր են բացուեր ,
 Հուր աչեր սէր կաթեն ,
 Սէ՛ր կաթի եւ շուրթէն .
 Գոհարիկն է այն կոյս .
 Գիրգ եւ նուրբ իբրեւ լոյս :

Նկատա՞ծ էք
 Դուք երբէք
 Մի շող արփւոյն , որ մեղմիկ՝
 Ոստոց մէջէն թափանցիկ՝
 Ձերդ ոսկի՛
 Սողոսկի ,
 Յալի՛ս վըճիտ աղբիւրին
 Խաղա՛լ, շողա՛լ անդ լին .
 Սիրեմ ծաղկունս համբուրող զայդ արփւոյն շող ,
 Որ ջուրին մէջ խաղայ մեղմիկ դողն ի դող .
 Ձե՞ն այդ շողեր հըրեշտակի՛ն սուրբ աչեր ,
 Որ մօրն ի գիրկ ճառագայթէ՛ զերթ աստղեր ,
 Ո՛վ մանկիկ , այդ աչեր
 Կարեն մահն խոկ գերեւ .
 Գոհարի՛կ , անմե՛ղ կոյս ,
 Բոցավառ իբրեւ լոյս :

Լսա՞ծ էք
 Ձանճառ երգ
 Սոխակին , որ աչք՝ ի սուգ՝

Ծաղկանց վրայ գեղաշուք

Տխրանուէր

Նուագներ

Հիւսէ՛ մինչեւ առաւօտ

Արբշի՛ւ ի սէր և կարօտ .

Մերթ գայլայլի՛կդ յուզէր միայն զիմ հոգեակ ,

Մի տխրութի՛ւնն զիս մերթ ձրգէր քեզ , սոխակ ,

Այժմ , որ ի ձայնդ կարգամ ներա ձայնն անուշ ,

Քե՛զ լոկ խնդրեմ , արդեօք խե՞նթ եմ թէ ապուշ ,

Ներա ձայնն՝ անուշակ

Քան ըզքոյդ չէ՞ , սոխա՛կ .

Եւ Գոհարի՛կն է այն կոյս ,

Ճառագայթո՛ղ իբրեւ լոյս :

15 Դեկ. 1887



Ե Ղ Ե Ր Ե Ր Դ Ք

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Կ Ա Մ

Մ Ա Ղ Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Ա Յ

18 Օգոստոս 1884

Ա .

Աշնան տերեւէք անկե՛րուք . անհետաջի՛ք , ցնո՛րք ունայն .
Ահա դժխեմ լընո՛ւն ցաւք զիմ էութիւնս ամենայն .

Մարթ ինչ՞ իցէ ըզբնութեան ըզհակառակըն պընդել .

Համբերե՛լ՝ ա՛յս քո բաժին , քո բաստ՝ ո՛վ սիրտ անընդել .

Լա՛ւ , հառաչել , ժուժա՛ւ , կըրե՛լ յաւիտեան ,

Գուցէ՞ քան զայս ինչ դաժան :

Ի մենութեանս ի պահու ամբոփեալ զմիտս իմ ի զո՛ւր,
 Ըղիորս յուզեմ այս սրտիս, որ մի՛շտ, ընդ մի՛շտ է թափուր.
 Հըրափետուր իմ հոգւոյս խառնեմ խարոյկըս քերմին,
 Գտանեմ անդ սո՛սկ յիշատակ՝ յաճի՛ւն շրջեալ բնաւին,
 Բարէ՛ յուսոյս, ո՞ւր այլ երթալ ինձ պիտի,
 Յո՞ր կոյս, յո՞ր վայր, յո՞ր գօտի . . . :

Յանհուն ցաւոցս ի քուրայ ստիպիմ դառնալ ես անդրէն,
 Ա՛նդ ինձ հեշտին հանգըստոց, ա՛նդ հանգստեան ինձ խըշտեակ.
 Եւ զի՞նչ երբէք ինձ պիտին ձայնք խնդութեա՛նց անապակ.
 Դառն հեծութիւնք, հուր հառաչք, առ ի՞նչ աշխարհս այս ծախրեն.
 Առ ի՞նչ և ո՞ սգայցէ և կամ լացցէ ո՞վ.
 Ո՞չ հէք պանդուխտն յարախռով . . . :

Յամեներան ըզգացմանցս ի լճակ թո՛յն խառնեցաւ.
 Ո՛չ ծագեցաւ ինձ օր մի՛ յոր չ՛ըզգայր սիրտս մի նոր ցաւ.
 Ճակատադի՛ր անըմբեր զամեն խամրեաց զիմ ծաղիկ,
 Փոխան թերթից հոտաւէտ ինձ փուշ մատոյց եւ դժնիկ.
 Եւ ո՛վ աղէտք, վարդք յուսալիւր իմ գարնան՝
 Յեղակարծ իմն խամրեցան . . . :

Այն ինչ կենացն իմ ծաղիկ ի գեղ բանայր հրաշազան՝
 Եւ ինձ ձօնել խոստանայր բուրմունն անմահս յաւիտեան.
 Փթըթել զգրախտն ինձ պայծառ շնորհեալ յաւէտ ինձ նոր կեանս,
 Եւ զանցելոց արտասուս ամեն փոխել ի հրճուանս,
 Եւ զիս յուսով բերել յաշխարհ միւսանգամ,
 Զերդ գի՛րգն Եւայ առ Ադամ:

Աւա՛ղ, այս յոյս եւ այս խինդ ի մի՛ն եւեթ ի հարուած
 Լուծանելոց էր իսպառ, ո՛վ զաչացու, ո՛վ կոյր բաղդ.
 Լուծանելոց եւ պատիր զայն կարծեցեալ լոյս զուարթ՝

Համակ ի ստուե՛ր փոխարկեալ՝ զիս թաղելոց յամբաւ լաց.
 Եւ արդ գոչեմ Լամարթինայն ես հանգոյն .
 Դա՛մբան հոգեակն իմ համբուն . . . :

Էր իմ սըրտին լիութիւն ծրարեալ ի մին յայն ծաղիկ,
 Նա՛ տան մերոյ էր պարծանք և ճառագայթ գեղեցիկ.
 Հարսը՛ն քընքոյշ իմ եղբօր՝ հօրս հուսկ աւանդ սրբազան՝
 Հընգետառան ամաց յոյս, վայելութիւն ողջ մի տան.
 Նա՛ էր իմ քոյր, եղբայր, իմ մայր սիրական,
 Նա ինձ բնաւից էր փոխան . . . :

Աւա՛ղ, շնորհաց ի շընորհս գեղաղարդեալ նա սուրայր,
 Աշխարհի բնա՛ւ գեղութիւն նըսեմանայր առ այն փայլ
 Յամբըծութիւն իւր սրտին և ի հոգւոյն չըքնաղ գանձ՝
 Փթըթեալ զերդ կո՛յն երկնային բնաւից բերէր զնախանձ.
 Եւ շնաշխարհիկն ուր նշուէր իւր պատկեր՝
 Անդ ողջոյն այգ մի ծագէր . . . :

Արփիագեղ իւր աչաց՝ զոյր տիեզերք փառապանծ
 Ո՛չ բաւէին ըզմի՛ն լոկ ցոլալ նշոյլ երկնազուարթ .
 Անմահ ճաճանչք խամրեցան ի մի եւեթ յական թարթ .
 Եւ տաճարի՛ն այն գեղոյ, այն քան շնորհաց եւ զմայլմանց
 Ոսկենշոյլ և փայլ ի փայլ ծիրանի .
 Ի մութ յաւերժ ներկանի՛ . . . :

Նաղելաշո՛ւքն ըզգլխով վարսի՛ցն հեղեալ վէտ ի վէտ՝
 Յաստղափրթիթ ճակատուն յօրինէին ինչ գըմբէթ .
 Կամար անհո՛ւն, գերանճա՛ռ՝ ուր արշալոյս երկնավառ
 Երկնից ողջոյն աստեղօք նազէր ի ճեմ գեղապար .
 Ա՛նդ և լուսին ծագէր յունիցն ի կերտուած՝
 Իբր ի միջոյ կողերաց :

Գեղեցկութիւն այսգունակ մեզ ընդ խնդիրց հեշտ ձօնիս
Մերձակայից տարակայց յըզէ՛ր զամբաւ երանիս.
Վերնոցն անգամ զուարթունք յերանութեա՛նցն անվախճան՝
Սըբրացեալ՝ իմն ընդ շնորհացըն փափկութիւնս ընդ այսքան՝
ՅԱդի՛ն թեւեւ տային նըմին հրաւերս
Եւ արեւն այն խաւարէ՛ր . . . :

Իսկ ներեցեր, դու Աստուած, ձգեւ մահուն զիւր մանգաղ՝
Ի գեղաղէ՛շ նազելին, հրաշակե՛րտն այն երկրային,
Զոր երեսուն հազիւ ամբ շնորհազարդել բաւեցին,
Գե՛ղ գերանճառ, ում ո՛չ մին յընկերակցաց իւր մատաղ՝
Յամենագեղ շնորհացն հանդէս ո՛չ բաւէր՝
Գալ մըրցանացն ի վըսեր :

Շիջուցանե՛լ զայն արեւ, եւ որպիսո՞ւմ դեռ գեղոյ,
Զլասցիս, ո՛վ բաղդ, ըզլեղիդ մատուակել մահածոյ.
Արդարութիւն անողոք, յագեա՛ց, մեռա՛ւ նազելին.
Եւ դո՛ւք, զուարթունք, յայսմհետեւ անկարեկիր խնդագին՝
Զանմեղութեան և ըզգեղոյ զանդարձ նինջ,
Նըկատեցէ՛ք ի յերկնից :

Բայց ես ի զո՛ւր զառանցեմ. ի դառնութեան իմ ցաւոց,
Ի զո՛ւր բողբոս արկանեմ, արդարութեան շիջալ բոց.
Էա՛նց արեւ, հա՛ս խաւար, կընիք մահուն անյեղի.
Գարձա՛յց անդրէն ուստ ելի յուսմ՛վ, խնդա՛ւ լիովի.
Ա՛նդ նազելին ինձ մեղմկարդայ հըրաւեր,
Նկատել վերջին իւր ժամեր

Բ.

Յետի՛ն ժամեր, աւա՛ղ, ի՛բր ես ի ցաւս իւր թողի զնա,
Որպէ՛ս անգէտ զեղելոցն ի տար աշխարհ մեկնեցայ . . .

Եւ հեծէ՛ր նա ի մահ հիճ բիւր բիւր ցաւոց մահային.
Հեծէ՛ր տատրակ սիրային, ո՛հ, դեռ սիրէր նա զգրգունս
Սիրէ՛ր ցոլալ դեռ զաչկունան յանմեղունա՛կ ի հրճուանս.
Եւ ի հոգւոյն բիւրեղակե՛րտն հայելի՛
Նըշուլէլ փա՛յլ տարփելի :

Եւ հեծէ՛ր նա զձիւնածղի յեցուցեալ ձեռն ի ճակատ.
Եւ ի դիւր բուռն իւր ցաւոց՝ յոր նէ դընէր յուսահատ՝
Խորհէր զերկնիցըն խորհուրդս հրեշտակակերպ հառաչմամբ.
Սիրոյ հրեշտակն անդ հըսկէր պարածածկեալ յոսկի ամբ.
Հսկէ՛ր ջեռուլ զգիրդ անգաման, այլ շիջանէր արեւն այն.
Եւ յայնքանոյ շողայր գեղոյ հիաքանչ՝
Առկա՛յծ եւեթ մի ճաճանչ :

Տեսի՛ ըզնա . դալկադէ՛մ, այլագունեալ էր իսպառ.
Անմահաբոյր վարդք այտիցն՝ տիպ նարկիզան ցըրտահար՝
Կիսաթըլկիտ նուաղեալ, ո՛հ, դեռ փթը՛թե՛լ ցանկային,
Ժմի՛տս սիրոյ եւ գեղոյ լ՛անմեղութեան մանկային.
Այլ գալկութիւն մահային որպէս օրհա՛ս ծանրացեալ՝
Փափկիկ վարդիցն եւ սիրազե՛լ շուշանաց
Ստիպէին գնալ ի բաց :

Տեսի՛ ըզնէ . ո՛վ, տեսիլ իւր քանի՛ էր տխրային.
Նաւի աչեր իւր նուաղ՝ հագիւ՛ւ ըզսէր ցոլային,
« Մընա՛ս բարեաւ, ո՛ տիկին » հեծեծեցի սըրտաբեկ.
Հեղձամըղձուկ հառաչանք անդ գեյուցին զիմ բարբառ.
Եւ այլ ինչ ո՛չ բաւեցի յօգել եւ ո՛չ մի սոսկ բառ.
Տըտահոսան աչք իմ յա՛նկարծ լըճացան՝
Յորդ յարտասուս դառնութեան :

Արտասուեցի՛ . . բո՛ւռն էր բո՛ւռն եւ անըմբէ՛ր հանդիպումն.
Անցեալ առուրց յիշատակք արձանացեալ ի ժամուն՝

Ի սեաւ խոհից ընկլուզին զիս յանսահման յովկեան.

Եւ խորհեցայ ես խորհուրդս տրտմաթախի՜ծ յայն վայրկեան,
Միտք՝ առ Աստուած, աչք յուզին, զոր հատանե՛լ ինձ քնայր. —

Եւ բեկեալ սիրտ առ նաղելի՛ն այն պատկեր՝

Որ ժամառ ժամ՝ նուաղէ՛ր . . . :

Յանդգայութեան յայն պահու յո՛ւնին իմ բարբառ հասաներ.

Մեղմ եւ անո՛յշ քան զսիւք առաւօտուց լուսաբեր.

Եւ լըսելի՛ անխորտ զերդ յանըրջի՛ խոր քընոյ.

« Անգո՛ւթ, ասէր, ի գիրկ թողեալ զիս մահուն.

« Երթա՛ս յաշխարհ դու օտար մինչ եղբոր հարսնեղ լըբուն՝

Աս սաստկութեան ցաւոց զերթա՛մն իսկ բարեալ՝

Ասե՛լ ո՛հ ո՛հ՝ բեղ չէ բաւ . . . :

« Թողո՛ւս զիս, ո՛ տայգր իմ, թողուս անտեր, սըգաւոր.

Ներկայութի՛ւն քո քաղցրիկ ինձ յաւելոյր կեանքս նոր,

Թե՛ դո՛ւ եւս մեզ լըքանես, ո՞ զբիւր խընամոյհ հոգատար՝

Յուցցէ հիբիս, կամ ցաւոցս ո՞վ մատուցէ մրիթիւթար.

Կամ յերեսաց ո՞ զթշուառս պաշտպանեսցէ ատելեաց.

Դու ես մեր յոյս, միա՛կ յոյս յետ Աստուծոյ՝

Ո՛ւր երթա՛ս տա՛յգր իմ արգոյ :

« Թանձր մըռայլք ըզբըբըքս ծանրացեա՛լ մահաբուն,

Ո՛հ, զիս յերկի՛ր ստուերաց իջուցանե՛լ գործեն գուն.

Կա՛ց գէթ մի օր, օր մի միայն գոնեա՛լ զմահն իմ տե՛ս աչքդ.

Սիրուն եղբորդ հէք հարսին, որ խոնարհի՛ գերեզման.

Աղերասայց քեզ յանձնեալ զիւրն դստրի՛կ սիրական.

Զխօթե՛ր յետին իւր յիշատակ յետ մահուն,

Դու լեր նըմին մայր սիրուն . . . :

« Աղաչեմ՝ զբեզ, առ մահճօքս եւ զա՛յս ագիր մի գիշեր.

Եւ աղօթեա՛ առ Աստուած եւ ինձ մատո՛ քաջայեր.

Բարբառեօջի՛ր երկնային լեզուադ ինձ բանս փրկութեան.

Եւ զվերջին ժամս իմ լըցո՛ զհոգիս սիրով աստուածեան.

Եւ զարհաւի՛րս փարատեա մահուան եւ մութ դամբանին.

Եւ յետ ոգւոյս յեութենե՛ս մեկնելոյ՝

Բարեաւ երթ, տա՛յգր իմ արգոյ . . . :

« Գնացե՛ս բարեաւ հաղարաւ, ո՛հ, մի՛ յափունս անծանօթ

Հընչեալ յունկնըդ սոսկապէս լացուցէ զքեզ մահուս բօթ,

Ինչնին զմարմինս տւանդեալ ի գիրկս հողոյ մոռացման՝

Ապա զուղիդ խաղաղիկ ընթա՛ վըստահ՝ յԱնվախճանն.

Զաչկունսդ ուղղեալ ի շիրիմս՝ զոր յարտասո՛ւս դառնութեան՝

Թանացես դու յետ քո դարձի տար յափանց,

Ելեալ մենիկ շիրմիս յայց . . . :

« Գնացե՛ս բարեաւ, մի՛ աղէտք իմ յուզեցնին զսիրտ քոյին.

Զաղնուակա՛ն զայդ քո սիրտ, զայնքան զգացմանց սուրբ բազին,

Ուր արտասուաց տըխուր վէպք արձանագրեալ յանջինջ գիր՝

Ըզբեզ, ոգի՛ տխրասէր, արարի՛ն զքեզ ողբերգակ.

Խնդրեմ՝ սակայն զայս իմ մահ լա՛ց քընտրաւդ ողբանուագ

Եւ յետ մահուս՝ գէթ յիշատակս եւ անուն

Յիշեսցի ի սիրտս զգայուն . . . :

Եւ լըսե՛ր ձայնս, այլ հոգիս համբուն սուզեալ ի ցընորս՝

Դեռ համարե՛ր ընդ երկար լըսելը ձայնն սըգաւոր.

Ո՛հ, համարե՛ր նըկատել հիաչըքնա՛ղ զայն պատկեր՝

Յոյր վըայ Աստուա՛ծ մի սիրոյ ողջ վեհութեամբ բազմեալ էր.

Անդ զիս յանկարծ խըլին տըք ի սրբազան երազոցս.

Զերդ հափափեն կոյս ի զըրկաց գորովոյ՝

Եւ ընթացայ ափ յափոյ . . . :

Գ.

Ընթացայ, ո՛վ աղէտ . դեռ յունկն իմ կոծք իւր հընչեն .
 « Երթա՛յ , ասէր խելայեղ , տե՛ր , բա՛րձ , ըզկեանս իմ այժմէն .
 « Շնորհ մեծ ունիմ երախտեացդ , հա՛տ ըզկենաց իմոց թէլ ,
 « Գընաց արգոյն , ա՛ռ զհոգիս , ո՛չ եւս կամիմ վայելել : —

Եւ լըսէի՛ ըզբարբառն , ո՛հ որպիսի՛ տխուր բարբառ .
 Պէշիքթաշլեան . կարծէի լըսել եւ զիւրըն քընար .
 Եւ զերդ ցնորեալ խելաթափ , որ թափ դիմէ ի կորուստ .
 Ընթացայ զիմ ծանապարհ՝ գի՛շ շանթահար ի յերկնուստ :

Սիրեցեալ հարսնդ իմ եղբօր , մի՛ ինչ այլ զիս տաքնապեր .
 Յորմէ հետէ լուայ զմահդ՝ կորուսին զբուն իմ աչեր .
 Մի՛ աղաչեմ հարսն անրիծ , մի՛ եւս կոծովդ կտտեր զիս ,
 Շա՛տ իսկ լացի , հերի՛ք ողբքդ հարուածեացեն ըզհոգիս :

Շա՛տ իսկ լացի եւ լացից զսուրբ յիշատակդ հարսն ամբիծ .
 Ընդ բնաւս ըզմահդ աղէխարշ կողկողալով պատմեցից .
 Ընդ իս ըզքեղ կոծեացեն սիրաք եւ ոգին վշտահար ,
 Կոծեացեն , ո՛չ հաւատաս , հա՛ , լամ յերկի՛ր ես օտար :

Հաղիւ գարուն երեսուն փթթինաղարդ ի վարդեր
 Ըզշնորհագեղ դեմըս քո չքնաղագեղ զարդարեր .
 Յո՞ր յայսմհետէ յենուցուս ցրտասարսուռ յո՞ր շիրիմ՝
 Զաննըմանեացդ սուրբ այտից ըզճառագայթս արփային :

Աւա՛ղ . տիկի՛ն . եւ զո՞ր դառն հեղուլ տացես մեզ արտօսք .
 Գայցէ գարուն խայտալով , փթթեցի՛ յասմ ի բիւր շնորհ ,
 Ճըռուողեացեն եւ թըռչունք նուագաւոր ալեաց պէս .
 Իսկ դու ո՛հ , ո՛չ ժամոյցես մեզ , ո՛չ մեզ զաչերդ ուղղեացես . . .

Բնութիւն ողջոյն ի կայտիւս կատարեցէ զիւր խրախճան
 Եւ ոսկեշո՛ղն արեգակ ցուացի ի դաշուս գարնան .
 Տաղըրդ միայն , սուրբ հոգի , յանմեռ ձրիցդ յիշատակ՝
 Ի ցուրտ շիրմիդ բազմելով յուղեացէ զցաւսն աշխատակ : . . .

Ո՛չ եւս ի պարս հրճուանաց ուղղեացի՛ն քայլք իւր տխուր՝
 Ո՛չ բնաւ ի հոյլս գեղուհեաց սեւեռեացի՛ն աչկունք իւր .
 Ճանապարհաց յանկոխ անցս սպասեալ մնացէ աչք՝ յերկին ,
 Կոչեացէ յաւէտ զօրուդ եւ խօսեցի՛ ընդ նըմին :

Եւ անցաւորք զայն տեսեալ՝ հեռի՛ շինից եւ խնդից ,
 Առ նա զաչկունս դարձուցեն հառաչախառն կամ հեգնալից .
 Եւ հծծեացեն ի քրթմնջիւն . . « բա՛ , աւասիկ այր ցաւոց .
 Ան՛ժիմ լական , զի՞նչ խնդրէ » - ւ՛ անցեն , ճըմլեալ զիմ սիրտ խոց :

Մայնութիւն , երգիծա՛նք . ահա՛ բաժին իմ վերջին .
 Ո՛չ եւս , ո՛չ եւս ի հրճուանս վայելեացէ իմ հոգին ,
 Ան՛ժան համայն զգացմանցս թերթեր բուրեան ծաղկափթիթ .
 Ինձ ոչ այլ ինչ , ոչ մընաց , բայց յոյզք անբոյր , անժըպիտ :

Ինձ այլ չեն պէտք ճաճանչից , ո՛չ շուշանաց գերակայ .
 Լուսին , լուսին ծագեա՛ զշողրդ ի ցուրտ շիրիմ՝ Մարգարտայ .
 Ա՛նդ ես կամիմ ընդ քո տխուր՝ ընդ նշուլիւ յաւիտեան
 Յայն երազել ւարտասուել , ա՛նդ լիցի ե՛ւ իմ դամբան : . . .

1 Հոկ. 1884 Տարեցէ

Շ Ի Ր Ի Մ

ՄԱՀ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐԻ

ՄՕՐ ՏԻԱՐ Խ. ԹԱԹԱՐԵԱՆԻ

Ա.

Կարծէի՛, ողորմա՛ծ Տէր, անգիտօրէն ես կարծէի .
 Եթէ աչացս դադարելոց էր արժանութիւնս ,
 Անխախտ էր այս իմ հաւատ , զի գիտէի թէ՛ դո՛ւ ,
 Աստուած ,
 Ամենողորմ , ամենագութ հա՛յր ես եւ Տէ՛ր սրգաւորաց :

Կարծէի , ո՛վ սկարուրեանս , եթէ խուն մի, առ վայր
 մի գէր ,
 Ամենաբար ողորմութիւնդ փոխան լալեաց դառնադիտից՝
 Մայրօրինակ ժմիսս եւ ծիծաղս շնորհելոց էր արժիւ ,
 հոգւոյս ,
 Զմտաւ ածել ո՛չ բաւէի եթէ անհաս վերինըն կամ ,
 Վերապահէր ինձ հարուած մի՛ դառնադառն բան
 զանցելոց ,

Եւ անա՛ եհաս ծամ , գոռա՛ն ամպրոպ , հաս փո-
 բորիկ .
 Խուսել չ՛կարեմ , ի ժայռ դժնէ եւ յապառա՛ծ փերին
 իմ յոյս : ...

Ողբա՛, բնութիւն , իմ համօրէ՛ն խիղճ , համօրէ՛ն
 երջանկութիւն ,
 Յանյուսութեան խորասուզան խորայասակ յանդունդս
 եւ վիհս .

Եւ ի հարուա՛ծ օրհասական վախճան առնուն յոյս իմ
 խախտս .
 Եւ զերդ յետին տոբի՛ւն սրբի ի շիջանե՛լ կայ իմ արեւ :

Մնացէ՛ք բարեաւ , սուրբ երազոց եւ ոսկերոյր յի-
 շատակաց՝
 Վա՛րդ Երփներփեան եւ արշալոյս ծիրանածին իմոց
 կենաց .
 Յետ ողորմ հեծեծանաց իմոցս արժի հարազատից ,
 Մասուցանէ երկին եւ զա՛յս բաժակ բան զբնաւս ա-
 դիսալի :

Ընդունիմ , երկի՛ն , յանբոյժ վերս ընդունիմ հեկե-
 կանօք
 Զայդ հուսկ բաժակ , յոր թափեալ կայ դառնագոյնն
 ի դառնութեանց .
 Եւ լո՛ւռ , անմոռնչ ըմպեմ զայն , այլ դառնութիւն
 որպիսի՛ : ...

Յի՛ս , ո՛վ Տէր . անոք եմ , ո՛հ . . . ըմպեմ , այլ ի՞բր
 է այն լեղի .
 Լեղի՛, ո՛վ ցաւ , բայց ընդ ասեղբ գուցէ՞ ինչ փայր ,
 գուցէ՞ անոյժ .
 Եւ բացարձակ գուցէ՞ սէր , ծիծաղ , հրնիւ , երգ եւ
 դաշնակ .
 Յո՛ր երջանկութիւն ո՛չ զըսաւ քոյն կամ արժանութիւն .
 Յո՛ր խրախնանս ընդ ժըպիսօք ո՛չ ծածկեցաւ սուգ եւ
 արտօր .
 Ասացէ՛ք ինձ , որ գրգացեալ յերանութեան ծընեալ
 կարծէ՛ք .
 Ծիրանագեղ յայտն կուսին ե՞րբ նազեցաւ ժմիս եւ յոյս ,

Անխառն ի խիստ մըսածուբեանց , ազատ յոգևոյ հեծե-
ծանաց .

Է՛հ , աշխարհի ա՛յս են օրէնք . - սուգ՝ խառն ի շուք ,
խինգ՝ խառն ի լաց :

Առոյգըն վարդ միշտ փողաւոր ի փուռ դժնիկ փսմը-
նելի .

Յաստուածագեղ Կո՛յսըն եւայ յա՛ր դարանեալ օձրն դժնէ .
Յանմեղունակ ծնօտըս մանկան ժըմիս ւ՛ր արտօտ ցանկ
անբաժան ,

Եւ ծարաւեա՛լ ի մարդոյն կեանս անգուրբն մահ եւ
անգորով :

Ա՛յս են բնաւին կեանք մարդոյ . Աւա՛ղ , ամեն ձօնիք
կենաց

Զոր յաշխարհի՛ հէ՛ք մահացու , ընդ ճաշակելն եւ մո-
ռանաս ,

Զ՛արժեն , չ՛արժեն եւ ո՛չ ըզմին գէթ ի վրէժաց ըզփոք-
բազոյնն .

Ճակատագրի՛ն են օրէնք . - Ունայնութի՛նն ունայնութեանց :

Բ.

Այսպէ՛ս եւ ես ունէի , երկի՛ն , զիմ մայր փարելի .
Մայր , որ սըրհիս եւ հոգւոյս մըսացս ամեն եւ խորհրդոցս
Հեղինա՛կն էր խնդից լալեաց , յուսոյ , սիրոյ՝ յիս Աս-
տուծոյ :

Այլ այն , աւա՛ղ , խլեցաւ յանկարծ յիմոց գրկաց փա-
րեցելոց ,

Սըրեցա՛ւ , ո՛հ , անգըրթօրէն , եւ դու ընդ այս ժուժա՛ս ,
ո՛վ տէր :

Ժուժա՛ս , այլ ո՛վ բեկբեկելոյս , չ՛էր իմ աստէն բաց
յայնմանէ՛

Այլ ոք՝ սիրելի , որ ի զայրոյթ վրէժաց հոգւոյս՝
Լինէ՛ր ինձ հաղորդ եւ սփոփանս մատուցանէր :

Նա՛ էր միակ իմ վահան ընդդէմ բաղդին արկածից .
Նովա՛ւ համայն իմ քախիժք փաղցրանայի՛ն , ողորկէին .
Ի մայրենին իւր մի ժըպիս հրեշտակային եւ սիրաբոյր՝
Սի՛րս իմ մոռանայր ըզհարաշուք բաղդի՛ն լըփում :

Երկի՛ն , է՞ր զիս փըրես , զարեւս ի մութ է՞ր փո-
խարկես .

Նա՛ էր ծիծաղ հոգւոյս , նա ջան կենացըս մերձ ի շի-
ջանել .

Եւ զուարթունն այն մայր , բա՛բէ , այն հրեշտակն իմ
պահապան ,

Ահա՛ խլեցա՛ւ յիմոց ձեռաց , ո՛վ անողորմ Արդարու-
թիւն :

Արդարութի՛նն , է՞ր հալածես զիս , չէի՞նք բաւ ինձ
արտասուքս ,

Կա՛ւ մի եմ ես աննըժան յանյուսութի՛նն զիս զլորիցես .
Անյուսութի՛նն , ուրեմն երա՞զ կամ ցնո՞րք իցեն հաւատ ,

յոյս՝ , սէր :

Անյուսութի՛նն . . . ա՛հ դող յոսկես իմ ընթանայ յայս
մի բառ . . . :

Մի՛ , Արդարութիւն , մի՛ յանողորմ զայրոյթ վրէժացս ,
Ընդ մօտս եւ զհանդերձեալ կենացն այժմէն խըլեր ըզ-
յոյս ,

Հանդերձեալ կեանք... այլ զի՞նչ պէ՛տք հէ՛ք մահացուիս
յոյս' պատահանց .
Այլ դեղեւի՛մ, այլ վարանի՛մ, վասն է՛ր, ասել զայն ո՛չ
ժըսիմ :

Ոչ ժըսի՛լ... բայց յե՛ս մահու մօրս ինձ յուսա՛լ դեռ
պիտի ,
Յուսա՛լ երանութեան , յուսա՛լ անվիշտ , անմե՛ռ կենաց .
Յուսա՛լ խնդից յաւերժական եւ հրեւանաց ասուա-
ծայնոց .
Այլ ո՛վ Տէր, այդ ամենայն երազ , պատահմ , ցրնո՛րք
քուին...

Յայսմնե՛տե՛ս ողջ տիեզերք յաչս իմ քուին աններդաշնակ,
Կոյս' անժըպիտ , ծաղիկի՛ք անբոյր , հոգին՛ լըճեալ զան-
մահութիւն .
Ո՛վ Տէր եւ համօրէ՛նք առանց աշոյղ բարեբարող
Նախախնամեալ հաստեա՛լ քուին , ներեա՛յ սակայն քէ
մեղանչեմ :...

Զգամ , Տէ՛ր , ընդ աղօժ զի մեղանչեմ ընդդէմ հաս-
տիգ .
Սակայն ներեա՛յ յանբոյժ հարուածս ապստամբին միտք
եւ խոնք .
Անժո՛ւտ եմ զի մեղանչեմ , զի ո՛չ բաւեմ իննել հասու ,
Թէ՛ ի՛բր հանի զըբուրիւնդ ըզմիակ սէր խըլել հիփիս :
Գիտեմ զի աշոյ հսկէր աննիրհ , ո՛ւր ապա մնայր զը-
բուրիւնդ ,
Ո՛ւր անըստառ ողորմութիւնդ : Այս խօսիք առնե՛ն զիս
անհաւատ .

Դու ըզխորս քննես մըսաց եւ զիտե՛ս իսկ զի հաւա-
սամ ,
Եթէ գոր ի՛նչ եւ կամիս , ըզնոյն անդէն եւ առնես :

Թէ՛ կամէիր՝ ո՛չ արդեօք մայրս այժմ ի դուռնս զսա-
նէր մահու .
Թէ՛ զըբայիր՝ ոչ արտասուս քանային ա՛յք իմ տեսմասուց .
Թ՛ողորմէիր՝ խի՛նդ եւ բերկրանք փրքէին յայս դալկա-
նար դէմս .
Թէ՛ հանէիր՝ տիեզերք ի շող ի շող բերէր առ հասա-
րակ :

Այլ է՛ր դանդաղիմ . յո՛ւն կաց , չնչին կաւրդ զածած .
Լըռեմ , բարեբար Տէ՛ր եւ անմահունչ հաւատամ .
Լըռե՛մ, անա եւ զհառաչանս իմ առ քեզ , ո՛հ , քը-
նուցանեմ ,
Առ քե՛զ, մա՛յր խնկելի , որ արդ ննջես ի մահու սուտես :

Գ.

Այս , մայրի՛կ , աղաչեմ , նուա՛գ մի եւս ինձ բար-
բառեա՛յ ,
Սըրսակոսոր զայն մեղեդիս , գոր ի յիտին շունչըդ նուաղ՝
Յունկն հասուցեր որդեկիդ դառնակսկիծ ի հառաչանս .
Հոգեխորով դեռ այդ եղերք զխուր զխուր հնչեն ի
սիրս .

« Մնացէ՛ք բարեալ , ասայր , եղբայր իմ քաղցր ,
որդեա՛կ անոյց .

« Օհ', sarr ափուճն անջատեն զմեզ յանոյս գրկաց
միմեանց,
« Երեսնամեայ անցին կեանք, or մի, մի or, ժամ մի
միայն
« Սիրս իմ եւ հոգի ո'չ հեշտացան ի սես ձեր .
« Եւ մեռանի՛մ առ կարօտյս ի սրագեղ լրբեալ տեսող ,
« Մեռանի՛մ, Ասուճա՛ծ իմ, մնացէ՛ք բարեալ յա-
ւիտեան ,
« Եղբայր, որդեա՛կ , մնացէ՛ք բարեալ , յաւերժութեա՛ն
մնաց մեր կարօս » . . . :

Եւ ի նի՛նջ խոնարհէր մայրն , ի նի՛նջ՝ ամբիծ գերդ
աղաւնի .
Եւ բանքն իշուրքըն լըռեն՝ բա՛նք մեղրահոս , սրտա-
թախիծ .
Անշընչանայ տառա՛կն աղու , լ՛աչկունք փակի՛ն ա-
րեգակունք .
Իսկ ես ի ստուերըս մահու կամ եւ հեծեմ ողորմա-
գին . . . :

Մա՛յր իմ քաղցր , մա՛յր իմ անոյս , գորովանացդ ո՞ւր
այն ժպիտք .
Է՞ր զաղուական ըզո՛ն ձայնիկ ս'չ արձակես առ որդին
քո .
Ահա՛ մահուն ի դալուկս ես դուրդոջեմ սրակքսուր .
Ա՛խ , մայրի՛կ , աղերսե՛մ , բա՛ց գամ մի զայդ արփի
աչեր ,
Ո՛հ , որ ըզկեանսդ ոչ խնայեցէր զլացի՛ս նմա զայս
վերջին շնորհ .
Ո՛չ Ե՛ւս , ո՛չ եւ զայս նուագ բանայցես զաչսդ գոհա՛ր . . . :

Գ.

Գոհա՛ր . . . անուն սուրբ եւ սուրբ , ա՛յդ պաշտեց-
եալ էր քո անուն .
Յայդ ջինջ բառ զնոզւոյդ գորով անձնաւորել ախոր-
ժէին ,
Որդիքդ եւ ազգականդ , եղբարք քոյին եւ քեռիդ մեծ .
Անո՛ւն նուիրական , ոյր յիշատակ սրբանուէր՝
Ի սի՛րս իմ եւ հոգի վառի՛ յաւէս եւ վառեսցի ,
Ձերդ կնդրո՛ւկ Սաբայի , որ ի բուրվառ ծըխի ոսկի :

Գոհա՛ր . . . աւա՛ղ , այդ քաղցր անունդ եւեթ մը-
նաց ինձ , մայրի՛կ ,
Միակ աւանդ յա՛յնքան ձրիցդ , հրեշտակեալ յա՛յն-
քան գեղոյդ .
Սրբազան սափո՛ր յուշից , յոր յայսմնեւ երագեցից
Ըզմայրենիդ զտանել գորով , զանձնուէր սէրդ . զան-
հա՛ն ակնարկդ .
Ակնա՛րկ խորհրդաւոր , յոր ծրարէիր ըստ հանոյից ,
Աշխարհ մի համօրէն շողեալ ի գեղ , ի հուր , ի սէր ,
Յորում գերդ ջինջ ի հայելոջ պատկերանայ ոգիդ վը-
սեմ .
Անմա՛հ ակնարկ , ուր ի հանդէս գայր մի մատեան հը-
րաշալի .
Մատեան՝ լի ի հրաշակեալ գորովանաց եւ սխա-
նաց . . . :

Եւ ահա՛ , անոյս մայրիկ , ընդ սրբասնեալ նշխարսդ
քո՝
Լիանե՛ս ի ծոց ցուրտ հողոյ զայսքան պայծառ ձիրսդ
եւ շնորհադ .

Ի հո՛ղ ծածկին դէմքդ եւ աշկունք եւ հոգսալի՛ր այդ
բազուկէ՛ ,
Ընդ որով զկեանս որդեկիդ պաշտպանէիր՝ մահուն ան-
ոաց :

Զի՞նչ, այդ բազուկէ ի հո՞ղ դարձցին, ի հո՞ղ, ո՛վ
սուգ անմխիբար ,
Իսկ ես դեռ կեանք, դեռ շնչեմ, եկայ՛ք առ իս , խու-
ժեցէ՛ք ,
Ասուե՛րք մահու , սակաւին զի՞ կայք , զինեւ զի՞ ծիծա-
ղիք .
Առէ՛ք , տարա՛յք , ընկեցէ՛ք զիս ի փոս անյո՛ւշ գերեզ-
մանի : . . .

Յանուշիկ մօրս կենդանութեան , ժամ մի , մի՛ ժամ
ոչ խնդացի .
Յայսմնե՛տէ՞ ծիծաղեցայք , յե՛ս իւր մահո՞ւն , բարե՛ք ցը-
նորիցս .
Բացայ՛ք խո՛րք դամբանաց , ընդ հողովքդ ես ծած-
կեցայք ,
Անդ զիմ պահել դառն արտասուս , անդ բաղել զիմ
հուսկ յիշատակ :

Մոռանայցէ՛ զիս աշխարհ , դարք յաւիտեանց լռե-
ցե՛ն զինէն .
Յանկեա՛ն ուրեք սեաւ հողոյ , ի բացարձա՛կ առանձ-
նութեան ,
Լըռի՛կ եւ անմիտ ծրարեսցի՛ իմ յիշատակ :

Լուսալիք ա՛ստ առաւօտս , ընդ այգս այգուն մինչ
նըշուլես


Եւ ի ցօղսրդ վընիս կայտեն կոկոնք հեղ շուշանաց ,
Մինչ լուսին՝ ֆո՛յր կաթոգի՛ գիրկս ըգբեւ արկցէ հեշիւ ,
Յուշիկ յուշիկ ցօղեա՛ զկայլակս ըզգովալիր ֆոց ար-
տասուաց .
Ի շիրի՛մս իմ մեհաւոր , ուր ո՛չ հեղցէ ոք շիր մի ցօղ . . .

Այդ լուսի՛ն Տխրանշոյլ գայցէ շիրմիս այցելու ,
Ա՛նդ Աստու՛ծըն սիրոյ յաւերժութեան հեղեալ շողեր
Ծաղկունս պէսպէս զարմինագան փրքեցուցէ կա-
րեկցաբար :

Ա՛նդ ննջեցից յանո՛ւրջս անմահ Լ՛երագեցից յամա-
յութեան՝
Զանցեալ կեանս , յոր զմայրենին գորով ես ոչ վայելեցի :

Ով խորութիւնք դամբանի , ա՛հա գահնիմ ես անդէն ,
Յանդորու խաղաղութեան՝ ուր լուսի՛ւնք յաւիտենից .
Ուր մահացուաց ո՛չ հասանեն անսպառ վիշտք , ոսկի՛
հանոյք . —
Անցէ՛ք , սուս յոյսք , ես անդ հանգեայք . — գէթ անդա-
նօ՛ր չեմ անոխիկ : —

1 Մարտ 1886 Տարեմէտ



ԱՐՏԱՍՈՒՔ

Ի ՇԻՐԻՄ ՄԱՐԵՄԱՅ ՍԻՐԵՅԵԼՈՅ ԴՍՏԵՐ ԻՄՈՅ

(ԹԱՌԱՄԵՑԱԻ Ի 28 ՅՈՒԼԻՍԻ 1891՝ ՁՈՐԵՔԱՄԵԱՅ)

Ա.

Ա՛հ, ես ընդէ՞ր լըբի ըզբեզ, ըզբե՛զ՝ քընա՛րդ իմ տխրանուագ.
Ըզբե՛զ, որ յիմ վիշտս և հրճուանս ինձ դիւր, սփոփ ընծայէիր.
Ա՛հ, դու մատնեալ կաս ի վաղուց անյո՛ւշ, անյո՛յս մոռացութեան.
Ո՛չ եւս ըզբեզ ծածկեն դալար ոտոց պըսակք ւ՛ արմաւենիք.
Դու կաս յար կախեալ զորմոյ՝ ծածկեալ ի հող եւ ի փոշի.
Անփո՛յթ ցաւոցս և վըշտացս, անփո՛յթ զգացմանց հէք պանդըխտիս:

Առ ի՛ս ե՛կ, ո՛քքընար, ե՛կ հաշտեսցու՛ք ի միասին.
Երգեսցո՛ւք, արտասուեսցո՛ւք հեծեծելո՛վ դառն արտասուք.
Լացցո՛ւք, լացցո՛ւք ընդ մեծ կորուստն, ժա՛մէ լալեաց և հառաչից.

Էր երբեմն յորժամ չըքնաղ վարդից թերթիւք պսակաղարդ՝
Քաղցրամիմունջս եւ սիրայինս ներշնչէիր ինձ երգս եւ խոկս.
Արդ հատա՛ւ լուսաթղյր յուսոցս, բաղձիցս ջինջ աղբերակ.
Երազոցս եւ անըրջոցս լըցա՛ւ լալեօք սուրբ աւագան.
Ո՛չ եւս, քընա՛ր, ա՛հ, ո՛չ եւս գտցես ի յիս զայն պատանեակ՝
Որ յանապակ բաստից ի բաստս թռչէր, սուրայր խնդամոլիկ:

Նա արդ աւա՛ղ, մոռացեալ նախնին զիւր ընոյթ քաղցրանուշիկ՝
Ո՛չ եւս ի լուր կայ սոխակին երկնադաշնակ գեղգեղանացն.
Ո՛չ եւս մինչեւ առաւօտ մընոյ արբշիւ լուսնոյն գեղով,
Ո՛չ եւս ի ջինջ աստեղց ի հոյս խնդրէ գտանել կուսին ժըպիտ.
Նա արդ զինչ բու եղերամայր խնդրէ՛ եւ եթ ըզսեաւ ու զսուգ:

Եւ զի՞նչ պէտք հէք ողբերգուին, զի՞նչ պէտք զուարթ գեղգե-
ղանաց.
Հեծեա՛ց, քընա՛ր, հեծեա՛ց, ա՛հ, սեաւ դամբան մի կայ բացեալ
հանդէպ.

Դամբան խոր, արտասուածոր, դամբան լըռի՛ն եւ ահաւոր.
Ա՛նդ մեր տեղի յայսրմհետէ թէ տի՛ւ իցէ եւ թէ գիշեր,
Զի՞նչ փոյթ թէ արփ ճառագայթէ ի շող պայծառ փողփողենէջ.
Աշո՛ւն, լուսի՛ն, սիւք եւ գիշեր մեղ ողբակիցք, չիցէ՞ այս բաւ.
Օ՛ն եւ օ՛ն, քաղցր իմ քընար, ողբոցս ի լուր կայ Մարիա՛մ:

Բ.

Մարիա՛մ. . . ա՛հ, ա՛յս է այս՝ առ իմ ամբաւ ողբոց իմոց.
Մարիա՛մ, իմ սէ՛ր հոգւոյս, մըտածութի՛ւն համալ մըտացս,
Յոյր սըրբաշուք գիմացն ի գեղ, բարէ՛ սուղեալ չուառականս,
Ըզկենացս դառնութիւն ես փոփոգել տքնէի՛ զուր:
Մարիա՛մ, հրեշտա՛կ զուարթուս, պտուղ սիրոյն մեր նախընծայ,

Մարիամ՝ վարդ եւ շուշան՝ բուսեալ յուղւոյն փրշոտ կենացս ,
 Մարիամ՝ պերճ բուրաստան՝ փթըլեալ ի մաշլ ամպս երկնից ,
 Չընաշխարհիկ լուսերեւոյթ՝ ողողեալ բնաւ ի ճառագայթս ,
 Գեղեցկութիւնն անբստգիւտ լուսաղարդեալ անմեղութեամբ :

Ա՛հ , Երկին , յո՞ր բարձրութեանց գահապիժեր զիս յանդուճե-
 խոր .

Յօրպիսո՛ւմ երջանկութեան շանթահարե՛ր զիս յեղակարծ .
 Միահեծա՛ն զերգ ինքնակալ ես պանծայի՛ խորխտալով ,
 Ընդ այնպիսւոյ չքնաղ դրստեր յափշտակեալ՝ Ընդ սրբութիւն :

Մարիամ , անուն քաղցրիկ , նուիրական եւ պաշտելի .
 Ա՛հ , յա՛յս անուն եւեթ աշխարհ ժպտէր ժմտէր հէք պանդխտիս ,
 Յա՛յս անուն ցաւք եւ հեծութիւնք յինէն ի բա՛ց խուսափէին .
 Յաղիտից բո՛կս իսկ ըզլուառս յերջանկութիւն թաթաւելով .
 Վա՛հ , Երկին , վա՛հ , ա՛յս եր եւ ա՛յս լինեցոյ եր վերջին վախճան ,
 Այնքա՛ն գորովանաց , ծընողական այնքա՛ն սիրոյ : . . .

Գ.

Տակաւին մանո՛ւկ էր նա , անմեղունակ մանո՛ւկ անբիծ .
 Գարուն չորիցս էր պըսակեալ զիւր ըզճակատ շնորհափայլ ,
 Ի գեղահարաշ վարդից ի փունջս ամենագեղ եւ ցօղաթուրմ .
 Դեռ ոչի՛նչ երեւէր անդ յարփուոյն շրքեղ ողողեալ շող ,
 Ամենայն ինչ թարմութիւն , ամենայն ինչ անբծութիւն ,
 Յօ՞ղ աստուածեղէն համակ ի շունչ օծեալ գեղոյ ,
 Կուսութիւնն խառնեալ բնաւին անմեղութեամբ հրեշտակատիպ :

Օժտեալ գեղո՛վ այսքանի , օժտեալ շնորհօք աստուածունակ՝
 Զի՛ս , դուստր իմ քաղցր , յո՞ր երազոց թուուցանէիր ի հօրիզոնս .
 Բարեկամք եւ մերձաւորք , ա՛հ , սիրացեալ՝ Ընդ գեղութիւնդ ,

Զիս կոչէին բարեւաստիկ քան զամենայն արարածս ,
 Բան զամեն հարս , որոց Երկնից շնորհեալ իցէ բաստ եւ պատիւ :

Դո՛ւ իմ գանձ , դո՛ւ իմ պատիւ , քե՛ւ յաւելոյր իմ խնդութիւն .
 Եւ լիացեալ ամենեւին փառօք , պատուօք , երջանկութեամբ ,
 Ո՛չ գիտէի որպէ՛ս շքնորհ օւնեւ Երկնիցն ա՛յնքան բաստից ,
 Զիս երջանիկ համարելով եւ քան ըզգուճղս հրեշտակաց :

Այլ ա՛հ , բա՛ղդ կշյր , զաչացու ծածկեր սքօղեր յիմաց աչաց .
 Ըզջարաշո՛ւք ապագայ՝ միժերեալն ա՛յնքան դաւըն լաւօք .
 Աւա՛ղ , դուստր իմ , հէք քո հայրիկ , բնաւին անդէտ զձախո-
 ղուածոց ,

Զոր երկին անողոք պատրաստէր նմա անհոգ , անխուով ,
 Ի՛մն Մարիամ , ե՛ս եւ մայրիկդ վայելեաք յանմեղ հրճուանս ,
 Տեսեալ զքեզ մանրիկ ի պարս հասակակցացդ նազելեաց ,
 Ուր երգէի՛ր քաղցրանուագ հրեշտակային ձայնիւդ աղու ,
 Ուր միշտ ըզբե՛ղ , քե՛զ որպէս հարսն զարդարէին շնորհաշուք :

Իսկ դու , ո՛վ սուլբ անմեղութիւն , պճնաղարդեալ զերգ հարսն
 անբիծ ,

Ծիծաղ՝ յաչերդ արփադեղ , ժլմիտ՝ յայտերդ վարդափրժիթ ,
 Սըլանայի՛ր , սուրա՛յիր տատրականման թեւածութեամբ ,
 Եւ — մայրիկ — ձայնեալ անշշ զուլամբ նարին անկանէիր :

Անդ իբ՛ր անձկաւ սրտատրոփ ըզքո «տիկին» խնդրէիր ,
 Եւ ստացեալ ի նմանէ ըզքո տիկինդ գեղապաճոյճ ,
 Մերթ ժլմիտս արձագէ՛ր ծափ ըզծափի հարկանելով ,
 Մերթ փափկօրէն ի համբո՛յր յաջ մասա՛լէիր հօրըդ եւ մօրդ : . . .

Գ.

Ա՛խ , աւու՛րք գեղածիծաղք , արդ յո՞ գնացէք անհետացայք .
 Զայնքան երջանկութիւն որպէ՛ս յամբաւ թաղեցիր վիշտս .

Ո՞ւր արդ անդշն իմ դատրիկ , ո՞ւր զուարթուն իւր դէմքն առոյգ .
 Որ գգուանս եւ գորովանս ինձ առաքէր խանդաղակաթ .
 Հիաքնաղն ո՞ւր իւր ճակատ , որ ինձ համբոյրս մատուցանէր .
 Ո՞ւր փափկիկն իւր աչեր , ա՛խ , ո՞ւր թաթիկքն այն իւր մանրիկք ,
 Որով բիւր խաղս ինձ յօրինէր բազմեալ ծնգացս ի վերայ ,
 Մերթ ըզծոցիկն իմ խառնելով եւ մերթ երեսս փայփայելով ,
 Եւ մերթ իսկ , ա՛ղէ , երկի՛ն , ո՛րպէս եւ ի՛բըր մոռանալ ,
 Եւ մերթ ընդ իս ցատուցեալ զերեսն յինէն ծածկելով ,
 Ձեզ վայրկեանս զիս արտասուօքն ի գուծ շարժէր ծարտարօրէն . . .
 Անմե՛ղ առուբք , անմե՛ղ ցատուցն , յորում թագչէր այնքան
 հրապոյր :

Այլ արդ , աւա՛ղ , զո՛ւրկ յամենից , զո՛ւրկ յանուշիկ գեղոյ
 շնորհացդ

Որ ըզգարո՛ւն փթըթէր յամայս յոքնատրեաւր կենաց իմոց ,
 Զի՛րկ յանմեղուկ ճըլըլանացդ , որ մեզ զուարթնոց յուշ ածէր
 զերգս ,
 Վա՛յ հէք ծնողացդ , զո՛ւրկ յամենից կողկողագին ըզքեզ ձայնեմք .
 Գե՛զ , Մարիա՛մ , ո՛վ մեր սիրոյ դու առաջին փափկիկ խայրիք ,
 Գե՛զ , որ յերկրի աստ կազմէիր ըզմեր վերջին հուսկ մըխթար :

Դո՛ւ էիր , դուստր իմ անոյշ , ա՛հ , դու խնդից մեր կիթառ ,
 Եւ արդ ընդ քեզ թաղես համակ ըզյօյս , ըզսէ՛ր անոք ծնողացդ ,
 Որ որբացեալք ի սուրբ տեսչդ ի տար աշխարհ լա՛ն յուսարեկ :

Վա՛յ մեզ , վա՛յ , հօր քո եւ մօր , որ մեր աչօք տեսաք ըզմահգ ,
 Ա՛հ , որպիսի թրթռուն յուսովք առ քեզ սլացայ ի Մելտինեայ ,
 Գրկե՛լ ըզքեզ եւ փայփայել , զմայի՛լ ի դէմնդ հրեշտակագե՛ղ .
 Եւ յօրանա՛լ ի խանդաղանսդ եւ յագե՛նալ գրկածութեամբդ :
 Վա՛հ զրկանացս , պատրա՞նք ուրեմն էին այն յոյսք , Աստուա՛ծ
 մեճ .

Փոխա՛ն ի գիրկս իմ գգուելոյ՝ զաչկունս ուրեմն արփիանշոյլ ,
 Զաչե՛րն էի ես փակելոց ի քօ՛ւն , ի նի՛նջ մոռացութեան . . .
 Ոչ ե՛ւս ապա , դո՛ւստր իմ , ոչ ե՛ւս դեղձան վարսիցդ խոպոպիք
 ի խոնջ գլուխն իմ հանգուցեալ խաղս մանկայինս ձեւացուցեն .
 Ոչ եւ՛ս աչկունքդ փարփառ յիս ակնարկեալ խնդալի՛ր՝
 Զամպոց մըռայլս ի ճակատուս հեռի , ի բա՛ց վըտարիցեն .
 Ոչ ե՛ւս իմ դառն արտասուք ի քաղցր ժպիտդ լուծանիցին .
 Ոչ ե՛ւս աչերս ըզքեզ , դո՛ւստր իմ , ըզքեզ տեսցեն ի գիրք ծղիս .
 մօրդ՝

ժպտո՛ւն՝ որպէս հրեշտակ եւ խնկաբո՛յր՝ որպէս շուշան . . .
 Ոչ ե՛ւս մատուներս փայփայեցեն զաշիկդ , թաթիկդ այդ գրգանոյշ ,
 Որ ա՛հ մահո՛ւն ի դալկութիւն նշողէ որպէս դժգոյն կերոն .
 Եւ շրթուներս ո՞չ եւս ի վարդ այդ քո շրթունս հանգիցեն՝
 Համբուրի՛ւքդ կնդրկաբոյր առնու՛լ զծարաւ կարօտանացս . . .
 Էւ բարեկամքս , եւ մերձակայքս , ո՞չ եւս ըզքեզ տեսեալ ի գիրկս՝
 Ինձ երանիս երանութեանց ո՞չ կարդայցեն նախանձարեկ : . . .

Ս.

Վա՛խ , Մարիա՛մ , վա՛խ քաղցր իմ սեր , ըզքեզ մահուն շուշ
 թունալի
 Այլադունեա՛լ ի ջինջ գեղոյդ , եւ դընի՛ս դու անշունչ , անխօս ,
 Որպէս տատրակ կամ աղաւնեալ ի վարմ անկեալ դուժ ոսոխին ,
 Շնչահէ՛ղձ եւ անկենդան , մեռելատիպ եւ դալկագէ՛մ : . . .

Ընդ այս աղետ , Մարիա՛մ , ընդ այս տեսիլդ քստմընելի ,
 Հիաղարհո՛ւր , խելայեղ՝ լուռ՝ կամ որպէս խելագար .
 Անզօ՛ր բնաւին առ այն աջ՝ որ զքեզ եհար անկարելիւր ,
 Եւ առ ցառոցս կատաղութեան հառաչեմ՝ լոկ եւ լամ ուժգին :
 Զի՛նչ այլ կարէ հայր մի եւ մայր , զի՞նչ ահ , բայց լալ եւ հեծեծել ,

Եւ յարտասուան եւ ի զայրոյթսն՝ սեւեռի՛լ միայն յայն փոս խորին
Որ ծածկէ՛ , կլանէ՛ անձայն ըզսէ՛ր նոցին եւ ըզծիծաղ : . . .

Շուարի՛մ , այսահարի՛մ , դու՛ստր իմ հանդէպ գերեզմանիդ ,
Շուարիմ ո՛րպէս աշխարել պաշտեցելոյ դստերդ ըզմահ .
Առ բուռն վշտացս ցամաքեցա՛ն իսկ արտասուածաց աղբերք աղի .
Եւ ի մեղմեւ ըզտապ բոցո՛յն , որ յիս վառի՛ անծախապէս ,
Անկանի՛մ հեղձամղձուկ՝ յանշունչ մարմինդ շաղապատեալ : . . .

1891 Յուլիս 28. Էլպիսան



Մ Ի Ր Ա Վ Է Մ Ք

Կ Ա Ղ Ո Ւ Հ Ի Ն

Ա.

Անցա՛ն ծիծաղկոտ Մայիսն ու Յունիս .
Դու միշտ տրտո՛ւմ ես , Մաննի՛կ , ի՞նչ ունիս .
Է՞ր միշտ լոյս Վեստեան կուսանաց հանգոյն
Կ՛աղօթե՛ս անքուն :

Ասա՛ , քո քընքոյշ ձայնիկ է՞ր այգուն՝
Ձի՛ թրթռացներ երգե՛ր գերազոյն .
Ա՛հ , մինչեւ անգամ վարդենի՛դ գողտրիկ
Մուսկէ՛ր ես , Մաննի՛կ ,

Արդեօք սիրտդ՝ սիրոյ վըսեմն այն խորան՝
Խամրեցո՞ւց խորշակն սեւ ատելութեան .
Բայց դու բարի՛ ես , դու չե՛ս ատեր , ո՛չ ,
Դու՛ն հրեշտակ Տէրօջ :

Աստու՛ած քեզ պճնեց ի սէր և դորով .
Թա՛րմ աշտեր տուաւ՝ սեւ սեւ՝ աչերով .
Բերնի՛դ մէջ դըրաւ լեզու՝ որ անոյշ
Քան մեղր է , ո՛ր կոյս :

Ունի՛ն ոսկեթեւ վարսից խաղաղներ ,
Ուր յակինթներու հովիտ մ'է ծաղկեր .
Քեզ տեսնող՝ կարծէ աշտերը ծաղիկ ,
Եւ աչերդ՝ աստղիկ :

Այնքան որտագրաւ ձիրքեր ունիս դուն .
Զի չքնա՛ղ ևս ես քան մի զուարթուն ,
Առ ի՞նչ հեծեծես , երազես լըռին՝
Աչե՛ր ի յերկին :

Խորհի՛ս թէ՛ կա՛ղ ես . . . թէ՛ բաղդն ամբարիշտ
Մուցած այնքան շորհդ , ոտնե՛րդ ծաղրէ միշտ .
Է՛հ , այնքան ձիրքեր՝ կաղութիւնդ փոքրիկ՝
Կ'սքօղե՛ն , Մաննի՛կ : . . .

Բ.

Բայց նէ միշտ հոգայր , հառաչե՛ր անձայն ,
Մինչ Մայիս , Յունիս եկա՛ն ու անցան .
Որբ էր , հոգն էր այս , իւր ցաւն ու վիշտեր՝
Լո՛կ կաղութիւնն էր :

Նէ միշտ կը խնդրէր նոճւոյն այն ստուեր՝
Ուր օրուան տաքի՛ն միայն նստուէր .
Հո՛ն լայր կաղութիւնն , որ իւր քաղքին մէջ՝
Արա՛տ մ'էր յո՛յժ մեծ : . . .

Խե՛ղճ Մաննիկ , ստէպ կ'առնէր հայելին .
Հիւհրաշ դիտէր այտերն ու աչուին ,

Զայն յոյր յոյր ձեռներ՝ ոյց կ'ուտային շուք՝
Մատնե՛րն իւր փափուկ :

Եւ մինչ գըրաւեալ՝ աղջիկն այն սիրուն՝
Մոռնա՛յր կաղութիւնն մանրի՛կ ոտներուն՝
Յա՛նկարծ ոտք ելնէր , ցատքէ՛ր . . . այլ իսկո՛յն՝
Կ'իյնա՛ր նուաղուն : . . .

Տեսնէ՛ր կաղութիւնն հայելիին մէջ .
Եւ ի՛նչ խոր կըսկիծ կ'զգայր , Աստուա՛ծ մեծ .
Հո՛ն թէ իւր առջև երկիրն բացուէր՝ ա՛խ ,
Կը թաղուէ՛ր ուրախ :

Հաշուէ՛ր տասն և վեց ծիծաղ դարուններ .
Յայն վայր չէր երբէք իւր սիրտն արիւններ .
Բարերա՛ր մ'ունէր՝ սիրտով բարեկիր՝
Ոյր էր որդեգիր :

Եւ այդ բարերարն՝ հարուստ ու աղնիւ՝
Ծե՛ր էր , պիտ' մեռնէր այսօր կամ վաղիւ .
Եւ ժառանգորդաց անլո՛ւր նախատինք՝
Պիտ' վանէ՛ին զինք : . . .

Գ.

Եւ մի օր մեռա՛ւ վեհսիրտ իւր պաշտպան՝
Ա՛լ մուցաւ Մաննիկ ցաւե՛րն կաղութեան .
Նօթութեան սարսափ պաշարեց զիւր միտ՝
Մոռցա՛ւ իսկ ժըմիտ :

Կրկնապատկեցա՛ն վիշտեր իւր անհուն
Կաղութեան վերայ՝ դժխե՛մ նօթութիւն .
Եւ իւր տաքնապոց մէջ զարհուրագին՝
Զըյիշե՛ց զերկին :

Բայց Աստուած՝ որ հայրն է հէք որբուհեաց՝
 Լըսեց Մաննիկին հառաչքն ու գըթաց .
 Եւ յաջողութեան հովն եկա՛ւ , գգուե՛ց՝
 Զայն ցաւերուն մէջ :

Մաննիկ ունէր ո՛չ միայն գեղանի՝
 Այտեր՝ ոյր տեսքով սիրտ կը գեղանի .
 Այլ և յօրինէր մատներով ճարտար՝
 Գո՛րծ գեղանքկար :

Ունէ՛ր և սուր միտք՝ պայծա՛ռ ու անամբ .
 Պարզէ՛ր կընճիւններն ճգըրի՛տ ուղղութեամբ .
 Հոգւովն յաստարէ՛զ ուսմանց էր ձգուած ,
 Սրտո՛վն առ Աստուած :

Եւ երբ հասաւ ժամ , ժպտեց բաղդն իրեն՝
 Աղջկանց դպրոցին եղաւ տընօրէն .
 Սկսաւ դարձեալ թրթռալ , հէ՛ք Մաննիկ ,
 Հովերո՛վ քաղցրիկ :

Նախանձելի՛ էր , երջանիկ էր շատ՝
 Զինք մեծարէին հարուստն ու աղքատ .
 Եւ թէ ինքն ուզէր , շատեր կ'ունենար՝
 Գեղո՛յն սիրահար :

Այլ ևս չ'երեւէր կաղուծիւնն աչքին .
 Ուրա՛խ էր իւր գէմք , վա՛ռ՝ սիրտն ու հոգին .
 Հիացո՛ւմ կ'աղղէր , բա՛ւ էր . ո՞ր մարդուն
 Հո՛գն էր կաղուծիւնն :

Ա՛յսպէս նէ կ'ապրէր ուրա՛խ , երանի՛կ ,
 Ուռգէր , խնամէր վարդենին փոքրիկ ,
 Այգո՛ւն դիտէր զայն , ջըրէ՛ր զայն իրկուն՝
 Երազովք սահուն . . .

Դ.

Շա՛տ մօտ էր շինուած տղայոց վարժարան ,
 Ուր դասախօսէր վեհոգի՛ն վահան .
 Պարկեշտ , գործօ՛ն էր , կրակո՛տ պատանիկ՝
 Զոր սիրէ՛ր Մաննիկ ,

Եւ կ'երթա՛յր Մաննիկ ստէպ ա՛նոր քով .
 Ուր կ'ընդունուէր՝ միշտ սիրալիր գէմքով .
 Ունէր կիրթ ճաշակ և սիրտ անձնուէր .
 Աղջիկն էր գրաւուեր :

Նա՛ եւս իւր նըման էր մատաղ , սիրուն .
 Իւր գաղափարներն ունէր եւ լեզուն .
 Է՞ր հոգւով մարմնով չը կապուէր իւր հետ՝
 Նա չէ՞ր վարժապետ :

Այլ մի՛շտ կ'անցնէին օրերն ու ժամեր .
 Նէ յուսով կ'ապրէր , սէրն չէ՛ր թառամեր .
 Ե՞րբ պիտի հասնէր , ա՛հ , օ՛րն հարսնիքին .
 Ե՞րբ կոչուէր — տիկի՛ն — . . .

Մինչ այս երազովք զանձըն կ'օրօրէր .
 Ա՛հ , ի՛նչքան դանդաղ կ'անցնէին օրեր .
 Ա՛յս օր , գա՛լ շարա՛թ , միւս ամսոյ կիսուն՝
 Մընջէ՛ր երազուն . . .

Գիտէ՛ր զայս ամեն պատանեակն ուշիմ ,
 « — Ո՛վ Աստուած գոչէր , ո՞րքան կը յուզիմ ,
 Երբ անմեղ սիրոյ խօսքերը լըսեմ՝
 Աղջկա՛նն այն վըսեմ :

« Սխրանք կ'աղղէ ինձ բարութիւնն անբաւ .
 Յանկուցանէ՛ զէս լեզուն սրտագրաւ .

Այլ ա՛հ, զոր կ'զգայ մի սիրտ սիրահար՝
Ես զայն չեմ զգար :

« Մաննի՛կ, անձնուէր ես դու իբրեւ քոյր,
Իցի՛ւ նուաճիւր զայս սիրտ անհամբոյր .
Այլ ներէ՛, ես քեզ խոցե՛մ կարեմէր
Հոգւո՛վս աննուէր : »

Այսպէ՛ս մրմնջէր ազնիւ պատանին՝
Երբ Մաննիկ չինեւ կուտայր մատանին .
Զոր վաղիւ իւրեան ընծա՛յ տալ խորհէր՝
Սիրտո՛վս անձնուէր :

Բայց մերժե՛լ զայն սիրտ... այս չէ՞ մի ոճիր .
Թշուա՛ռ պատանի, փութա՛, հեռացի՛ր .
Լա՛ւ եւս է խոտեւ մի պաշտօն շրջեղ՝
Քան մի սիրտ անմեղ :

Հէ՛ք տըղայ, թողո՛ւց պաշտօն ու համբաւ,
Գընա՛ց առ Մաննիկ՝ հրաժեշտն իւր տուաւ .
Մի շա՛տ պատճառներ գըտաւ գեղեցիկ,
Այլ լացա՛ւ Մաննիկ :...

Ե.

Մեղմէ՛, հէք Մաննիկ, հուրը վեհ հոգւոյդ .
Քի՛չ մ'ալ մըտածէ՛ պատիւդ և օգուտ .
Է՞ր լսս յուսաբեկ . հո՞գ է թէ՛ մեկին
Այն սէգ պատանի :

Կուլա՛ս թէ կրելէն ետք ցաւեր հազար՝
Մինչ կարծէի՛ր թէ բաղձանքի՛դ հասար,

Թէ ցրուէ նորա հրաժեշտի ողջոյն՝
Երազնե՛րդ ողջոյն :

Բայց դու ազատ չե՞ս, ո՛վ կոյս գեղապանձ .
Գեղեցկութիւնն չէ՞ մի անըսպառ գանձ .
Անձկանօ՛ք դարձեալ խընդրեն զաջդ վաղիւ՝
Շա՛տ սիրտեր ազնիւ :

Վաղի՛ւ... Աստուա՛ծ իմ, ի՛նչ քաղցր է այս յոյս .
Սիրտ առաւ Մաննիկ, նո՛ր չուենչ, նո՛ր խրախոյս .
Անցա՛ն շատ օրեր, այլ միշտ ապարդիւն,
Ա՛հ, այդ կաղութիւնն :...

Ընկերուհիներն տեսնէր ամեն օր՝
Որոց՝ հարսնութիւն՝ կը բաշխէր կեանք նոր .
Վիշտ՝ խամրեցընէր զիւր սիրուն կոկոն .
Ա՛լ կ'ատէր զպաշտօն :

Այո՛, կ'ընդունէր յարգանք յամենուստ .
Այլ ի՞նչ օգուտ երբ սէր կ'ուտայր փախուստ .
Զայրանայր, ո՛չ ոք իւր գեղոյն առաջ՝
Ա՛հ, չէ՛ր խոնարհած :...

Հարուստ թէ աղքատ՝ գովէին զիւր ջան .
Ինք սիրով մաշէր, չունէ՛ր սիրաբան .
Յետին ուսմկին հետ՝ եթէ զինք ուզէր՝
Պիտի կապէ՛ր սէր :

Վարդետունկի՛ն քով կ'անցնէր զիւր ժամեր՝
Աչերէն աղի արտասուք քամէր .
Հոն չքնաղ ծաղիկն պարզէր զիւր վիշտեր՝
Մինչ նա կը ժպտէր :

Եւ ա՛հ առ սըրտին յուսահատութեան
 Կարծելով թէ նա կը խնդա՛յ վըրան .
 Ստէպ այն քնքոյշ վարդենւոյ թերթեր՝
 Անխընայ փետտէր : . . .

Ձ.

Գարուն էր, ծաղկունք բուրելին հոտեր .
 Ալ խեղճ Մաննիկին ճակատ ամպոտ էր .
 Խորհէ՛ր կաղութիւնն, որ զփայլեւն անգին
 Զըլանայր կեանքին :

Մի օր երբ արտասուք թանայր զիւր երես՝
 Զայն մ՛ըսաւ իրեն . — Կո՛յս, թէ զիս սիրես՝
 Կ'երդնում, ծիծաղ կեանք ու սէր քեզ կրկին՝
 Կը չնորհէ կրկին :

Յուսալի՛ց առ այն դարձաւ հէ՛ք Մաննիկ .
 Տեսաւ մի կտրիճ՝ կայտա՛ռ զերդ ծաղիկ .
 Դէմքին վրայ փայլէր, աշխոյժ, արութիւն,
 Անունն՝ Յարութիւն :

Տեսա՛ւ զայն Մաննիկ, սիրտն ուժգին տրոփեց .
 Արիւն եփ ելաւ երակներուն մէջ .
 Ուստե՛ց զայն սիրել անմե՛ղ հրճուանօք,
 Սի՛րտ սիրաբորբո՛ք :

Եւ բերկրապատար հոգին բացուեցաւ
 Կեանքի եւ սիրոյ հաճոյիցն ամբաւ .
 Եւ մինչեւ տարին ըրաւ զիւր ընթաց՝
 Խընդաց ու խընդաց :

Հոգ չէր թ՛անկուտ էր անկեղծն Յարութիւն .
 Սէր միայն կ'ուզէր սիրտն իւր եռանդուն ,

Առ ի՞նչ էր շահած կամ որո՞ւ համար
 Զայն գլորիկ գումար :

Կ'ըսէին . — օրուան նա բոլոր ժամեր՝
 Կ'երթայր գինետուն եւ օղի քամէր .
 Հո՛գն իսկ չէր թէ իւր պաշտած Մոլիէր՝
 Պագշո՛տ, մսլի՛ էր :

Հո՞գն էր թէ . . . ինքը՛ սէ՛ր կ'ուզէր միայն ,
 Առանց սիրոյ կեանքն էր սին, ընդունայն .
 Կա՛ր մահ, բայց առանց սիրոյ՝ յուսաբե՛կ
 Ասլի՛լ . . . ո՛չ երբէք :

Է.

Ամեն մոլութեամբն հանդերձ՝ Յարութիւն
 Կեղծէ՛ր առ Մաննիկ միշտ սէ՛ր զուարթուն .
 Սիրտն ո՛րքան քար էր՝ լեզուն էր կակուղ՝
 Զինչ դա՛շտ կաթնաբուխ :

Մի օր երբ Մաննիկ նընջէ՛ր անկասկած՝
 Զօրքեր բանտ տարին զՅարութիւն կապած .
 Սըրիկայութեա՛ն խարա՛կն ահագին
 Բոլորե՛լ ճակտին . . .

Առտուն՝ երբ լըսեց՝ չա՛տ լացաւ Մաննիկ .
 Վազե՛ց բանտ զօրքերն կշտամբեց սաստիկ .
 Յետոյ մեկնեցաւ շուտ հանել անկից՝
 Ահ, զի՛ւր կենակից : . . .

Խեղճ աղջիկ, երեսն իւր ձրգած հաչաղ՝
 Կ'երթայր աղաչել դատաւորն յաճախ .
 Իրկո՛ւն տուն դառնայր՝ յոգնած քրտնոռոգ՝
 Առած սիրտ նորոգ :

Յուսադէլին զինքն իւր բարեկամներ՝
 Եթէ սիրելին բանտէն պիտ' ելնէր,
 Այլ նա բանտն էր միշտ, դատապարտութեան՝
 Կ'սպասէ՛ր օրուան:

Եւ հասած էր օրն՝ դժխեմ, ահագին.
 Սիրելւո՛յն գըլուխ՝ ներքեւ մահակին՝
 Պիտի կտրուէր... և բոլոր աշխարհ
 Ի տե՛ս պիտի գար...:

Եւ այս՝ կատարուէ՛ր դաշտին մէջ թերեւո՛ւ
 Ուր ծիծաղ դարուէր ժպտէր ի տերեւս.
 Հոն՝ ուր հե՛ղ Մաննիկ՝ նստած չա՛տ գիշեր՝
 Զանցեալն էր յիշեր:

Յօ՛ղըս ցնդեր էր իւրեան բոլոր ճիգ.
 Պիտի գործադրուէր մահուան դատակնիք.
 Խե՛ղճ կին, անյո՛յս բնաւ, կարեւի՛շ խոցուած՝
 Դիմէ առ Աստուած:

Է.

Գիշեր է մութ սեաւ, խաւարի՛ն գիշեր,
 Զերկին թուխ ամպեր պատեր են պատեր.
 Հսկէ հէք Մաննիկ՝ սիրով հրակայլակ,
 Մինչ շողայ փայլակ:

Սարսուռ ընթանայ ընդ բոլոր աշխարհ.
 Երկին որոտայ անդուռ անդադար.
 Արդեօք աշխարհի՞ հասեր է վախճան.
 Լո՛ւռ ամեն խրախճան:

Փայլակ ու կայծակ շանթովք ահաւոր
 Հրդեհ են ձգքեր ընդ լեռ և ընդ ձոր:

Տունե՛ր պալատնե՛ր ի քթթեւ ահան՝
 Յաճիւն կը դառնան...:

Հո՛ն լոկ, ուր կ'երեւի բանտ մահահրաւէր՝
 Դեռ շանթ չէ իշխեր սփռել զիւր աւեր.
 Քանից՝ս յարձակեր էր շանթ ի վայրն այն
 Խանցեր էր ունայն:

Այլ ահա՛ ահեղ շաչէ մի նոր շանթ.
 Կ'ընկնի՛... հրդեհէ՛... բոցի մէջ է բանտ...
 Հո՛ւր է, հո՛ւր... փախէ՛ք պահնորդ, կաշնաւոր,
 Ի՞նչ ժամ ահաւոր...:

Բանտը կը վառի՛ հուրով դժոխային,
 Զարճատեն պատեր, վա՛յ անըզգային,
 Ամեն կողմ կըրակ, ամեն կողմ ծուխ, բոց.
 Վա՛յ բանտարկեւոց...:

Ափշութի՛ւն, երկի՛ւղ ունի զամեն սիրտ.
 Այլ արին Մաննիկ սպասէ անխըլիրտ.
 Սէրն անոր թեւեր տուաւ նոյն ժամուն՝
 Փրկել զՅարութիւն:

Վազեց ու հանեց զՅարութիւն բանտէն.
 Փա՛խիր, ըսաւ, չո՛ւտ, ժամերը սուղ են.
 Երա՞ղ էր արդեօք, երբէք ա՛հ չըլթայն՝
 Կ'ընկնէր նոյն հետայն:

Եւ փախչէ՛ր առանց իսկ տալոյ համբոյր
 Անո՛յշ Մաննիկին՝ այտից խնկարոյր.
 Կ'անձրեւէ՛ր երկին, լայր Մաննիկ արթուն,
 Փախչէ՛ր Յարութիւն:

Փախչէր նա արագ, քան ճիրիտն Արաբ՝
 Մինչ տեղայր իւր շուրջ անձրեւաց տարափ:

Խնդա՛, ով Մաննիկ, հա՛ հասա՛ւ նա գիւղ՝
Ա՛լ չըկայ երկիւղ:

Եւ գիտէ Մաննիկ, ո՞ւր էր նա գացած .
Թողուց զիւր պաշտօնն և առ այն փութաց .
Գրկե՛ց զայն որպէս իւր կեանքն ու հոգին՝
Սիրով տարփագին:

Կրկին վայելե՛ց զայն մեղրալուսին
Ոյր հաճոյքն ամբաւ թուէր այն կուսին .
Այլ հաճոյքէն ետք սլիտի գայր տըրամ .
Հատեր էր դրամ:

Չունէ՛ր սիրելին բնաւ մի վաստակ .
Արուեստն էր անոր շրջիլ անառակ՝
Փողոցէ՛ փողոց, մանեւ կանանց մէջ
Ջարդե՛լ մեծամեծ:

Թ.

Գիշեր մ'երբ Մաննիկ նայէր աստեղաց .
Կարծե՛ս հոն սրտին մէջ օրհա՛ս տեղաց .
Կա՛յծ մ'ինկաւ վերէն իրեն մօտեցաւ .
Սարսուաց. — մօ՛տ է ցաւ: —

Թշուա՛ռ կին կորոյս զերազնե՛ր նախկին,
Դըրամն սպառած, տրտում էր հոգին .
Մինչեւ կէս գիշեր դուրսն էր Յարութիւն,
Հազի՛ւ գայր առտուն:

Չո՛ւր տքնէր անքո՛ւն՝ մատներով նրբին՝
Ապրեցնե՛լ զինքն եւ զիւր սիրելին,
Չո՛ւր շարժէր զասեղ մինչեւ կէս գիշեր՝
Չո՛ւր զերկինք յիշէր:

Զինքն ա՛յնքան տուած է իւր դբաղմանց
Զի մոռցա՛ւ իսկ բնաւ զիւր վարդ գեղատանձ .
Անջո՛ւր խամրեցաւ չքնա՛ղն այն ծաղիկ
Ու լացաւ Մաննիկ:

Այլ դեռ զայս ամեն անտրտո՛ւնջ տանէր,
Դիմադրէ՛ր վըշտո՛ց հոգւո՛վ անվհէր .
Եւ թէ զինք մի քիչ սիրէր Յարութիւն՝
Փո՜յթն էր խեղճութիւն:

Այլ սիրելին, զոր հոգւո՛վ չափ պաշտէր,
Ալ, զինք նկատէր ա՛հ, մի անպէտ բեռ .
Չէ՛ր ախորժեր իւր սիրուն կերպերէն,
Վա՛տն այն անօրէն:

Ճ.

Մի օր շատ կանուխ դնացե՛ր էր բաղնիք,
Տեսնել հոն մաշած զիւր մարմին փափկիկ .
Տեսաւ, ու վախ՛ն դո՛ւրս փախաւ զինչ գող՝
Սիրան առա՛ծ էր դող:

Երբ տուն հասաւ, նոր ծագէր առաւօտ .
Անոյշ խորտիկի կարծես առաւ հոտ .
Յանկարծ Յարութիւն ելաւ իւր առաջ,
Քաղցրիկ դէմք առած:

« — Հրամեցէ՛ք, տիկին, — գոչեց. — Այս անգամ
Հաճեցա՛ւ ժպտիլ մեզ բաղդն անդգամ .
Հարո՛ւստ եմք, հարուստ, վայելե՛նք ուրախ,
Կորի՛ ախն ու վախ »: —

Խընդումէն խայտաց խղճալին Մաննիկ .
 Իւր երազն էր միշտ ապրիլ երանիկ .
 Չ'ուներ իսկ կասկած , ո՛չ իսկ տարակոյս ,
 Վա՛խ , միամիտ կոյս :

Առա՛ւ , ճաշակեց , ժպտեցա՛ւ քաղցրիկ ,
 Գողցե՛ս կեանքին մէջ նոր կ'ուտէր խորտիկ .
 Տակաւ դեղնեցաւ իւր դէմքն անուշակ՝
 Որպէս մանուշակ :

Քիչ քիչ խեղճն զգաց թէ կը սարսըռայ .
 Աչերը յառեց սիրելոյն վերայ .
 Ի՛նչ վեհ բարութիւն կը ճառագայթէր՝
 Իւր բարա՛կ այտեր : . . .

Գերազնի՛ւ Մաննիկ , միշտ քաղցր և ժպտուն՝
 Անճառ մի ակնարկ ուղղեց սիրելոյն .
 Մեռնի՛մ , ա՛հ , սառած ճակախ համբոյր տուր ,
 Գոչե՛ց կիցկըտուր : . . .

Իսկ քար սիրտ , անխիղճ սըրիկայն յամառ՝
 Դեռ պընդէր . — Քիչ մ'ալ իմ սիրոյս համար . —
 Թո՛յն ունէր խորտիկն , զոր կո՛յսն այն չքնաղ՝
 Կերա՛ծ էր , աւա՛ղ : . . .

Բայց Մաննիկ՝ մահու մինչ կըրէր տազնապ՝
 Դեռ գոհացընէ՛լ ջանաց զայն վիշապ .
 Բերնին մէջ մընաց պատառն այն վերջին՝
 Աղուս՛ր Մաննիկին : . . .

Եւ մինչ անբաղդ կինն հոգին կ'աւանդէր ,
 Նա միշտ անպատկառ՝ գոչեց անտարբեր .
 — Բարեաց , զոր յայսօր տեսայ՝ առ ի քէն՝
 Ահա՛ առի քէն : —

Կը հընչէր վերջին խօսքն օդին մէջ դեռ՝
 Երբ հըրէշային ժըպիտ ի շուրթեր՝
 Ծիծա՛ղ մ'արձըկեց այնքան վայրահաչ՝
 Մինչ ի՛նքն իսկ դողաց :

ԺԱ.

Վատերն այսպէս , Տէ՛ր , ծիծաղովք ուսան՝
 Պատրե՛ւ միամիտ այնքանի կուսան ,
 Ո՛րչափ չուառներ կ'երդնում չըմեռան՝
 Բուքովք ձըմեռան :

Այլ , վատեր , հերի՛ք դործէք դուք չարիք .
 Մինչ երկնից ցասման ճաշակ դեռ չ'առիք՝
 Զղջացէ՛ք , մօ՛տ է Տէ՛ր վըրէթխընդիր ,
 Որ բնաւ չը խարուիր :

Վաղ թէ անագան կ'առնէք հատուցում՝
 Չարեաց՝ զոր դործէք՝ սիրտեր ապառռում .
 Դո՛ւ ևս , Յարութիւն , անսանձ անառակ ,
 Շո՛ւտ կ'առնես քո պսակ :

Այժմէ՛ն իսկ տեսնեմ , ցամբի՛ ծիծաղդ՝ մինչ
 Անճնուէ՛ր Մաննիկ կ'առնէ խաղաղ նինջ .
 Քե՛զ պիտի տանջէ յիշատա՛կն անոր
 Մինչեւ մահուա՛ն օր :

Եւ թաղեն զՄաննիկ սըրբատո՛ւն կոյսեր ,
 Հոն՝ ուր հընոյն քով նոր վարդ մ'էր բուսեր .
 Դժբաղդ կին , մինչ ինք լացե՛ր էր զիւր վարդ՝
 Ո՛չ ոք լայր զինքն արդ : . . .

Այս եղաւ բարի կաղուհւոյն վախճան .
 Այս է , ա'յս ստէպ բաղդն անփորձ աղջկան .
 Անմեղն խի , գիտցի'ր , ո'վ մատաղ անցորդ ,
 Ունի' զնախանձորդ : . . .

30 Նոյ. 1888

ՎԱՐԴ ԵՒ ՎԱՐԴԵՆԻ

Ա..

Հարուստ հայու միակ դուստրն էր Վարդենի .
 Յինքն էր ձրգուած բոլոր գըգուանք հայրենի .
 Ունէ'ր չըքնաղ գեղեցկութեան բիւր գանձեր ,
 Գարուն անոր վրայէն ի զուր չէր անցեր ,
 Վարդ՝ զիւր գոհար և փափկութիւնն էր շնորհած .
 Նէ թագուհի'ն էր շնորհաց :

Մեխակ պճնէր այտերն անոր ծիրանի .
 Զերդ լոյս շողայր մորթըն իւր պերճ իրանի .
 Շուրթեր՝ գրաւուն անմեղութեան զինչ երազ .
 Ուր կը ծաղկէր ձիւնածաղիկն ու կեռաս .
 Մէն մի ծաղիկ օժտա'ծ էր զայն իւր գեղով ,
 Սիրտն էր ծածկեալ ի գորով :

Աչերուն մէջ և այտերուն իւր վերեւ՝
 Աստղիկ ժըպտէր՝ իբր այգ վարդից ի տերեւ .
 Նէ միշտ շընչէր երանութիւնն , խանդ ու կեանք ,
 Ո'վ որ կ'այցէր իւր հօր չըքեղ ապարանք ,
 Յափըշտակուած՝ այնմ երանի' կը կարդար ,
 Կո'յսն խի , մոնաղն խի արդար :

Դեռ չը գիտէր նէ ի՞նչ է սէր կամ նախանձ .
 Փափուկ էր սիրտն , անմեղ՝ հոգին , ուրախ՝ անձ .
 Ճոխն՝ ու աղքատ թէ միանգամ զայն տեսնար .
 Ծեր թէ մատաղ դառնայր մոլի սիրահար .
 Նա՛ ճոխք , ի'նչպէս խանդով իւր շուրջ դառնային՝
 Հանգոյն մեղուաց գարնային :

Կ'անցնէ'ր գարուն , սիրտերն ի զուր յուսային ,
 Հըրապուրեւ , գրաւեւ զայն սիրտ կուսային ,
 Կ'ուգա'յր ամառն՝ իւր հեղձուցիչ հովերով՝
 Նէ միշտ նո'յն էր : Մի օր սակայն , ո'վ էր ո'վ ,
 Տեսաւ աղջիկն երիտասարդ մ'անվեհեր
 Եւ խոցուեցաւ կարեւոր : . . .

Եւ Վարդենի , որ ցա'յն վայր չէր գգացած՝
 Ի՞նչ է սիրելն , տրոփիլն գգաց իւր լանջաց .
 Եւ խանդավա'ռ , խընդամուլիկ'ն այն աղջիկ ,
 Յա'նկարծ եղաւ մեղամաղձիկ մի թռչնիկ .
 Այլ ևս խնդրէր միայնութիւն ու լուսին՝
 Անփորձ սի'րտը հէք կուսին :

Ո'ւր որ երթայր՝ իւր սըրտին մէջ կենդանի՝
 էր այն յանդուգն , խարտիչազեղ պատանի .
 Ազնուական պատանիներն այն չըքնաղ՝
 Ոյց պաշտելի՝ էր գեղութիւն իւր մատաղ ,
 Վարդեր էին՝ զո'ւրկ յարեւոյն կենսաբոյր .
 Զ'ունէի'ն բնաւ հըրապոյր :

Վա'խ քեզ , ո'վ կոյս , զի գեղ՝ որ զայնս պսակէր ,
 Շատ բարձր է քան հրապուրողն այն պատկեր ,
 Որոյ սին փայլն և եթ կ'առնես ի նըկատ .
 Նա չ'ունի բնաւ տաղանդ , ո'չ սիրտ հարազատ .

ձիււա՛ղ մ'է՛ , վա՛խ , պաշտած կըտրիճդ պըջրասէր ,
ձիււա՛ղ , մարդու մի՛ ասեր :

Քեզ համար ո՞վ , վարդենի՛ , ո՞վ չը զոհեր
Գանձ ու պատիւ , սիրտ ու հոգի՛ անձնուէր .
Քեզ չե՞ն խնդրեր ընտիրք ա՛յնքան ընտրելոց .
Եւ այն՝ ոյր դէմք պայծա՛ռ փայլի իբրեւ բոց .
Իսկ դու անփորձ սըրտիդ եւթ անսացիր .
Վա՛խ , այդ գեղոյդ կենսաձիր :

Բ.

Վարդենւոյն հօր ապարանքէն ո՛չ հեռի ,
Բարձրանայ չէ՛նքն , ոյր արուե՛ստն է անթերի .
Թերեւս այնչափ չէ՛ պերճութեամբն անուանի ,
Այլ գրաւի՛չ է , սիրոյ տաճար կ'անուանի .
Հո՛ն է Սեթեանց պետն շըմայեակ՝ սիրտ գորով ,
Շըպա՛րտ , հարո՛ւստ իւր որդւով :

Աստուած օժտեց զայն մեծութեամբ անսահման ,
Եւ մեծութիւնն օրհնեց որդւո՛վ սիրական ,
Անո՛ւնն է՛ վարդ , փափկիկ որպէս նոյն ծաղիկ .
Գեղեցի՛կ է , կ'երդնում , այլ մի՛ ծիծաղիք .
Տասնութ գարուն է ողջուներ բերկրալից՝
Ճի՛շդ վարդենւոյն տարեկից :

Եւ չէ՛ միայն նա վարդենւոյն տարեկից՝
Պաշտէ՛ ևս զայն , սիրտով , սիրո՛վ կարեկից .
Իւր գարուններ անցեր են յայն վարժարան՝
Ուր վարդենի առե՛ր է զիւր վկայական .
Հոն զայն տեսած , հե՛տն է խօսած՝ գիշեր տիւ
Եւ զայն սիրա՛ծ է սերտիւ :

Այլ անողոր ամերն անցան ամարան՝
Եւ վարդենի թողուց ուսում , վարժարան ,
Բա՛րէ , սակայն պատեհ առիթն վատնեց զո՛ւր .
Գէթ մի անգամ է՞ր չը յայտնեց ըզսէր իւր .
Օրհնեա՛լ ամեր , ի՛նչպէս անցեր էին շուտ .
Կապտելով յո՛յսն իւր խախուտ :

Եւ սիրո՛վ լի՛ զայն կ'երագէր շատ գիշեր .
Վարդենին ևս , ա՛ղէ , արդեօք զինք յիշէ՞ր .
Այս մտածում տրորէր զիւր սիրտ թունդ ի թունդ .
Չէ՛ք տղայ , առջին բացուած տեսնէր խոր անդունդ .
Թէ զինք սիրէ՛ր նէ , ի՛նչ հրճիւ , տէ՛ր Աստուած ,
Իսկ թէ անկէ չէ՛ր սիրուած ...

Կ'երէր , մրկէր պառանին այն վեհազուն .
Մռնչէ՛ր լւին , որպէս ծառոց վրայ աշուն .
Զ՛իշխէր և ո՛չ ումեք բանալ սրահն սէր՝
Ծաղրուելու գաղափարն զինք կը սարսուէր .
Եւ կարծէր թէ ո՛չ ոք գիտէր զիւր գաղտնիք .
Հաշուած չէ՛ր հօրն իւր աղիք :

Հայրիկն արդէն հասկըցե՛ր էր շատ կանուխ
Թէ վարդ սիրէր ըզվարդենին սրտաբուխ .
Եւ ա՛ռանց իսկ իմաց տալու՝ ինքն արդէն
Վազե՛ր , խնդրե՛ր էր զաջ կուսին իւր հօրէն .
Իսկ վարդենւոյ հայրն՝ բերկրութեամբ սիրալիր՝
Ընդունած էր զիւր խնդիր :

Եւ երկուց հարց սէրը կ'աճէր օր քան զօր ,
Մըտերմութեամբ , համակրութեամբ նորանոր .
Բայց թէ ինչո՞ւ դեռ կ'ուշանար հարսանիք՝
Զի սիրուելու չէին հասած դեռ տարիք .

է՛հ, բաւական համոզի՛չ էր այս պատճառ՝

Մինչ ուտեք ցաւ մ'ալ չըկար:

Այլ բազմացաւ հոգն այն ազնիւ ծերերուն՝
Յօրէ անտի՛ երբ վարդենի՛ երերուն
Որպէս տերեւ վարդի սկսաւ այլայլիլ.
Կ'արտասուէին աչերն կաթիլ առ կաթիլ.
Շիկնէր, փախչէր, երբ կը տեսնէր վարդին հայր՝
Ինք՝ որ առ այն միշտ փութայր:

Ա՛հ, ալեւոր Հմայեակ զգացած չ'է՞ր արդէն՝
Թէ աղջկան սիրտ գոցուե՛ր էր իւր վարդէն.
Հասկցած էր, սակայն կամէր զառաջինն՝
Հսել խնամին, թէ ի՞նչ խորհէր այս մասին.
Եւ ի քննելն՝ տեսնէր զայն հէք ծերունի՛
Որ հեկեկայր գողունի:

Ի զո՛ւր Զարեհ՝ իւր նազելի աղջկան
Առջեւն համրեց այն ձիւրքերը աննըման
Որք փայլէին յանձին սիրած պատանւոյն.
Թէ չ'ունէր նա բընաւ համբաւ վատագոյն.
Թէ պճնէին նորա ճակատ վեհ, անճառ.
Բարձր տաղանդ և հանճար:

« Ազնուական սեռին ծաղի՛կն է, կ'ըսէր .
« Ո՛չ ոք կարէ քալ ընդ նըմա ի վըսեր .
« Ազնուութեան, մեծանձնութեա՛ն է տիպար .
« Ո՞ր օրիորդ , ո՞ր կոյս նըմա չը տարփար .
« Ըզնա՛ միայն տեսնեմ, դո՛ւստր իմ խելանի՛
« Ըզնա՛ սրբտիդ արժանի: »

Եւ յարգելով զհարկ պատշաճից օրինաց .
Ի՞նչ ներքողներ վարդին վրայ չէր յօրինած .

Պատանիներն կարգաւ դընէր ի նըժար ,
Բայց վարդին ո՛չ զոք նըկատէր հաւասար ,
Եւ մինչ կարծէր բերել զաղջիկն ի հաւան՝
Բաղիւր նո՛ր դժուարութեան:

Եւ զի պաշտէր զհայրիկն՝ ազուո՛ր վարդենի՛
Կուգէր ուրախ առնել ըզսիրտ հայրենի .
Յաճախ փորձէր ժպտիլ ընդդէմ իւր կամաց ,
Երբ դիտէր զինք հայրիկն լըռին ու կամաց .
Եւ վարդենի՛ այսպէս գգուէր զիւր հայրիկ .
Ա՛յս ալ միթէ չէ՞ր բարիք:

Իսկ երբ , ո՛վ ցաւք , մընայր աղջիկն առանձին ,
Ընդունա՛յն բուռն առնել կը ջանա՛ր անձին .
Միւրոյ հեղեղն կ'ողողէր զինքն , երանի՛
Չը ճանչէր զայն , որքան դժբաղդ էր անի .
Մըթագնէին արփի աչերն գերդ երկին
Եւ սաստկանա՛յր ցա՛ւ վէրքին:

Աւա՛ղ, դու սոսկ , ո՛վ անողորմ օրիորդ ,
Մըտածեցիր զայն քու պաշտած Գըրիգորդ ,
Չը յիշեցիր անգամ զայն հէք պատանի ,
Ոյր կեանք սիրովդ իբրեւ զամսրոպ տատանի .
Անհո՛գ մնացիր առ սիրաճայն այն թռչուն ,
Որ քե՛զ մընչէ օրն ի բուն:

Գ.

Եւ ունէ՛ր վարդ մի հանճարեղ քանարիկ ,
Որ գեղգեղէր որպէս թրթռուն քընարիկ .
Սովո՛ր էր նա յայգուցն մինչեւ երեկոյ՝
Մարդէլ թռչնիկն հնչել զանուն վարդենույ .

Լա՛ւ սովորած էր թռչնիկն ուշիմ՝ զիւր համար
Զոր միշտ կրկնէր խանդավառ .

Եւ ի հեռուստ երբ տեսնէր զկոյսն այն՝ հապճեպ
Թըռչէ՛ր առ նէ , թառէ՛ր աչացն իւր հանդէպ .
Եւ դիտելով ըզնէ տարփմամբ նազենի՝
Հոգեզմայլի՛կ իմըն կանչէր — Վարդենի՛ —
Եւ կրկնէր խաղն , ո՛րքան տեսնէր զայն աղջիկ՝
Ապա վերնայր զինչ թռուցիկ .

Եւ մըտացի թռչնիկն այսպէս մինչ կ'երգէր ,
Ինչ հեշտութեամբ Վարդ կը գգուէր զիւր վերքեր .
Սիրո՛յ վերքեր , զորքս տանէր մեծ սիրով ,
Զի մի օր կոյսն պիտ' բուժէր զայնս յիւր գորով .
Այս էր երազ պատանեկի՛ն սիրասուն ,
Յընո՛րք , ամո՛ւլ զինչ աշուն :

Եւ պաշտելի՛ էր այս ցընորքն , որ անոր
Մատուցանէր գոգ հաճոյքներ նորանոր .
Հըպարտ չէր Վարդ , այլ գիտէր թէ անարժան
Են թեկնածուք , որ Վարդենւոյն կը տենչան .
Իսկ Զարեհի սէ՛րն . չունէ՞ր միթէ պատճառ ,
Ահ , խաբուիլ բնաւ չէր հընար :

Այլ զո՛ւր , անմե՛ղ թռչնիկ , մարդէ ըզբեզ Վարդ ,
Երգել անդուլ զիւր Վարդենին երկնազուարթ .
Ի զուր անուշ ձայնիւ դ հնչես — Վարդենի՛ —
Նէ քեզ ակնա՛րկ մ'անգամ չ'ուղղեր քնքշենի ,
Եւ մինչ համայնք ունին առ քեզ ժըպիտներ՝
Նէ ո՛ւշ անգամ չի դըներ :

Վարդ , ահ , դարձո՛ւր աչերդ այլեւս այն կուսէն՝
Լիրբ , խենէ՛շ մը , է՛հ քան ըզբեզ շա՛տ կ'ուզեն .
Այս է արդի մօտան , հոգա՛լ իսկ չ'արժեր .

Տաղանդ , պատիւ , հեզութիւն սիրտ չեն շարժեր .
Պատուհաններդ փակէ՛ , թռչնիկդ ալ ներս առ ,
Աղօթէ՛ , սիրտ վըտահար : . . .

Պ.

Մի օր կ'ըսէր մեղմով կոյսն այն վըտաբեկ .
« Ընդէ՞ր , հայրի՛կ , ընդէ՞ր այսքան կ'ըտապէք ,
« Ես սիրեւոյ դեռ չ'եմ հասած այն տարիք՝
« Ուր հարսնանալն աղջկանց թուի մեծ բարիք ,
« Հայրի՛կ , սիրոյ վրայ դեռ չ'ունիմ դադափար ,
« Մի՛ ստիպէք զիս վայրապար : »

Հայրիկն ի զո՛ւր խօսէր լ'աղջկանն աղաչէր .
Արտասուէին անոր արփի՛ն ա՛խ աչեր .
Եւ մի՛ առ մի ձեռնունայն ե՛տ դառնային
Այն ճով մարդիկ , որոց դէմքեր առնային՝
Մըթագնելու վարժած չէին բնաւ երբէք .
Որք լինէին յուսաբեկ :

Զո՛ւր թեկնածուք՝ մին քան ըզմիւս մեծ հարուստ
Զաջ Վարդենւոյն կը խնդրէին . նէ փախուստ
Կ'ուտայր , մերժէր ազնուադո՛յն իսկ անձեր .
« Ա՛լ իմ աշխարհս , կ'ըսէր , անցե՛ր է անցե՛ր » . . .
Եւ ակամայ՝ դեռ կը խեղդէր սրտին խոր՝
Սիրոյ վերքե՛րն ահաւոր :

Եւ մինչ թագուն սիրով ա՛յսպէս տառապէր՝
Մինչ ի կենաց դիմէր չիրմին տար ափեր ,
Դեռ դէմքին վրայ կը շողայր գե՛ղ վեհաշուք ,
Դեռ վիշտ չիլիւէր հոն ձըգելու աւեր , շուք .
Դեռ զայն տեսնողն խփոյն տարփանք մը կ'զգար .
Տարփանք՝ մանո՛ւկն իսկ կայտառ :

Եւ կը սահէր՝ լըռիկ ամառն ու աշուն,
Եւ ըս քան զեւս տիւրէր կոյսն այն փափկասունն .
Հայրն առ վըշտին լինէր հիւանդ ու անդօր .
Զի իւր աղջիկն հալէր, մաշէ՛ր օր քան զօր .
Տեսնէ՛ր զի լոյսն աչաց, հատո՛ր իւր հոգւոյն՝
Նուաղէ՛ր դալկան և տփգոյն :

Շա՛տ գիշերներ մըտնէր աղջկան ի սենեակ .
Իւր Վարդենւոյն վերայ հըսկել մի՛ս մինակ .
Ա՛հ, ո՛չ ումեք կը հաւատայր զիւր դատրիկ,
Ո՛չ իսկ քընոյ խաղաղութեա՛ն անդորրիկ .
Յերկինս՝ Փրկչին, յերկրի՝ խնամոցն հայրենի՝
Յանձնէ՛ր էր զիւր Վարդենի :

Բայց մի գիշեր արտասովոր խընամքով
Ուղեց մինչ լոյս մընալ աղջկան մահճին քով .
Կ՛զգար մահն իսկ վանելու բուռն զօրութիւն,
Այսքան զօրեղ է հօր մը սիրտն և արթուն .
Նստաւ գլխուն վերեւ խոհուն, Աստուած մեծ,
Դողդոջ ձեռներն՝ յարմուկն յեց :

Եւ կ'երագէ՛ր հօր մը անհո՛ւն, վա՛ռ սիրով,
Բաստն իւր աղջկան, ոյր քո՛ւնն իսկ այժմ էր խըռով .
Համրէր մէկիկ մէկիկ արգոյ այն անձեր՝
Ոյք անձկանօք զիւրեանց դանձն ու սիրտ բացեր՝
Ուխտեր էին ծածկել զաղջիկն իւր բուրեան
Պատուօք, փառօ՛ք տիկնութեան :

Յիշէ՛ր Սեթեանց, Կիւլեանց, Նուրեանց գերդաստան
Ոյց պերճ համբաւ լընոյր յայնժամ Տաճկաստան .
Յիշէր ի՛նչպէս պիտի փայլէր նազենի՝
Տիկնանց դասուն մէջ իւր չընաղ Վարդենի .

Թէ միանգամ ցրուէ՛ր զամպեր թախծութեան՝
Եւ ծիծաղէ՛ր յաւիտեան :

Յիշէ՛ր ընտիր ձիրքեր սիրած պատանւոյն,
Ագնիւ Վարդին, ոյր քաղցր հնչէր միշտ անուն .
Կեանքն իւր ո՛րքան պիտի լինէր երջանիկ,
Թէ միացեալ տեսնէր Վարդն ու զիւր աղջիկ,
Յիշէ՛ր, նայէ՛ր աղջկանն, որ դեռ գեղաշող՝
Ննջէ՛ր, թերեւս սիրտն ի դող :

Յանկարծ թեթեւ շարժում մ'ըրաւ Վարդենի,
Նախ հառաչեց մեղմ քան ըզսիւք քնքշենի,
Յետոյ մընչեց որպէս սոխակ սիրաբոյր .
Շուրթըն շարժէր զերդ սիրելւոյն ի համբոյր,
Վերջին բառերն լըսուէր որոշ բառ առ բառ,
Նէ կ'երագէ՛ր սիրաւառ :

« Գրիգոր », գոչէր՝ մեղամաղձիկ, պատկառոտ .
« Զիս գերեզման կ'առաջնորդէ քոյդ կարօտ .
« Մէ՛կ մ'ալ կայտառ գիմօքդ պիտի չ'երեւիս » .
« Պիտի չծագե՞ս արեւ տփգոյն տերեւիս . . .
« Բե՛ղ կ'սպասեն հաճոյք, սէր, զի՞ կաս Գրիգոր,
« Յե՞րբ հալես զի՛ս վիրաւոր » :

Լըռէր և բոցն յանկարծ մարէր այտերուն .
Դարձեա՛լ պատեն զայն ցաւեր խուլ, երերուն,
Սակայն ի՞նչ փոյթ, հայրն ըմբռնեց զայն սուր բոց
Որ զիւր դատրիկն էր ենթարկած դառն ողբոց .
« Աղջիկս » ըսաւ, թո՛ղ քեզ վիշտեր չ'աւերեն » .
Ու թեթեւցաւ ցաւերէն :

Երբ առաւօտ եղաւ, մէկուն բան չ'ըսաւ .
Կրկնապատկած կ'զգայր սրտի սէ՛րն անբաւ .

Մանրակրկիտ , խորաքննին , խոհական
Աչքով պրպտեց յետին խորհերն իսկ իւր տան ,
Թո՛ւղթ մը գըտաւ , ի՛նչ խօսքերով սիրային՝
Ուր սիրոյ բոցք եռային :

Տասն օր ետքը գըտա՛ծ էր նա զայն վէ՛ս , սէգ՝
Երիտասարդ՝ ոյր համակրած չէր երբէք ,
Խիզախ , յանդու՛գն , աչեր՝ կըրակ , դէմքն՝ առոյգ .
Շատե՛ր մատնած էր նա սիրոյն ի խարոյկ .
Փայլէ՛ ի փայլ նա անդադար կ'արշաւէր .
Աղջկանց գուժեւ սուգ , աւեր :

Թափառայած բաղդախնդի՛ր մ'էր անի ,
Որ պատրեր էր շատ աղջիկնէ՛ր գեղանի ,
Իզմի՛ր , Պօլիս դեռ կը յիշուէ՛ր իւր նախնի ,
Ո՛վ զայն ճանչցած ու անկէ շուտ չէր փախչիր :
Նըմա յանձներ էր գողցես բաղդ զիւր պաշտօն ,
Նըմա տալով զիւր պաստօն :

Պիտի ժպտէ՛ր անշուշտ մինչեւ գայր այն օր՝
Երբ տղմի մէջ պիտի թաղուէր փառքն անոր .
Բայց մինչեւ ժամն հասնէր , իւր դէմք վեհազուն՝
Քանի՛ քանի կոյսեր խաբէր սրբասուն .
Օ՛ն , պանծացի՛ր , Գրիգո՛ր , գեղովդ ամբարիշտ՝
Սիրտեր գերի՛ են քեզ միշտ :

Ս.

Ձմեռն անցաւ , եկան թռչունք կենասէր .
Ի՛նչպէս ալ շուտ Առջի Պըսակն է հասեր .
Ալ վարդենի հողի՛ մ'է խօլ , զուարթուն .

Յաղթած էր սէր , շիջած է հօրն բարկութիւն .
Շա՛տ բանէն ետք Գրիգոր հօր տունն ընդունուած՝
Վարդենի հա՛րսն էր եղած :

Երջանի՛կ է , հաւատացէ՛ք , երջանի՛կ ,
Բայց խելքերնիդ յանակընկալն մի՛ տանիք .
Նէ վայելէ այնքան իւր սուրբ երազներ .
Ձի իւր Գրիգոր , ըսի՞նք , մի պերճ վեհազն էր .
Ա՛հ , թէ աշխարհ երանութեանց վայրն ըլլար՝
Ի՛նքն ալ անմահ պիտ' մընար :

Պարե՛ր , թատրոն և հաճոյքնէ՛ր կընային
Իւր մի ժըպտին , մի հրամանին՝ կը նային .
Ինչ որ ուզէ՛ կը կատարուի նոյն ժամայն .
Վայելք անո՛յք պատեր են կեանքն իւր համայն ,
Եւ թէ սուտ չէ՛ , զինք միշտ տեսնե՛լ զուարթագոյն՝
Ա՛յս բոլոր հոգ սիրելոյն :

Չափ չունին բնաւ իւր հաճոյքնէ՛ր արտառոց ,
Եւ ամբիժ էր այդ կեանք քան զկեանս արդարոց .
Չը գիտէ՛ր իսկ թ' այսպէս զիւր կեանս աղարտէր .
Նէ միշտ կարծէ քաղել գարնան հեշտ վարդեր .
Եւ մինչ տարին կը բոլորէ՛ր զիւր չըրջան՝
Խորհէ՛ր կրկնել դեռ զիւր ջան :

Թշուա՛ռ աղջիկ , դու հաճոյից ի հանդէս՝
Կայտուես անհոգ , այլ չե՞ս տեսներ աջն անտես ,
Որ պատրաստէ քաղցր օրերուդ , ա՛հ , ամթ .
Աւա՛ղ , տեսնե՛մ թշուառութիւնն ահա՛ մօտ ,
Ցե՛րբ իժն ի ծոցդ դէպ ի կորուստ ըլտապես .
Ձի տեսնե՞ս վիհն վերջապէս :

Այլ չա՛տ ուշ է , քո սիրելի՛ն Գրիգոր՝
Խաղարանին արդէն գրաւած մեծ աթոռ ,

Անդո՛ւլ խաղայ , զաչերն արի՛ւն է պատեր ,
 Խաղամուղնե՛ր , գինեմուղնե՛ր ու վատեր՝
 Բըզըքտե՛ն զայն , միլիօններդ յաւիտեա՛ն
 Զո՛ւրն են թափուեր կորըստեան :

Հասի՛ր , զամեն ինչ յանձնե՛ր է ի գըրաւ .
 Զարդե՛րդ անգամ ահա՛ խաղուն մէջ դըրաւ .
 Տե՛ս , հէ՛ք աղջիկ , իւր կեա՛նքն անգամ անոնց հետ՝
 Պալա՛տն իսկ հօրդ դընէ բաղդին նա ի մէտ .
 Եւ ամենէ՛ն ետք՝ դեռ սիրով պիտի տայ
 Կեա՛նքդ ալ , պատի՛ւդ ալ վըրայ :

Աճապարէ՛ , հասի՛ր , ինչո՞ւ յամենաս .
 Հէ՛ք Վարդենի , վա՛խ քեզ , դեռ չէ՛ ամենն աս .
 Քո պաշտելին խե՛լքն իսկ անոնց , ա՛հ , թողած՝
 Քեզ ի վաճառ հանէ անարդ ոսոխաց .
 Ահա՛ յետին ոսկին , է՛հ , ա՛յն ալ կորաւ .
 Կորի՛ր , ո՛վ բաղդ անիրաւ :

Յաջողութեան յո՛յսն ալ մեռած իւր սըրտին՝
 Սեւ խորհուրդներ մտքին մէջը խըլըրտին .
 Բայց պատրաստ է օղին , լըցէ՛ք օ՛ն բաժակ .
 Թո՛ղ նա պարպէ , չ՛ունի յագուրդ իւր ճաշակ ,
 Մէկ , հինգ , տասը նա միշտ խըմէ՛ զուարթուն՝
 Կեցցէ՛ անյաղթ մոլութիւն :

Կատաղութիւն թաղուի՛ բաժկին ի յատակ .
 Հոն կ'անհետի կորըստեան կեղտ յիշատակ .
 Է՛հ , խաղամուղն այն գինեմուղ քաջարի ,
 Գոչէ՝ « Ընկե՛րք , ա՛հ , դուք ո՛րքան է՛ք բարի . - »
 Եւ գիրկընդխառն կ'ուտայ ջերմին համբոյրներ՝
 Հո՞գն է թ'աշխարհք է անցեր :

Այլ եւս խըմէ՛ , Գրիգո՛ր , խըմէ՛ դու անհոգ .
 Վերջին հա՛րկն է , զոր քու ընկերք անողոք՝
 Մատուցանեն քեզ ծիծաղով մուլեգին .
 Երջանկութեանդ , ոսկիներուդ այդ է գին .
 Արբեցողե՛ր , այդ ձեւերով խաբուսիկ ,
 Ի՛նչ մեծ տուներ կորուսիք :

Բաժակներո՛ւ , գոռումներո՛ւ աղմուկներ՝
 Հէ՛ք Վարդենի , արի՛ դիւցազնդ են ծածկեր .
 Պաշտէ՛ , խընկէ՛ այլ եւս որչափ կ'ուզես դուն ,
 Զ՛ունիս սակայն ո՛չ մեծութիւն և ո՛չ տուն ,
 Զի զայդ ամեն կորզեց բաղդին անգու թ խաղ ,
 Թողով՛ զԳրիգո՛րդ քեզ չըքնաղ :

Քո՛ է Գրիգորդ , դեռ զայն պիտի սիրե՞ս դու .
 Է՛հ , ո՛չ առջի դիւցազն է սէք , սիրազդու ,
 Զը տեսար զայն , լա՛ւ է թէ բնաւ չը տեսնես ,
 Անառա՛կ մ'է , գըճուճ , զագի՛ր պարզապէս
 Պիտի չ'տեսնես , արդէն տուած է փախուստ .
 Քե՛զ մատնելով ի կորուստ :

Զ.

Հազիւ օղւոյն ցընցումներէն սթափուած ,
 Դո՛ւրս կը ցատքէ , նո՛ր նոր խոհովք ներշնչուած .
 Զափա՛ծ , ձեւա՛ծ , գըծա՛ծ է զիւր ծըրագիր ,
 Մի՛տքն է դըրեր երբէ՛ք չըլլալ բեռնակիր ,
 Խե՛լք , մի՛տք ունի՛ անմեղ կոյսեր շա՛տ են դեռ .
 Եւ անըսպա՛ւ իւր դաւեր :

— Հոգա՞ն ի՛նչ է , միթէ աշխարհ է անցեր .
 Երիտասարդ չե՞մ մի , բա՛ղդն է իմ ընկեր .
 Հրապուրանաց ունիմ ամբաւ մի պաշար .
 Ապրի՛ն աղջկունք , ոյց սէ՛րն է սուրբ , անկաշառ .

Գիտե՛մ, կ'ատեն զիս հայրերն ու խեղճ մայրեր,
Այլ չէ՞ սէրն ինձ անձնուէր: —

Այսպէ՛ս խորհէր այն անամօթ սըրիկայ,
Կ'երգէնոյր, անսանձ մոլութիւնն էր իւր վըկայ.
Քանի՛ խորհէր, միտք իւր կ'առնոյր նոր թռիչ, թեւ,
Իւր խորհըրդոց ա՛լ տիրացե՛ր էր պիղծ դեւ,
Եւ մինչ ուրախ, զուարթ կտրէր լեռ ու սար,
Աշխարհ իրեն նեղ կ'ուգար:

Նա չ'էր սիրած երբէք, թէ ոք հարցընէր՝
ԸզՎարդենւոյն՝ կ'երդնոյր թէ ո՛չ իսկ ճանչէր.
Նա լըրբութեան մարմնացումն էր գերագոյն,
Որ միշտ ի չարն դիմէր քայլովք երագուն.
Ո՛չ իսկ մտածեր, ցաւե՛ր էր վատ լրբենին.
Թողլով չըքնա՛լ Վարդենին:

Կոյսերն իրեն համար, կ'ըսէր ստեղծուած,
Զըկա՛ր նորա համար ո՛չ խիղճ, ո՛չ Աստուած,
Զարի՛ն վերայ ունէր եւեթ գաղափար.
Պատրե՛լ, նենգե՛լ, աղէ՛տ սիւսե՛լ անդադար,
Այս իւր հաճոյք, այս իւր համակ մըտածում,
Զ'ունէր այլ իմն զգացում:

Եւ քանինե՛ր հրապուրանացն ի ծուղակ՝
Պիտի ձըգէր յորժամ մըտնէր ի քաղաք.
Եւ աւաստիկ, քաղա՛ք մըտնէ ցընծագին.
Հապճեալ վազէ գտնել ընկերքն իւր կեանքին.
Դարձեալ վայելք պաշարեն զայն վատչուէր,
Ոյր ժպտի բաղդն աննուէր:

Իւր փայլն ու գեղ, իւր կանացի պերճութիւն՝
Իւր շուրջ խըմբեն ըզպար աղջկանց եռանդուն,

Արդէն բազումք, հարո՛ւստ, մատա՛ղ, գեղանի՛
Տրոփե՛ն սիրով, զի սէգ, խրո՛խտ է դեռ անի,
Եւ նա վազէ՛ ի փափուկ գիրկս գեղուհեաց՝
Կարծէ՛ խաբե՛լ իսկ զԱստուած:

Բայց ի՞նչ է այդ, ի՞նչ է այդ խօ՛ւ աղաղակ.
Գինովներո՛ւ է դա լըկտի՛ հըրոսակ.
Ա՛հ, մի դագաղ դուրս քաջքըչեն անխըռով,
Իբրու հարսնիք կ'ընեն հընչուն ծափերով,
Վա՛խ, Գրիգորն է, սիրտեր գերող այն կըտրիճ,
Մեռա՛ծ, լըքուա՛ծ յամենից:...

Է.

Այլ եւս զամեն ինչ գիտէ հէ՛ք Վարդենի.
Գիտէ, լ'արտասուք թափէ յաչացն արփենի.
Կ'անցնի՛ աշուն, կ'ուգա՛յ ձմեռն ու ամառ,
Այլ չ'ունի՛ նէ երբէք սիւսի, մըխիթար.
Եւ մինչ խորհի զգանձերն դարձած ի միսիր՝
Մահն իսկ աչքին չ'երևիր:

Իւր ամուսնոյն խաղակիցներն ամեն օր՝
Պաշարեն զինք պահանջներով նորանոր.
Ցոյց տան իւրեան՝ նորա անթի՛ւ մուհակներ,
Որո՛վ զի՛նքն իսկ, ամօ՛թ նոցա կըտակէր.
Շունք, մին՝ զարդուցն, մին՝ պալատան կտրեն գին,
Եւ միւսն՝ ըլլալ իրեն կի՛ն:...

Այլ արդա՛ր է Աստուած, և խրո՛խտ Վարդենի՝
Մի օր գիմեց Արդարութեան ատենի.
Զուարթ աչերն՝ արտասուած թոր իյերկիր՝
Դեղձան վարսերն՝ յո՛ւսըն ձըգուած ցան ու ցիր:

Սի՛րտ կը գեղու տըխրանուշի՛կն իւր լեզու՝
Քան հրեշտակա՛ցն խոկ աղու :

Եւ դատաւորն՝ յանմեղութիւն իւր վըստա՛հ՝
Նըմա դարձնէ ապարանքն ու ամեն կահ ,
Ձոր իւր Գրիգորն՝ գրա՛ւ էր դըրած իւր մեղքին ,
« Ազա՛տ ես դու , գոչեց , այլ եւս անմեղ կին ,
Ազատ նոյն խոկ ամուսնութեան այն ուխտէն՝
Ձոր այր ու կին ցմահ ուխտեն : »

Այլ այս դէպքեր զիւր սիրտ ա՛յնքան վըրդովեն ,
Որ ա՛յլ զգուած՝ կեանքի անվերջ վըրդովէն՝
Քաշուի՛լ կ'ուզէ մենաստանի մի անկիւն՝
Հո՛ն աշխարհէլ զիւր պատրանա՛ց մեծութիւն .
Տաղտկացա՛ծ է , յոգնա՛ծ՝ որպէս ծերունի՝
Ո՞վ իւր չափ վիշտեր ունի :

Տըխու՛ւր է միշտ , և տխրութիւն իւր աճի՝
Քանի՛ յիշէ զՎարդ՝ իւր մատա՛ղ դըրացի .
Ա՛հ , չէ մոռցեր թռչնոյն անմեղ զայն խաղեր՝
Որով գիշեր , ցերեկ քաղցրի՛կ ճըռուողէր .
Արդեօք տրոփէ՛ր տակաւին սի՛րտ պատանւոյն ,
Երգէ՛ր թռչնիկն զիւր անուն :

Յորմէ հետէ կատարուե՛ր էր հարսանիք՝
Ո՛չ եւս տեսեր էր պատանւոյն դեղձանիկ .
Փա՛կ էին փեղիք , որ բա՛ց էին ամ մ'առաջ .
Պալատն ողջոյն լըռութիւն , սո՛ւգ էր առած ...
Ո՛չ եւս լըսէր զայն դայլայլիկ քաղցրանու՛շ
Ոյց չէ՛ր դըրած բընաւ ուշ :

Այն օրէն ետք՝ ահա՛ կ'անցնէր մի տարի ,
Ինքն այժմ անոնց քով չէ՞ր հանգոյն օտարի .

Եր՞բ իւր անոյշ մի խօսք , մի բառ կամ ժըպիտ՝
Գգուա՛ծ էր հէք Վարդին սի՛րտը նորաիթիթ .
Իւր հպարտութիւնն այժմ զերդ երազ չարաշուք՝
Ինչպէ՛ս խըլէր զիւր արտսուք :

Այժմ ի՞նչ կ'ընէր Վարդ , պիտ՝ սիրէ՞ր արդեօք զինք .
Պիտի մոռնա՛յր զայնքան ծանըր նախատինք .
Կ'ուզէ՛ր մեռնիլ , այլ չեւ մեռած՝ պարտք չ'ունէ՞ր
Տեսնել ժպտիլն այն պատանւոյն անձնանուէր .
Երջանկացնե՛լ պատանեկի՛կն այն առոյգ՝
Չ'ունէ՛ր զայլ իղձ կամ հաճոյք :

Արհամարհած , սպաննած էր զայն սիրտ փափկիկ .
Քաղցըր սիրով պէ՛տք էր բանալ զայն ծաղիկ .
Անշուշտ կրկին պիտի ներէր Վարդ իրեն՝
— Ագնիւ մարդիկ՝ բարեաւ չարին կը տիրեն —
Սակայն իւր խի՛ղճն ... պիտ չը տանջէ՞ր զինք զերդ
փուշ՝
Թէ զինք սիրէր Վա՛րդն անուշ :

Այլ զգայո՛ւն կոյս , հերի՛ք սիրտըդ կեղեքես .
Վարդ միշտ ներող , միշտ անձնուէր է առ քեզ .
Յա՛ր քեզ պաշտէ որպէս ծաղիկ բուրազուարթ ,
Հայրիկդ արդէն տեսած , խօսա՛ծ է առ Վարդ :
Երջանկութեան Աստո՛ւածն ըլլա՛յ քեզի հետ
Եւ դու խընդա՛ս առ յաւէտ :

Ը.

Մի օր դարուն՝ կ'ուռտա՛յր վերջին իւր բարեւ ,
Առ ձոր ու սար , ուր լողայր մի նո՛ւրբ արեւ .
Կ'երգէ՛ր թըռչնիկն ըզնէ յանո՛յշ դայլայլիկ .

Ա՛հ, երբ յիշեմ, դողամ, — բայց մի՛ այլայլիք. —
 Յա՛նկարծ դալուկ մ'եկաւ վերայ Վարդենւոյն՝
 Անկա՛ւ, լուսնի՛ պէս տժգոյն:

Հէ՛ք Վարդենի, երջանկութեա՛ն արշալոյս՝
 Գա՛յր ողորդել ըզբեզ, ձօնե՛լ սէր և յոյս.
 Պիտ՛մոռնայիր անցելոյն դառն զրկանք,
 Կրկին պիտի վերստանայիր խանդ ու կեանք.
 Այլ վե՛հ ոգիդ՝ զայն համարեց քեզ ոճիր,
 Եւ գերեզմա՛նն ընտրեցիր...

Հարսնեց չարթո՛ւն սլատահեցաւ այս դիպուած.
 Ի՛նչ դառն վիշտ, ի՛նչ մեծ կըսկիծ, ո՛վ Աստուած.
 Վարդ կ'սպասէ՛ր միշտ բուժուելոյ նազելոյն,
 Այլ վա՛խ, կուսին փոխուէր կարմիրն ի տժգոյն.
 Եւ օրն՝ երբ նէ՛ նո՛ր հարս պիտի փողփողէր՝
 Իջա՛ւ շիրմին սե՛ւ հողեր:...

Եւ կ'անհետէ՛ր երանութեա՛ն արշալոյս.
 Խո՛յս կ'ուտայր կեանք, շիջանէ՛ր խանդ ու խրախոյս.
 Խաւա՛ր սլատէր անյո՛յս Վարդին սիրտն ու միտ.
 Մնացէ՛ք բարեաւ, անմեղ հաճոյք ու ժըմիտ.
 Վարդ՝ յուսաբեկ՝ ձագակորոյս զինչ տատրակ՝
 Լա՛յ զՎարդենի՛ն անուշակ:

Գարո՛ւն եկաւ, ծաղկունք, թռչունք խընդացին.
 Ա՛հ, Վա՛րդ միայն այցեց խորե՛ր դամբանին.
 Յաճե՛ց լըռիկ աչերն յանցեալն խորասոյզ...
 Տեսա՛ն մարդիկ, անկարեկի՛ր տուին խոյս.
 Թռչնի՛ն և եթ իւր հետ աղջկան շիրմին վրայ՝
 Կոճե՛ց զանո՛ւնը ներա:...

ՄԻՍՍԱԿ ԵՒ ԱՍՏՂԻԿ

Ա.

Մանուկ էին տակաւին,
 Արդէն զիրեար սիրէին.
 Երկուքն ալ ձոխ ընտանեաց՝
 Շառաւիղներ հուսկ յետին:

Մին տղայ՝ էր, միւսն աղջիկ.
 Մին քան ըզմիւս գեղեցիկ.
 Մին արե՛ւ էր, միւս՝ լուսին,
 Երկուքն ալ զո՛յգ մի ծաղիկ:

Կ'իջնէ՛ին վաղ դէմ այգուն՝
 Մէկ տեղ էին օրն ի բուն,
 Միմեանց պատկնէ՛ր շինէին,
 Շուշաններով ցօղասուն:

Եւ պըսակնէ՛ր՝ ի գլխին՝
 Յիրեար քաղցրի՛կ ժըպտէին.
 Պըշուէին ևս յիրեար գեղ՝
 Անհո՛ւն խանդով մանկային:

Ձը գիտէին նոքա դեռ՝
 Եթէ ի՞նչ է տարփանք, սէր.
 Ձը գիտէին թէ աշխարհ՝
 Յինքեան կըրէր բիւր ցաւեր:

Ձը գիտէին... այլ արդէն
Սէ՛ր կը բըլտէր սիրտերէն,
Միմեանց համար կարծէին՝
Եթէ յաշխարհ եկեր են:

Մըտքերնուն չէր անցներ բնաւ,
Եթէ աշխարհ անիրաւ՝
Կըրնար կանգնել իրենց մէջ՝
Անջըրպէ՛տ մը, խո՛չ ամբաւ:

Ձէի՛ն կրնար առնել յուշ՝
Թէ ճոխութիւն՝ վաղ կամ ուշ,
Իրենց սըրտին մէջ ցանէր՝
Վարդերու տեղ դաժան փուշ:

Ձէի՛ն հաւտար այս բանին.
Ո՛վ սըրբութի՛ւն մանկային.
Ձի այդ անբիժ հրեշտակներ՝
Անմեղութեամբ ցոլային:

Բ

Օ՛ր մը աղջիկն ու տըղան՝
Մէկտեղ պարտէ՛զն այն իջան,
Ուր կը ծաղկէր նարընջին՝
Հետ խընձորի՛ն կարմրերփեան:

Տըղայն տեսաւ երբ խնձոր,
Քացաւ աչերն իւր խոշոր,
Ա՛խ մի քաշեց իւր սըրտէն,
Ա՛խ մ՛ալ քաշեց կոյսն աղբոր:

Այս ի՛նչ անոյշ բոյր ու գեղ՝
Մընչեց տըղայն սիրազեղ.
Այս ի՛նչ համեստ կարմրութիւն՝
Ի՛նչ տեսք և ի՛նչ փայլ շքեղ:

Շիկնեցա՛ւ կոյսն անմեղուկ՝
Տըրտիէ՛ր սիրտն իւր փափուկ.
Երեքտասան գարնան վարդ՝
Արդէն ճակտին կ'ուտայր չուք:

« Սա խընձորին կարմրութիւն,
Ըսաւ տըղայն սիրասուն.
« Ձէ՞ իսկատիպ մի նըկար՝
« Քո գեղափայլ այտերուն:

« Եւ կարմրախտոն այն ճերմակ՝
Որ հոն շուրջ սիրունակ,
Քո սպիտակ ձեռներուն
Ձէ՞ մի փափկիկն օրինակ:

« Եւ երկնայի՛նն այն բոլբոլմ՝
Որ հոգւո՛յն տայ զմայլում.
Ձէ՞, ասա՛, կոյս, չէ՞ գեղոյդ՝
Ճառագայթումն անպատում:

« Կարմիր, ճերմակ դու խընձոր՝
Արդեօք պիտի գա՞յ մի օր,
Երբ ի ձեռաց նազելոյս՝
Ինձ տրուիս ձո՛ն հարսնեւոր:

Գ.

Եւ լըսեց . սիրտն էր բորբոք .
 Լըցան աչերն արտասուօք .
 Զինքը կըրծէր որպէս ցեց
 Նախազգացումն անողոք :

Կոյսն եւս զգաց մի վրդով .
 Տարիատենչիկն իւր հոգւով .
 Թէ պիտի գայր բուռն ամսրոպ՝
 Փըշրեւ զիւրեանց սէր , գորով :

Բայց ոյժ առաւ և խիզախ՝
 Հոգւո՛վ վանեց ամեն վախ ,
 Եւ լի՛ անհուն այն սիրով՝
 Զոր կ'զգայ սիրտ մ'անխարդախ :

Իւր գիրդ ծոցէն խլեց , հանեց ,
 Խընձորիկ մը , ա՛յնքան մեծ ,
 Ոյր նմանն ո՛չ մի ձեռք թերեւս՝
 Այս աշխարհիս փայ քաղեց :

Ցոլա՛յր խնձորն կարմրորակ՝
 Կիտուածներո՛վն սպիտակ .
 Կարմիր՝ քան զայգ վարդածոյլ ,
 Շողուն քան ճոխն արեգակ :

Ճածանչագեղ , բուրաւէտ՝
 Միշտ կը շողայր վէտ ի վէտ .
 Աստղիկ իսկ զայն թէ տեսնէր՝
 Շիկնէր գեղովն իւր յաւէտ :

Տեսա՛ւ կրակոտ պատանին ,
 Եւ թընդա՛ց սիրտն անձկագին .
 Տեսաւ եւ կոյսըն վեհսիրտ՝
 Եւ բերկրեցա՛ւ իւր հոգին :

« Ա՛ւքեղ , մնչեց աղջիկն այն ,
 Աղաւնեկին յաղու ձայն .
 « Ա՛ւ քեզ ընծայ՝ զայս խնձոր ,
 Հո՛ն սիրտս , հո՛ն սէրս ամենայն :

« Սիսա՛կ , ա՛լ մի՛զիս խռովեր ,
 Հառաչանօք տխրանուէր ,
 Եթէ Աստուած կա՛յ վերեւ՝
 Քո՛ է եւ կեանքս և իմ սէր » :

Եւ մատոյց այտքն յոյր ի յոյր՝
 Իւր սիրելւոյն ի համբոյր .
 Ճոխա՛ց , խայտա՛ց պատանին՝
 Երազներս՛վ լուսաթոյր :

Գ.

Բայց ո՛րքան շուտ սահեցան՝
 Անուշ օրե՛ր մանկութեան .
 Ահա՛ կոյսն ու պատանին՝
 Թեւեւն ի տիւ վեշտասան :

Յետ համբուրի՛ն սիրական՝
 Երեք ամեր սահեցան .
 Եւ Սիսակայ փառքն ու փայլ՝
 Ա՛խ , օ՛ր քան զօր մարեցան :

Համբուրի՛ն հետ սկըսաւ ,
 Զախողուածոց շա՛րքն ամբաւ ,
 Համբուրի՛ն մէջն էր թափեր՝
 Զիւր լեզին՝ բաղդն անիրաւ :

Եւ պատանի՛ն վեհազուն՝
 Յորժամ կորոյս ճոխութիւն .
 Հոգեկըտո՛ւր հեծումով՝
 Ըմպեց լեզւո՛յն դառնութիւն :

Յաւօ՛ք տեսաւ նա իսկոյն՝
 Թեկնածունե՛ր սիրեւոյն .
 Անո՛նք , ոյց ինքն էր ցուցեր՝
 Կենաց ուղի՛ն վարդազոյն :

Անբա՛ղդ Սիսակ , ամենուն՝
 Ժուժաց ի վիշտս իւր անհուն .
 Կըրեց զամեն ինչ , զոր մարդ
 Կրնայ կոչել դառնութիւն :

Տեսնէ՛ր մի կողմն յուսաբեկ ,
 Զիւր ծնողքը աղերէկ ,
 Միւս կողմ՝ զԱստղիկ իւր չքնաղ՝
 Զորմէ չ՛ուներ յոյս երբէք :

« Արդեօք գիտէ՞ , կ'ըսէր նա ,
 « Զանկունն անյոյս Սիսակայ ,
 « Գիտէ՞ , հեծէր , իմն Աստղիկ՝
 « Թէ ինձ այլ ևս յոյս չը կա՛յ » : . . .

Եւ հառաչէ՛ր նա այսպէս՝
 Ամբողջ օրեր դառնապէս ,
 Կեանքն իւր կեանք չէր , ո՛չ օրն՝ օր ,
 Կ'ուլար անդուլ տղու պէս :

Ե.

Օ՛ր մը , գարնան մի լո՛յս օր ,
 Երբ երազէ՛ր մըտախորհ՝
 Լո՛յս մը անցաւ , արշալո՛յս՝
 Եւ ցնցուեցա՛ւ սիրտն ի խոր :

Իւր Աստղիկն էր լուսագեղ .
 Որ ուրհույ մը պէս չըքեղ՝
 Եկեր , կանգնե՛ր էր իւր դէմ՝
 Տըխրանուչի՛կ , սիրաղեղ :

Հէք սլատանին՝ չուարած՝
 Վաղե՛ց , աչե՛ր մըթամած .
 Այլ սիրեւոյն ձա՛յն նուաղ՝
 Արգիլեց շարժն իւր ձեռաց :

« Ո՛վ իմ Սիսակ սիրական »
 Գոչեց աղջիկն աննըման ,
 « Կընքեա՛լ է րաղդ մեր յերկնից .
 Պիտ՝ բաժնուի՛նք յաւիտեան :

« Բայց ո՛չ , օ՛ր մ'ալ ունի՛նք դեռ՝
 Վաղիւ Աստղի՛կդ անձնուէր՝
 Խըժդըժաբար պիտ՝ զոհուի ,
 Իւր հօր կամացն անըմրեր :

« Սառնասիրտ հա՛յրն իմ և մայր՝
 Պիտի զիս տան առ այն այր՝
 Ոյր ճոխութիւնն է եղեր՝
 Երկնից աստեղց հաւասար :

« Ո՛չ իմ թախած արտասուք .
 Եւ ո՛չ իմ վիշտ եւ կամ սուգ՝
 Ա՛հ , չը կըրցին շարժել սիրտ՝
 Իմ ծընողաց չարաչուք :

« Արդ սո՛ւղ է , սո՛ւղ ժամանակ ,
 Ունի՛նք միջոց մը միակ ,
 Պէ՛տք է փախչինք , կամ ըմպենք՝
 Մահու զայս դառն զարակ : »

Եւ նո՛յն ժամայն՝ սիրունակ՝
 Ծոցէն հանեց մի սրուակ .
 Սըրուա՛կ՝ անհո՛ւն դառնութեան՝
 Յորում կայր մա՛հ սառնորակ :

Բացա՛ւ աղջիկն աննըման՝
 Բացաւ սըրուակն այն մահուան .
 Դիտե՛ց խորին հառաչով ,
 Եւ յո՛ւշ ածեց ապագան :

Ապագայն՝ լո՛ւռ ու ահեղ՝
 Յորում իւր սի՛րտ սիրազեղ ,
 Պիտի հալէր ու մաշէր ,
 Ատելութեա՛մբ ծայրահեղ :

Ապագայն , ա՛հ , կ'ածէր յուշ՝
 Եւ կ'ըլլար սիրտն իւր փուշ փուշ .
 Ապագայն՝ երբ պիտ' ընկճէր՝
 Զինք թըշնամի՛ն իւր ապուշ :

Պիտի ընկճէ՛ր զինք՝ մենի՛կ
 Եւ անտերո՛ւնջ տատրակիկ .
 Եւ ստիպէ՛ր զինքն՝ իրեն
 Տալ կուսակա՛նն ըզժաղիկ : ...

2.

Ա՛հ , մըտածո՛ւմն այս վերջին ,
 Յուզեց զիւր սիրտն ու հոգին .
 Մահն յո՛յժ քաղցըր թուեցաւ՝
 Քան զայն տանջա՛նս ահագին :

« Սըրուա՛կ , գոչեց յուսահատ՝
 Միացո՛ւր սրտեր խանդակաթ ,
 Զերդ ընդ քողո՛վ հիմկեան՝
 Յիրեար կըցուի զոյգ ճակատ :

Եւ շտապա՛ւ ի բերան՝
 Տարաւ սըրուակըն մահուան ,
 Այլ չո՛ւտ խըլեց զայն Սիտակ՝
 Ի ձեռաց իւրն Աստղիկան :

Հո՛ն սկըսաւ մեծ պայքար ,
 Աստղիկ պընդէր առնարար ,
 « Ե՛ս պիտ' ըմպեմ զառաջինն՝
 Մահուան զայս քաղցըր նեկտար : »

« Եւ մահ չէ՛ այդ , ո՛վ Աստղիկ ,
 Գոչէր Սիտակ գեղեցիկ ,
 « Այլ փրկութիւն , այլ նո՛ր կեանք ,
 Ուր կայ սուրբ սէ՛ր ու ծաղիկ :

Աստղիկ պընդէ՛ր թէ՛ իրեն
 Ա՛նկ էր ըմպել նախ շիշէն ,
 Զի ըզգէի՛ յապաղում
 Կրնա՛ր զրկել զինք մահէն :

Այսպէս ժա՛մ մը վիճեցան .
 Սիրո՛վ , խանդո՛վ հոգեկան .
 Վայե՛ք վերջի՛ն սուրբ սիրոյ՝
 Զօր ծըծեցի՛ն միաբան :

Բայց , ո՛վ աղէտ , ցաւագին՝
 Ի մէջ սիրո՛յ պայքարին՝
 Լսուեցա՛ւ նո՛ւրբ մի ճըռինչ ,
 Եւ կոտրեցա՛ւ շիշն անգինն . . .

Կոտրեցա՛ւ շիշն եւ բնաւին
 Թափեցա՛ւ թոյնն ի գետին .
 Եւ յոյսն ամեն փրկութեան՝
 Աւա՛ղ , կորա՛ւ միասին . . .

Եւ միւս կողմէն , հէ՛ք կուսան ,
 Դա՛ւն է ելեր յերեւան .
 Ահա՛ կ'ուգայ , կը հասնի՛
 Իւր թշնամի՛ն ճակաճան :

Անբա՛ղդ Սիսակ , հէ՛ք Աստղիկ ,
 Կորա՛ւ ամեն յոյս քաղցրիկ .
 Դարձեա՛ւ զձեզ յիրերաց՝
 Ահա՛ դատեն վա՛տ մարդիկ :

Է .

Այլ եւս ո՛չ ճիգն եւ ո՛չ քիւրտ .
 Ո՛չ եւս աղմուկ ու խլիրտ .
 Արփիանո՛յն Աստղիկան
 Տէ՛ր է այժմիկ ոտիս բերտ :

Վե՛ց ամիսէ , վրան անցեր՝
 Եւ դեռ թա՛ց են իւր աչեր .
 Զո՛ւր բիւր գգուանք , մեծարանք ,
 Միշտ կուսին սիրտն է աւեր :

Զունի՛ ժըպիտ ու ծիծաղ ,
 Խորհի զՍիսակն իւր աւաղ ,
 Նա՛ իւր սիրոյն , ինքն՝ անոր
 Եղե՛ր է զոհ ու մատաղ :

Վեց ամիսներ են անցած՝
 Աստղիկ միշտ կոյս է մնացած .
 Գգուանք , գորով , արտասուք՝
 Զե՛ն ընկճեր կոյսն այն ցաւած :

Մերժե՛ր է նոր փեսային՝
 Խօսքե՛րն ամեն սիրային .
 Լա՛ւ եւս ունի նա մեռնիկ՝
 Քան զոհեւ զիւր վարդն առջին :

Յուսաբե՛կ են ծնողք փեսին ,
 Զը գիտեն ի՛նչպէս շարժին ,
 Ի՛նչպէս գրաւեն զսիրտ իւրեանց
 Նաղեւաշո՛ւք սէգ հարսին :

Մինչ այս մինչ այն՝ յանկողին՝
 Կ'ընկնի՛ փեսայն առ վըշտին ,
 Հալի՛ , մաշի՛ , թառամի՛
 Մաղիկն աշխոյժ իւր կեանքին :

Կ'աճապարեն հայր ու մայր՝
Կը փութան քոյրն ու եղբայր ,
Փրկել , մահո՛ւ ցաւերէն՝
Հէք պատանի՛ն սիրահար :

Այլ զո՛ւր ամեն դարմաններ ,
Սէր՝ ըզլըզայն է զգետներ .
Եւ ի՞նչ կարէ բուժել զսիրտ
Մը սիրավառ կարեւէ՛ր : . . .

Սիրավա՛ռ է , ա՛հ , տըզայն ,
Սիրով կ'այրի հէք փեսայն ,
Մինչ զինք մերժէ վիսօրէն՝
Ա՛խ , իւր պաշտած աղջիկն այն :

Այլ եւս ծիւրեր է՝ կըլոր՝
Դէմքն այն՝ դեղո՛վ իւր բոլոր՝
Եւ նազելին այն հասակ՝
Դարձեր է մի կըմախք չոր . . .

Եւ ի վերջոյ ընկճեցին՝
Զայն բոցք սիրո՛յ մուկերին .
Մինչեւ բո՛ւռն տազնասով՝
Հէ՛քն աւանդեց զիւր հոգին : . . .

Ը.

Ճի՛շդ այն շարթուն՝ երբ դամբան
Ծածկէր զանբաղդն այն պարման՝
Ճի՛շդ այն շարթուն եւ Սիսակ՝
Ա՛հ , կ'ողորէր ընդ մահուան :

Սիսակն ալ հետ նոր փեսին՝
Մըտեր էր ցուրտ յանկողին ,
Թեթեւ թուէր , չա՛տ թեթեւ՝
Հիւանդութիւնն իւր ներքին :

Բըժիշիք ոչի՛նչ հասկըցան՝
Նորա ցաւէն ի սկըզբան .
Տե՛նդ մ'է ըսին , չո՛ւտ կ'անցնի ,
Արդիւնք անզո՛ւսպ եռանդեան :

Բայց երբ անցան չա՛տ օրեր՝
Տեսան թէ չա՛տ են խաբուեր .
Իրենց թեթեւ կարծած ախտ՝
Քան զամեն ցաւ ծանըր էր :

Սիրոյ ախտն էր , ախտ մահուան ,
Դահլիճ մատաղ սերընդեան .
Ախտ անըմբեր , մահաչուք ,
Որ տանի՛ զմարդ — գերեզմա՛ն — :

Ի գործ դրին ամեն ճիգ
Ճարտարութեա՛մբ ազդեցիկ .
Այլ պատանւոյն փրկութեան՝
Ոչի՛նչ եղաւ զօրավիգ :

Եւ յե՛տ ճըգանց վեցամսեայ՝
Սիրասընո՛ւնդ Սիսակայ .
Տեսնե՛ս քընքոյշն այն ծաղիկ ,
Մահուան չունչո՛վ կը զոփայ :

Այլ եւ հասա՛ծ մահուան դուռ՝
Ճըգնի՛ , քրտնի՛ դեռ ի զուր .
Ե՛րբ չէ յաղթեր անդուժ մահ՝
Իւր գերանդեա՛ւ սայրասուր :

Այսպէս ճիշդ յետ աւուրց եօթ՝
Երբ նոր փեսին մահուան բօթ,
Սիրտերն ի դո՛ղ դեռ հանէր՝
Մեռա՛ւ Սիսակ այգուն մօտ:

Թէպէ՛տ զայն մա՛հն էր խամբեր՝
Այլ ճակտին վրայ՝ գեր ի վեր՝
Շողա՛յր բոց, հո՛ւրն հանճարոյ՝
Որով կ'օծէ՛ր նա զիւր սէր:

Եւ դեռ գոգցես նա առ սէր՝
Ի մեռանե՛լն խկ ժըպտէր,
Գիտես ընդ իւր Աստըղիան՝
Լըռի՛կ, մընջի՛կ խօսակցէր:

Գըլխոյն վերեւ կ'երեւէր
Սիրոյ երգն այն տխրանուէր՝
Զոր իբր յետին յիշատակ՝
Առ նազելի՛ն էր ուղղեր:

Մարդ մ'որ յինքեան սիրոյ խոց՝
Եւ Սիսակայն ունէր բոց,
Բացա՛ւ, կարդա՛ց զայս տողեր
Արտասուքո՛վ դառնակոծ: . . .

Թ.

« Ա՛խ, ի՞նչ անուշ էր օրն այն՝
Երբ զինչ տատրակ քաղցրաճայն
Մէ՛կ համբոյրովդ օծէիր
Զգայութի՛ւնս ամենայն:

« Այժմ ո՞ւր արդեօք ծագե՛ս դուն՝
Քո զերկնայի՛ն քաղցրութիւն,
Մոռացե՛լ ես մեր ուխտեր՝
Յիշատակօ՛ք իւր անհուն:

« Զո՛ւր կ'սպասեմ ժամերով՝
Այն զովարար աղբեր քով,
Ուր մերթ մինչեւ իրիկուն՝
Կը խաղայի՛նք երգելով:

« Արդ լո՛ւռ է վայրն այն սիրուն՝
Յայգուէ մինչեւ իրիկուն,
Ո՛չ եւս հընչէ մեղմ չըջունչ՝
Ա՛խ, քո մանրի՛կ քայլերուն:

« Ո՛չ եւս ծիծաղդ կուսագեղ՝
Յամայս հոգւո՛յս սիրազեղ՝
Ո՛չ եւս սըփռէ նըշոյլներ՝
Անմահականդ այդ աստեղ:

« Աւերա՛կ է, աւերա՛կ՝
Հոգի՛ս, սի՛րտըս բովանդակ,
Զիս բանտարկե՛լ եմ, աւա՛ղ,
Յանջո՛ւր, յանլո՛յս մի վանդակ:

« Հեռի՛ դրկացդ խընկաբոյր՝
Ուր փթթին վա՛րդք լուսաթոյր,
Հեռի՛ յաչացդ, ա՛խ մեռնիմ,
Ո՛վ դու զուարթնոց անմահ քոյր:

« Ի քե՛ղ, ի մի՛ն քո ժպիտ՝
 Հալէին հոգք վըշտառիթ .
 Ի մի համբո՛յրդ մնայլն՝ ի լոյս ,
 Փոխէր ի սի՛րա չուառիթ :

« Ո՛ւր խնդրեմ, ո՛ւր խնդրեմ քեզ՝
 Աստղի՛կ, հրեշտակ սիրակէզ .
 Քեզ արդ պատեն մեծ աշուք՝
 Ոսկի՛, ալո՛ւնք ու բեհեզ :

« Եւ յայդ անհո՛ւն պերճութեան՝
 Յայդ հոգեմա՛շ գերութեան ,
 Մոռցա՛ծ իսկ ես ըզՍիսակ ,
 Զայն տարաբա՛ղդ սիրական :

« Բայց ինձ ասա՛, կո՛յսդ անճառ,
 Գէթ յանուրջնե՛րդ երկնավառ :
 Ա՛հ, չե՞ն խռովեր գըրդ հոգեակ՝
 Հառաչանքներս սըրտահար :

« Գէթ , մինչ հեշտիւք արբեցած՝
 Ոչի՛նչ տեսնես ամպամած ,
 Մաչած դէմքըս՝ աչերուդ՝
 Ախ, չը՞ դըներ ստուերած : . . .

« Ուրեմն մոռցե՛ր ես, մոռցե՛ր՝
 Զանմեղութի՛ւնդ և ըզսր՝
 Եւ շատանա՞ս յօրանալ՝
 Շուայտութեա՛մբ կենսաւեր :

« Բայց մի հրեշտակ լուսադէմ՝
 Կրնա՞ր իջնել յայն վըսեմ՝
 Բարձրութենէ՛ն աստեղաց՝
 Մինչ յաստիճա՛նն յայս նըսեմ :

« Բայց դու իջար, կո՛յսդ անճառ,
 Գրեւով զամեն արհամարհ ,
 Ոսկի՛ ու փայլ ընտրեցիր՝
 Քան վա՛ռ սիրտ մը սիրահար :

« Եւ յետ բաղձից՝ ւերազոց՝
 Թողուցե՛ր զի սիրո՞յդ բոց ,
 Լափէ՛, այրէ՛ ըզՍիսակ՝
 Սիրոյդ յանչէ՛ջ ի հընոց :

« Եւ արդ ի դո՛ւր ամենայն . . .
 Եւ դառն հառաչքըս միայն՝
 Երբ հընչեն յուսկնըդ, ո՛վ կոյս,
 Պիտի թուին ցնորք ունայն :

« Եւ դու՝ անհո՛գ, անըզգած՝
 Երբեմնի կո՛յսդ գըթած ,
 Պիտի հեգնե՛ս, պիտ՝ ծաղրե՛ս
 Վէրքերն հոգւոյս թառամած :

« Բայց այս հարուած, Աստո՛ւած իմ,
 Ո՛րքան է դուժ, ոխերիմ .
 Այդ հարուած զիս պիտ՝ տանջէ
 Անդըր եւս քան ըզչիրիմ . . .

« Եւ ա՛յս է . ա՛յս իմ բաժին ,
 Երջանկութիւնն իմ վերջին ,
 Բա՛րճ , ա՛հ , բա՛րճ զայս կեանս յինչն՝
 Գո՛հ եմ ըզքէն , ո՛վ երկին . . . »

« Բայց չե՛մ մոռցեր քեզ , Աստղի՛կ ,
 Ո՛չ տեսքդ , ո՛չ խօսքդ գեղեցիկ .
 Ոչ զայն համբոյր՝ սրով զիս
 Քան զբնաս ըրիր երջանիկ :

« Ա՛հ , այդ անուշ համբուրիկ՝
 Զինչ անթառամ մի ծաղիկ ,
 Դեռ կը բուրէ՛ կ'օրօրէ՛
 Զիս անուշի՛ւք իւր քաղցրիկ :

« Բաբէ՛ , մոռնաս կամ թէ՛ ոչ՝
 Հոգեվարիս սիրտ դողդոջ ,
 Յուստեան պիտ' չը խամրի՝
 Յի՛ս քո սիրոյն վեհ բողբոջ :

« Մեռնի՛մ բայց քո ծըխի սէր՝
 Յի՛ս զինչ կնդրուկ սրբանուէր .
 Մեռնի՛մ . . բայց շուրթն իմ հնչէ՛
 Ըզքեզ Աստղի՛կդ անձնուէ՛ր » : . . .

Ժ .

Եւ կը ննջէ՛ր արդ Սիսակ՝
 Ի քուն մահո՛ւ անուշակ .
 Յետին հառա՛ջքն իւր ուղղած
 Առ նաղելի՛ն իւր հոգեակ :

Երբ բոթն ամեն տեղ հընչեց՝
 Լա՛յց մ'է բըրդաւ , լայ . կո՛ծ մեծ ,
 Կ'ուլա՛յր քաղաքն ամենայն՝
 Խորասուզուած սուգի մէջ :

Անմեղ մանկո՛ւնք իսկ լային ,
 Կոյսե՛րն անգամ արփային .
 Մարք , հարք , ամենք միասիրտ՝
 Լային ըզմահ պարմանին :

Իսկ երբ լըսեց հէ՛ք Աստղիկ ,
 Գո՛յժն այն սարսո՛ւռ աղդեցիկ ,
 Փետեց կո՛ծովք յուսարեկ՝
 Քընքոյշ վարսիցն հոպոպիք :

Երկա՛ր ժամեր նէ մընար՝
 Լըռի՛կ , անխօ՛ս , անբարբառ .
 Հա՛մր էր դարձեր՝ անլեզու՝
 Օրիորդն՝ այն սիրավառ :

Սուգե՛ր հազաւ քառսուն օր .
 Միչո՛ւ լուռ , տրտո՛ւմ , սըգաւո՛ր .
 Լացաւ , կոծե՛ց , աշխարհե՛ց՝
 Թշուառութիւնն ահաւոր :

Եւ քառսուն օրն երբ հասաւ ,
 Դառնութիւնո՛վն իւր ամբաւ .
 Աչերն՝ յերկի՛նս սեւեռած՝
 Գոչեց անհո՛ւն տագնապաւ :

« Ծա՛նըր գրեցիր , ինձ ո՛վ Տէր ,
 Զանմեղունակ սըրտի սէր .
 Երթա՛մ վանուց ի լուռթեան՝
 Քաւել զիմ ծանըր մեղքեր :

ԺԱ.

Նոյն օրն իսկ կոյսն երկնավառ՝
Որպէս գըշտոյ վեհափառ՝
Տուաւ ըզնուսկ իւր ողջոյն՝
Առ սէր, առ յոյս, առ աշխարհ:

Վա՛նք մը գնաց մենաւոր՝
Կըրօնուհեա՛ց սըգաւոր.
Ազօթքնե՛րով, արտասուքո՛վ,
Անցուց բոլոր կենացն օր:

Ո՛չ եւս մարդիկ լըսեցին
Ջանուն չըքնաղ Աստղիկին.
Նէ Աստուծո՛յ էր զոհուեր՝
Սիրո՛վն, յուսո՛վն իւր յետին:

Այլ չարաբաստ կոյսդ արի.
Սէր՝ զոր չը գտար յաշխարհի՝
Ահա՛ լուսթեան մէջ եւս շուտ՝
Շիջեւափա՛ռ խաւարի՛:...

Եւ հիւհրա՛ն այն աղջիկ՝
Զօր ցանկային շա՛տ մարդիկ՝
Իւրեանց գաւկին բերեւ հարս՝
Ընծաներո՛վ գեղեցիկ:

Կուսածաղի՛կ մենուհին,
Ընկճեալ վըշտօ՛քն էր ներքին.
Եւ չեւ տարին բոլորած՝
Խամրեցա՛ւ վարդն հասակին:...

Անձնուէ՛ր կոյս, յետ մահուն
Իւր Սիսակոյ սիրեւոյն՝
Կ'ըզճայր միանալ անոր հետ
Փափագանօ՛ք մի անհուն:

Եւ ահա՛ մահ կը սուրայ,
Կուսին սնարիցն ի վերայ,
Հէ՛ք կոյս, վախնա՛յ և զայս հեղ՝
Թէ մահ իւր հետ կը խաղայ:

Այլ խամրե՛ր է, թառամե՛ր՝
Անմահագե՛ղն իւր սրտկեր.
Եւ կեանք՝ արմոյն զերդ ճաճանջ՝
Երթա՛յ ու գայ տարուբեր:

Օրհա՛սն հատեր՝ սե՛ւ օրհաս,
Պատե՛ր կոյսն այն սիրանաղ,
Ա՛խ, սեւ՝ օրհաս՝ յաչըս մեր՝
Ինչ խորհուրդներ կը բանաս:...

Սրիագոյնն իսկ մարդեր՝
Երբ ձայնդ առնուն բոթարեր,
Փութա՛ն ահիւ, հնազանդին՝
Առ քո հրամա՛ն կենսաւեր:...

Եւ ահա՛ կոյսն այն անճառ,
Որ կ'երազէ՛ սիրավառ,
Քե՛զ կը յանձնէ կեանքն, հողին,
Երազներո՛վ սիրահար:

Կեա՛նք, սէ՛ր, գեղ ի նչ են, ի՞նչ, ա՛հ,
Հոն՝ ուր անխոնջ գործէ մահ.
Բացու ի՛ր, չիրիմ, Աստղիկն ալ
Թաղէ՛ սիրո՛վն իւր անմահ:...



ՆԱՄԱԿՆԵՐ

Ա.

Ա. Ռ. ԲԱԶՄԵՐԱՆՏ ԴԱՍՏԻԱՐԱԿ ԻՄ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՊԱՅԵԱՆՑ

Ճէրիտէի Շարգիյէի մէջ Ձեր Սրբազնութեան Եպիսկոպոս ձեռնադրուելու քաղցր աւետիսն ընթերցայ։ Թէ ինչ ներգործութիւն բրաւ այս իմ վերայ՝ պիտի ջանամ բացատրել զայն։

Ձեր Սրբազնութիւն՝ հեշտիւ կարէ համագումգոյացնել թէ՛ զգացման, խորհրդածութեան և վերացումի եռեակ ալեծփում մը սղողեց զիս. ալեծփում, զօրե՛ղ քան Պէշիքթ աշլեանի սիրահար արտասուքներն, յորդում սրտեռանդն քան Դուրեանի աղեկէզ հառաչներն։ Ինչ որ կ'զգամ, զայն չեմ կրնար պարզ

զգացումի հետ բաղդատել. սիրա՛նք, ահա՛ ինչ որ կարէ սահմանել զայն։

Թերեւս, Սրբազան դատաւարակէ իմ, ընթեռնով զայս տողեր՝ ժպտի՛ք յանկարծ այն հոգեկա՛ն ժպտներէն միովն, զորս այնքան յաճախ վայելած եմ ի Սաղէմ, ի հոյակապ վարժարան ժառանգաւորաց։ Սակայն հոգս չէ՛։

Այդ անկեղծ ժպտներն տարրացած են յիս անջինջ կնիքով։ Պիտի կրնա՛մ երբէք անգամ մ'եւս դիտել գնոսա։ Պիտի տեսնե՞մ մի օր դա՛րձեալ այդ սրբալի ժպտումն թրթռացնող անո՛յշ դէմքն։ Պիտի ունենա՞մ վերջապէս բաղդն աչք մ'ուղղելոյ՝ հիացման, ահնա՛րկ մը ոքանչացման՝ այդ սրտադրաւ պատկերին վերայ վեհօրէ՛ն հովանացող վսեմ ճակատուղ, այդ վեհ մտածմանց կեդրոնին, այդ բարձրաթռիչ խոհմանց ոսկի՛ գագաթան վրայ։

Պիտի կրնա՞մ... այլ ո՛վ պատրանք, ահա՛ եօթն ամեր և ես՝ տակաւին զուրկ Ձեր տեսքէն՝ կ'հառաչեմ և կ'հեծե՛մ անձնագին։

Ահ, Հայրիկդ իմ, թղթիկս առնելնուդ արդեօք պիտի յիշե՞ք թէ զայս խօսքեր գրողն էլպիստանցի այն խեղճ ուսանողն է, զոր երբեմն յառանձնութեան կ'պատուէիք Ձեր սիրալիր խօսակցութեամբն, այն թուրեանը, զոր վարձատրելոյ համար բաւ կ'համարէիք « Անշնորհք » մրմնջել՝ սրտաբուղիս չեչտով մը։

Այդ միա՛կ բառն, մեծագոյն գրաւականն Ձեր առ իս ունեցած հայրական սիրոյն, ուրքան ալ ամեղծ՝ սակայն յաւերժական արձագանք մը թողած է յիշողութեանս մէջ եւ ստէպ ի յու՛շ այդ բառին խորապէս կ'զգածուիմ և կ'արտասուեմ։

Ահ, զայդ անշուք բառն թելադրող սիրտն էր որ

երբեմն տարօրէն խանդաղանօք կ'զեղոյր և կ'ըսէր մեզ այն վսեմ խօսքերն, որ մեծագոյն բարոյախօսի մը յատուկ են. — խտրած վարդին վերայ սոխա'կը կ'ուլայ, թառամած մանկութեան վերայ հոգի'ն կ'արտասուէ :

Երկնային խօսքեր, զոր մարդ մը յեղյեղելոյ համար պարտի կա'մ Մամուրեան մը լինիլ, կա'մ Պէրպէրեան մը. լեզու'ն հրապուրիչ, լեզու'ն խանդավառ՝ որ հիացնելու, դիւթելու, գերելու համար միայն կ'բացուէ'ր, կ'խօսէ'ր մեզ՝ Ժառ. վարժարանի սանունցս :

Եւ ահա՛ այդ մեղրախօս լեզուի, չրթանց, այդ ոսկեղինիկ բերանոյ բխած վսեմ խօսքերուն դիւթիչ տպաւորութեան մի հանդիսաւոր գնահատութեան ընել չէ՞ ուզած Ս. Ա. Թառոյ միաբանական ուխտն՝ բարձրացնելով զՁեզ յաստիճան եպիսկոպոսութեան :

Բաղդին այս ժպտում անշուշտ նախադր'ւում մը կը բանայ Ձեր առջեւ բարձրանալ օր մ'եւս ի գահ Պատրիարքութեան, որում ա'յնքան արժանի էք : Յաջողութիւն ի սրտէ :

* *

Ստացա'յ Ձեր նկարն՝ այն վսեմ նամակաւ՝ զոր ինձ ուղղելոյ պատիւն ըրեր էիք : Այնու կ'ուտայիք ինձ մի քանին այն օգտաւատ խրատներէն, որոց այնքան կարօտ կ'զգայի զիս :

Ընդ երկար դիտեցի Ձեր խորհրդաւոր լուսանկարն, որ ինձ լռիկ իմն կ'խօսէր իմ դպրոցական կեանքի այն քաղցրանոյշ ժամերուն վրայ՝ երբ ձեռն ի ձեռն կը ձեմէի սիրեւագոյն բարեկամացս հետ Սիօնի խնկարոյր

նուիրակա'ն նոճիներու ներքեւ, Շաթոպոլիան կարգաւով, Պէշիքթաշեա'ն թղթատելով : Ահ ա՜նուշ օրեր, որք ինձ տուին Մեղրիկեանի, Նաւասարդեանի, Բիւրատա'յ նման անկեղծ, բանաստեղծութեան անկուշտ սիրահար բարեկամաց հետ անմահական երազներ երկնելու հեշտութիւնն :

Ահ, երբ կ'յիշեմ այդ ձեմքն այն սօսեաց տակ, ուր միշտ բարակ սիւքն կ'թրթռայ ու կ'հեծէ. երբ յուշ կ'ածեմ այն զոյճաստուէր՝ ծառոց հովանոյն տակ եզած խօսակցութիւններն, Պ. Տիվրիկեանն, որ միշտ կ'խօսի. Մեղրիկեանն, որ կ'գոռայ. Նաւասարդեան որ կ'երազէ՝ մտախոհ. Բիւրատն, որ միշտ կ'ատկածոտ աչերն ժուռ կ'ածէ դէպ ի Ձամ Թաղի մեծ դուռն, ուսկից ներս կը մտնէ միշտ Վահան վարդապետ՝ այն բանաստեղծութեան ոգւով չափ թշնամին, այն ընդ միշտ ահարկու, տտելի անձն բոլոր ժառանգաւոր սանունց, յո'յզ մը, տրո'յի մը, մեղամաղձութիւն մը և վերջապէս սարս'ւում մը կ'պատէ գիս եւ և կ'երազեմ և կ'հառաչեմ և կ'արտասուեմ :

Ահա՛ այն խոհերն, զորս ներշնչեց ինձ Ձեր լուսանկարն. դիտեցի՛ զայն խանդավառ ու մեղամաղձիկ դիտեցի՛, յիշեցի և արտասուեցի. առ խընդի'ն թէ առ վըշտին. առ զարմացմա'ն թէ առ գորովանաց. ո'չ գիտեմ. միայն երբ սթափեցայ զիս յուզող երազոց և խոկմանց առաջին յափշտակութենէն, բարեկամներս տեսայ, որք պատճառն կ'հարցնէին իմ արտասուաց. Համբո'յր մը, սրտադին կարօտադին համարոյր մը առ Ձեր լուսանկարն. ահա՛ այն միակ պատասխանն զոր ստացան բարեկամներս :

Այժմ Ձեր պատկերն կ'ախուսած է գլխուս վերեւ. երբ ի քու'ն կ'մտնեմ՝ զա'յն կ'դիտեմ վերջին անգամ.

երբ կ'զարթնում՝ յայն կ'մղուիմ զառաջինն : Նա է իմ միակ խորհրդակալն զփռաբարին ձեռնարկներուս մէջ . վշտացս մէջ նա՝ է իմ քաջալերն : Նախանձու , ատեւութեան ինձ տուած վէրքերն՝ այդ սրբազան նկարին առջե՛ւ միայն կ'ամոքին : Ժամադրութիւն մ'ունիմ իմ շտապն այն լսիկ այլ պերճախօս լուսանկարին հետ , որ յար կ'ընորհէ ինձ չը գիտեմ որպիսի՝ հրապոյր , քանի՛ սփռի , ի՛նչ պատրաստական գանձեր խրախուսանաց և արութեան :

Անհուն շնորհակալիք , Հայրի՛կդ իմ , վասն այն հոգածութեանց , որով ի հեռուստ իսկ կ'ըջապատէք Ձեր երախտապարտ սանը : Երբէք չ'պիտի մոռանամ զձեզ իմ կենացս ամեն պատահարաց մէջ : Ի խնդի թէ ի վշտի , ի յաջողութեան թէ ի ձախողութեան Ձեզ պիտի սեւեռեմ աչերս՝ Ձե՛զ՝ , ընտի՛ր պսակն Ս . Յակովբեանց Ուստին , Ձե՛զ՝ փառքն Սաղիմայ ճեմարանին , Ձե՛զ՝ տիպարն հայ կղերականութեան :

Երբ և լինի՝ Ձեր անուն քաղցրութիւն մը պիտի տայ սրտիս . Ձեր յիշատակ՝ պիտի ոգեւորէ՝ զիս , Ձեր կեանք պիտի ուսուցանէ՝ ինձ այն գաղտնիքն , որով կ'յաջողին մեծագոյն հանճարք :

Եւ ինչպէս երբեմն Պօնափառ թ' իւր զօրաց հիացմամբ մատնանիչ կ'առնէր Աւսթերլի՛ց արեգակը , եւ ես՝ չ'պիտի դադրիմ երբէք՝ հռչակել Ձեր անուն , Ձեր մեծ արժանիք , և Ձեր գործեր անոնց , որոց ուսուցանելոյ պաշտօն ունիմ . անո՛նց մանաւանդ , որք ուզեն զՁեզ այլ ընդ այլոյ մեկնել , անո՛նց մանաւանդ որք յանդգնին մինչեւ անգամ անպատուելոյ սրբապղծութիւնն ունենալ Ձեր անունն և Ձեր կատարած մեծ սխրագործութիւններ :

Ա՛հ , տխրութեամբ կ'համակուիմ այս վերջին տո-

ղեր գրած պահուս , զի մարդ միշտ հակամէ՛տ է , դատապարտեալ է գողցես այս վերջնոց հետ գործ ունենալոյ կենաց պայքարին մէջ , ուր աւելի կ'գնահատուին անարժանք եւ սուտակասպտք , զի համոզուած եմ , մանաւանդ հայոցս համար , մի մեծ ֆրանսացիի սա տխուր՝ այլ ճշմարիտ վճռոյն .

Et quoique fasse le grand homme
Il n'est grand homme qu'à sa mort .

10 Յունվար 1886



Բ.

Ա Ռ Ա Ր Ժ Ա Ն Ա Պ Ա Տ Ի Ի

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՍԱԿԵԱՆ

Պատիւ ունեցայ ընդունելոյ Ձեր 1885 սեպ. ամսանիշ մի գրութիւն, որ այնու մանաւանդ ուղագրաւ թուեցաւ ինձ, զի յետ գորովելոյ այն զգացմանց վերայ, որ բխած էին կաթօգին սիրելեացս տեսութենէն, արիական բողոք մը կ'արձէ՛իք ընդդէմ անդութ բաղդին, որ զՁեզ օտար ամբեր նետեր էր՝ հեռի ի սիրելեացդ :

Առաւել՝ հետաքրքրուեցայ երբ հասայ հոն, ուր գովելով հանդերձ՝ կ'յորդորէիք մեղմացնել սիրոյս յորդութիւնն. յորդո՛ւմն, ոյր սակայն հեղինակն ընութիւնն է. սէ՛ր՝ որ իւր յորդութեամբն մանաւանդ կ'ստանայ իւր իսկ նշանակութիւն. սէ՛ր՝ որ թէպէտ երկրային՝ երեւութապէս, այլ իսկապէս երկնային է, զի մարդ՝ առանց սիրելոյ իւր կենակիցն ի՞նչպէս կարէ պաշտել և սիրել զԱստուած :

Ես՝ Տէ՛ր, համոզուած եմ թէ՛ մարդ արժանապէս սիրելով իւր սրտի՛ թագուհին՝ նոյն իսկ սիրած կ'լինի զիւր Արարիչ : Զի կոյսն, այն բիւրեղեայ հրաշակերտն Աստուծոյ, չէ՞ իսկական տիպարն Նորին բարութեան : Ներա ծաւի աչեր չե՞ն հայելի տեսլական անմեղութեան :

Քրիստոնեայ բանաստեղծն ներա՛ մի ակնարկին մէջ կ'նկատէ ճառագայթո՛ւմն վաւ բարութեան. ներա մի բառին մէջ՝ անձա՛ռ զգացումներ : Ներա բոց

Հուրթերն կ'դաւանի՝ որպէս խորան ամբուլթեան. անարատ այտերն՝ օթեա՛ն շնորհաց և վափկութեան : Ծողուն ճակատուն վրայ կ'սիրէ տեսնել մարմնացո՛ւմն իւր երազոց և վափկիկ, զգայնի՛կ սրտին և հոգւոյն մէջ կ'ընդունի գերագոյն գա՛ն սրբութեան :

Անմեղունակ կոյսն վերջապէս իւր հրեշտակաւոր անմեղութեամբն, իւր անդիմադրելի՛ հրապոյրներովն այսքան բարձրանալէ յետոյ՝ է՞ր իւր սէրն Արարչին չ'մտեցնէ զմարդ. իւր վափկանո՛յճ սէրն, գորովն է՞ր նորա անհուն բարութիւնն առաւել խորապէս զգալոյ չ'օգնեն նմա. ինչո՞ւ վերջապէս իւր երկնանման ճակատն՝ ճաճանչագեղ զոյգ մ'աստղերով պծնա՝ զարդեալ՝ մեծութեան, վսեմութեան գաղափարներ ներշնչելո՛ւ համար չ'փայլի, չ'դիւթէ, և չ'գերէ նորա սիրան :

Արարիչն ընդէ՞ր այսքան պայծառ ձիրքերով օժտեր է զնէ. ո՞չ, որպէս զի սիրելով զայն, ուսնինքառաւել սաստկութեամբ պաշտել զինքն. հայելով ի նէ՛ յիշէ՛նք զինքն անմոռաց, և վայելելով ներա գութն ու սէր, ներա գորովն և անսպա՛ռ գանձերն շնորհաց՝ առաւել ևս սքանչանամք իւր ամենակարողութեանը վրայ՝ վաւ գաղափար մը կազմելով իւր բազմաառողորմութեանը վերայ :

Այս առարկութիւններս սակայն չ'են արգիլեր զիս առաւել սիրելոյ զայն, որ էապէս արժանի է սիրոյ : Այո՛, և ես կ'ընդունիմ զայդ բայց թո՛ղ ներուր ինձ ասել թէ՛ պիտի դադրէի սիրելոյ զնա՝ եթէ՛ դրած չ'ըլլար սրտիս մէջ սիրոյ այն կաթիլ որ թէեւ երկրաւոր, բայց և այնպէս հզօրագոյն միջոցն է երկնայինին սէրն զգալոյ եւ նորա՛ մեծութիւնն արժանապէս ըմբռնելոյ :

Եթէ Ձեր գերազնիւ բնութիւն և մաքուր սիրտ քաջ ծանօթ չ'լինէր ինձ, չարամիտ պիտի լինէի Ձեր նամակն ընթեռնելով, պիտի հեգնէի՝ մանաւանդ և արհամարհանօք պիտի կրկնէի հմուտ բանասիրի մը յետագայ սա՛ գեղեցիկ տողերն .

« Ալիշանի քնարը սեւ պատանի մէջ թաղուած է կիսովին . . . Ուստի՛ երբ Պէշիքթաշէան Աստղիկին կ'նայի, Ալիշան հառաչելով Արեգին կ'գառնայ : »

Հազար գոհութիւն, որ լաւ ճանչելով Ձեր անբասիր կեանքն զերծ եմ այսօրինակ կասկածներ գոյացնելոյ յիս՝ դէպ ի Ձեզ : Օ՛ն ուրեմն, կարկառեցէ՛ք Ձեր Ս . աջն՝ համբուրեմ զայն կաթոգին սիրով՝ հայցելով ընդ նմին Ձեր քաղցր ժպիտներ այս փախստեայ տողերուն վրայ, զորս թեւադրուեցայ գրել վստահ՝ Ձեր ի բնէ ազնուական զգացմանցն :

23 Յունիս 1885



Գ.

Վ Շ Տ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Ռ

ՏԻԱՐ Հ . Ն . Ն .

« Ո՛վ մահ, զիա՛դդ դառն է յիշատակ քո . »

Տէր,

Այս դառն ճշմարտութիւն դժբաղդաբար իրացաւ վերջին եօթնեկիս մէջ, կարեւրէ՛ր հարուած մը շեշտելով Ձեր սրտին, որ արդէն խակ արիւնած էր վաղահաս մահուամբ հարազատիդ՝ սիրասնունդ Պարսամայ :

Անտանելի՛ է իրօք սոյն հարուած, սակայն ներուէ՛ ինձ ասել թէ աշխարհային տաղտուկներու մէջ թարթափող էակն, որ է մարդ, նախախնամական անյեղի ճակատագրի մ'ենթակայ լինելով՝ պարտի միշտ այս սգալի գաղափարին ընտելացնել զիւր սիրտ, զիւր միտն և հոգի :

Այս՝ ա՛յսպէս պէտք է լինի, զի այս միտքն՝ որ անհունութեան վրայ երազելու համար կ'ձգտի յար՝ մի օր՝ կասելով իւր խոյանքէն, կ'սոնարհի՛ նիւթի վրայ խորհելու, կը լքանի՛ իւր արջաւն հորիզոններէ ի հորիզոն և՛ որպէս արծիւ թեւակտուր՝ կ'ընկըրկի հողոյ առջեւ և կ'հեծէ ողբամուռն . — ո՛վ մահ, զիա՛րդ դառն է յիշատակ քո — :

Այսպէս և սիրտն, որ Արարչին տնօրինութեամբ

փափկութեան, զգայնութեան մի սրբավայր լինելոյ հրաշակերտուած կ'իթուի, մի' ևնոյն նիւթին առջեւ կ'ծնրադրէ և կ'արձակէ մի' ևնոյն հեծեծանքն:

Նոյն խակ հոգին՝ սիրահարն այն անմահութեան՝ այսպիսի բոլէքներում կ'փշրէ իւր հրեղէն փետուրներն և դառնագոյնս և սաստկագոյնս կ'զօչէ. — ո՛վ մահ, զիւ՛րդ դառն է յիշատակ քո: —

Այո՛, յոյժ դառն է, յոյժ անըմբեր, այլ սակայն, աւաղ, ա՛յս է մարդկային կեանքն ողջոյն:

Ի զո՛ւր մանկութիւն և երիտասարդութիւն ձեռն ի ձեռն՝ կ'ծաղկին, վայելէ՛լ կ'ուզեն. բա՛րէ, յոյժ կարճատեւ է վայելից ոսկեդարն: Անողորմ մահ՝ այն ամենակուլ Մողորքն՝ գիտէ զիւր դործ: Նա ճարտարաշէս գեղեցիկներու մէջ գեղեցկագոյնն, մանուկներու մէջ մանկագոյնն կ'ընտրէ: Միակ հաճոյք մ'ունի. ծաղիկն թառամել, լոյսն խաւարել, կեանքն ի մահ փոխարկել:

Այսպէ՛ս թառամեցոյց անգութն մահ և Ձեր նազելի քոյրն՝ երիտասարդութեան ծաղիկ հասակին մէջ՝ մինչ ընդունա՛կ էր այնքան սիրելոյ և սիրուելոյ, մինչ կա՛րօտ խակ էր ընդ երկար կապուելոյ այս աշխարհիս ուր կ'իթուլու երկու սիրեւագոյն դասեր. քըն՝ էլմաստ և Մարգարիտ:

Իւր վերջին հառաչքն կ'կաղմէին այս քաղցրիկ առարկայք իւր սիրոյն, որ ա՛յնքան տարաբաղդ եղաւ և ա՛յնքան արտասուելի՛:


Սակայն ինչ օգուտ սղալէ ու կոծելէ: Ո՞չ ապաքէն սուգի մէջ՝ սիրոյ և փուչերու մէջ՝ վարդեր երազելն հէ՛ք մարդուս ճակատագի՛րն եղած է: Սըրբեցէ՛ք ուրեմն Ձեր աչեր, սիրփուլեցէ՛ք ուրեմն. եւ յիշեցէ՛ք թէ՛ արտասուելն՝ որքան մարդկային, ըս-

փոփուելն՝ ևս ա՛յնքան երկնային է:

Թող երկնային Նախախնամութիւնն փրկարար զո՛հ մը նկատէ՛ վայս և խնայէ՛ դէժ Ձեր ազնուատոհմ գերդաստանն նմանօրինակ տարածամ մահերէ՛, բա՛ւ համարելով այսքան սուգն ու արտասուք:

Տէ՛ր, երբ արժանապէս արտասուելէ յետոյ Ձեր նազելաշուք քոյրն՝ սիրփուլիք առ վայր մի՛ յիշեցէ՛ք թէ՛ Ձեր բարեկա՛մն ևս Ձեր հետ մէկտեղ սգաց ու կոծեց զդառն մահ ողբացեալ Նազինկան, որ և ներկայիւս՝ կ'կնքէ զիւր խօսք՝ մատուցա՛նելով Ձեզ իւր խորին վշտակրութիւնն:

22 Ապրիլ 1885



Դ.

Խ Ն Դ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՌ

Պ . Յ . Զ .

Ազնիւ բարեկամդ իմ,

Մինչ մեղամաղձոտ քնարին թեւերով մի բարեկամի դառն սուգ մեղմելու կը ջանայի՝ Պ . Ս . Բիւրատ՝ Ձեր ամուսնութեան բարեբաւորիկ լուրն կ'աւետէ ինձ իւր մի ողբալիր նամակաւ՝ գուժեւով և զմահ սիրեցեալ Մեղրիկեանի:

Այս հանդիսաւոր առթիւ չեմ կրնար լռել եւ գէթ սրտագին բարեմաղթութիւններս չ'ներկայել Ձեզ եւ Ձեր ազնուախայլ սրտակցին:

Բարեկամ, ամուսնութիւնն մի նոր ասպարէզ կ'ալարէ Ձեր առջին, ասպարէզ՝ ուր փունջ փունջ վարդից մէջ սփռեալ են և փուշեր: Ուր ոսկեզօծ հաճոյից, սրտահեշտ բաղձից մէջ իսկ պիտի տեսնէք իստանուած մեղրաթոյն ըմպելիներ: Այս գըծստէպ խառնուած մեղրաթոյն ըմպելիներ: Այս գըծստէպ ասպարէզ պիտի երեւի Ձեզ որպէս մի ծաղկալի բուրաստան՝ ուր պիտի ճեմէք այգուն այգուն Ձեր նազեւոյն հետ ձեռք ձեռքի տուած, դիտէ՛ք զարշալոյսն իւր բովանդակ չքեղութեամբն նկարուած հորիզոնին վրայ, մինչ կ'նիրհէ բնութիւնն, մինչ թռչնիկը հիացմամբ դիտեն Ձեր երթեւեկն ծառոց վրայէն:

Երանի՛ Ձեզ, մինչ կ'յածիք այդ քրքմաւէտ բու-

րաստանն՝ հո՛ս մի ծաղիկ, հոն մի աստղիկ նուիրելով Ձեր Աստղիկան՝ ի պսակ ճակտին, այո՛, երանի՛ Ձեզ, թէ մինչ սիրոյ բաժակներ կ'ընծայէք անդ միմեանց, սեաւ յիշատակներով չ'էք դառնացներ զայն:

Այո՛, երջանիկ կ'լինիք յայնժամ:

Ցարդ ապրեցայք գրեթէ առանց հաճոյք մը քաղելու Ձեր հոգւոյն պայծա՛ռ ձիրքերէ: Ղի ի՞նչ է հոգին, երբ մի գեղուհւոյ շնչիկն չ'խանդավառեր զայն. — տխուր աւերակ մը պարզապէս, ուր աքսորեալք միայն կ'ապրին, ուր բա՛ւ եւեթ կ'ողբայ լալագին:

Կոյս՝ քնարն է հոգւոյն. նէ՛ միայն կ'շարժէ նորա թեւերն, նովաւ եւթ կ'ծաղիկի ամայութիւնն անոր՝ դաւարադեղ և չքեղ: Ի՞նչ կ'ընեմ, գեղուհին՝ քանարիկն է հոգւոյն:

Վարդ չ'ունի հրապոյր, քան երբ մի սոխակ կը թառի ի նա. իւր թերթք չե՛ն այնքան հոտաւէտ՝ քան երբ պիւլպիւլի դայլայիկներն կ'լսուին անդ: Ինչ որ է սոխակ վարդին՝ նոյնն է կոյս՝ հոգւոյն համար:

Երջանիկ է՛ք դուք, զի գտայք Ձեր հոգւոյ զըւարթունն:

Թէ ոք վշտացնէ՛ զՁեզ, նմա պիտի դիմէք և նէ ծաղկահոտ ցօղ մը պիտի սրսկէ Ձեր սրտին. թէ ընկճիք աշխատանաց, տառապանաց բեռան տակ, այդ հրեշտակն սիրտի՛ պիտի կիսէ Ձեր կսկիծ. թէ յուսահատութիւն ծանրանայ ի Ձեզ՝ նէ իւր քաղցրանոյ ժպիտներով՝ յուսոյ թիթեռնիկներ պիտի թեւածել տայ զՁեզ:

Հրճուեցէ՛ք, բարեկա՛մ, զի Ձեր հոգւոյ սիրուհին կ'ողջունէք:

Նէ՛՛ պիտի լինի անվիանդ առպարն երբ խուժեն Ձեր վրայ ձախողւածոց փոթորիկը, դառնագոյն, սեւագոյն յիշատակներն իսկ այնու պիտի ամոքին տակաւ. ոչի՛նչ պիտի կրնայ կասեցնել թուիչն Ձեր բնածիր տաղանդին, զի ամենէն բուռն վայրկեաններում պիտի ունենաք Ձեր ետին մի հրեշտակ անձնուէր, որ Ձե՛զ կ'սրբախուսէ, Ձե՛զ կ'ժպտի, Ձե՛զ համար կ'աղօթէ՛...:

Եւ երբ մի օր՝ Ձեր երջանիկ սէրն օրհնուի բաժնեւորանդ, վարդափթիթ զաւակներով, ի՛նչ կեանք, ի՛նչ մեծ բարբրաստութիւն: Դուք պիտի դատարարակէք զայնս, դուք պիտի տնկէք նոցա փափուկ սրտին մէջ Աստուծոյ եւ ընտանեաց սէրը. դուք պիտի շնչէք նոցա հոգւոյն՝ բարւոյ, գեղեցկին ու վսեմին երկնածորան խանդը. դո՛ւք պիտի վառէ՛ք ի նոսա մեծագործութեան, արժանապատուութեան խունկն անմահաբոյր:

Ահա՛ երջանկաւէտ պտուղքն Ձեր սիրոյ, Ձեր միութեան: Դեռ նոր կ'սկսի Ձեզ համար կեանքն, կեա՛նք նոր, կեա՛նք բեղմնաւոր: Մեծ է Ձեր կոչում, գիտցէ՛ք արժանապէս վարել զայն:

Յայսմհետէ սիրոյ եւ անմեղութեան հրեշտակն զուարթուն պիտի բազմի Ձեր վերեւ, երգէ՛ Ձեր սէր, երգէ՛ Ձեր միութիւն: Գիշեր՝ պիտի սրսկէ զիւր ցօղ հեշտալիր Ձեր ամբիժ առագաստին վերայ, կոյսն սիրոյ հոյլ ի հոյլ համասպրամներ պիտի ձօնէ Ձեզ. ցօղով ու բոյրով պիտի ողողիք՝ արբչի՛ւ սիրոյ անըստառ հեշտութեամբն:


Իսկ դուք՝ խայտաղէմ եւ բերկրապատար՝ աչ-

քերնիդ առ Աստուած սեւառած, եւ ձեռքերնիդ առ նազելիդ կարկառած պիտի ձայնէք առ նէ խանդավառ. — Դո՛ւ իմ ես, դո՛ւ՝ անդրանիկ ծիծա՛ղդ. սիրոյ, քեզ դրախտի պիւլպիւլներն են սնուցած, աննըման ես, հիանալի՛ ես, սիրալի:

Այո՛, Ձերն է այն, սիրեցէք զնա կաթոգին եւ սրտեռանդն:

Բարեկա՛մ, երբ կրակոտ գինւոյ ուրախալիր բաժակներ քամէք բարեկամացդ զուարթ ակումբին մէջ, յիշեցէ՛ք որ յէպիստան ունիք մի բարեկամ, որ Ձեզ համար կ'որոտիէ, Ձե՛ր սիրով կ'մրկի եւ Ձե՛զ համար կ'աղօթէ:

40 Մարտ 1882 Էպիստան



Ե.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ա.Ռ.

ՏԻԱՐ ՓԻԼԻՊՊՈՍ Զ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Տէ՛ր ,

Այն սիրալիր հոգածութիւնն , զոր ցոյց կուտայք ինձ ստէպ՝ առիթ կուտայ ինձ մտածել թէ՛ Ձեզ համար քաղցր է երբեմն ալ թողլով աշխատանաց անսպառ հոգն՝ միտ դնել այն հոգեթունդ ձայներու , որք յաճախ աղօթից քաղցրալուր մրմունջներ կը կազմեն՝ երբ կ'ուզուին առ Բարձրեալն ինձ պէս լքեալ պանդուխտի մը կողմէն :

Եւ ի՞նչպէս լռէի , ի՞նչպէս չ'փութայի գէթ երկու խօսքով սրտիս մէջ դիզուած զգացումներն ազնութեանդ ներկայելոյ , երբ դուք առ ոչինչ գլորելով այնքան բարիքներ , որով լցած էք աղքատիկ ազգ . վարժարանն , կ'ելնէք մի բացառիկ պատուով ևս տիրանալ սրտիս ու հոգւոյս միանգամայն :

Արդեօք այսու նպատակ չէ՞ք ունեցած մի վսեմ դաս տալ անոնց , որոց սրտին մէջ մեռած են դժպրօցասիրական ամեն թռիչք . կամ չէ՞ք ուզած Ձեր բնատրիպ ազնուականութեան եւ հազուադէպ ուսումնասիրութեան մի վսեմ դրօշմն տալ : Ազնիւ մտածում , օրհնեալ նպատակ :

Սակայն յետ այնքան քաջալերութեանց՝ չէի կըր-

նար սպասել որ դուք համակրանաց ա'յսքան հզօր հաւաստիք մ'ալ ընծայել ուզէիք , այնքան ազնիւ եղանակաւ արդէն զգածեալ սիրտ մը առաւել ևս ընկճելոյ համար :

Այլ այսպէս են միշտ այն մեծ մարդիկ , ոյց ի բնէ ժառանգութիւն ինկած է — ազնուութիւն — , իրաւունք ունէին ուրեմն ժողովուրդք աստուածոց կարգն դասելոյ այն հոյակապ անձեր , որք իւրեանց մեծագործութեամբք տիեզերական համբաւ մը վաստեղած էին : Երբեմն քաջութիւնն միայն՝ համանիշ բարեգործութեան՝ այսպէս կ'պսակուէր , սակայն դարուց հետ գաղափարներն եւս զգալի բարեշնորհում մը կրեցին եւ կարծեմ թէ՛ տալոյ բարերարութիւնն երբէ՛ք այնքան գերիշխան հանդիսացած չէ ի վերայ զինուց , ո'րքան այժմ :

Եւ իրօք այս մեծ դարուս մէջ ո'չ ոք այնքան մեծ է , որքան բարեգործ դրամատէրն : Բարերարե՛լ , ահա նորա մեծագոյն հաճոյքն : Նա՛ այնքան տարօրէն վե՛ր է դրամի մարդէն՝ զի կեանքն բեռ մը կ'նկատէ ա'յն օրն իսկ , երբ կ'տեսնէ թէ՛ այլ ևս չ'պիտի կըրնայ այլոց սատարել :

Դուք նախատիպար կ'հանդիսանայք այդ բարեսիրաց , մի ժամանակ՝ երբ մարդիկ մոլեգին ճիգեր կը թափեն ի պատիւ միլիոններու , երբ մարդիկ այնքան ախորժով սպաս կ'հարկանեն անձնասիրութեան կուռքին . մի այնպիսի ժամանակ , երբ աշխարհ՝ արհամարհանք և եթ ունի առաքելոյն գաղափարին , և մի այնպիսի քաղաքի մէջ , ուր տալոյ առաքինութիւնն տխմարութեանց համանիշ նկատուելոյ դատապարտեալ է . . . :

Ո՛վ բարք , ո՛վ դարք , որպէս կ'գոչէր երբեմն մեծն Գրոնէյլ :

Եւ երանի՛ր Զեղ, զի այնպիսի պարագաներու մէջ
կ'ըարերարէք այնպիսւոյ՝ յորմէ՝ չէք սպասեր փո-
խարէնն : Փա՛ռք Զեղ մանաւանդ, զի Զեր մտած-
մանց առարկայ կ'ընէք մի մարդ, ոյր միակ առաքի-
նութիւնն է գաւառացի վարժապետաց լքեալ դա-
սին պատկանիլ : . . .

Եւ գնահատել, եւ քաջալերել և վարձատրել՝
վարժապետ մը. ա՛հ, ազնիւ, կարի՛ անլուր վե-
հանձնութիւն ո՛ր է այս. ասի առաքինութեանց լրո՛ւ-
մըն է պիտի ըսէի :

Օրհնեա՛լ լինիք ուրեմն և երկի՛ն լինի Զեր զօրա-
վիդ :

Թո՛ղ վերին Նախախնամութիւնն պսակէ Զեր
քիրտն ու ճիգ, թո՛ղ բազմապատկէ՛ Զեր օգտաշատ
կեանքն, թող շնորհէ՛ Զեզ լիակատար յաջողութիւն՝
բարեաւ վերադառնալոյ ի ծոց կարօտակէզ սիրել-
եացդ, որք Զեզ կ'սպասեն անձկագին և գրկաբաց :

9 Սեպտ. 1889 Տարեցիտ.



Զ.

Ա. Ռ.

ՏԻՍԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա. Փ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Երթա՛ս բարեաւ, բարեկա՛մ : Ահա՛ Տարենտէի
զով զով հովերն կը փչեն. ահա՛ սիրտերն կ'տրուին
և կ'տրորին թուեղ ի թուեղ : Տխրութիւնն է, որ
կ'հնչէ զերդ աշնայնի գիշերային պաղ շունչեր : Այս
սրտայոյզ վայրկեանին արեւ՝ անհոգ ու անզգայ՝ կը
ճառագայթէ շողուն եւ ակնախտիդ. հով ու ճա-
ճանչ իրար կ'ընդհարին և սիրտն է կ'ձմիլ, հոգի՛ն է
կ'այլալի եւ քնար մը ի տես կուգայ, քնար սգա-
պատ, որ քե՛զ կ'ծօնէ զիւր մեղեդին՝ սրտախոտոր և
կը հեծէ՛ մեղամաղձիկ—երթա՛ս բարեաւ— :

Երթա՛ս բարեաւ, ո՛վ սէրը իմ սրտին : Ահա՛,
գէթ երկար ժամանակի մը համար՝ վերջին անգամ
կ'տարածես աչերդ քո շուրջ և ի՞նչ կ'տեսնես.—
հայրենեաց օգազուարճ պարտէզներն, Բօլատի բարձ-
րադէր բլուրներն, Զէյվէի զովասուն հովիտներն,
որք զքեզ կ'ողջունեն, զքեզ կ'դիտեն, քո վրայ կը
գուրգուրան և լուռ ու տխուր քեզ կ'կցեն իւրեանց
խորհրդաւոր փախուքներն. ծառերն գոգցես միմ-
եանց կ'հաղորդեն քո հրաժեշտի գոյժն և կ'հծծեն
ողբամնջիկ—երթա՛ս բարեաւ— :

Երթա՛ս բարեաւ, Տարենտէի վա՛րդն գեղահրաշ :
Աւա՛ղ, քսան գարուններ այն ինչ կ'փթթին խոհուն
ճակտիդ վերայ : Բնութիւն համասպրտմներ ու ան-

թառամներ սիրած էր այդ վեհազուն դէմքիդ վերայ . դեռ նոր քո ամբոստեան բոյրն պիտի ծաւալէր հայրենեաց հողոյն վերայ , բաժանման , ճակատագրի անողոք հրեշտակն կ'ձակատի քո դէմ եւ դու՝ յղի՛ մեծագործութեան վսեմ ծրագիրներով՝ կ'հարկադրեմ ձեռնդ զսպարէզ փառաց եւ մոտերիմքդ ե՛ն , որ քեզ չըջապատած լռիկ ու արտասուածքոր կ'հեծեճեն հեղձամղձուկ—երթա՛ս բարեաւ— :

Երթա՛ս բարեաւ , Ազնի՛ւդ իմ : Ա՛հ , կոտորած է սիրադ , կ'արտասուեն աչերդ , սակայն սի՛րտ առ . դիտե՛ միանգամ Թօխմանի կարկաջուն ալիքներն , ի՛նչպէս կ'գոչեն : ի՛նչպէս կ'գոռան ահեղամուռն : Դոքա խորհրդաւոր բաներ կ'խօսին , դոքա ապագայի խորխորագոյ՝ քարոզքն են , որ թէպէտ տխուր , այլ ոգեւորուած քո համբաւովն քեզ կ'բարձրացնեն զիւրեանց ձայն եւ կ'գոչեն խորխորագին— երթա՛ս բարեաւ— :

Երթա՛ս բարեաւ , սրտակի՛ցդ իմ : Կ'յիշե՞ս տատրակն , որ յետ մահու իւր վարութանին ոչ եւս կուզէ դաւարագուարձ ոստոց վրայ թառիլ : Յա՛ր եւ նմանըն եղած եմ եւ ես : Իմ սոխակս կ'մեկնի . հոգւոյդ քանարիկն կ'թռչի , երազներս կ'ոչնչանան : Խինդն , այլ եւս ցնորք մը պիտի լինի ինձ համար . ոչինչ պիտի գրաւէ զիս . ի բաց խրախճանութեանց վայելք , ի բաց զուարճալի զրօսանքներ : Օ՛ն տխրասէր թըռչունք , ինձ հետ մէկտեղ ճուռողեցէ՛ք - երթա՛ս բարեաւ— :

Երթա՛ս բարեաւ , անզոյգ մտերիմ : Իսկ ես պիտի մենանամ այն վայրերն , ուր քո հետքերն պիտի նըշմարեմ քայլ առ քայլ : Պիտի առանձնանամ այն տխրաբոյր ծառուղիներն , ուր կ'սիրէիր ամեն օր .

յետ մեկնելոյ արվւոյն՝ երթա՛լ , բազմի՛լ ծառի մը հիւրընկալ կոճղին վերեւ , խոկա՛լ զմայլուն , երգե՛լ տխրագին , հո՛վ տալ զգացմանցդ , թռիչ տալ աղնիւ գաղափարացդ : Կ'յիշե՞ս , հոն կ'գանէի զքեզ ամեն երեկոյ՝ խոհուն , գրաւուն երազներուդ մէջ : Այժմ՝ դոքա յիշատակներ են եւթ , որք լռիկ իմն կ'մոմընջեն քո ալանջիդ—երթա՛ս բարեաւ— :

Երթա՛ս բարեաւ , կորիւնդ առիւծու : Վսեմ ապագայ մը կ'սպասէ քեզ : Կ'երթաս Վոսփորի գեղածիծաղ ափերն , ուր պիտի տեսնես մեծութեան այնքան հրաշակերտներ : Կ'երթա՛ս հայ հանճարոյ մեծ ոստանն փառապանծ , ուր շա՛տ ինչ պիտի խօսին քեզ Մուրատեանց , Պէրպէրեան եւ Գրասէր Ատում : Կ'երթաս գիրկն մի հօր , որ մեծ վարպետ է բարերարներու : Ըսէ՛ նմա.—Տարենտէ ի Ձէնջ շատ բաներ կ'անկալէ— : Եւ երբ հօր մը փայփայանաց մէջ մոռանաս ամէն վիշտ , մի՛ մոռանար զիս , մի՛ մոռանար զայն անցեալ , ուր այնքան սերտ սիրով սիրեցիր քո տարաբաղդ Թուրեանը . որ ահա՛ զքեզ պանդխտութեան յանձնած պահուն չունի ինչ առ ի նուէր արժանագոյն՝ բայց զայս նուազ . եւ ոչ՝ մեծագոյն մաղթանք , քան զոչեւ սրտեռանդն հեծե՛ծանօք—երթա՛ս բարեաւ— :

2 Մայիս 1887 Տարբիսկ.



ԴԱՄԲԱՆԱԿԱՆՆԵՐ

Ա.

ԹՈՎՄԱՍ ՄԵՂՐԻԿԵԱՆ

Ահա՛ մահարձան մը, ո՛րքան տխուր մի մահարձան, ուր կ'ենջէ տասնութամեայ մի պատանի՝ ողջոյն յիշատակներովն հանգերձ:

Ո՛վ խորութիւնք մահու, դուք Ձեր բովանդակ սառնութեամբ ծածկեցիք ոգի՛ մը, որոյ հանդէպ կ'ժմտէր աշխարհ իւր բոլոր գեղովն. դուք խամրեցիք մի կոկոն՝ ոյր վերայ արշալուսոյն ծիծաղ նոր կը թրթռար. մի ծաղիկ ցօղաթուրմ, որ նոր կ'ողջունէր զարև: Նուազ ու երգ մարեցան բերնին մէջ. ծիծաղ ու ժպիտ՝ ի դալուկ փոխուեցան եւ սիրտը՝ իւր զգայուն սիրտը՝ դադրեցաւ բարւոյն, վսեմին ու գեղեցկին խունկ ծխելէ ...:

Այլ եւս չ'կայ այն, ոյր աչեր սովոր էին ամեն ծաղկի մէջ ցօղ, ամեն աստղի մէջ փայլ խնդրելու. այն կրակոտ պատանին՝ որոյ միտն ու հոգի՛ այս աշխարհէն դուրս երեւակայութեան անսահման հորիզոններն կը սաւառնէին յարաժամ:

Պարոններ, նա բանաստեղծ մ'էր, որ քնար ի ձեռին կ'երգէր ու կ'արտասուէր: Նա՛ թշուառաց բարեկամ, թշուառներու համար կ'գրէր՝ արիւն արտսուքով օծելով զիւր տխրագիւն մեղեդիներ:

Նա դեւափթիթ հանճար մ'էր. Ժառ. վարժարանի հաղւադէպ ծաղկանց ամենէն գեղափայլն, որ միշտ հիացումով համակած է մեզ՝ իւր տարաբաղդ բարեկամներն՝ բանաստեղծական հոգեյոյզ բոցով մը վառելով մեր համակ զգայութիւններ:

Մեղրիկեան, ի՛նչ քաղցր անուն. և սակայն մեք իւր թշուառ մտերիւնները նոր կ'լսեմք զիւր ողբագին մահ: Հէ՛ք պատանի, այն ինչ պիտի սկսէր իւր խորհուրդներն, իւր երկնավառ հոգւոյն խանդն հաղորդել, տպաւորել իւր հոգեհարազատ սանունը. այն ինչ Բաղէշի մօայլ հորիզոնին վրայ իւր բոցավառ ճաճանջներն սփռել պիտի սկսէր՝ թեւակոտէր գերդկարապ՝ կ'ընկնի ի գիրկս մահու անշունչ դիակնացեալ բնաւին, կ'գրկէ՝ պաղ շիրիմն, գերեզման:

Հո՛ս է, որ կ'արտասուէ բանաստեղծն. հո՛ս՝ կը արամախոհէ իմաստասէրն, Հո՛ս է, որ քրիստոնեայն յուսով կ'զօրանայ և թերահաւատը՝ սոսկմամբ կը համակի. հո՛ս սիրտը կ'սգայ եւ միտքը՝ խոկմանց մէջ կ'ընկղմի:

Գերեզման. յաւերժական մոռացութիւնն անոնց, ոյք երկրի վրայ չեն թողած յիշատակ մը. անոնց, ոյք իբր ծաղիկ ծնած՝ իբր ծաղիկ սնած և իբր այն մեռած են: Սակայն ա՛յնպէս չ'պիտի լինիս դու, ո՛վ անմուսնալի՛դ Մեղրիկեան:

Քո քաղցր, քո պաշտեցեալ յիշատակն՝ իբր յաւերժական ողբերգ մը՝ պիտի ցնցէ այն ամեն սիրտեր, ոյք խնկարկու եղած են հանճարոյ. քո

կեանքը՝ լուսաշաւի՛ղ մը պիտի գծէ անոնց առջեւ ,
ոյք կենդանի վկայքն եղած են անմե՛ռ ճրիցդ , ան-
մա՛չ բաղձանացդ : Քո անուն՝ անմահ պիտի մնայ ա-
նոնց համար՝ ոյք յոյզ մը , տրոփ մը ունին միշտ առ
հանճար :

Տխրագե՛ղ ճակատ , քանի՛ցս լսած եմ՝ մեղրածոր
շուրթերէդ այն անձառ խորհուրդներ , որովք Դուր-
եաններու թիւն բազմապատկել կ'երազէիր թարգ-
մանչաց օսկեղինիկ դարն վերանորոգելով : Բայց
այժմ կ'եննջես լռիկ հոն՝ զոր ո՛չ իսկ կ'ձանջեն բարե-
կամներդ :

Ո՛ւր են , Մեղրիկեան՝ , ո՛ւր գացին այն սիրեցեալ
ժամեր՝ երբ արտասուեալ իմ կուգայիր ինձ վիշտերդ
կարդալու՝ յուսաբեկ վաճան վարդապետի դաժան
վարմունքէն , անգո՛ւթ հալածումներէն : Է՞ր այսքան
վաղ լռեցին շուրթերդ մեղրածոր . Է՞ր չ'ես խօսիր
մեզ Պէշիքթաշեանի անհուն մեղամաղձութեանը
վերայ . Է՞ր չ'ես նկարեր մեզ կարօտութիւնն Դուր-
եանի , մանո՛ւկ Դուրեանին՝ ոյր բաղդակից կը գըտ-
նէիր զքեզ եւ որոյ ա՛յնքան թշուառութիւնն եւ
վաղամեռիկ մահն արտասուեաց գետեր կ'հոսեցնէր
քո աչերէդ :

Այժմ , աւա՛ղ , կ'եննջես Պիթիսի անշուք մի ան-
կիւնն , վառ կուրծքդ՝ ցուրտ հողոյ , պայծառ աչե-
րդ՝ մռայլի՛ն սեւեռած : Լուռ է լեզուդ . լռե՛ց
քնարդ . սա՛ռ կտրեցաւ խանդդ եւ աւիւնդ :

Անհուն վշտացս մէջ կ'փորձուիմ անիծել զայն
վայր , ուր անկա՛ր շնչառապառ , մարեցար՝ որպէս պայ-
ծառ վերջալոյս մը , լուսով , ճառագայթով , գեղո՛վ
ողողուն : Բայց ո՛չ . չեմ կրնար անիծել զքեզ . Բա-
ղէ՛չ , քո անո՛ւն իսկ ցանկալի է . զի քո հողերը սըր-

բազործուեցան մեղրաշու՛րթն Մեղրիկեանի անարատ
շունչովն , անպա՛ռ խանդովն , անմահ երազներովն :
Թո՛ղ քո փուշերն իսկ վարդ լինին . . .

Անուշի՛կ Մեղրիկեան , քո սիրած եղանակն ահա
հասաւ . ա՛հա՛ աշնան սրտասարսուռ հովերն կ'իջեն
յուշիկ յուշիկ . ա՛հ , արթնցի՛ր քունէդ , արի՛ , կանդ-
նէ՛ շիրմիդ վերայ , տե՛ս քանի՛ ներդաշնակ է բնու-
թիւնն այս ժամուս : Ահա՛ , թխազգեստ ծիծեռնա՛կն
ալ կ'չուէ . քո վիշտ ու կարօտ նմա՛ յանձնէ , թող
տանի՛ առ Բիւրատ , թող բերէ առ Թուրեանդ՝ թո՛ղ
թրթռացնէ՛ մեզ կենացդ տխուր եղերերգն , թո՛ղ
մեր աչերն արտասուօ՛ք ողողէ . . .

Այլ դու չե՛ս լսեր , դու չե՛ս իմանար , դու՛մ մե-
ռա՛ծ ես . . . Աւա՛ղ , ամեն ինչ ա՛նգոր է քեզ կրկին
ի լո՛յս բերելու : Դո՛ւ գէթ լուսի՛ն , երբ գիշերներն
հորիզոնէն վե՛ր կ'բարձրանա՝ ծաղկանց՝ ցօղ , սըր-
տից՝ սփոփ հեղլու , մի՛ մոռանար այն սիրեցեալ
պատանին . քո արծաթի նշոյլներն սփռէ՛ անոր մե-
նաւոր գերեզմանին վերայ՝ իբրեւ վարդեր ցանուած
իւր սիրուհւոյն կողմէն եւ ապա՛ գնա՛ , անցի՛ր ,
հասի՛ր հոն ուր խինդ ու թինդ կ'հնչեն խնդամուլիկ :

Իսկ ես կուլամ զքեզ , որ ա՛յսքան մատաղ , ա՛յս-
քան յուսալի՛ր՝ հեռի՛ ՚ի ծնողացդ , հեռի՛ ի բարե-
կամացդ՝ անկար , մեռա՛ր ապերժանիկ , բողբոքե՛լով
անշուշտ , որ այսքան թշուառ , այսքա՛ն կարօտակէզ
կ'թողուիր կեանքն , ուր օր մը գոնէ չ'ժպտեցա՛ր . . .


Այլ հերի՛ք յուսահատ կոծերովդ անդորր քունդ
վրդովես . մխիթարուէ՛ , ահա՛ բարեկամներդ՝ Առա-
քեւեան , Նաւասարդեան , Բիւրատ , Թուրեան քեզ
կ'արտասուեմք լալագին , քո յիշատակը կը մեծա՛-

րեմք, քո անունը կ'հռչակեմք եւ քեզ անմահութիւն կ'աւետեմք :

Թո՛ղ կայտառեն, թո՛ղ խայտան ոսկերքդ սպիտակափառ շիրմիդ մէջ : Մեծ հանճարներէ երգուելոյ, արտասուելոյ արժանի՛ չիր. ներէ՛ ուրեմն՝ թէ տարաբաղդ բարեկամդ զառաջինն կը փութայ աշխարհագոյթ առնել մահդ. ներէ՛ մանաւանդ թէ նա՛ փոխան վսեմագոյն եղերերգներու՝ քե՛զ, քո նուիրական յիշատակիդ կ'համարձակի նուիրել զիւր խորին սուգն, զիւր աղի արտասուք :

Ա՛հ, պիտի արտասուե՛մ, պիտի սգամ, պիտի պաշտեմ զայդ քողցր յիշատակ՝ ցորքան միայ շունչս՝ լանջերուս մէջ. ցորքան հոսի արիւնս՝ երակացս մէջ. ցորքան շարժի գրիչս՝ մատներուս մէջ. ախոր՝ գրիչս, որ աւա՛ղ, դամբանակա՛ն նուագներ գրելով միայն զբազմ է ցարդ : ...

10 Սեպտ. 1882



Բ.

Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱՅ ՈՍԿԵՐՁԵԱՆ

12 Օգոստոս՝ 1885

Տեա՛րք,

Ի՞նչ կ'նշանակէ այս թախծութիւն. վա՛հ, դարձեալ գերեզման մը կայ փորուած. դարձեալ դա՛դ մը կայ դրուած մեր առջեւ : Այս դագաղն, աւա՛ղ, կ'իշխէ՛ք Տիա՛րք, եօթն ամիսներ առաջ տակաւին իւր մէջ կրելով մեր սիրեցեալ Աւագ-Երէցն Տ. Մինաս քահանայն՝ զմեզ համախմբէր էր աստ, մի՛ենոյն անդթութեամբ, մի՛ենոյն սառնութեամբ :

Աղիտալի՛ դագաղ, եւ դեռ քանի՛ քանի՛ պաշտեցեալ ոգիներ պիտի յանձնես սա խո՛ր փոխն, սա ամենակուլ անդնդին : Ո՛չ ոք գիտէ : Եւ սակայն ա՛յո եղած է միշտ մարդկային ազգի պատմութիւնն :

Թշուա՛ռ մահկանացու, ի զուր կ'օրօրուի այնքան զգլխիչ երազներով. ի զո՛ւր կ'աքնի ու կ'քրտնի ի խնդիր փառաց եւ պատուոյ : Իւր վերջին ճակատագրի՛րն է հանդէ՛լ սա հոգէ վերմակին տակ, խոնարհի՛լ սա սառնատեսի՛լ հանգստոցին շուրջ. նընջել մշտապէս ի հո՛ղ գերեզմանի, որ պա՛ղ է, որ սառուցի՛կ է, որ ահարկո՛ւ է համայնիցս :

Ա՛հ, վայրկեան մի ետ. եւ ահա՛ այդ փոխն մէջ պիտի անհետի, այդ հոգոյ մէջ պիտի ծածկուի մեր սիրեցեալ Հայրն Տ. Յովհաննէս իւր համակ ձիրքերովն, իւր ա՛յնքան յիշատակներովն : Յիսուն տարուան կեա՛նք մը, բեղուն, պայծա՛ռ կեանք մը ի մի վայրկենի ի չիք լինի՛, ի կորո՛ւստ մատ-

նուրի՝, ո՛վ աշխարհիս ունայնութեանց... .

Հանգուցեալն՝ Տիա՛րք, շուրջ, ՁԱ տարի քահա-
նայական վեհ սալտոնն վարելով՝ այնքան արդիւնա-
ւոր կեանք մ'ունեցած է զոր արժանապէս բացատ-
րելոյ համար Անձնուիրութիւնն և եթ կրնամք կոչել:
Եւ իրօք Տ. Յովհաննէս հայրն՝ անձնուիրութեան ակ-
նախադէպ փայլմը կ'ձգէ իւր ետին. փայլ փառապանձ,
որ ահա՛ դեռ իւր տմոյն ճակարին վերայ քաղցր
ճառագայթներ կ'արձակէ:

Եկէ՛ք, ժողովուրդ, նկատեցէ՛ք զայդ, սիրելի
անձնաւորութիւնն քրիստոնէական անձնուիրու-
թեան: Ափսո՛ս, իւր թառամեալ շրթունք՝ անձա՛ռ
լուութիւն մ'առած են. այն մեղրախօս շրթունք,
որ այնքան ստէպ բացուե՛ր էին եղբայրութիւն,
անձնուիրութիւն քարոզելոյ համար մեզ:

Մահն՝ մէ՛կ շունչով բա՛ւ եղած է մշտնջենապէս
լուութեան դատապարտելոյ այդ անխոնջ, այդ մըշ-
տախօս շրթերն: Մա՛հ, անողորմ եւ անգորով:
Ա՛հ, զայս բառ արտասանած ժամանակ՝ պարտաւոր
եմք զինուիլ քրիստոնէական փիլիսոփայութեան մեզ
ենեւ ճարտասանութեամբն: Մեր ար-
ներշնչած ողջոյն ճարտասանութեամբն: Մեր ար-
տասուաց չափազանցութեանը մէջ չ'մոռանամք թէ՛
քրիստոնեայ եմք մեք և տարօրէ՛ն միամտութեամբ
չ'ըսեմք թէ՛ մահն է դահի՛ճ անագորոյն, որ կ'խլէ
ի մէնջ մեր լաւագոյն անձերն, մեր սիրելագոյն ա-
ւարկաներն:

Ո՛չ, մահն չէ՛ դահիճ. որպէս կ'ուզեն մեզ համո-
զել բազումք, թէ փիլիսոփայօրէն խորհինք՝ յայն-
ժամ միայն կրնամք տեսնել թէ՛ մահն ի՛նչ բարձրու-
թիւն, ի՛նչ խորին նշանակութիւն ունի:

Մահն, որպէս կ'ասէ անմահն Հիւլիօ՝ ազատու-

թիւն է եւ մեծագո՛յնն ազատութեանց. Այս աշ-
խարհ՝ ի՛նչ այնքան տաղտուկներով, ի՛նչ այնքան
անտանելի եւ հոգեապառ հոգերով, ի՛նչ պիտի լի-
նէր առա՛նց մահու. ո՞չ ապաքէ՛ն վայր մը պիտի լի-
նէր տանջանայ. տանջանաբա՛ն մը նոյն իսկ:

Եղբարք, բարիք քան թէ չարիք մ'է մահն:
Մարդ թողով եղձանելին, կ'վերստանայ անեղծն,
լքանելով նիւթն՝ կ'ընդունի իւր անմահ ժառանգու-
թիւնն, իւր գերագոյն կատարելութիւնն, իւր վեր-
ջին փայլն, անշիջանելի—զանմահութիւնն—:

Անմահութիւն, ահա՛ պանծալի փառապսակն
վաստակելոյ. ահա՛ այն անխիտարինելի հատուցումն,
զոր կ'ընորհէ մահ համայն առաքինեաց: Անմահու-
թիւն, այո՛, այս է մարդոյ յետին թռչակն, յոյսն
և արժանաւոր ժառանգութիւնն:

Քանի՛ վսեմ է այս վարձն. երանի՛ անոնց, որք
բաղդն պիտի ունենան վայելելու ոյս վերջին ժա-
ռանգութեան մէջ այն գերագոյն երանութիւնն,
զոր Աստուածորդին խոստացած է իւր ընտրելոյ՝
գոչելով աստուածաբար. «Եկա՛յք, օրհնեա՛լք հօր ի-
մոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալն ձեզ վերկնից
զարքայութիւն »:

Եւ երբ կ'մտածեմք թէ՛ մարդ թողով այս ու-
նայն բեռն՝ վսեմ կերպարանափոխութեամբ մը զիւր
աչեր յաւերթութեան մէջ պիտի բանայ վերստին,
թէ գերեզման՝ օրրան մ'է անմահութեան՝ կանգ-
նեալ ի մէջ երկուց աշխարհաց՝ լուսոյ ու խաւարի.
Երբ մտածեմք այսպէս, ինքնին պիտի խոստովանինք
միանգամայն թէ՛ մահն իրօք ազատութիւն է և վը-
սեմագո՛յնն ազատութեանց:

Այս մտածումներն կ'սփոփեն զմեզ, մե՛զ, որ

կ'հաւատամք թէ՛ մեր հոգեւոր եւ սիրեցեալ Հայրն Տ. Յովհաննէս՝ այժմ անմահութեան մէջ է երանի՛կ եւ բերկրապատար:

Այո՛, ողբացեալն Տ. Յովհաննէս լուսոյ մէջ է այժմ, գերազանցապէս երանաւէտ միջնորդի մը մէջ՝ յորում մեք կ'ապրիմք: Միխիթարուի՛մք ուրեմն ժողովուրդ, սրբենք մեր արտասուք եւ մեր համայն զօրութեամբն մողթենք, որպէս զի հաճի երկին՝ ի մօտոյ լցունել այն զգալի կորուստն՝ զթաւով այս խեղճ քաղքին, որ մէկ տարուան մէջ գրեթէ որբացաւ կորուստնելով իւր երկու բնաւոր հովիւներն յանձինս Տ. Մինասայ եւ Տ. Յովհաննիսի:

Վերին, Լեւոնադէտ խմտութիւնն ինքն առաջնորդէ զմեզ՝ յընտրութիւն արժանաւորագունից, որք կարող լինին հայրաբար խնամել հովուե՛լ այս թշուառացեալ անտէր ծովովուրդն, որ ահա՛ չուար ու մօլար կայ ու կ'մնայ գերեզմանի՛ն չուրջ...



Գ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ • Յ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

13-14 Յունիս՝ 1884

Բա՛րէ, դարձեալ լուծիւն. դարձեա՛լ սուգ ու արտասուք: Այս ամենը, աւա՛ղ, կ'հաստատեն թէ՛ կորուստ մը կայ, կորուստ մը, դառն, անդարմանելի՛, յուսահատական: Դժնգա՛կ մահ, կրկի՞նք մի ահարկու նախճիրն է այս. քանի՛ անգթութեամբ կ'ընտրես ըս զո՛հեր եւ ի՞նչպէս խնայեցիր ըս մարդասպան սուրը չողացնել այս բնաւոր պարագլխոյն վերայ:

Դեռ հազիւ քառասուն եւ չորս գարուններ կ'ուկեզօժէին նորա վեհ ճակատը, ուր ապագայ մը կ'ընդնշմարուէր փառաւոր եւ մեծաշուք: Կեանքի հեշտալիր վայելքներն այն ինչ նո՛ր պիտի սկսէր՝ ութնամեայ պանդխտութենէ՛ մ'ետեւ, եւ ահա՛ թառամեցան սիրոյ անթառամներն ի ձեռին. կեանքի սրտապարար բոյրերն չ'կրցան նորա քիմքը պարարել: Նա թռա՛ւ, թռա՛ւ արագ՝ զերդ գարնայնի ամպեր: Անցա՛ւ նա, անհետացա՛ւ այնպէս, որպէս կ'անհետի գեղածիժաղն արշալոյս:

Տարենտէի բարերարաց երկնամարին չբնադադոյն աստղի՛կն էր նա. ինքն՝ լի՛ սիրով՝ սէ՛ր կ'բաշխէր ամենուն, սիրտը՝ մաքու՛ր եւ ազնուական՝ հազուադի՛ւտ մանաւանդ իւր նմաններուն մէջ, ազգասիրական զգացմանց վառարա՛ն մ'ըրած էր նա. վառարա՛ն սիրոյ, ուր Աստուած, լո՛յս եւ ազգութիւն

իւրեանց ամենաժսեմ կնիքներովն դրօշմեալ, կնքեալ էին անջինջ,

Իւր խորհուրդք՝ կեդրոնացած էին մասնաւորապէս կրթական հաստատութեանց վերայ. ուսում, վարժարան՝ իւր ամենօրեայ երազներն էին. նորա միակ խօսակցութիւնն կ'ամփոփուէին սա՛ երկուօրեակ քոյրերուն վերայ. եկեղեցի՛ եւ վարժարան. Աստուած եւ լոյս:

Գպրոցատիրաց Միլտիադէ'սն էր այն. ժի նո՛ր Սանատարեան՝ որ սահմանեալ էր Տարենտէի ուսանողութիւնն յառա՛ջ անդր մելլու, յառա՛ջ ի լոյս, յառա՛ջ ի քաղաքակրթութիւն, յառա՛ջ ի կատարելութիւն: Այսպիսի սիրտ մը, այսպիսի վեհ ոգի մը, ո՛վ աղէտ, մահուան զո՛հ լինի անխնայ. Աստուած մեծ, հո՛ս սոսկալի տարակոյս մը կ'պատէ զիս:

Եւ ինչո՞ւ թառամի, ինչո՞ւ խաւարի արշալոյսն՝ այսքան պայծառ յուսոց: Ո՛վ երկնային անհատ կամք. նորա կեանքը չէ՞ր այն պատուական կեանքերէ, որ իւրեանց հետ ամբողջ դարուններ կ'ծաղկեցնեն. նորա հոգի'ն մանաւանդ՝ չէ՞ր այն անմահ ոգիներէն, որոց ցայտած ոսկի ցուրէն ազգն ժպիտ, յոյս, կեանք կ'ծծէ:...

Կրթական յառաջդիմութեան լուսափլուզ պողոտայ մը հարթելու հանդերձեալ չէ՞ր սա. աւաղ, խեղճ ժողովուրդ, զքե՛զ ողբամ, թէ սոյն մեծ դըպրոցատէրն, որ ահա՛ դադաղին մէջ անկենդան տարածուած, լուռ ու մունջ կայ ու կ'մնայ մեր ողորց ու հառաչանաց:

Հիանալիդ ուսումնասէր, յաւերժական կոթողներ կանգնելոյ համար տածած ա՛յնքան վեհ գաղափարներդ ո՞ւր գացին, ի՞նչ եղան. անո՛ւնդ, յիշատա՛-

կըդ՝ չեւ հողոյ յանձնած՝ է՞ր վերջին ժպիտ մը չե՛ս արձակեր. է՞ր վառ սրտիդ կայծերն չես ցաղեցնել ու չե՛ս զուարթացներ սա վշտազգած բազմութիւնը, որ գումարուած դադաղի՛դ շուրջ կ'ուլան ու կ'հեծեն յուսաբեկ:

Հարկւրաւոր աղքատաց բեկեալ սիրտերն ու նւառեալ աչեր քե՛զ կ'խնդրեն, ո՛վ դու, որ կ'ննջես խաղաղիկ ու անհոգ: Ե՛լ, մեծ ոգի, զարթի՛ր անյուշ քունէդ, վերջին անգամ մ'եւս բա՛ռ մը, վա՛նկ մը, չե՛լտ մը գոռացուր, գո՛նէ սփոփուինք անոյշ ծայնի՛կդ լսելով:

Բարերա՛րդ աղքատաց, պաշտելիդ գպրոցատիրաց է՛ր այսքան անզգայ միտք սիրեցեալ ձայնին. ո՛վ պիտի դարմանէ այսուհետեւ մեր խո՛ր վէրքերն. ո՛վ պիտի սրբէ աղքատաց դառն արտասուք. ո՛վ պիտի խրախուսէ ուսումնածարա մանկըտոյն դողդոջ քայլերն:

Ըսէ՛, հոգի՛, այսքան բիւրազան ցաւերն ո՛վ պիտի չուցնէ. աղքատք ու որբք առ ո՛վ պիտի դիմեն յայսմէտէ. թշուառութեան, տգիտութեան եւ ատելութեան խորշակներն ահա՛ կ'փչեն, ու կ'սպառնան մեր ամենէն նուիրական կուռքերն յանդո՛ւնդ, ի վիհ, յոչնչութիւն գահավիժել. ո՛վ պիտի հալածէ զնոսա եւ ո՛վ պիտի տարածէ իւր կարծիքը՝ իբր ասպար ադամանդեայ՝ այս եռեակ անխոնջ ու համայնաջինջ հիդրայներուն դէմ:

Թշուառութիւնը՝ քե՛ւ փոքր ինչ կ'սփոփուէր. տգիտութեան մալին՝ քո առատաձեռնութեան փայլովն տակաւ կ'ամռքէր. ատելութիւնը՝ ա՛խտն՝ այն ժառանգական՝ քո սիրածաւալ շունչով եւեթ կը դադրէր պահ մի իւր աւերումներն շարունակել:

Իսկ դու՝ ա՛լ չե՛ս խօսիր, դու՝ չե՛ս զգար, դու՝ ա՛լ չ'ես զգար: Ի՛նչ աւերներ պիտի սիրեն ուրեմն այս անպարտելի եռապետներն մեր քաղցրիկ Տարենտէի մէջ, Տխո՛ւր երազներ կ'ալաչարեն զմեզ. քստմենի՛ խոհեր կ'ընկճեն զմեզ. եւ մինչ քո սգալի մահն սարսափահա՛ր կ'առնէ համայն սիրականներդ, ո՛վ ոգի, Տարենտէի ապագայն միւսնոյն դժբաղդու-թեան ենթարկուած լինելու գո՛յժն եւս կ'սառեցնէ մեր սիրտերն առ հասարակ:

Զգա՛մք, եղբա՛րք, մեծ է մեր արդի կորուստ: Մոռնա՛նք ուրեմն ամեն ցաւ եւ այն հո՛ւր նուիրա-կան, որ իբր անչէջ խարոյկ բորբոքած էր անմահն Նահապետեանի մէջ, վառե՛նք ՚ի մեզ, եւ դուն գործենք նորա մեծագործութեան շաւղին հետեւելու արիաբար:

Սակայն, քո հայրենակիցք ո՛րքան իսկ միանան եւ միասիրտ, միահոգի ջանք ընեն պակասութիւնդ զգալի չ'առնել ժողովրդեան, քո անուն միշտ կարեւոր բաց մը պիտի յիշեցնէ նո՞ւ. դարձեա՛լ գովասա՛նօք, երախտագիտութեա՛մբ պիտի արտասուեն զքեզ ա-նոնք, ոյք անկեղծ երկրպագուներն են ճշմարտին, անոնք, ոյք սիրահար են ազնիւ գործոց:

Կ'ուրա՛մք ապա զքեզ, վեհա՛նք Նահապետեան, կ'ուրա՛մք վշտաբեկ եւ մեր վշտաց մէջ արտասուալիր աչերնիս ցո՛ւրտ մարմնոյդ վերայ կ'սեւեռեմք ան-մխիթար, Աւա՛ղ, մի վայրկեան առաջ այդ յետին նշխարդ եւս պիտի ծածկուի սա խոր փոսին մէջ, սա անյատակ անդունդին ծոց, սա ահաւո՛ր վհին մէջ, ՚ի գերեզմա՛ն մահու:

Իայց սգազգեա՛ց եղբա՛րք, մեր անհուն սուգին մէջ պահ մը այս հողէն վեր բարձրանա՛նք, մեր ա-


չեր յերկինս բեւեռենք. հո՛ն, այնպէս չէ՞ եղբա՛րք, հո՛ն մի օր պիտի միանա՛նք այն ցանկալի ոգւոյն հետ, զոր այսքան յուսահատօրէն կ'արտասուեմք Բրիտոնէական կրօնի վսեմ հաւատով ոգեւորուած՝ մխիթարութեմք եւ մխիթարենք ողբացելոյն ազնիւ գերդաստան, որ անշուշտ քան զմեզ շատ կարօտ է սփոփանաց. իւր սիրահատոր եւ սիրասուն որդի՛ն մանաւանդ՝ մանկիկն Սամուէլ, որ կ'ուրայ ու կ'որդ-կորայ արտասուահեղձ:

Մաղթե՛մք նաեւ եղբա՛րք, որ իւր ազնիւ զգա-ցումներն տարրանա՛ն մեր մէջ. բազմի՛ իւր վեհ-անձն ոգին մեր վերեւ դերագահ եւ ամեն անգամ, որ անտարբեր տեսնէ զմեզ ժամանակիս նորագոյն պահանջմանց, ամեն անգամ որ տեսնէ զմեզ առե-լուծեալութեամբ ու կուսակցական պայքարներով երկ-փեղկեալ ու ջլատեալ՝ յուզէ մեր սիրտերուն մէջ յառաջդիմութեան կենսական կայծն, բորբոքելով ու վառելով յարաժամ հուրը սիրոյ, եղբայրութեան եւ պարտաճանաչութեան:

Եւ յա՛յնժամ իրօք խորաններ կ'լինին մեր սիր-տեր՝ իւր գերազնիւ գաղափարաց. պաշտած կ'լի-նինք իւր մեծ ոգին, անմահացուցած կ'լինինք զիւր յիշատակ, որ ա՛յնքան սիրելի եւ ա՛յնքան նուր-բական է համոյնիցս միանգամայն:

Երկնային նախախնամութիւն, քե՛զ կ'աղերսեմք թշուառներու ամենախորին եւ սրտեռանդն աղերս-ներով, Պատուէ՛ սոյն շիրիմն աստուածային օրհնու-թեամբդ քո եւ յաւերժական կնիքով դրօշմէ՛ ոսկե-զիծ ամենուս սրտին վրայ եղբայրութեան եւ լու-սոյ սէրն. բարձրացո՛ւր հոն ճշմարիտ պատուոյ եւ անմահութեան գահը, որով միայն պիտի կրնայ ան-

սայթաք ընթանալ այս խեղճ ժողովուրդն, ոյր բաղդըն եղած է միշտ այսպէս համախուռմը լալ ու աշխարհելիւր սիրեւագոյն յոյսերն, իւր մեծագոյն առարկաներն սիրոյ, որոց պարագլուխն ահա՛ կ'յանձնեմք հողոյ՝ անհուն դողդողումով: . . . (1):



Գ.

ՏԻԿԻՆ ԱՆԹԱՌԱՄ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

41 Մայիս 1889

Ութսուն ամեր, սքանչելի՛ առաքինութեամբ նըւիրադործեալ ութսո՛ւն դարո շնորհ կ'ծածկեն զայս դադալ տխրագոյնիկ, ուր արդ կ'հանգչի տիկին Անթառամ, մեծագործ Նահապետեանց մայրիկն բաբեպաշտիկ:

Վա՛հ, տիկին, սգապատ դադ աղիդ շո՛ւրջ պիտի համախմբէիր զմեզ անբարբառ շուրթներովդ և ան-

(1) Տպուած է սա՛ թերձեմանը Էֆեբարի 1884 տարւոյ սեպտ. ամսաթուոյն մէջ:

խօս մահուամբդ լա՛ւ եւս զգացնելոյ համար մեզ աշխարհի ունայնութիւնն. Այսպէ՛ս ուրեմն վերջ պիտի դանկր այն վարդադեղ յոյս, թէ մի օր վեհաղն որդիդ՝ (Փիլիպոս Էֆ. Նահապետեան) վերադառնալով առ քեզ՝ շիջեւափառ արեւդ՝ նոր ի նորոյ պիտի զուարթանայր եւ սպառեալ կեանքդ նորոգ թարմութիւն մը պիտի վերստանայր:

Ա՛հ, չե՛ւ հասած այդ օ՛ր բարեբաւտիկ, չե՛ իրացած այդ երա՛զ խնդամուկիկ, չե՛ւ նշոյլներ արծակած այդ տարփատենչիկ յոյսեր ու բաղձեր, հո՞ս ուրեմն, գերեզմանիդ ե՞զրն տեղի պիտի ունենար վերջին տեսութիւնդ. . . . Բայց այս ի՛նչ անսկնկալ հրաժե՛շտ է, որով թուե՛ց կ'հանես սիրտերն, ի խո՛ր կ'յուզես միտքերն եւ կը սարսուացնես թոռնեւրդդ ու թոռնիկներդ:

Բա՛րէ, սոյն աղիտալի ժամագրութեա՞ն պահեր էիր ուրեմն յեղակարծումն փարատելու բոլոր մեր երազներ: Եւ մինչ դառն պատրանաց մէջ թողնով՝ կ'մեկնի՛ս ի մէնջ, գիտե՞ս արդեօք, ո՛վ տիկին, թէ ի՞նչ մտահոգութիւնք կ'պաշարեն զմեզ՝ ի մի վայրկենի, յանկարծ քօղաղերծ առնելով մեր առջև չաւառ՛ւք ապագայն:

Ա՛հ, ո՛րքան մեծ է այն պարապ, զոր մահուամբդ կ'բանաս ո՛չ միայն տանդ մէջ, ոյր օրհնութիւնն էիր, այլ և սիրեցեալ Տարենտէի մէջ, ոյր չըւառաց դրեթէ մի երկրորդ նախախնամութիւն եղած էիր: Ա՛հ, մայրիկ, որբերն ու որբուհիք ինչե՛ր կ'սպասէին այդ դողդոջ, այդ առաքինացեալ բազուկներէն, ոյց հրաշքներն ա՛յնքան տեսեր ու վայելեր էին. այդ ասիկար ձեռներէ, որք այժմ խոնջ եւ պարտասեալ՝ ընդ միշտ ընդ ար-

մացած են մահու աղետարչ զօրութեան ներքեւ :

Ա'հ, միտք՝ ի խոյ, եւ սիրտ՝ ի հոգ այժմէն՝
բացօրոչ կ'տեսնեմք զայն պարապ, զոր կ'թողուս
սգալի մահուամբդ. պարապ կ'ըսեմ, եւ առանց մը-
տածման չէ՛ որ կ'չեչտեմ զայս բառ, զի, աւա՛ղ,
կ'ապրիմք ժամանակ մը, ուր չա՛տ պէտք ունիմք
քեզ պէս մեծարոյ տիկնանց. զի զարդիս յոյժ հազ-
ուադէպ են այն անձինք. որք ունենան իւրեանց նը-
մանեաց բարեբարեւոյ հզօր տենչն եւ աղնի՛ւ փա-
ռասիրութիւն : Եւ միթէ պէ՛տք է մահդ առաւել
զգալի առնելոյ համար կրկնե՛լ թէ՛ օր քան զօր
կ'անհետանայ ի մեզ սերունդն այն հոյակապ անձ-
նաւորութեանց, ոյց պանծալի մի ներկայացուցիչն
էիր դու, անոնց՝ ոյք հաճո՛յք կ'համարէին այլոց օգ-
տին նուիրութիւլ բոլորանուէր :

Եւ դու, մայրիկդ Նահապետեանց, լինելով տա-
նըդ համար ինչ որ կրնայ լինիլ մի գթօտ մայրիկ,
օգի՛ ի բռին ջանացիր սղջոյն կենացդ մէջ լինիլ մի-
անգամայն օգնական՝ չուառաց, նեցուկ՝ տառապե-
լոց, մթիթար՝ որբացելոց, մայր՝ հաստրակաց : Քո
վերջին տարիներն մոնաւանդ չ'համարեցիր բաւ
քաղցրացնել բարեգործութեամբ. այլ եւ նպատակ
ունեցար յետ մահո՛ւդ եւս ապրիլ ի սի՛րտ հայրե-
նակցացդ՝ օժտելով վարժարանն մի կարեւոր կտա-
կով. կտա՛կ, զոր զառաջինն դու՛ կ'հիմնես՝ յօրինակ
ապագայ հայ տիկնանց :

Այդ կտա՛կ՝ պերճախօ՛ս քան բարձրագոյն շէփո-
րայք՝ ազդուապէ՛ս կ'լոօսի մեզ այն բարձր զգաց-
մանց վերայ, զոր սնուցիր առ կենդանեաւ. այն
քրիստոնէական բարեպաշտութեան վրայ, որով կը
զինուէիր կեանքի ամեն պատահարաց դէմ. այն ան-

բի՛ծ սիրոյ վերայ, որով կ'ներշնչուէիր ամեն առեւ
եւ յամենայնի իսկ :

Այդ կտա՛կ՝ անմահ քարո՛ղ բազմադիւն կենա-
ցըդ, վրեմ մատեա՛ն՝ գործնական առաքելութեան-
ցըդ, փառաւորապէ՛ս կ'փակէ շրջանն քո սիրագոր-
ծութեանց, եւ կ'սթափիմք հիսխառն եւ կ'սկսիմք
լուսնեկ թէ՛ է՛ր այնքան հաստատամտութեամբ ա-
ռաթուր կ'առնէիր փափկութիւն եւ հաճոյք, զորս
լիաջութիւն վայելելոյ ամեն գիւրութիւն շնորհեր
էին քեզ երկինք : Այժմ իսկ կ'հասկնամք թէ՛ ընդէ՛ր
առ սշինչ կ'դրէիր սին ցոյցերն ու կեղծ փայլ :

Դու քան զբնաւս լա՛ւ կ'կռէիր անցաւորութիւնն
այս երկրաւոր բարեաց, որք մի օր պիտի վերջանա-
լին նիւթին հետ, եւ՝ իմաստո՛ւն տնտեսուհի՛ օգուտ
քաղեցիր բազդին ամեն ժպտումէն, բարեգործու-
թեանց մէջ որոնեցիր ճշմարիտ փառքն ու տեւական
հաճոյք. եւ զերկին ժառանգելոյ, անմահութեա՛ն
տիրանալոյ գերագոյն մտածումն եւեթ կրցաւ ընուլ
քո ժամեր, քո սիրտն եւ համայն զգայութիւն :

Եւ իրօք, եղբա՛րք, տիկին Նահապետեան առանց
ի բնէ օժտեալ լինելոյ բարձր դաստիարակութեամբ,
ամենէն անուանի հայ տիկնանց տիպար հանդիսա-
նալոյ չափ գործեր կ'թողու իւր ետեւ. եւ թէպէտ
անուս, թէպէտ անտեղեակ դարուս գաղափարային
մեծ յեղաշրջմանց, ոգւով չափ սակայն ջատագով,
համակիր էր ազգ, մանկուոյն դաստիարակութեան
կենսական խնդրոյն, ոյր ի նշան կ'թողու ազգին
զիւր կտակ նշանաւոր :

Եւ յետ այնքան տաժանաց՝ մինչ կ'յիշեմք զիւր
բարիքներն անմոռաց, որով լցոյց անխտիր ամեն
թշուառներ, հառա՛չ մը կ'ուռեցնէ մեր լանջ. ար-


տօսր մը կ'զտրի մեր աչերէն , ոչ անոր համար զի 'ի հող կ'դնեմք զինքը , ոչ , զի ամենուս ալ վերջին ժամադրատեղին պիտի լինի այս անյուշ փոսն , այլ անոր համար զի չ'գիտեմք թէ՛ 'ի մօտոյ պիտի յառնե՞ն արժանաւոր մայրեր , որք ողբացեալ տիկնոջ ջերմեռանդն ոգւոյն հետ՝ ունենան նաեւ բարերարեւոյ մեծութիւնն : Եւ կ'տխրի՛մք , զի ժամանակիս ձախողուածքն տխուր խոհե՛ր կուտան մեզ երկնեւ և ո՛չ նաեւ վարդապոյն երազներ :

Սակայն 'ի բա՛ց անյոյս մտածմունք : Քո կեանքը , ո՛ր տիկին , քո բեղո՛ւն կեանքը նման դարնանային կենսապարգեւ ցօղոյն՝ գէթ ազդեցութիւն մը , գէթ հետք մը պիտի ձգէ՝ տիկնա՛նց հետ նաեւ հայ արանց սիրտերուն խորը : Եւ պիտի ուննի՛մք վերջապէս խօսելոյ մենամոլութեան հետ՝ դործելոյ բարեմասնութիւնն ևս փայլեցնել :

Եւ անշուշտ , վաղ թէ անագան , պիտի իրանայ այս յոյս . զի մինչ կ'մեկնիս 'ի մէնջ , մայրի՛կ , բարեբաղդաբար առ մեզ կ'թողուս երկօքին հարազատներ՝ Փիլիպպոս եւ Սարգիս՝ որք անշուշտ ստացա՛ծ , ժառանգա՛ծ պէտք է լինին ի քէն այն հուրն նուիրական , որով վառեալ էիր դու ողջո՛յն կեանքիդ մէջ :

Է՛հ , անողորմ պարկայք անգթաբար խզեցի՛ն կեանքիդ թելն՝ առանց գէթ եռամսեայ ժամանակամիջոց մը տալոյ քեզ , որ վերջին անգամ մ'եւս գըրկէիր , սեղմէի՛ր սրտիդ վերայ քո սիրական Փիլիպպոսը : Քո յետին , քո սրտագին կարօտոյ փափաքն էր , քո միակ սրտաթուռդ անուրջն էր այս , զոր սակայն չ'կրցար իրագործել և կ'մտնես ի հող լռին և ցրտին , հառաչքդ , աչերդ՝ առ որդիդ և հոգիդ՝ առ Աստուած սեւեռած :

Գնա՛ ապա , ո՛վ մեծագործ տիկին , գնա՛ ճնաշխարհիկ և սրբառուն ոգի , գնա՛ հանգչիլ 'ի գի՛րկս սիրեցեալ Յարութիւնիդ՝ ում ա՛յնքան տարփանօք տենչացիր հասնիլ եւ որ այժմ անշուշտ քե՛զ կ'սպասէ դրկաբաց 'ի ծո՛ց յաւիտենականութեան . . . :



Ե.

ՊՕՂՈՍ Տ. ՎԱՐԳԱՆԵԱՆ

15 փետր. 1890

Վա՛հ, դարձեալ գերեզմանն կ'ներկայանայ մեզ. դարձեալ արտասուք կ'ողողեն զմեզ. դարձեալ հառաջը հեղձամղձուկ կ'առնեն զմեզ: Այդ անձուկ փոսն ուրեմն պիտի կլանէ անզուգական անձնաւորութիւն մը. ոգի՛ն այն հիւսկեցիկ և հրեշտակալին. սկեան մի ազնիւ գերդաստանի. սիրեցեալ Տ. Վարդանեա՛նն:...

Ա. փոսո՛ւ, Տ. Վարդանեան մեռեա՛լ... ի՛նչ ահագին կորուստ: Յիշեցէ՛ք ուրեմն, տեա՛րք, յիշեցէ՛ք թէ՛ հանգուցեալն չէր ի նոցանէ որք կ'ծնին անշուք ու կ'մեռնին անշուք, կ'ուզան անձայն ու կ'մեկնին անշուն. ի նոցանէ՛ որք կ'ապրին՝ մի՛միայն աշխարհ եկած լինելուն համար: Ո՛չ, նա բոլորովին նոր մարդ մ'էր: Յիշատակ թողու՛ւ, անմահ մնալ՝ ա՛յս էր նորա մեծագոյն տենչն:

Նա հոգի մ'էր բոլորանուէ՛ր անոնց՝ ոյք կ'դիմէին իրեն վշտի՛ մը, աղիտի՛ մը դարման խնդրելու: Եզակա՛ն ոգի, որ իւր ցաւերն, իւր անձնական զբաղմունքն մոռացած՝ կ'դիմէր, կ'փութայր յօգնութիւն անոնց՝ ոյք արտօսը մ'ունէին սրբելու. անոնց՝ ոյք կորուստ մ'ունէին աշխարհելու: Մէկուն կ'ժպտէր. միւսին կ'արգահատէր. ամենո՛ւն կ'ողորմէր: Հոս՝ կ'ուրայր՝ վշտակի՛ց ցաւերուդ. հո՛ն՝ կ'խայտայր՝

մասնակից՝ ուրախութեանդ. ամենուրեք կ'գործէր՝ անխո՛նջ եւ փոյթեալանդն. եւ յաջողութիւնն էր, որ կ'առաջնորդէր նմա յամենայնի:

Հանգուցեալն իւր այնքան ժողովրդային բարեսէր ոգւովն՝ ունէ՛ր միանգամայն անհո՛ւն դպրոցասիրութիւն մը: Վերջին տարիներս՝ վարժարանաց նկատմամբ ունեցած իւր անսահման խանդն ի հանդէս բերելոյ համար միայն անդամակցած էր տեղւոյս Թաղ. ժողովոյն, ոյր եթէ՛ ո՛չ ամենէն ազդեցիկ՝ գէթ կրնա՛յ ըսուիլ թէ՛ ամենէն անկեղծ, գործօն ու անձնուէր մի գործիչն եղած էր: Անսահման էր նորա կորովն ու եռանդ՝ երբ խնդրոյ նիւթ էր ուսում եւ վարժարանաց բարեկազմութիւնն: Իւր կրթասիրութիւնն՝ չունէր սահման եւ իրօք անգընահատելի՛ էին նորա դպրոցասիրական քրտուներն:

Եւ ի՞նչ այնքան հզօրապէս կրնար ցնցել նորա սիրտն քան երբ արտասանուէր—վարժարա՛ն—: յիշեցէ՛ք առ այս այն անսահման զոհողութիւններն մանաւանդ, զորս ըրած էր նա իւր անդրանկին՝ Յովհաննէսի համար: Նիւթական ամեն ճիգ, հնարաւոր ամեն կարողութիւն ի կիր արկած էր զիւր սիրական Յովհաննէսն բարձրացնելոյ համար ի գաղաթ գրականութեան՝ յորում յաջողեցա՛ւ իսկ:

Եւ սակայն է՛ր չ'ապրեցաւ սիրահանձարն Յովհաննէս, մեծագոյն պարծանքն Տարենտէի հայ երիտասարդութեան, Ատանայի, Բերիոյ դատարաններն իւր օրէնսգիտական զարմանալի հմտութեամբն յապուշ կրթելէ ետք՝ է՛ր Սեբաստիոյ մէջ՝ եւս չ'վարեց այն բարձր պաշտօն՝ ում հանդերձեալ էր կոչուել:

Ինչո՞ւ համար այս տաղանդաւոր զաւկին փառաց

իշուտ պողոտային մէջ ստացած յաջողութիւններովն չհրճուէ՛ր, չհպարտանայր այս հէք ծերունին. է՞ր այս գերազանցապէս կրթասէր հայրն չհանգստանայր այնքան քրտինք, այնքան ճգունք թափելէն ետք՝ ի տես յաղթական դափնեաց իւր սիրասնո՛ւնդ Յովհաննիսին. ինչո՞ւ չ'զեղոյր ի խինդ, ի գորով և ի հիացումն դառնացեալ սիրտն այս պատուական ծերունւոյն՝ յանձին այս աշխատասէր զաւկին տեսնելով իրացումն այնքան սրտեռանդն երազոց. ինչո՞ւ. . . . Եւ սակայն այնքան յանախակալ, այնքան արագ կ'գործէ մահն, որ և ո՛չ իսկ այս ինչո՞ւներն հարցնելու միջոց կ'ունենայ հէք մահացուն:

Եւ ահա՛, այն ինչ կ'ողբայինք տակաւին զդառնաղէտ մահ այդ չքնա՛լ երիտասարդին, այն ինչ արտասուօք կ'ողողէինք նորա դեռափթիթ կենաց քսան և հինգ գարուններն՝ զքե՛զ ևս, անմա՛հ ծերունի, ցուրտ դամբանին յանձնե՛լոյ Խոսեօր հարկին մէջ՝ ահաբեկ և սարսափահար կ'մնամք:

Եւ կ'արտասուե՛մք եւ կ'հառաչե՛մք ցաւագին եւ մեր անհուն թախծութեանք մէջ աշերնիս յերկի՛նս կ'սեւեռեմք, ուր անմահութի՛ւն երանութի՛ւն գլուխելոյ վսեմ հաւատն կ'սփոփէ ու կ'ամրոքէ մեր թախծութիւն, եւ ո՛ւր կ'երթաս արժանաւոր վարձն առնուլ այնքան աղնիւ գործոցդ: Անմահութի՛ւն, երանութի՛ւն քեզ, Տ. Վարդանեան:



2.

ՅՈՎՀԱՆ ԶԷՊԻՇԵԱՆ

Ահա՛ բազմարդիւն ծերունի՛ մ'եւս, բազմաշխատ, բազմավաստա՛կ կեանք մ'եւս կուգա՛նք յանձնել ի ծոց պաղ շիրմին. ի զո՛ւր այնքան արտասուք. ի զո՛ւր այնքան աղերսք: Մահ՝ մի հեգնական կատակով եւեթ սառեցոյց ամեն յոյս ի սրտի. և ցամքեցա՛ն ժպիտք՝ ի դէմս. և խինդն՝ ի հոգւոյ:

Կարկամեա՛լ են լեզուք. նուաղեա՛լ են աչկունք. և մթաղնեա՛լ ճակատներ, ամէն աչքէ՛ արտասուք. ամեն լանջէ՛ հառաչ. ամեն բերնէ՛ լալագի՛ն տըրտունջք. եւ ո՛չ ոք կ'համարձակի՛ տակաւին բարձրածայն հնչել զանուն ողբացեալ ծերունւոյն:

Յովհան Զէպիշեա՛ն. ահա՛ առարկայն այնքան հեծեծանաց. վա՛խ, սիրեցեա՛լ ոգի, դեռ երէ՛կ կը խօսէիր այնքան եռանդեամբ այն բարեգործական աղնիւ ծրագրոյդ վերայ, զոր հազի՛ւ իմն ժամանակ ունեցար ի գիր առնելոյ. դեռ երէ՛կ կ'սլատմէիր մեզ այն վեհ կեանքն, որ անընդհատ շարք մ'եղած էր գթութեանց: Տակաւին երկու ժամ առաջ՝ կը գծէիր մեզ այն ուղին՝ ընդ որ ընթացած էիր իբր վաթսուն ամեր: Յերջանկացուցէ՛ք, կ'ըսէիր, որչափ կրնաք այն չուառներն, ոյք դժբաղդ են. մխիթարեցէ՛ք զնոսա, ոյք սուգի մէջ կ'ապրին. կարեկցութեամբ վարուեցէ՛ք մանաւանդ անոնց հետ՝ ոյք մահու մէջ միայն կ'խնդրեն իւրեանց կորուսածն:

Ահա՛ այն կտա՛կն , զոր տուրի մեզ՝ քո վշտամեռ սիրելեացդ , քո սիրասուն բարեկամացդ , ոյց վրայ հօ՛ր մը չափ գուլթ , մօ՛ր մը չափ գորով ունէիր : Եւ այժմ ո՞վ ՚ի մէնջ , եղբա՛րք , կարէ՛ առանց արտասուաց յիշել զիւր անուն , ո՞ր սիրտ մանաւանդ չ՛զգածուիր ու չ՛սգար ի յուշ նորա անհո՛ւն քաղցրութեան եւ քրիստոնէական հեղաշամոյ՛ր ոգւոյն :

Բայց թողո՛ւնք հանգուցելոյն ջերմ կրօնասիրութիւն , որ իւր անհատական կեանքը կ'կալմեն . խօսի՛նք նորա հանրային կենաց վերայ : Չէպիշեան՝ ի բնէ աղքատ ընտանեաց զաւակ՝ իւր աննկո՛ւն հաստատամտութեան եւ անդեղե՛ւ , յարատեւ աշխատանաց չնորհիւ հետզհետէ բարձրանալով հասած էր յայն աստիճան , ուր վառք եւ պատիւ՝ պաշտօններո՛ւ կ'կոչէն զմարդ : Աղքատ , անշուք վիճակէ բարձրացած լինելով ՚ի վերին աստիճան ընկերականութեան՝ լա՛ւ կ'ըմբռնէր կարօտութեան , թշուառութեան լեզուն :

Տարեւտէի ամենէն փայլուն ժամանակներն ազգային պաշտօններու կոչուելով՝ միշտ հետամուտ եղած է ազգային կալուածներ պատրաստել եւ զանոնք արդիւնաւորապէս շահագործել՝ յօգուտ ազգային վարժարանաց : Վարած է քանիցս երեսփոխանական պաշտօն եւ միշտ այնքան փայլուն հասոյթներ տուած է , միամեայ շրջանի մը մէջ , ո՛րքան իւր նախորդք չեն ցուցած եռամեայ ժամանակամիջոցի մէջ :

Սա եղած է ճարտարագոյն պաշտօնեայն , որ քան զամեն իւր նախորդներ գիացած է հասութից նոր աղբիւրներ ստեղծել եւ միթէ իւր այսքան հզօր ջանից չափ՝ արիր Տարեւտէի հայ հասարակութիւնն

զայն պատկառելի գումար , որ ահա 30 ամերէ հետէ ազգ . վարժարաններն կ'պահպանէ իւր տարեկան հասոյթներովն . գումար , արդարեւ պատկառելի , զոր հանգուցեալ Նահապետ աղայ Նահապետեան՝ մեծագոյն բարերարն Տարեւտէի՝ իւր ներհո՛ւն , իւր պայծառ հեռատեսութեամբն զիտցած էր յառաջ բերել Չէպիշեանի պէս , խղճամիտ , գործօն եւ անխոնջ գործիչներու ձեռամբն ի նախատեսութիւն ապագային :

Չէպիշեան՝ յընթացս իւր ազգային պաշտօնավարութեանց՝ լաւագոյն ներկայացուցիչն եղած է Նահապետ աղայի մեծանձն ոգւոյն , վսե՛մ դաղափարացն եւ զնհատուած է ՚ի նմանէ ամեն առթիւ՝ հանդիսապէս թէ առանձնապէս արժանանալով նորա ախորին գոհունակութեան եւ սրտագլխէ համակրանաց : Իւր կեանքն ազգին էր . իւր ժամեր , իւր մտածութիւններ առ այն կ'թռչէին յարաժամ : Իւր համայն հոգածութիւնք՝ նուիրուած էին կըրթական գործոց ազգ . վարժարանաց :

Եւ այսքան բեղմնաւոր կեանք մը կ'չիջանի՛ այսօր . այնքան օգտաշատ գործոց ծնունդ տուող այս մեծ ոգին կ'խլուի՛ ՚ի մէնջ ՚ի մի ժամու , մի այնպիսի ժամանակ՝ երբ ո՛չ ոք կ'սպասէր այդ անակնկալ մեկնման : Եւ դպրոցասիրաց եւ կրթասիրաց աղքատի՛կ ընտանիքն՝ ե՛ւս քան զե՛ս կ'աղքատանայ Չէպիշեանի մահուամբն :


Եւ լալ , եւ արտասուել եւ աշխարհել մի այսպիսի մարդ՝ ամենէն անհրաժեշտ հարկն է , զոր կ'պարտիմք վճարել առ այն : Լա՛մք ուրեմն այն ոգի , ոյր մեկնումն այնքան զգալի է յայս նոյն իսկ յետին դպրոցականին , որ սովոր էր ամեն օր վայելել սի-

րալիր, հոգսալիր, խանդալիր այցելութիւնն այդ անհունապէս ուսումնասէր ոգւոյն. հո'ս ժպիտ մը, հո'ն քաջալեր մը եւ շատ անգամ պարգեւներ ըստանալոյ համար 'ի նմանէ:

Սակայն ամեն ինչ աստ չ'վերջանար: Նուիրակա'ն պարտաւորութիւն մը, խղճի սեպուհ պարտք մը ունիմք կատարելոյ աստ, եղբա'րք: Նորա բազմաբեղուն կեանքն՝ պարտի գրգի'ռ մը լինիլ ամեն հայ ծնողաց, որք անգէ'տ իւրեանց կոչման՝ անփո'յթ կ'երևին իւրեանց զաւակաց դաստիարակութեան:

Հայ ծնողնե'ր, եթէ իրօք կ'յարգեմք հանգուցելոյն յիշատակն, եթէ իրօք սիրո'ղ եմք նորա գերընտիր բարեմասնութեանց, եկէ'ք, ծո'ւնր դնեմք իւր տխրապատ դագաղին առջեւ և ուխտե'մք միահաղոյն՝ արգասաւորելոյ արտաքոյ գերեզմանին՝ այն գաղափարներ, որում բոլորանուէր տուած էր զիւր սիրտն ու հոգի՝ անմա'հն Ձէպիչեան:

Ե'րթ ապա, անմահ ոգի, գնա' միանալ Աստուծոյդ ի բնագաւառն անմահից՝ վարձն առնուլ այնքան քրտանցդ եւ վաստակոց, մինչ մեք աստ կ'ուլամք ու կ'ողբամք անմխիթար՝ 'ի զո'ւր խնդրելով մեր դառն վշտաց դիւր եւ սփոփ, զոր ափսոս, ահա' քեզ հետ մէկտեղ կ'տանիս թաղել 'ի փոս անլո'յս գերեզմանի:...



Է.

ՍԵՐՈՐԷ ԿԻԼՊԵՆՆԵԱՆ

(1885)

Ուսանո'ղք,

Ահա' մի նշանաւոր դէմք ևս կ'ընկնի, մի'ն այն մե'ծ դէմքերէն, զորս կարծես բարեգործութեանց համար կ'ստեղծէ Աստուած: Այս մեծ դէմքն է Սերոբէ՝ Կիւլպէնկեան:

Այս քաղցր անուն ի'նչ խորին վէրքեր կ'բանայ մեր սիրտերուն մէջ. այս ազգասէրն, խորհրդածութեանց ի'նչ ընդարձակ դաշտ մը կ'պարզէ մեր առջեւ:

Իւր կեանքն՝ այնքան բազմաբեղուն, այնքան արդիւնաշատ, պէ'տք է երախտագիտութեան ջերմ արտասուքներ հոսեցնէ մեր աչերէն: Սերոբէ Կիւլպէնկեան... կա'նք առնուլ պարտիմք, խորհիլ, զգածուիլ, հառաչե'լ պարտիմք 'ի լո'ւր այս տօնե'լի՝ անուան:

Եւ ո'վ է այն հայն, որ չ'ճանչէ մեծութիւնն այս ազնիւ բարերարին: Ազգային կենաց մէջ ո'վ այնքան յիշատակներ թողած է քան այս անզուգական անձնաւորութիւնն:

Կրթասիրաց եռանդուն պարագլուխն էր նա. գրագիտաց, վարժապետաց՝ պաշտպա'նն առատասիրտ: Ս. Փրկչեան ուսանողութիւնն յանձին նորա

կ'ողջունէր զանմահն Պէղճեան. հայ հասարակութիւնն 'ի նմա կ'տեսնէր մին այն բարերարներէ, որոց առատաձեռնութեամբն պիտի իրանայր մի օր Ազգ. Հիւանդանոցի վերաշինութեան պանծալի դաշտարն:

Սերովբէ կիւլպէնկեա՛ն, լուսավառ ջահն այս մեծ գերդաստանին, մի՛ն էր այն քրիստոնէական գերընտիր բարեմասնութեամբ նպաստաւորեալ անձնաւորութեանց, որք 'ի Յոյնս կ'կոչուին Զարիֆի, 'ի Հրեայս կ'կոչուին Հիրշ. մի՛ն 'ի նոցանէ՝ ոյց հաւասարապէս երախտագէտ լինելն իրեն չ'համարիր նըւաստութիւն Փրանսա՛ թէ Անգլիա, ոյց փառապըսակներ կ'ձօնէ Եւրոպա թէ Ամերիկա:

Ի բնէ ազնուական եւ բարեսիրտ՝ մասնաւոր հոգածութիւն մը ցուցած է՝ միշտ այն ամեն խնդրոց համար, որք ուղղապէս ազգ. յառաջդիմութիւնն կը շօշափէին: Ի մանկութենէ՛ իսկ ուղղախոհ և եռանդուն՝ իւր միտն ու հոգի կ'ձգէին յար յայն վսեմական գաղափարներ, որք նմա կ'ուտային իսկատիպ դրօշմն մի բացառիկ վեհութեան:

Ամենէ՛ն կնճռոտ ու բազմածախ գործո՛ց մէջ իսկ մերթ կ'ստանայր եւ 'ի տես կ'բերէր այն կորովի, անխոնջ ու հրաբոց հաստատամտութիւնն ու ճարտարամտութիւն՝ ընդ որ կ'հիանայր ամենէն գործնական մա՛րդն իսկ:

Մեծահոգի, ուղղասէր, հաւատալից և տարօրէն անշահասէր այս քաջալանջ մարտիկն՝ հայ ընկերակալութեան՝ այսօր կ'խլուէ 'ի մէնջ յանակնկալ՝ բաղդին մի շնական քմահաճոյքով: Ո՛րքան հառաչք, ո՛րքան աղի արտասուք կ'ողողեն զիւր դադաղ: Մե՛ք իսկ՝ ի հեռուստ լսելով զիւր մահ՝ ի՛նչ խորին թախ-

ծութեամբ կ'համակուիմք: Սգա՛մք, ուսանո՛ղք, հեծե՛մք զի մեր կոծոյն և արտասուաց կարի՛ իսկ արժանի հանդիսացած է այս մեծ ոգին՝ իւր բոցեռանդն ազգասիրութեամբ:

Հարիւրաւոր որբերն ու որբուհիք, թշուառներն ու թշուառուհիք Ս. Փրկչեան Հիւանդանոցի՛ վշտաբեկ եւ յուսակտուր՝ հանդէպ այս անդարմանելի կորստեան՝ կ'շուարին թէ՛ զո՞վ պէտք է լան յանձին նորա. բարերարո՞ն այն վեհսիրտ, թէ պաշտպա՞նն այն անզուգական. կ'անգիտանան թէ առաւել նորա կրթասիրութիւնն պարտին աշխարհէ թէ խանդալիւր աղքատասիրութիւնն:

Ողբացէ՛ք, հէ՛ք որբեր. լացէ՛ք մատաղ որբուհիք. օրհնութեան, երախտագիտութեան ցօղերով ծածկեցէք սուրբ դադաղն այդ մեծ հօր, ոյր գորովն, ոյր խանդաղատանքն այնքան ազնուութեամբ կը ձգուէր ի Զեղ՝ որպէս մի կենդանի նախախնամութիւն:

Եւ սակայն դուք չէ՛ք միայն, որ կ'արտասուէ՛ք զայն, ա՛զգն ողջոյն կ'ձայնակցի Զեղ և արտասուօք կ'մեծարէ, կ'նուիրագործէ յիշատակն այդ անմահ բարերարին:

Ի զո՛ւր դնահատած չէր մեր բարեխնամ վեհապետն Սուլթան Համիտ նորա բազմատեսակ ձիրքերն, ի զո՛ւր չէր պատուած զայն Օսմանիէի և Մէճիտիյէի կրկին պատուանշաններով, ո՛չ երբէք: Սակաւո՛ւց տրուած է այսչափ հզօր համակրանք վայելել, համակրա՛նք վեհապետական, որք անստգիւտ արժանեաց եւեթ վերապահուած են:

Եւ զայդ արժանիք պայծառապէս կ'փայլեցնէր յինքեան՝ ողբացեալն կիւլպէնկեան, պսա՛կն իւր

գերդաստանին, փառքն՝ առեւտրական աշխարհին, մոտափախարն՝ այնքան յուսոց և ակնկալութեանց: Եւ չ'արտասուե՞լ մի այսքան հոյակապ Անձնաւորութիւն: Քա՛ւ ի մէնջ այսպիսի անտարբերութիւն, այսպիսի սառնութիւն:

Արտասուենք ուրեմն, աղնիւ ուսանողք, արժանապէս հատուցանեմք մեր նուիրական պարտիքն առ այն մեծ Ազգասէրն, որ ամեն ժամանակ եւ ամեն տեղ չ'է դադրած արտասուքն սրբելոյ չուառաց, նոթւոյն՝ տալով հաց, վհատելոյն՝ սիրտ և ամենո՛ւն՝ խանդ և քաջալեր:

Եւ ո՞վ կրնայ մոռանալ հանգուցելոյն այնքան դիւցազնական ճիգերն, զորս թափեց նա սովելոց տազնապաղին աւուրց մէջ: Իւր այս ճգունք՝ բա՛ւ չէն զինքն դասելոյ ի շարս այն մեծ մարդասիրաց, ոյք բարերարելոյ մէջ չ'են ճանչեր ոչ ազգ, ոչ կրօն. այն մարդասիրաց, ոյց անուեն անմահացուցած է պատմութիւնն:

Մտղթենք, ուսանողք, ջերմագիտն մաղթենք, որ վերին նախախնամութիւնն ինքն գթալով մեր վրայ՝ ներչնչէ՛ մի՛ և նոյն խանդն և եռանդն՝ հանգուցելոյն ազնիւ զաւակաց, որպէս զի բարեյօժար ոգւով և նոյն փութաջանութեամբ շարունակեն այն վսեմ գործոց մէջ, որք անմահացուցին զանգուգականն Սերորէ կիւլպէնկեան:

Անմահութիւն կ'սպասէ քեզ, անմահ ոգի. դնա՛, վայելէ՛ զայն. քո այնքան բարեգործութեանց միակ և արժանաւոր վա՛րձն է դա:

4 Գեկ. 1891 Մեկիսիմէ

Ը

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՆԱՆԱՅ ՊԵՆԵՅՅԵԱՆ

Դարձեալ գերեզման...

Ա՛հ, այս սգալի վայրն ի՛նչ տխուր յիշատակներ կ'զարթուցանէ մեր մտաց մէջ: Հո՛ս՝ այս փոսին մէջ են թաղուած այնքան սրբազան խորհուրդներ, այստեղ շիջած, այստեղ դադար առած են այնքան վսեմական երազներ ու այնքան հսկայական ծրագիրներ:

Եւ այսպէս, միշտ լռին, յուսաբեկ, ակընկո՛ր մնացած եմք ամեն անգամ, որ մղուելով դժխեմ բաղդէն՝ հո՛ս ուղղուած են մեր քայլերն, հո՛ս՝ սա մշտալուռ յուշավայրն, ուր կ'ննջեն ի քուն յաւիտենական՝ մեր կաթոգի ծնողքն, մեր սիրասնունդ քորք ու եղբարք, մեր հոգեհարազատ բարեկամներն ու ազգականներ:

Եւ այժմ իսկ ի՛նչ կ'տեսնեմ:

Վա՛հ, դուք որ խռնած էք սա տխրատառ դագաղին շուրջ՝ թախծագէ՛մ ու դալկատիպ՝ Տ. Յարութիւն Ս. Հայրն ի հո՛ղ յանձնելու... ո՞վ աղիտիցս:

Եւ սակայն հնա՞ր է, եղբա՛րք, հնա՞ր է. զի այնքան գերանձառ խորհրդոց ծնունդ տուող այս մեծ ոգին այսպէս յեղակարծումն թողու զմեզ: Ո՞վ կըրնայ հաւատալ, ո՞վ ի Ձէնջ կրնայ համոզուիլ թէ այսպէս յանակնկալ պիտի մեկնէր Ա՛յն՝ ոյր անդուլ

հոգածութիւնք կեդրոնացած էին իւր հօտին բարօրութեան վրայ: Ա՛յն կ'ըսեմ, Ա՛յն մեծ հովիւն կրօնի, որ կ'ընթեր հանապազ, հոս՝ վիշտեր սփռուելու, հոն՝ վերքեր պատելու, այլուր՝ արտասուք սրբելու եւ ամեն ուրեք խաղաղութիւն ծաւալելու համար:

Երանեալ ոգի, այսպէ՞ս ուրեմն յանկարծ պիտի թօթափէիր լուծն երկրաւոր բեռանց՝ միանալու համար Փրկչիդ՝ որում ա՛յնքան սերտիւ փարեալ էիր յաշխարհի:

Եւ սակայն, ո՞վ հայրիկդ աղքատաց, ա՛յնքան եռանդեամբ, ա՛յնքան խանդով, ա՛յնքան կարեւոր դոհողութեամբ ի գլուխ հանած սա հոյաշէն կաթողիկէն՝ կանգնեալ յանուն Ս. Երրորդութեան՝ ո՞վ յայտ հետէ պիտի գոռացնէ իւր հաւատալից բարբառով: Եւ պիտի ուսուցանէ մեզ այսուհետեւ այս վսեմ բեմերու վրայէն՝ սիրել զԱստուած, սիրել զեղբայր, սիրել զբովանդակ մարդկութիւն:

Վա՛խ պաշտեցեալ հոգի՛, մահուամբդ ՚ի խոր սուգ կ'համակես հանուր Մեկիտինէի հայ ժողովուրդըն՝ մի ժամանակ՝ ուր փառապանծ ահեղ դէմքդ դըն՝ մի ժամանակ՝ ուր փառապանծ ահեղ դէմքդ ասու հասակդ, ազդեցիկ ու համոզիկ ձայնդ աստուածախօս, մեծ թումբ մը, անանցանելի պատուար մը կանգնած էին ընդդէմ երկու կուսակցութեանց:

Դո՛ւ էիր, դո՛ւ եւեթ այն միակ զօդն միութեան, որ հաւասարապէս կ'ողբերէին համայն ժողովուրդն: Որպէս մի նոր Աւոնդ, կ'խօսէիր այն լեզուաւ՝ որում անգոր էր դիմակալել բանսարկուն: Դո՛ւ՝ այն հաստակուռ լաւտն էիր հաւատոյ, ընդ որ կուգա-յին ստէպ բաղխիլ հակառակութեան ալիներն զայ-

րացեալ եւ ի վերջոյ՝ յետս ընդ կրունկն կ'դառնային խուլ ու պարտասուն:

Եւ մի ժամանակ՝ երբ կրից բորբոքումն յետին աստիճանն է հասած՝ աւա՛ղ, կ'ըբանես քո հօտը՝ նշաւակ ամենակերպ հակառակութեանց եւ ունայն վիճաբանութեանց: Եւ ո՞վ է այն, որ արտասուք չ'ողողէր դագաղդ՝ յիշելով կամ մտօք երեւակայելով այն դժբաղդութեանց, որոց պիտի ենթարկի եկեղեցին ՚ի շնորհս կուսակցական անօգուտ պայքարներու:


Սակայն, եղբարք, արիւթիւն:

Թող պահ մը սեւեռի՛ն մեր աչեր յայն տխուր դագաղ, զոր կ'ծածկեն մեր արտասուքն եւ մահու բարձրագոյն խորհուրդք: Կ'տեսնէ՞ք մեր հայրիկն եւ իւր թառամեալ շրթունք. ա՛հ, մահ ո՛րքան գեղեցկացուցած, ո՛րքան վսեմացուցած է այդ դալկահար շրթունքներն: Հո՛ն, հո՛ն կայ մեզ համար օրհնութիւն մը, երկնային, աստուածային, փրկչական օրհնութիւնն այն, զոր մեր սուրբ հայրն իւր մեկնումի գերագոյն ժամուն դողցես մե՛զ կ'նուիրէ, մե՛զ իւր վշտահար զաւակաց, ընդդէմ այն ամենայնի, որ զմեզ ընկճելու բնութիւնն պիտի ունենան:

Եւ բաւ չէ՞, եղբարք, բաւ չէ՞ մեզ իւր օրհնութիւնն, իւր սուրբ օրհնութիւնն, իւր կեցուցիչ օրհնութիւնն:

Օ՛ն ուրեմն, եղբարք, սրբե՛մք մեր աչերն, եւ լի՛ այն աստուածային հաւատով, լի՛ մանաւանդ այն քրիստոնէական անձառ խանդով, որ մեծագոյն մի յատկանիչն կ'կազմէր սրբազան հանգուցելոյն՝ գոչե՛մք սրտեռանդն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:...



Թ.

ՄԱՄՈՒԷԼ

ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՌ

ԵՐԿՈՍԻՆ ՀԱՐԱՋԱՏՈ

ՏԻՐՔ Փ. ԵՒ Ս. ԵՂԵՐՔ ՅԱՄԵՆ

Սգակիր Տեա՛րք,

Վերջին բոթն, որ ի սուգ համակեց ողջոյն Տա-
րենտէ՛ իբր շանթ մահացան անկաւ ի խորս մեր
սրտին, խաւարեցոյց արշալոյսն, վեր վայր չըջեց ա-
մեն խինդ և սառեցոյց ամեն յոյս և յոյզ:...

Ի՛նչ, Սամուէլ հիւա՛նդ... Սամուէլ օրհասակա՛ն

... Սամուէլ մեռեա՛լ... վա՛խ մանկութիւն, վա՛խ
երիտասարդութիւն, վա՛խ սիրոյ անմեղ հաճոյքներ:

Եւ սգացի՛նք, և կոծեցի՛նք եւ արտասուեցի՛նք
զմանկի՛կն Սամուէլ, քաղցրագոյն սէ՛րն երկուց հա-
րազատիցդ, յետին յո՛յսն իւր այրիացեալ մօր, աղնիւ
շառաւիղն իւր մեծ հօր, մեծագոյն սպարձանքն հէք
վարժապետիս:

Տակաւին ա՛յնքան մատաղ ու անրիժ, տակաւին
անտրակա՛ն մի մանուկ՝ կ'սկսէր ի վեր հանել ծի՛լն
այն անհուն առաքինութեան, որ անջինջ քանդակ-
եալ էր ի խորս իւր վճիտ ոգւոյն: Տարօրէն ուսում-
նասէր այդ պարմանին՝ անհունապէս աղքատասէր ու
պարզասէ՛ր մ'էր միանգամայն:

Ե՛ս, ե՛ս միայն և թերեւս իւր հանգուցեալ բա-
րեպաշտիկ հանի՛ն եւեթ գիտեմք թէ՛ ինչ մեռեալ
սիրտեր, ի՛նչ բեկեալ կեանքեր լուսով, յուսով, սի-
րով ողողեր էր նա:

Ի բնէ գերազանցապէս քրիստոնեայ այդ կոյս ո-
գին՝ ոգւով չափ վարեր էր այն վսեմ հաւատոյ, որ
բարերարելոյ, անխո՛նջ, անվհա՛տ և անչլո՛ւկ գոր-
ծելոյ մէջ կ'դաւանի զճշմարիտ մեծութիւն և զվեր-
ջին կատարելութիւն մարդկութեան:

Բա՛րէ, դեռ աչքիս առեւն է այդ պաշտեցեալ
պատանին՝ մերթ խոհուն ու երազուն, եւ մերթ
ժպտուն ու թրթռուն, ի Տարենտէ ճանչցած աշակեր-
տացս մէջ՝ առաջի՛նն էր դա, որ կ'ուգայր սոէպ
կախուիլ գրասեղանի՛ս վրայ, սեւեռի՛լ այն տողերուն
զորս կ'գծէի, յարի՛լ, փարի՛լ մանաւանդ այն զգաց-
մանց, որք մարմին կ'առնուն անշունչ թղթին վե-
րայ:

Իւր հետաքրքրական անգուսպ բնուորութեամբն

ամենայնիւ իրաւունք ստացեր էր նա հաւատարմագոյն խորհրդականն լինելոյ զգալմանցս, յուզմանցս, հակմանցս, խոխմանցս և բոլոր անբընցս:

Հաւաքոյն գրուածներս իրմէ կ'ներշնչուէին, նա՛ թեւ կ'ուտայր գաղափարացս, խանդ՝ սրտիս, հուր՝ հոգւոյս, թռի՛չ՝ երեւակայութեանս:

Եւ օր մը, մի'ն այն երջանի՛կ օրերէն, որք սիրտի փակէին իւր դպրոցական կեանքի ոսկեղենիկ շրջանն, յետ ծանուցանելոյ թէ՛ քանի մ'օրէն հանդերձեալ էր Սերաստիա երթալոյ, յիշատակ մը խնդրեց յինէն—յիշատակ սիրոյ:

Կրնայի՞ մերժել այսքան սիրուն առաջարկ մը:

Գրեցի զիմ ձօն—քերթո՛ւած փոքրիկ այլ գողարիկ —եւ յանձնեցի նմա:

Թէ ի՞նչ խնդութեամբ ընդունեց զայն, չեմ կրնար քացատրել: Միայն երբ ընթերցումն աւարտեց՝ տեսայ թէ՛ կաթիլ մը արտասուք կ'սրբէր նա, յուզման այս գերազոյն ժամուն՝ նա երգմամբ խոստացաւ ինձ օր մը Մեկեհաս լինիլ անդրանիկ երկիս՝ ի լոյս ընծայել տալով զայն ի՛ւր խի ծախիւք: Անո՛յշ խոստում, անմեղ երգում մանկային...:

Վեհսիրտ Սամուէլ, որ այսքան վսեմ իղձեր կ'տածէր նոյն իսկ իւր մանկութեան օրերէն: Եւ զայդ քերթուած՝ մօտերս լոյս տեսնելիք «Երգեր»ու առաջին էջերն անցուցեր էի՝ նմա սիրուն «Անակընկալ» մը ընծայելու մոռք: Այլ աւա՛ղ, չե՛ւ նա կարդացած զայդ նուէր իւր վարժապետին, չե՛ւ քաղցրիկ յոյժ մը զգացած իւր մատաղ լանջաց ներքեւ՝ անկա՛ւ ի Սեբաստիա, չո՛ն՝ ուր հողակոյտ մը կայ այլ եւս՝ իբր վերջին նշանակ մը՝ թէ՛ ապրեցա՛ւ Սամուէլ, թէ՛ սիրուեցաւ ու մեծարեցաւ Սամուէլ...:

Հո՛ս, տեա՛րք, ողբացելոյն յիշատակներն կ'մոլորեցնեն զիս. և չ'գիտեմ, կ'ուլա՞մ թէ կ'գրեմ: Նորա սիրտն՝ այնքան սերտիւ կապուած էր սրտիս, նորա դէմքն՝ այնքան կենդանի է մոքիս մէջ, նորա մէն մի խօսքն, մէ՛ն մի շարժումն, մէ՛ն մի գործն այնքան պայծառ դրօշմուած են յիշողութեանս մէջ՝ որ անհնա՛ր է ինձ չ'արտասուել իյուշ իւր սուրբ անուան:

Արդեօք ի՛նչ խորին թախծութեամբ համակուեցաք՝ երբ այդ գեղահասակ պատանւոյն անշուք դիակն ներկայացաւ Ձեզ. անուշի՛կ Սամուէլին, իսկատիպ նկա՛րն իւր հօր, ոյր բնածիր ազնուութիւնն ու վառվառն հոգին էապէս կ'անձնաւորէր յինքեան:

Առաջի՛ այս ամենադառն մահու՝ ի՛նչ ծիրանի յոյսեր կ'ցնդին յօգս. այս չարաշուք աղէտն՝ ինչ քաղցրանոյշ պատրանքներ կ'փարատէ յեղակարծում:

Թո՛ղ լան արփի աչեր, թո՛ղ հեծեճեն սրբասուն մարք. թո՛ղ սգան ու կոճեն սիրակարօտ քորք նազելիք. թո՛ղ աշխարհն բարեկամք և մերձաւորք: Թո՛ղ սուգ առնու ընութիւնն ողջոյն, և այժա՛մենն՝ անգամ մը, վերջին անգամ մ'եւս հաստատեն թէ՛ անցաւո՛ր է աշխարհ, թէ՛ ունայնութիւն է ամեն ինչ, և թէ՛ անկայո՛ւն է սէր, մանկութիւն, գեղն ու մեծութիւն:

Եւ ի՞նչ, ի՞նչ կրնայ առնել մարդկութիւնն միա՛համուռ հանդէպ այսքան աղէխարշ աղիտի մը:

Ոչի՛նչ:

Ահա՛ այն միակ ամենամեծ բառն, որում կ'յօժի ին ամեն տենչք, ամեն պատրանք, ամեն շուք ու փառք:

Բայց ես՝ պանդուխտ անտերունչ, ես՝ լալիանս

արտասուահեղձ, ես՝ ի՞նչ կ'ուզամ առնել Ձեզ այս անխօս թղթովս:

Ձեզ վստիճարեւ:

Բայց այս՝ հեգնեւ՝ պիտի լինէր Ձեր վիշտն, որ խորին է, այս՝ արհամարհեւ՝ պիտի լինէր յիշատակն այն պաշտեցեալ մանկան, որ ամենայն մասամբ նուիրական է:

Ո՛չ, Ձեր սիրտերն, Ձեզ պէս զգայուն ոգիներ չ'են ընդունիր թեթեւօրէն մխիթարուիլ ա՛յսքան սիրեցեալ պատանւոյ մը մահուան վրայ, զի՝ ո՞չ ապաքէն կ'ան մահեր, որոց բացած վէրքն՝ ժամանակն, արտասուքն հազիւ կ'զօրեն գոցել մասամբ: Եւ վաղամեռիկ, և վատարաղբիկ, և տարփատենջիկ Սամուէլի մահն ո՞չ ապաքէն այն մահերէն ամենէն կսկծեցուցիչն, ամենէն արիւնալին, ու ամենէն քստմնեկին կ'ներկայացնէ:

Կ'լռեմ ուրեմն պատկառով, կ'լռեմ խորին թախծութեամբ և թաց աչերս՝ յերկինս սեւեռուն՝ կ'աղօթեմ—թէ ներելի՛ է, կ'աղերսեմ թէ հաճելի է պանդխտի մը աղօթքն ու աղերսը:

«Թո՛ղ երկին ինքն հաճի սփոփել վատբեկ սիրտն երկուց հարազատացդ իւր ցօղովն աստուածային. թո՛ղ ինքն օրհնէ մանաւանդ Ձեր արեւ՝ բարեբաւոտիկ կենօք, ի մխիթարութիւն ողբացելոյն վշտամեռ մօր՝ ոյր միակ մխիթարիչն ու նեցուկ դո՛ւք պիտի լինիք յայսմհետէ Ձեր սիրական Յովհաննէսովն ու Նահապետով:»

1892 Յունիս 1

Ձեր վշտակեց



Յ Ա Բ Ե Լ Ո Բ Ա Ս

Պ Ա Ր Տ Է Ձ Ք Մ Ե Լ Ի Տ Ի Ն Է Ի

Ա.

Գարո՛ւն է մանկո՛ւնք, օ՛ն, տուք ձեռն ի ձեռն,
Մեզ հրաւէր կարգայ ծաղկանց պերճ արքան,
Ի բա՛ց ճանձրութեանց հոգեր ծանրաբեռն.
Ինչո՞ւ զուր անցնի կենացս այս վայրկեան.
Գարո՛ւն է, մանկո՛ւնք, օ՛ն, տուք ձեռն ի ձեռն:

Թոյր ու բոյր ողղեր է զաշխարհ ողջոյն.

Հա՛ գանգրահեր վարդ՝ — սիրուհեաց ընծայն —

Շուշանին պարզէ այտերն կարմրագոյն.

Սիրո՛վ է արբեր կարծես ծաղիկն այն.

Թոյր ու բոյր ողղեր է զաշխարհ ողջոյն:

Դաշտն ելնենք տեսնենք ծաղիկե՞ր է ծիրան.
Ի՞նչ անոյշ բուրմունք ծածկեր են զթեր.

Բնութիւնն է համակ հրաշից մի խորան .
Ընդ բնաւս խինդ . ծիծաղ, շաղեր ու շողեր .
Դա՛շտն ելնենք, տեսնենք, ծաղկե՞ր է ծիրան :

Սէ՛ր չընչէ ամեն տերեւ ու ծաղիկ ,
Ահա՛ մանուշակ պարկեշտն այն կուսան ,
Ձաջե՛ր իւր բացեր , աչե՛ր գեղեցիկ ,
Դիտո՛ւ գերկնադոյն յակինթոս աննըման .
Սէ՛ր չընչէ ամեն տերեւ ու ծաղիկ :

Ահա՛ ձեզ , մանկո՛ւնք , նարդոս ու մեխակ .
Ի՛նչ քաղցր ու անմեղ ժմտին ու խայտան .
Արդեօք քոյրե՞ր են դո՛քա երկուորեակ .
Մին՝ խարտիչագեղ , մի՛ւսն է բոցանման .
Ահա՛ ձեզ , մանկո՛ւնք , նարդոս ու մեխակ :

Ի՛նչ խրոխտ է կակաջ , ի՛նչ վէս ու գոռոզ .
Նա կ'արհամարհէ զամեն գեղ ու շնորհ .
Առանձին կ'ապրի ծաղիկն այն մօրոս .
Հպարտութիւնն է բոլոր ձիրքն անոր .
Ի՛նչ խրոխտ է կակաջ , ի՛նչ վէս ու գոռոզ :

Տեսե՛ք նազելին նարգէ՛ս դալկահար .
Թէպէտ մի կողմն է բուրեղն համասպրամ ,
Բայց նա տըխուր է և միշտ վշտահար .
Միւս կողմն է բացուեր գունեղն անթառամ .
Տեսե՛ք նազելին նարգէ՛ս դալկահար :

Հասի՛ր , Փըլորա՛ , գիցուհի՛դ ծաղկանց ,
Սիւնէ՛ լիաբուն քրքում ու յասմիկ :

Ժպտէ՛ գրգալով ժպտո՛ք վեհապանծ .
Մէկ շուշէ՛դ ծընի բիւր հազար ծաղիկ .
Հասի՛ր , Փըլորա՛ , գիցուհի՛դ ծաղկանց :

Ահա՛ Փըլորա , կո՛յս գեղածիծաղ ,
Գիրգ մատներն ի բոյր , ի թո՛յր թաթաւուն .
Ա՛հ , ի՛նչ անհամար ծաղիկներ չըքնաղ ,
Ծըլին ի մին իւր ժըպի՛տ գրաւուն ,
Ահա՛ Փըլորա , կո՛յս գեղածիծաղ :

Անդ բոլոր ծաղկունք ելնեն ի հանդէս ,
Ծիրանագեղ վարդ ընդ հեզ շուշանին .
Նարդոս ու մեխակ՝ իւրեանց հետ նարգէս ,
Յասմիկ , մանուշակ , ահա՛ն խայտագին ,
Անդ բոլոր ծաղկունք ելե՛ր են հանդէս :

Եւ գոչէ Փլո՛րա խանդո՛վ երկնային .
« Ինձ , ծաղկո՛ւնք անցորդք՝ դիւթուած ձեր տեսքով ,
Թող միշտ սխրանք յիշեն զՄեկիտին .
Մեկիտի՛ն . . . ա՛յս իմ վայր ամենագով » .
Եւ խայտայ Փլո՛րա խանդով երկնային :

Բ

Ահա՛ փըշեն գարնան հովերն անուշիկ .
Ի դաշտ խուժեն տըղայք , աղջկունք սիրունակ .
Խինդ ունի ծառ , խինդ՝ փափկալանջըն կուսիկ .
Դգեն ազբերք ի սառնաջուր ի վըտակ ,
Խայտա՛ն կանաչ ուռիք , խայտա՛ն ընկուզիք :

Երգե՛ն թռչունք որպէս երգէ քընարիկ .

Ձայնո՛վ, գեղով մին քան զմիւս գեղեցիկ .

Ահա՛ սոխակ, սարեակ, ահա՛ քանարիկ .

Կը գեղգեղեն, որպէս ներհուն երգեցիկ,

Ձայնո՛վ լեցուին տանձիք, ձայնո՛վ՝ խնձորիք :

Բայց չուտ հասնին ամրան աւուրք տօթաբեր՝

Ոսկեգլխակ հասկով դաշտերն ծածկուին .

Խորշակ՝ ծառոց գոգ զարդն ամեն թօթափեր .

Բայց ոչ, ահա՛ Պոմնա վեհ թագուհին .

Պարգեւներով լընու ծառերն ու թուփեր :

Օ՛ն, Մելիտի՛ն, խնդա՛ ծառօքդ անհամար .

Ահա՛ տանձ, թութ, ահա՛ կարմիր ծիրանի,

Աշխարհ համայն քեզ դառնայ խօլ սիրահար,

Ահա՛ և դեղձն ու սերկեւի՛լ գեղանի,

Որովք սիգաս որպէս դշխո՛յ վեհափառ :

Բայց մեծագոյն փառքդ է խնձոր կարմրերփին .

Գեղո՛լն, հոտո՛լն, խոշորութեամբն աննըման .

Ա՛հ, դա ինչե՛ր չընչէ ի սիրտ չուառին .

Այդ խնձորի՛ն աւանդէ ստէպ հէք կուսան

Գաղտնիք, զոր ոչ ումեք պարզէր առանձին :

Պատմեմ, թերեւս դո՛ւք ալ անոր կարօտիք .

Այն ինչ խնձոր առնու գիւր ձեւ վերջնական,

Ճարտար մատունք գրեն անդ ի տառ գեղեցիկ,

Զոր ինչ կ'զգայ մի սիրտ առ իւր սիրական .

Ապա՛ բանտէ զայն գաղտնասպահ խնձորիկ :

Կ'անցնի՛ն օրեր, տակաւ խընձորն կարմրի,

Բայց ծաղկենկար ի՛նչ տառք այն տեղ ի տես գան .

Ճի՛շտ նոյն խօսքեր զոր գրեց մատն ճարտարի .

Անե՛ղծ, պայծա՛ռ, ճե՛րմակ յայն նուրբ կարմրու-
թեան .

Հըրա՛ջք . յորմէ կ'օգտի՛ իսկ սէրն ականարի :

Գ.

Այդ խընձորներ՝ ի ձեռին՝ խրո՛խտ պարմանիք,

Ահա՛ խուժք խուժք աղբերց եղբրքն են շարուեր .

Այդ խնձորներ՝ ի ձեռն և կո՛յսք գեղանիք,

Ծառոց մէջէն դիտեն զիւրեանց խօսնայրեր,

Ա՛նդ, կո՛յս ոգիք, ինչպէս միմեանց կ'ընդհարիք :

Ամառն ողջոյն թնդան աղբերք ի խինդ, պար,

Զոր պատանիք կազմեն գինեաւ միշտ արբելու .

Շիւերն են լիք յար գինիով բոցավառ,

Զոր կը բաշխէ պատանեկիկ ժիրաժիր .

Յիրեար խառնին երգ ու կարկաջ անդադար :

Կարմիր խնձոր, տանձ, խաղող սեւ ու ճերմակ,

Ձինջ ալեաց մէջ վէտ վէտ խաղան միմեանց հետ :

Մինչ փրփրադէզ գինին եռայ ի բաժակ .

Ա՛նդ Պոմնա, Նայեադք, Աստղի՛կ բուրաւէտ,

Ա՛նդ Ապոլոն, Բաքոս, համայն ներդաշնակ :

Ի՛նչ հեշտալի է գտնուիլ յամարան՝

Մելիտինեայ այգիքն՝ պողովք ակաղձուն .

Հոս՝ մի խնձոր, այլուր քաղել մի ծիրան,


Միշտ ցօղալի , թարմ , կենսատու միշտ մարդուն ,
Բուժի՛չ՝ նոյն իսկ անրոյժ վիրաց հոգեկան :

Ի՛նչ քաղցր է , ա՛հ , տապէն մարմրան երբ հոգիք ,
Ընկերներով նստիլ յափուռն աղբերցն այն ,
Ուր հպատառե՛ր է խինդ զիւր գահ զովացիկ .
Սահո՛ւն աղբերք , ոյց ալեաց մէջ տխրածայն՝
Մեղումենէ հեծէ տրտում , յուսալիք :

Այլ Մելիտին , ա՛խ , պարգեւներդ բիւրացան ,
Որ քեզ կ'առնեն մի գրգարան վայելից ,
Փոխան տալոյ ինձ հաճոյքներ եղեմեան ,
Յիշատակօք համակեն սիրտս վիրալից ,
Եւ լուծանիմ , ա՛հ , յարտասո՛ւս դառնութեան :

Դշխոյակերպ պանծա՛ , սիգա՛ , Մելիտին ,
Թո՛ղ խնդամուք վայելքներովդ յօրանան .
Թող կեանք գտնէ ի քեզ նոյն իսկ մարդն յետին ,
Զարմա՛նք ազդէ , զի զարմանա՛ց ես արժան ,
Թո՛ղ բնաւք հրճուին , հեծէ՛ լոկ սիրտ պանդխտին :

8 դեկտ. 1891



Ա Ռ

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ի Մ

ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՍԿԵՐՁԵԱՆ

Ա՛հ , քեզ ի՛նչ տամ ձօն ,
Արժան ի նուէր .
Ողջոյն հորիզոն
Պատէ բուք ճրմեռ :

Զի՛ք շող ու միմունջ
Զի՛ք վարդ բազմերփեան ,
Լոյս ճակտիդ ի՛նչ փունջ
Կապեմ Ոսկերչեան :

Պանդուխտ մ'եմ չուտ
Զեմ ճոխ ու փարթամ .
Լո՛կ ուկեոյն՝ աշխարհ
Յարգ տայ , բարեկամ : . . .

Բայց մթնի , աւա՛ղ ,
Խոհո՛ւն քո ճակատ .
Խոցե՞ն սիրադ մատաղ
Խօսքերս յուսահատ :

Է՛ , է՛ ճանչեմ լաւ
Վշտացդ շարժառիթ :
Յարգ չ'ունի՛ քեզ բնաւ
Ոսկի , մարգարիտ :

Բարևո՛յն սիրահար՝
Սէ՛ր կ'ուզես միայն .
Երգ մը քեզ համար
Քաղցր է քան զհամայն ,

Գո՛հ եմ արդ զքէն ,
Ոգի՛դ վեհազուն .
Սիրտդ հոգի՛դ կ'արժեն ,
Տաղե՛ր փափկասուն :

Ուրեմն ահա՛ քեզ ,
Տաղ մի անուշիկ .
Ընկա՛լ սրտակէզ՝
Զայն որպէս յուշիկ :

13 Դեկտ. 1891 ի Մելիսինէ



Տ. ՍՏԵՓԱՆ ՔԱՀԱՆԱՅ Պ. ԱՍԼԱՆԵԱՆ

Տէր Ստեփա՛ն . . . օ՛ն , յիշէ՞ք զայս անուն .
Դեռ իւր անունով լի է Մեկիտին .
Գործեց սա՛ ամբողջ ամե՛ր երեսուն՝
Քրտա՛մբ հոգեծին :

Անո՛ւս՝ այլ համակ աշխոյժ ու կորով ,
Խա՛չն էր իւր միակ ուսում ու վահան .
Կը քարոզէ՛ր լո՛կ - սէր , դուժ ու գորով -
Շեշտո՛վք սրտահան :

Նա՛ փառքն ու պսակ՝ երկցանց դասուն ,
Գործե՛լ միշտ - ահա՛ իւր նշանաբան -
Զը գիտէ՛ր նախանձ , նա՛ մեր տրամասուն՝
Ոգւո՛ց պահապան :

Մէկ ձեռքը՝ Նարեկ , միւսն՝ Աւետարան ,
Քրտնէր ու արքնէր ի խնդիր հօտին .
Իւր սիրտը՝ սիրոյ խընկասիլ՝ լու խորան ,
Հընո՛ց էր հոգին :

Իւր ջերմ արտասուօք բուժուած են ստէպ՝
Ոգւո՛վ ու մարմնով բազում ախտաժէտք .
Առ նա կ'ընթանար ամեն երաշխէպ՝
Շա՛տ ցաւերէ ետք :

Աստուած օժտեց զայն շնորհօ՛ք խանդակաթ ,
Շունչին մէջ ա՛յնպէս զօրութիւն մի դրաւ ,
Ոյր հանդէպ կ'առնուր նոյն խկ սի՛րտ երկաթ՝
Փափկութի՛ւն ամբաւ :

Երեսո՛ւն ամեր խնամեց նա զիւր հօտ ,
Անարատ կենօք և ամբի՛ծ վարուք .
Յիշատա՛կ թողուց քաղցր իւր առաւօտ՝
Խա՛նո՛ւն սրբաշուք :

Եւ այսօր թէպէտ անցա՛ն քսան ամեր ,
Այլ նա միշտ ի մեզ կ'ապրի՝ ու կ'ապրի .
Այո՛ , կ'ապրի՛ նա , դեռ չէ՛ թառամեր ,
Որդւո՛վն իւր բարի :

Եւ վարժապետն է դա մեր ծաղկոցին ,
Գթուլիւն , դա միակ աւանդն է մեր հօր .
Վարժապետ անխոնջ , ցած ուն , աղքատիւն ,
Անուն՝ Գըրիգոր :

Քառասնամեան իւր կեանքն , ո՛վ Աստուած ,
Վարժապետական հոգերով մաշուած .
Մեծարանք , եղբա՛րք առ այդ հէք մըջակ ,
Ա՛յս՝ հօրն իւր կըտակ :

1892 Մեխիսէ

Հեռուեան վարժարան

Ա Ղ Ե Ր Ս Ք

Դ ՈՒ Ս Տ Ր Ն Լ Ք Ե Ա Լ

Ա Ռ Հ Ա Յ Ր Ն Պ Ա Ն Դ Խ Տ Ա Յ Ե Ա Լ

Նուէր առ ծնողս

Ա.

Ա՛խ անուշ հայրիկ , հայրիկդ իմ վսեմ ,
Յե՞րբ արտասուաթոր ըզքեզ երազեմ ,
Յե՞րբ ճամբուդ վերայ յառած սըրտակէզ՝
Հառաչեմ առ քեզ : . .

Դարձի՛ր , հայրի՛կդ իմ , դարձի՛ր հայրենիք ,
Տես ի՞նչպէս ծաղկեր՝ բուրեն վարդենիք .
Այդ քնքոյշ փափկիկ ծաղիկներ կարծես՝
Բողո՞քեն առ քեզ : . .

Բողոքեն ա՛հ , զի անցա՛ւ չորս տարի ,
Դու անոնց թուխ հանգսյն օտարի .
Գէթ մի՛ օր , մի՛ ժամ ծաղկանց այն գողտրիկ
Չերեւցար հայրի՛կ . . .

Ե՛կ , պարտէզին մէջ մի անգամ ժուռ գանք ,
Քեզ ցոյց տամ ծաղկանց չքնաղ բուրաստանք ,
Տե՛ս , հոն չե՞ն բացուիր աստղեր շողալի՛ր՝
Զոր դուն սիրէիր : . .

Ա՛խ , այն բակին մէջ ուր դու մերթ քաշուած՝
Լո՛ւռ կ'երազէիր կըրօն եւ զԱստուած .
Հո՛ն՝ ուր դիտէիր աչերո՛վ խոհուն՝
Զերկի՛նքն այն անհուն :

Հոն՝ ուր խոհերուդ մէջ մոռցած զաշխարհ
Կը վերանայիր յաստեղաց գաւառ ,
Եւ յանկարծ բաժակդ պարպելով զուարթ՝
Վառէիր սիկարդ :

Ա՛խ այն բակին մէջ յիշե՛ս մեղրալի՛ր՝
Ի՞նչպէս մեզ ծաղկանց վրայ ճառէիր .
Բաղձայի՛ր տեսնել հոն մի բուրաստան՝
Մաղի՞օք բիւրազան :

Բ.

Ե՛կ, հիմակ, հայրի՛կ, քեզ հոն ցուցընեմ,
 Ծաղկունքն, որ մեր բակն ըրին մի եղեմ,
 Ահա՛ քե՛զ ահա՛ն, միշտ թարմ ու կանաչ,
 Խըրոխտ զինչ կակաչ:

Այդ սո՛ւրբ ահա՛ններն՝ բարձրիկ հասակաւ՝
 Ճամբու վրայ ձըգուած՝ հիւսիս ու հարաւ,
 Սպասեն, որ գալուդ՝ նախ իրենք, հայրի՛կ,
 Տան քեզ համբուրիկ:

Անոնց քով կարգաւ բացուին շար ի շար՝
 Արեւծաղիկն ու նարկի՛զ սիրավառ.
 Հո՛ն է և մեխակ՝ խընկաբոյր, հեշտին,
 Ընդ հե՛զ շուշանին:

Շուշան ու մեխակ՝ կեցեր դէմ առ դէմ,
 Զիրեար կը դիտեն անդ նազելաճեմ.
 Քե՛զ կ'ըստասեն, հայր, շուշան ու մեխակ,
 Առնուլ մրցանակ:

Իսկ բաղեղն աչեղ, որ միշտ նախանձոտ,
 Մըրկի թէ իւր գեղ չունի բուրմանց հոտ՝
 Առ անմեղ ցամառն՝ կակաչ կապուտակ՝
 Պարզէ դըրօշակ:

Հոն մեղմ մանուշակ եւ աստղածաղիկ՝
 Տեսնեն դրացւոյն բարիութիւն սաստիկ.
 Եւ փա՛ռք տան, որ տէր բարձր հասակի տեղ՝
 Տուե՛ր է բոյր, գեղ:

Այսպէս բիւրաբիւր ծաղկունք երգներովին,
 Բացուին ամեն օր ընդ առաջ բակին.
 Մինչ թռչտին թռռներդ՝ Գեղամ ու Հայկիկ՝
 Քայլերով մանրիկ:

Եւ թռչո՛ւնք թեթեւ՝ դեղձանիկ, սոխակ,
 Ճռուողեն երգեր քաղցր և անուշակ.
 Եւ ժպտի՛ համայն յեզր ջինջ առուն՝
 Ե՛ս լոկ լա՛մ լըռին...:

Գ.

Արեւծաղիկի հարցուցի մի օր
 « Է՞ր հակեր է գլուխդ որպէս սըգաւոր,
 « Ինչո՞ւ չը սիգար հասակդ երկնագեղ՝
 « Դիմաք սիրազեղ »:

Եւ արեւծաղիկն եղած գունաթափ՝
 Դուրս թափեց առատ ցօղերու տարափ.
 Բոլոր ծաղիկներն անոր ունկընդիր՝
 Կային տրտմալիր:

« Ահա՛ չորս տարի, ըսաւ ծաղիկն այն,
 Ժպտիմ ու նաղիմ, յուսամ ընդունայն.
 Ըսի՝ — ա՛յս շաբաթ և կամ այս ամիս՝
 Կ'ուգայ սիրելիս:

« Այլ անցան օրեր անցան շաբաթներ.
 Եկան ու գացին ամիս, տարիներ,
 Զեկա՛ւ սիրելիս, չերեւցա՛ւ անգամ,
 Ես ի՞նչպէս սիգամ:

« Ըսէ՛ ինձ, ա՛հ, ե՞րբ հայրիկդ վեհաշուք
Դառնայ ու ցըրուէ քո վիշտն ու մեր սուգ .
Ե՞րբ, ա՛խ, ե՞րբ . . . այլ նա միշտ աշխարհ հեռի՝
Պանդո՛ւխտ դեգերի . . . »

« Եւ քանի՛ որ նա այսպէս մնայ պանդուխտ՝
Գլխիկոր խոկալ թո՛ղ լինի իմ ուխտ .
Ա՛հ, կրնա՛յ հրճուիլ մի սի՛րտ սրգաւոր՝
Տարին գէթ մի օր : »

« Բայց աղւոր հարսի պէս պիտի նազեմ,
Երբ նա Տարենտէ դառնայ զուարթադէմ .
Բայց լո՛ւռ կեցիր . ա՛հ, այդ օրն ինձ միայն՝
Թուի ցնորք ունայն » : . . . »

Եւ լըռեց, ծաղկունք ողջ ծիրանեգոյն՝
Տըխուր հառաչներ ձըգեցին իսկոյն,
Ամենուն աչեր՝ լըքուն ու աւեր՝
Յոյց տուին ցաւեր :

Գ.

Պաշտեցեա՛լ հայրիկ, թէ դեռ յամենաս՝
Վախնամ այդ ամեն ծաղկունք սիրանաղ,
Ա՛հ, մէկիկ մէկիկ պիտի թառամին,
Կարօտս՛վ քոյին . . . »

Օ՛ն, փութա՛ դարձի՛ր, զգուէ՛ զնոսա դուն՝
Թող կայտուն կրկին ծաղկունքն այն զուարթուն .
Ե՛կ, տե՛ս, քեզ քանի հիւսեր է պըսակ՝
Քոյի՛նդ Արուսեակ :

Իսկ թէ դու դարձեալ չ'անաս իմ ձայնին,
Մոռնաս արցունքներն, որ աչքէս թափին .
Թոռներդ ու հարսներդ ինձ ու ծաղկանց հետ՝
Թէ լացնե՛ս յաւէտ :

Ա՛լ պիտի ցանկամք, որ շուտ հասնի մահ,
Բաղդակից առնել մեզ այն ծաղկանց, ա՛հ .
Եւ երբ դու չատ ուչ տուն դառնաս մի օր՝
Զուարթ, փառաւոր :

Այո՛, երբ դառնաս դու հայրենի տուն՝
Ուր թողե՛ր էիր քոյրդ՝ անո՛յշ նազլուն . . .
Վախնամ չէ՛ թէ զայն չը գտնես, աւա՛ղ,
Զի մահ խլեց զայն վաղ . . . »

Այլ եւ այն ծաղկանց տեղ՝ գտնես անոնց
Անշո՛ւք տերեւներ՝ չորացած շատոնց . . .
Եւ դուցէ տեսնես հոն՝ վայր մ'առանձին՝
Շիրի՛մն իմ ցրտին . . . »

1889 Օգոստոս 31 Տարեցե



Ա Ռ Ն Ե

Վարդ արեւ
Կը վերնար
Զիւր բարեւ
Զովարար

Ծաղկածի՛ն լեռներու
կաթողին ձօնելու .
Եւ սիրուն զիւր զով չաղ
Ֆանեւ սիրտն իմ մատաղ :

Նէ շըրջեր
Նոճեաց տակ՝
Ձերդ ստուեր՝
կապուտակ
Քաղցրաչունչ հովերուն՝
Շրջազգեստն ուրբուն .
Դառնալով խաղալիկ՝
Ծածանէր զինչ թռուցիկ :

Նայեցայ .
Եւ սիրուն
Հալեցայ
Որպէս ձիւն . . .
Խանդակաթ գործով
Նէ՛ ալ ինձ հայեցաւ ,
Եւ անհո՛ւն ժըպիտով
Հոգւոյս խորք թաղուեցաւ : . . .

— Սիրեմ՝ քեզ —
Հեծեցի ,
Ալեաց պէս՝
Մեղմալի :

Ձիւ առաւ մի դալուկ ,
Սարսիմ՝ գերդ տերեւուկ .
Ներա ժմիտ , օ՛հ , վըրդով
Ձըգեց սիրտս յարախուով :

— Մինչեւ մահ՝
Սիրեմ՝ քեզ —
Մընչեց նա՝
Ալ ինձ պէս :
Շունչ մ'եկաւ իմ վերայ ,
Կարծեցի՛ թէ՛ կուլայ .
Շիկնեցաւ և յայտեր
Իւր բացուին հուր վարդեր :

Մի համրո՛յր
Սրտագին՝
Դրօշմեցի
Իւր դէմքին .
Նէ ալ սիրով անհուն
Ձիւ գգուեց զինչ զուարթուն ,
Այն ժամուն մէջ վըսեմ
Մոռցայ զվիշտս համօրէն :

Հոն արեւ
Երփներանգ՝
Մեր վերեւ
Առաւ կանգ .
Հըսեց ուխտ մեր խսկի՝
Եւ մատամբ իւր ոսկի
Գրեց ի սիրտս մեր բեկբեկ .
— Յար զիրեար սիրեցէ՛ք — :

Այլ ինձ ո՛հ ,
Համբուրին
Այն յետին
Եղայ զո՛հ .

Թռա՛ւ կոյսն այն, թռա՛յ եւ ես
 Մոզի՛ն՝ անծի՛ր ասպարէզ.
 Կորոզի՛ն, խանդո՛ւ մարեցաւ,
 Ո՛ւր իմ սէրն, ո՛վ լուռ ցաւ։...

1882 Մարտ 22 Ելպիսան

ՏԻԿԻՆ ԴՇԽՈՅ ՁԷՊԻՇԵԱՆ

47 Յունիս 1892

Ա.

Ե՛լ, երթա՛մք Տարանտէ
 Ազնի՛ւ Չէպիշեան,
 Տեսնե՛մք դեռ հիւս՞նդ է՝
 Մայր քո սիրական։

Հա՛ հեռուանց կ'երեւի
 Աղուոր քաղաքն այն,
 Գող տուած թեւ թեւի
 Շարժի՛ն ծառք համայն։

Ահա՛ վայրն, ուր նստէր.
 Ժպտուէն, ծիծաղուէն,
 Բազմած իւր առջնթեր,
 Հայրի՛կդ զմայլուէն։

Տե՛ս, ահա՛ երջանիկ
 Առ քեզ դայ ուրախ.
 Այլ չքնաղն այն մանկիկ,
 Կ'ուլա՛յ, ին՞չ, էյ վա՛խ։

Կ'ուլա՛յ նա, շարուե՛ր հոն,
 Կ'ուլան եւ հարսներ.
 Ի՞նչ այս, ի՞նչ, Սողոմոն,
 Էծէ՞ն է մեռեր։...

Մեռեր է, ո՛վ Աստուած,
 Էծէ՛ն սիրական,
 Տէրտէրներն են շարուած
 Հոգւոց կը կարգան։

Հա՛ կ'երգե՛ն տխրածայն
 Հայ տիրացուներ՝
 Թէ ահա՛, մօտեցան,
 Ա՛հ մահուան ժամեր։

Հասի՛ր, լալկա՛ն, սպառա՛ւ,
 Ըրէ՛ գովասան.
 Տէրտէրն առաւ տարաւ
 Դիտո՛յն աննըման։...

Բ.

Կեցէ՛ք, ա՛խ, ու՞ր տանիք,
 Կեցի՛ր, ո՛վ տէրաւոր.
 Թո՛ղ առնու ընտանիք
 Իւր կարօտն ու սէր։

Ու՛ր տանիք, ո՛ւր էժէն,
 Ու՛ր տանիք այսպէս.
 Իւր տըղաքն, ա՛հ, հոս չե՛ն,
 Որ լան դառնապէս:

Ո՛ւր էք, ի՞նչ էք կեցեր,
 Սողոմոն, Գէո՛րգ.
 Եկէ՛ք, ահա՛ զմայր ձեր
 Տանի՛ն սըգաւորք:

Անոնք ո՛ւր են, ա՛խ, ո՛ւր,
 Հեռո՛ւ են. հեռո՛ւ,
 Շարուեր կարդան տըխուր,
 Տէրտէր տիրացու:

Լա՛ց, Յովսէ՛փ, լա՛ց յուշիկ,
 Լա՛ց, Սենեքերի՛մ.
 Տանին մայրն անուշիկ
 Դընե՛լ պաղ շիրիմ:...

Եւ դո՛ւ, ո՛վ պատուական՝
 Ազնիւ ծերունի,
 Լա՛ց դշխոյդ սիրական՝
 Որ յաւէտ մեկնի՛ր...:

Լա՛ց, դա սիւ՛նն էր քու տան,
 Ընկե՛ր անմեկին,
 Յո՛յս միակ ծերութեան
 Քու սիրտն ու հոգին...:

Լա՛ց, կոծո՛յդ սրտանուէր
 Է շա՛տ արժանի.
 Անո՛վ կեանքդ ժպտէր,
 Անո՛վ թառամի՛ր:...

Գ.

Այլ հերի՛ք դուք լացիք,
 Հարսներ ու թուներ.
 Մայրիկն այն գեղեցիկ՝
 Ննջէ՛, չէ՛ մեռեր:

Նա ննջէ, զի յանկարծ,
 Թօթուելով զիւր քուն,
 Առնո՛ւ զիւր վըսեմ վարձ,
 Հոն՝ զանմահութիւն:

Ա՛լ դարձէ՛ք, դարձէ՛ք դուք,
 Մի՛ լաք ըզտիկինն,
 Գործերո՛վ վեհաշուք,
 Պճնած է հոգին:

Նա կ'երթայ, երանի՛,
 Կ'երթայ՝ անվրդով,
 Առ Աստուածն ամենի՛,
 Միանա՛լ չուտով:

Օրհնեա՛լ քո յիշատակ,
 Դշխո՛յդ սիրելի.
 Ապրեցա՛ր երանեակ,
 Մեռա՛ր պաշտելի:...

Մ Ա Յ Ր Ն

ՆՈՅՆԵՄՁԱՐ ԵՒ ԱՐՈՒՍԵԱՅ

Ա.

Գարնան գիշեր մ'է, դաշտին մէջ առանձին՝
 Յեզըր շիրմի կանգնած տրտում ու լըռին՝
 Գըլուխն՝ իյուս կ'երագէ՝ ոք կիսարթուն.
 Ո՞վ է դա, մա՞րդ թէ զուարթուն:

Ծաղիկ հասակ, քընքո՛յշ մարմին, սե՛ւ աչեր.
 Ստուերի՛ մէջ խորունկ խորունկ հառաչէր.
 Երկնատարած, ա՛հ, բազուկներ իւր դողդոջ՝
 Գըրկե՛լ կ'ուզեն, սակայն ո՛չ...

Նէ հողեղէ՛ն թէպէտ՝ մոռցեր է զաշխարհ.
 Սէր չ'ուզեր նէ, վիշտեր ունի անհամար.
 Վիշտե՛ր՝ առ որս անդո՛ր բնութիւնն է համբուն,
 Վա՛հ, մա՛յր մ'է նա վըշտասուն...

Տասնութամեայ հասակի՛ն մէջ իւր մատաղ՝
 Արդէն բաղդի՛ն զոհուեր, եղեր է մատաղ.
 Ցաւոց, վշտաց, ա՛հ, չափեր է զանդուեն խոր.
 Զախողուած ո՞վք բիւրաւոր:

Այն ինչ իւր սիրտ, սի՛րտ սիրանոյշ ու քընքոյշ՝
 Այն ինչ կ'զգայր տոչորումներ գրգանոյշ,

Հարսնացե՛ր էր ընդ սիրելոյ իւր սրտին,
 Երազներո՞վ կաթոգին...

Սիրել, սիրուիլ երազե՛ր էր, թշուա՛ռ կին,
 Այլ չե՛ւ տարին եկած այրի՛ էր՝ երկին...
 Այրի՛ միակ դուստրով՝ աղո՛ւ մի հրեշտակ՝
 Սիրելոյն հո՛ւսկ յիշատակ...

Այդ հըրեշտակ, ա՛յդ յիշատակ թանկագին
 Յայն վայր դրաւել էր համակ սիրտն ու հոգին,
 Այնու կեանքի փուշերն ըրած առաթուր՝
 Քաղցր համարէր ըզկեանս իւր:

Ո՛չ իսկ յիշէր՝ թէ գե՛ղ ունէր, թարմ հասակ՝
 Սէ՛ր, կեանք, ամեն ինչ էր աղջիկն անուշակ,
 Տատրակի գկեանս վարէր սիրուն՝ տրտալի՛ր՝
 Արուսեկո՞վն իւր արըշու:

Այլ յաշխարհի ո՞ր վարդ չ'ունի գիւր դժնիկ.
 Յո՞ր խինդ վըշտին չէ՛ դըրօշմած սեւ կընիք.
 Ահա՛, բա՛բէ, ճակատագրին ա՛լ դժխեմ,
 Մթնէ՛ այդ հէք մօրն եդեմ:

Եւ ի՞նչ մօր մը սրտին կ'ուտայ ա՛յնքան վէր՝
 Մօ՛ր՝ որ աղջիկ մ'ունի միակ իւր ընկեր.
 Ի՛նչ այնքան դառն, քան տեսնել այդ հրեշտակին՝
 Ըզմահ... կորո՛ւստ ահագին...

Բ.

Արդէն գարնան ծիծղուն թռչունք են հասեր.
 Նոր կեանք առնուն ամեն հոգիք կենասէր.

Լոկ լուռ ու մունջ խամրի անժամ զերդ ծաղիկ
 Խընդամուկին այն աղջիկ :

Եւ խնդամո՛ւլ, յոյժ խնդամոլ էր այն կոյս .
 Իւր մի բառով լընոյր ըզբնաւս ի հաճոյս .
 Իսկ երբ մի օր նուաղեալ անկաւ գիրկին իւր մօր՝
 Միծաղ լըքաւ զինքն այն օր :

Յայնըմհետէ ո՛չ ոք տեսաւ զիւր ժըպիտ .
 Նէ միշտ դալուկ ունէր , դալո՛ւկ մահառիթ .
 Հէ՛ք կոյս , չ'եղա՛ւ մի ճարտար աջ , որ դարման
 Տայր իւր ծաղիկ մանկութեան :

Ո՛չ ոք , ո՛չ իսկ մօրն իւր աղի արտասուքեր ,
 Ո՛չ ներա ջերմ համբոյրք , ո՛չ խնամքն անձնուէր .
 Ո՛չ իսկ , եղուն՛կ , բուժեւ կրցաւ զայն՝ հրապոյր
 Գարնան՝ ծաղկո՛ք բոյր ի բոյր :

Այսպէ՛ս անցաւ կենսապարգեւն իսկ դարուն ,
 Չե՛ւ նորոգած աղջկան իղձերն թրթռոււն .
 Եւ ճիշդ այն օր՝ վարդեր ծըլիւ երբ սկսան՝
 Իջաւ նէ ցուրտ գերեզման :...

Ի զուր մայրիկն համբոյրներով խանդակաթ՝
 Ողողեր էր այտերն անոր ու զճակատ .
 Արտասո՛ւք , ա՛ղօթք չ'էին բաւեր մահու դէմ՝
 Մեռած էր կոյսն այն վըսեմ :

Եւ հէ՛ք Արուս—այս էր անունն—մինչ խորհէր՝
 Յայն պատանին , որ իւր համակ երազն էր .

Մեռա՛ւ , մեռա՛ւ չե՛ւ եւս ճանչած թէ ինչեր
 Կըրեն մարդիկ առ այն սէր :

Մեռա՛ւ , խեղճ կոյս , դեռափըթիթ , գեղանի՛ ,
 Երեքտասան դարունք զոհած դամբանի ,
 Եւ հարսնութեան աւուր պահուած դարդք , աւա՛ղ ,
 Լոկ պճնեցի՛ն զիւր դագաղ :

Բայց դագա՞ղ մ'էր այն , ուր նիրհէր աղջիկն այն ,
 Աղջիկ՝ ոյր դէմք նկարէր աշխարհ մի համայն ,
 Դագա՞ղ . ո՛հ , ո՛չ , այլ հիասքանչ մի եղեմ՝
 Ուր կեանք նուաղէր մահուան դէմ :

Ո՛վ Արուսեակ , այդ գեղութիւնդ անարատ՝
 Մոռնա՞ս , քանի վառէր մի սիրտ անապատ .
 Մի սի՛րտ՝ ուր փուշ մըխեր էր բաղլն աննուէր
 Սի՛րտ՝ որ ի քեզ կ'ամփոփուէր :

Այդ փուշը , զոր դու փոխեր էիր հեշտ վարդից ,
 Արդ կ'ընձիւղեն խոցել զայդ սիրտ վիրաւից ,
 Եւ մօրկանդ է այդ սիրտ , մօրկանդ ապիկար ,
 Որ արդ լա՛յ գինչ խելագար :

Գ.

Գարնան գիշեր մ'էր զով , պայծառ ու վըճիտ ,
 Հէք Նոյեմզար յեց ի տապան զիւրն ճիտ ,
 Հեղոյր արտօսր հեկեկանօք դառնորակ՝
 Առ պաշտելի՛ն Արուսեակ :

« Դու՛ստր իմ , դո՛չէր , դու՛ստր իմ չքնաղ , սիրասունն ,
է՞ր զիս լըքար ի վիշեա , ի ցաւըս մահունն .
Յորմէ հետէ ծածկեց քեզ հո՛ղ սառնահար՝
Ըղքե՛զ կ'ուլամ անդադար :

« Քե՛զ լամ , դու՛ստր իմ , ո՛վ երազոց իմ քընար ,
Այլ եւս առանց քեզ ապրիլ չէ՛ ինձ հընար .
Դու էիր լո՛յս աչացս , դժո՛խք մ'է ինձ այս կեանք ,
Ուր ա՛լ չ'ունիմ ես բերկրանք :

« Ին՛չ , սա մութ վիհն ծածկիս , դստրի՛կդ իմ գոհար ,
Քո մանկային գեղով , սիրո՛վ վըշտահար .
Ա՛յ այն աղուոր աղուոր աչեր արիագեղ ,
Ձեզ պատե՛ր է քունն ահեղ : . . .

« Սօսէ՛ , դու՛ստր իմ , դեղձան դեղձան քո վարսեր՝
Որով երբեմն խարտեալ գլխիկըդ նազէր՝
Ա՛խ , այն սեւուկ սեւուկ յունքեր ի՞նչ եղան
Ընդ ցուրտ հողով մոռացման :

« Ըսէ՛ , ճերմակ ճերմակ այտերդ՝ ուր գարուն
ժըպտէր բիւր բիւր ծաղիկներով զարդարուն՝
Շիրմին ներքեւ գըտա՞ն շաղեր ու շողեր ,
Որով սուրբ դէմքդ շողշողէր :

« Մեղրի՛կ լեզուդ , որ կըլորիկ բերնիդ մէջ
Սէ՛ր նուագէր , սէ՛ր Աստուծոյ , սէ՛ր անշէջ ,
Կարմրուկ կարմրուկ այդ շուրթերուն քո միջէն
է՞ր ինձ չ'երգեր բնաւից էն :

« Այն յոյր ի յոյր ձեռներդ՝ փափկիկ մատներով ,
է՞ր չեն շոյեր մայրիկդ յանհուն մի գորով .
Կակուղ կակուղ ափերդ է՞ր վարդ-շուշաններ՝
Դրկիս մէջն է՞ր չեն ցաներ :

« Ա՛խ այն փոքրիկ փոքրիկ ոտներդ , որ ի տան՝
Մանրիկ քայլովք յուզէին սիրտս մայրական ,
Ինչո՞ւ այժմիկ սիրուն սիրուն բիւր խա՛ղեր
Հեւ ե ի հե չեն յօրիներ :

« Աւա՛ղ , ո՛չ եւս ոչ եւս հնչեն ոտքդ ի պար ,
Ո՛չ եւս լըսես զիմ հառաչներ հոգեվար .
Եւ զիս , ո՛հ , ո՛հ , տերեւս անջատ ի բընոյն՝
Ձիս խեղդեն ցաւք դառնագոյն :

« Ո՛չ եւս լըսես ի խորութեան դամբանի՝
Ինչե՛ր խօսի անյուսութիւն մայրենի .
Եւ չ'ունիմ յոյս , վերջին անգամ մ'ալ համբո՛յր՝
Տալ վարսերուդ գեղաթոյր :

« Այսպէս մոխրի դառնայ ամեն յիշատակ ,
Անըսպառ ցաւք կտտեն հոգեակն իմ համակ ,
Արիւնանե՛րկ թուռի կենացն իմ արեւ ,
Աղէ՛տք թռչին իմ վերեւ :

« Ո՛չ եւս , ո՛չ եւս պիտի խնդրեն իմ աչեր
Ձայն լոյս , զոր մերթ Արո՛ւսեկիկն իմ շընչէր .
Ո՛չ եւս ցանկամ տեսնել ծիծաղն այն երկին՝
Որ նըկարէ՛ր զիւր հոգին :

« Ես անտրտունջ պիտի մտնեմ ի սեռաւ հող,
 Զուռնի՛ կենացն իմ ճառագայթ չ'ունի՛ չող.
 Դուստր իմ, քեզ հետ հոս չը խնդաց մայրդ լըքուն
 Գէթ հոն մէկտեղ ննջէ՛ քուն »

Դ.

Եւ մայրն այն չուառ,
 Աղջկան շիրմաքարն արցունքով լուար.
 Եւ դեռ տակաւին այսպէս շատ ժամեր՝
 Արտասուաց գետեր հոն պիտի քամէր.
 Թէ չը գար բառնալ՝ մահ տխրանուէր՝
 Իւր կեանքն ու ցաւեր:

Ա՛հ, այն սրբասէր՝
 Չարաբաստիկ մայրն մահուան կ'սպասէր.
 Եկաւ մահն ընդ հուպ փրկել ցաւերէն,
 Մա՛հ՝ զոր մեք դահիճ կոչեմք տխրօրէն,
 Մա՛հ՝ զոր քարոզէ փըրկի՛չ երկնային՝
 Անմահ Լամարթին:

Մա՛հ սըգափետուր՝
 Եկա՛ւ իւր առջին բանալ գերկնից դուռ.
 Եւ ինկա՛ւ ծաղիկն այն կարօտամեռ՝
 Անկա՛ւ հէք կինն այն աղջկանն առնթեր.
 Մէկտեղ քուն եղան մայրիկն ու աղջիկ՝
 Տերե՛ւ ու ծաղիկ:

Ծագե՛ց այդ պայծառ,
 Անփոյթ բնաւ առ այն տեսիլ ոգեսպառ,
 Փայլեցա՛ւ արեւ ճոխ և լուսալիր՝

Անհոգ՝ թէ ինչե՛ր եղած են յերկիր.
 Եւ լո՛ւռ մընաց միշտ հանդէպ այս մահու՝
 Դամբա՛նն ահարկու:

Բայց սիրուն թռչունք
 Քաղցրիկ երգերով՝ թափեցին արցունք.
 Տրտում թըլէին թռչունքն այն փոքրիկ
 Առ այն տեսարան յոյժ սրտաճըմիկ.
 Նոքա՛ այս մահուան կան յուղարկաւորք՝
 Միա՛կ սըգաւորք:

Փա՛ռք քեզ, տէ՛ր Աստուած,
 Որ թռչունս այսքան կ'առնես դիւրազգած,
 Եթէ չըլլային և այդ թռչուններ՝
 Ո՞վ առ այնս հառաչ պիտի թընցունէր,
 Օրհնեա՛լ լինիս միշտ, բարեխնամ սուրբ հա՛յր,
 Օրհնեա՛լ յամս յամայր:

Իսկ դո՛ւ, մա՛յրդ անտէր,
 Մի՛ խռովիր թէ զքեզ չը կան լացողներ.
 Հանգի՛ր շիրմիդ մէջ, դեղձանիկ, սոխակ
 Ահա՛ քեզ հիւսեն եղերք անուշակ.
 Ննջէ՛ աղջկանդ հետ՝ քո՛ն մոռացութեան՝
 Մինչե՛ւ յաւիտեան:

1890 Յունվար 20 Տարեցէ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ



ՅԵՐՈՒՍԱԼԷՄ ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԵՆԷՆ

Ա Ռ

Տ Ի Կ Ի Ն Մ . Ն .

Բարեա՛ւ գայք, տիկի՛ն, որդւո՛վքդ սիրասո՛ւն,
 Բարեա՛ւ գայք, դո՛ւ՛ որ յետ տալոյ համբոյր՝
 Այն աստուածանազ Սիօնի սարերուն՝
 Բերէք մեզ անտի խունկե՛ր կենսաբոյր .
 Ընդ դարձդ, ո՛ տիկինդ,
 Յոլան աչք՝ ի խինդ,
 Կայտեն՝ սիրաք ի թինդ :

Երանի՛, տեսաք յայդ ուրախ աչեր՝
 Սարե՛րն՝ ուր հեղաւ Յիսուսի արիւն,
 Հո՞ն, ա՛հ, մահացուք զԱնմահն են խաչեր,
 Հո՞ն, ուր ցարդ հեծէ հրեշտակ զըւարթուն .
 Լո՛յս՝ Ձեր աչերուն,
 Կեա՛նք՝ Ձեր արեւուն,
 Մայրի՛կ սրբասուն :

Ի՞նչ խանդաղանօք ծունր եկաք արդեօք
 Երբ տեսաք Փրկչին օրհնեա՛լ գերեզման .
 Եւ քանի՛ցս արդեօք բոյր ի բոյր վարդօք

Պըճնեցի՛ն զայն ձեր ձեռներ պատուական .
 Պատի՛ւ այդ ձեռաց,
 Որ բազկատարած,
 Օրհնեցի՛ն զԱստուած :

Ի բա՛ց խօլ պարեր, Ձեր դէմքն երջանիկ
 Յոլա՛յ մեզ Փրկչին քաղցրութիւնն անոյշ .
 Ի բա՛ց Ձեր ճակատն պերճաշուք դարնիք,
 Դուք կրօնից ունիք սուրբ հաւատն և յոյս .
 Ողջո՛յն, Ձեզ ողջո՛յն,
 Որդւո՛վքդ սիրասուն,
 Մայրի՛կդ վեհազուն :

Կայտուեցէ՛ք, բրլու՛րք, սարե՛ր Տարենտու,
 Ահա՛ սիրելիքս առ մեզ են հասեր .
 Երգեցէ՛ք, մանկունք, երգեր սիրարբու,
 Կա՛յ անգին նըւէր քան զանոյշ տաղեր :
 Օ՛ն, կեա՛ց յաւիտեան
 Որդւո՛վքդ սիրական,
 Մայրդ Նահապետեան :

Թո՛ղ հաճին երկինք առնել զի անվիշտ
 Բոլորէք որդւո՛վքդ ամե՛ր բիւրաւէտ .
 Հանգիսականացս թող կեանքեր ընդ միշտ՝
 Երջանի՛կ դարձովք քաղցրանան յաւէտ .
 Եւ սիրաք ու հոգիք
 Գոչեն սիրով լիք .
 — Կեցցե՛ն սիրելիք — :

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

Ա Ռ

ԲԱՐԵՅԱԾՆ ԻՄ Խ. Թ.

Ահա՛ հասաւ հոգեկրտուրն այն վայրկեան՝
Յորում Փրկիչ քրտնէր մերթ քի՛րտըն մահու՛,
Տրտում որպէս ողբերգու՛ .

Ատեւրութեան և նախանձու ուրուական՝
Յաճիւն փոխէ ամեն խոհեր կենսատու
Ազդեցութեամբն ահարկու՛ .

Ատեւրութեան և նախանձու ուրուական
Ո՛չ իսկ ներէ ժամ մի մնալով առանձին
Խօսի՛լ քեզ հետ պարզել ցաւերս մշտեմմին
Առնուլ կարօտն իմ վերջին :

Ո՛ր կողմ դառնամ տեսնեմ ոգիք դժժընդակ ,
Զորս ետութիւն վարէ մահուան յանդուհ խոր ,
Գայթակուութեամբ նորանոր .

Ո՛չ ոք ունի բարւոյն վըսեմ նըպատակ՝
Ընդ բնաւս թռչի կործանման շունչ տխրալիւր ,
Որպէս մահուան թագակիր :

Ո՛չ ոք ունի բարւոյն վըսեմ նըպատակ ,
Անհոգութեան ախտը զամենքն է առեր ,
Լու՛ռ կան . հեծեն Տարանտէի լերկ սարեր ,
Ա՛հ , ամեն սիրտք են սառեր :

Ե՛կ , աղերսե՛նք , թո՛ղ Տէր փառացն ի պատիւ
Շընչէ՛ ըզխանդ իւր գէթ ի սիրտ մանկըտույն ,
Վառե՛լ ըղձի՛ւք սրբագոյն .

Սիրտեր լինին խորան զգացմանց գերազնիւ
Թո՛ղ երկիւղ Տեառն չ՛լլա՛յ ի մէնջ արտալած
Նորի՛ն հոգիք աւերած .

Սիրտերն ըլլան խորան զգացմանց գերազնիւ ,
Տըգիտութիւնն առ ամթոյ թող տայ խոյս ,
Սփռի՛ ընդ բնաւս կրօնից հաւատն և սուրբ յոյս
Եւ միշտ խայտայ սէր և լոյս :

Աստուած ու կրօն զարդն ըլլան մեր դպրոցաց .
Հոն թող մանկտին ուսնի հնչել անդադար

— Սուլթան Համիտ Վեհափառ —
Ճառագայթէ՛ , հաւա՛տք , ի սիրտս մեր մարած .
Հերիք զիրեար ատեն եղբա՛րք կաթոգին
Որպէս դեւեր մոլեգին .

Ճառագայթէ՛ , վառէ՛ զսիրտեր մեր մարած .
Թո՛ղ դան սերունդք քահանայից սուրբ դասուն
Շու՛ք տան , լո՛յս , կեա՛նք մատաղ մանկանց հայկազուն
Զորս կ'սպաննէ՛ ետութիւն :

Մեկնի՛մ ահա՛ , Ալեւո՛ր , սիրտս ի թընդոջ .
Զի՛ դառն է ինձ զրկիլ յանոյճ քոց գրկաց՝
Յիշատակօ՛քդ անմոռաց .

Մեկնի՛մ մաղթանքս ուղերձելով մեր տիրոջ .
Իսկ բեկբեկ սիրտս՝ հառաչներովն իմ օծուած՝
Քե՛զ նուիրեմ խորագգած .

Մեկնի՛մ մաղթանքս ուղերձելով մեր տիրոջ .
Վերջի՛ն այս տես , ժպտէ՛ յանոյճ քո ժքմիտ
Ա՛յդ լինի հուսկ յիշատակ հէգ մշտեմմիդ
Որպէս անգի՛ն մարդարիտ :

ԿԵՂԾ ԲԱՐԵՎԱՄԲ



Ո՛չ, մի՛ հաւտաք ինչ որ ըսեն ձեզ զինէն .
 Նոքա կ'ըսեն — Մեզ համար խենթ կ'ըլլայ նա —
 Աստուած չ'ընէ, զիս յիշատակք լոկ կ'ընկճեն .
 Յիշատակներ, որովք դեռ սիրտս կ'արբենայ .
 Ո՛չ, մի՛ հաւտաք, ինչ որ ըսեն ձեզ զինէն :

Հոգ չէ՛ թէ՛ ա՛լ պիտի չ'տեսնեմ զայս քաղաք .
 Եւ է՞ր, զի ես թողո՞ւմ ընկերքն իմ այնքան ,
 Բայց ես չ'ունիմ ընկեր , բա՛ւ այդ անուան տակ
 Քանի մ'անգութք ցոյց տան դէմքեր մանկական .
 Հո՛գ չէ՛ թէ՛ ա՛լ պիտի չ'տեսնեմ զայս քաղաք :

Թո՛ղ ալ չ'տեսնեմ այս ամիսերուն ծիծաղ օդ .
 Հոն՝ ա՛հ, քանի՛ սողան իժեր շողշողուն .
 Դոքա սպանին իղձե՛րն հոգւոյս ծիծաղոտ .
 Այլ գո՛հ մեկնիմ՝ չե՛ւ մերկացած մարդկութիւն .
 Թո՛ղ ալ չ'տեսնեմ այս ամիսերուն ծիծաղ օդ :

Ես ո՞ր շնորհացն չ'անցնիմ այդ պերճ մարդերուն ,
 Փայլո՞ւն մեղացն , որոց եղեր են գերիք .
 Մին խաղամուլ, միւս գինեճան մեծատուն ,
 Այս ձեւապաշտ, այն ոսկեկուռ մուրացիկ .
 Ես ո՞ր շնորհացն չ'անցնիմ այդ պերճ մարդերուն :


Կեցցե՛ն սակայն այդ մեր ջոջեր բարեսէր ,
 Զիս կարծէին թռչուն մ'իրենց ճանկն ինկած .
 Գէթ այժմիկ թող գիտնան թէ չա՛տ են սխալեր ,
 Ես թողլով զայնս ոչինչ կ'զգամ կորուսած .
 Կեցցե՛ն սակայն այդ մեր ջոջեր բարեսէր :

Գո՛հ եմ ես վասն անոնց չ'ունցած երախտեաց
 Յուցին բաներ , զոր ցուցած չէր իսկ մատեան .
 Արհամարհել զռամիկ , Կըրօն և զԱստուած .
 Պաշտե՛լ գինի , ատել ըզլո՛յս գիտութեան ,
 Գո՛հ եմ ես վասն անոնց չ'ունցած երախտեաց :

Նոցա կորուստ կ'արժէ՞ թափել արտասուք .
 Դոքա ցեցե՛ր են, որ ծըծեն մեր արիւն .
 Դոցա սիրո՞ւն պէտք է որ ես առնեմ սուգ .
 Ինձ փա՛ք, վա՛յ որք ընկնին նոցա ճանկերուն ,
 Նոցա կորուստ կ'արժէ՞ թափել արտասուք :

Լըսէ՛, ռամի՛կ, քե՛զ համար են այս տողեր .
 Դու հարուստէն, ի՞նչ կ'սպասես անօգուտ .
 Քո բնիկ ուժովդ պէտք է քալես անվեհեր .
 Աչերդ՝ յերկին, սիրտդ՝ առ Սուլթա՛նն հայրագութ .
 Լըսէ՛, ռամի՛կ, քե՛զ համար են այս տողեր :

1892 Մայիս 31 Մելիսիցէ



Ի Մ Ա Ս Տ Ա Կ Ն

Ո՞Վ Գ Ի Տ Ե

Այո՛, ունիս դու վիճելոյ մեծ տաղանդ .
 Գո սիրտ՝ անչէ՛ջ հընոց՝ ունի բոց ու խանդ .
 Երբեմն իրաւն կը քարոզես որպէս սուտ
 Եւ սուտն ստէպ որպէս իրաւ կը թափես .
 Հրապուրե՛ս միշտ՝ որչափ լինին իսկ խախուտ՝
 Փաստերդ՝ զի զայնս կ'արտասանես առնապէս .
 Այս՝ այսպէ՛ս է , դո՛ւ ալ գիտես . այնպէս չէ՞ . —
 — Ո՞վ գիտէ — :

Երբ քեզ ըսեն — իրաւո՛ւնքն է զօրութիւն ,
 — Զօրութի՛ւնն է օրէնք — գոչես եռանդուն .
 Թէ քեզ նոյն իսկ ըսեն — արե՛ւն է , որով
 Գարնան անձրեւ պտղաբերէ զանդըս մեր ,
 Զերդ կիկերոն դու միշտ պնդես անխըռով՝
 Թէ անձրեւո՛վ արեւ գործէ հըրաշքներ .
 Այսպէս խօսիս ու հաստատես , այնպէս չէ՞ . —
 — Ո՞վ գիտէ — :

Այլ ո՞չ սոքա են ի միմեանց անբաժան ,
 Առանց ցողոյ ո՞չ արեւն է զոր , դաժան .
 Յօղ ու շող՝ չե՞ն կազմեր օրէնք ներդաշնակ
 Որո՛վ երկրիս տընօրինուին պէտքն համայն .

Գարնան՝ անձրեւ , ամրան՝ արեւ կենսունակ ,
 Զե՞ն քաղցրացներ վիշտեր կեանքիս այս ունայն .
 Եւ տէրն է զայս ամեն վարդն , այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Ո՞վ է բացեր այն հոյլ ի հոյլ շուշաններ ,
 Ո՞յր աջ գեղով , շնորհով զգարունն է պճներ .
 Շափիւղափայլ ճերմակ ու սեւն այն խաղող
 Ո՞յր հըրաշքն է , անձրեւո՞յ թէ արեւուն .
 Կարմրուկ խնձորն պճնեալ ի փայլ և ի շող՝
 Ո՞ր այն ճարտար աջոյ պատմէ զմեծութիւն .
 Անշուշտ էին , մեծ Աստուծոյն , այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Թէ չէ՛ր անձրեւ , կրնա՞ր արեւ ինքն իրեն
 Կըրնա՞ր մեզ տալ ոսկեգիսակ ըզցօրեն .
 Թէ չէ՛ր արեւ պիտի բաւէ՞ր զով անձրեւ ,
 Ի դեղ դալար պճնազարդել դաշտն ու լեռ .
 Թէ չ'ըլլա՛ր վարդ՝ ծաղկանց արքայն բոցաթեւ
 Պիտ՝ գեղգեղէ՞ր սոխակն ընդ դաշտ տալաբեր՝
 Մի վըսեմ զօ՛դ կայ ասոնց մէջ . այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Այլ դիցո՛ւք թէ՛ այսպէս չ'ըլլալ հընար էր .
 Գէթ ընդունիմք թէ զայս ամեն ըրաւ Տէր .
 Թէ կա՛յ մի աջ , ամենազօր կա՛յ մի մատ ,
 Որ հաստատեր է բնութեան կարգն ու օրէնք .
 Թէ Աստուծո՛վ վարի տիեզերք անընդհատ .
 Ընդունի՛մք զայս ճշմարտութիւն , չը մերժենք .
 Աստո՛ւած մը կայ , Աստո՛ւած հըզօր , այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Դեռ ո՞վ գիտէ . բայց թշնամա՛նք է այդ խօսք .
 Բնութիւն լի՛ է նովաւ , դո՞ւ զայն մերժես սոսկ .
 Գընա՛ յանտառն արշալուսոյն շատ կանուխ ,
 Ինչպէ՛ս թռչունք կը յօրինեն նուագներ .
 Տե՛ս դեղձանիկն , ի՞նչպէս երգէ սրտաբուխ ,
 Հոն՝ բան մը սիրտդ , հոգիդ ի թունդ չը՞ հաներ .
 Դոքա տէր մը կ'երգեն , կ'օրհնեն , այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Միշտ ո՞վ գիտէ . ո՞վ չը գիտեր և սակայն
 Թէ պէտք է տէր մ'ունենան այս ամենայն .
 Ո՞վ չը գիտէ եթէ առանց մօր կաթի
 Ընդ ծընանիլն պիտի մեռնէր հէք մանուկ .
 Եւ թէ պէտք է արտսուք յաջաց մեր կաթի
 Մինչեւ յեզըր անլո՛յս շիրմի տրտմասուգ .
 Գէթ ա՛յս անգամ չէ՛ , չե՛ս ըսեր , այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Ի՞նչ , ո՞վ գիտէ , բայց ինձ ըսէ , ի՞նչ ես դուն ,
 Իմաստա՞կ մ'ես , ստոյիկեա՞ն մ'երազուն .
 Ըսէ՛ ուրեմն — մարդիկ առանց այս օդի՛
 Կրնա՞ն ապրիլ օր մը , մի՛ ժամ , մէկ վայրկեան .
 Զը կրնար մարդ ապրիլ անջուր , անօթի
 Լո՛կ իւր կամքով սո՛սկ իւր խօսքով յաւիտեան .
 Անշուշտ սննդեամբ ուժ կ'առնու մարդ . այնպէս չէ՞ —
 — Ո՞վ գիտէ — :

Յամառութիւնդ իրօք յապո՛ւշ կրթէ զիս .
 Հարցմանցս հազիւ թէ ծիծաղիս ու ժմտիս .
 Ինչ որ ըսեմ քս հեգնական — ո՞վ գիտէ —

Յար պատրաստ է մերժել ամեն համոզում .
 Վերջին հարցում մ'ալ , լա՛ւ ուշ դիր , և եթէ
 Դարձեալ մերժես , ա՛լ չունիմ խօսք ու հարցում .
 Դու մարդ ե՞ս , հա՛ , մարդո՛ւ զուակ . այնպէս չէ՞ —
 — Ո — ՞վ . գիտէ — :
 — Այնպէ՛ս է :

1892 Մեյիսիսի

Ե Ր Գ

Ա Ս Տ ՈՒ Ա Մ — Դ Պ Ր Ո Յ

(ՆՄԱՆՈՂԱԲԱՐ)

Երբ սիրով արբշիւ՛ սէր կարծէք զամեն ,
 Ձեր շուրթերը լուռ բաժակներ քամեն .
 Գիշերն երբ յոգնած անհոգ կը ննջէք ,
 Աստու՛ած խորհեցէ՛ք ,
 Դպրո՛ցն յիշեցէ՛ք :

Երբ արշալուսոյն քունէն արթննաք
 Կանուխ ժամ երթաք , աղօթքի կենաք ,
 Ձեր բոլոր հոգւոյն Աստու՛ծոյ կանչէք ,
 Ժամը խորհեցէ՛ք
 Դպրո՛ցն յիշեցէ՛ք :

Աստուծոն երբ չուկայ կ'երթաք ի վաստակ,
 Յերեկն երբ հանգչիք զով չուքերու տակ.
 Ձեր աչքն անգամ մը ժամուն դարձուցէք,
 ԶԱստուծո՛ւ խորհեցէք,
 Դպրո՞ցն յիշեցէք:

Կիւրակէ ժամէն երբ գոհ տո՛ւն դառնաք,
 Ակումբնե՛ր կազմէք՝ երգէք ու խայտաք.
 Եւ Ձեր սիրեւեաց գգուանք չըռայէք,
 ԶԱստուծո՛ւ խորհեցէք
 Դպրո՞ցն յիշեցէք:

Յիշեցէ՛ք... հերի՛ք զիրեար փետտեցիք,
 Հերի՛ք նախանձով ապրեցաք, հերի՛ք.
 Բա՛ւ է, եղբայրնե՛ր, բա՛ւ է, միացէ՛ք,
 ԶԱստուծո՛ւ խորհեցէ՛ք,
 Դպրո՞ցն յիշեցէ՛ք:


Աստուծո՛ւ կայ վերը, Աստուծո՛ւ վեհազօր.
 Նա՛ պիտի դատէ ամենքս ալ մի օր.
 Աստուծո՛յ սիրուն, ոխն մէկդի թողէ՛ք,
 Ժամը խորհեցէ՛ք,
 Դպրո՞ցն յիշեցէ՛ք:

Այս ատելութեան՝ վախճա՛նն է կորուստ.
 Աստուծո՛ւ է, որ Ձեզ կը խօսի վերուստ.
 Եկէ՛ք ալ, եղբա՛րք, սիրով միացէ՛ք,
 Աստուծո՛ւ խորհեցէ՛ք,
 Դպրո՞ցն յիշեցէ՛ք:

Ի՛նչ մեծ բաղդ, կ'ապրի՛նք մի այնպիսի դար,
 Ուր կ'իշխէ հայուն հա՛յր մը վեհափառ.
 Սուլթան Համիտ Խան, Կայսրը մեծազօր՝
 Ապրի՛նք միշտ անոր
 Շուքո՞վն ահաւոր:

Օգտի՛նք ի սիրոյ մեր վեհ Սուլթանին.
 Թող մեր գպրօցներ ծըլին ու ծաղկին.
 Եւ մեք միշտ ի սիրտ գոչե՛նք միաբան.
 — Կեցցէ՛ յաւիտեան
 Սուլթան Համիտ Խան —:

1891 Մայիս 15 Տարեցի



Ի Մ Վ Ի Ե Տ Ը



Զիս գիշեր ատեն
 Խոհք երբ տազնապեն
 Ի՛ անցելոյն պատկեր
 Տեսնեմ տխրանուէր ,
 Դուրս նետուիմ յայնժամ
 Դառնապէս կ'ուլամ .

Հոն դո՛ւ , ո՛վ լուսին , ի՛նչ սուրբ թախծութեամբ
 Քողարկես հոգւոյս վերայ լուսոյդ ամբ .
 Ինչպէ՛ս ցոյց տաս ինձ հոն զայն վեհ նըկար՝
 Որ պաշտելի էր քան զկեանս ինձ համար .

Բայց շողերդ մաքուր
 Ինձ ալ մի՛ հեղուր .
 Խնդրեմ , ո՛ր լուսին
 Յօղէ՛ վրայ կուսին .
 Նէ՛ մօրն իմ գոհար
 Գողտրի՛կն է տիպար : . . .

Դարնան խնկարեր
 Զով առաւօտներ՝
 Մինչ ծով ու ցամաք
 Միծաղին անյագ
 Կեանքն ինձ , ա՛հ , բուր
 Օթեակ մը թուրի .

Եւ անյո՛յս խնկառ կարծեմ , ո՛վ Աստուած ,
 Սե՛ւ նոճիներով հոգիս պաշարուած .
 Մեռեալ մը լինիմ անշարժ , անյարիր՝
 Գոցուի՛ սիրաս որպէս շիրի՛մ տրամալիր ,
 Ինձ ալ մի՛ ժպտիր ,
 Գարո՛ւն կենալիր ,
 Յօղերդ թող ցանուին
 Վերայ հե՛ղ կուսին .
 Նէ՛ մօրն իմ գոհար
 Անդո՛յգն է տիպար :

Քանի՛ցս ա՛հ բուսան
 Վարդ , յասմ և չուշան .
 Քանի՛ցս ծիծուռնք
 Եկան զուարթունք .
 Հանգչի՛ մայր սիրուն
 Ներքե՛ւ սեւ հողուն :

Այն սեւ օրէն ետք՝ մինչ դու , մայրի՛կդ իմ ,
 Մինչ ծածկէ ըզքեզ մշտալու՛ւ շիրիմ .
 Ես չը կապեցի դեռ փու՛նջ մը ճակտիս .
 Փու՛նջ , որ հրապուրէր , մօղէր իմ հոգիս .

Անվերջ է իմ սուգ .

Այլ բուրեցէ՛ք , դուք ,
 Վարդե՛ր , բո՛յրքդ անուշ՝
 Թո՛ղ կայտուն զայն կոյս .
 Նէ՛ մօրն իմ գոհար
 Ըզգրի՛տն է տիպար :

Դարձնեմ մերթ տըմոյն
Դէմքն իմ անցելոյն .
Հոն խնդրել անձկով
Մայր խանդագորով .
Որ այժմ յիշատակ
Մ'է լոկ սիրունակ .
Ի զո՛ւր ես կ'այցեմ լըռին շիրիմներ ,
Մարե՛լ իմ հոգւոյս կրակը կենսաւեր .
Լռութիւն մը կայ հոն , ուր հովին շըջունչ
Եւս քան զեւս մթնէ խոհերուս անուրջ .
Ձեփիւ՛ւռ տխրասէր .
Ինձ ա՛լ մի՛ շնչեր .
Քո շունչ ամբոսեան
Թող գգուէ զկոյսն այն .
Նէ՛ մօրն իմ գոհար՝
Չքնաղն է տիպար :

Թո՛ղ երգէ բաժիշտ
Ձիւր սէր և կամ վիշտ .
Թո՛ղ փթթի հուր վարդ .
Բուրումով զուարթ .
Թո՛ղ շողան աստեղք
Ու փայլի արեգ .

Ես միշտ երազուն , տըխո՛ւր ու մենիկ ,
Առանձնութեան ծոց պիտ' սուզիմ լըռիկ .
Հոն երազել մայրս , լալ զայն հէք տատրակ
Աղէկըտուր զիմ կրկնելով նըւագ .

Ա՛լ թող չը լսեմ
Երգերըդ վըսեմ .
Սոխա՛կ , տաղքդ անոյշ
Թուցո՛ւր առ այն կոյս .
Նէ՛ մօրն իմ գոհար .
Նէ փափկիկ տիպար :

Տէր ՍՏԵՓԱՆ Պ ԱՍԼԱՆԵԱՆ

Տէր Ստեփա՛ն . . . օ՛ն , յիշե՛ք զայս անուն .
Դեռ իւր անունով լի՛ է Մելիտին .
Գործեց սա ամբողջ ամեր երեսուն՝
Քրտա՛մը հոգեծին :

Անո՛ւս՝ այլ համակ տշխոյժ ու կորով ,
Խա՛չն էր իւր միակ ուսուցին ու վաճան .
Կը քարոզէ՛ր լոկ սէ՛ր , գո՛ւթ ու գորով ,
Շեշտովք սըրտաճան :

Նա փառքն ու պըսակ՝ երիցանց դասուն՝
Գործե՛լ միշտ — ահա՛ իւր նըշանաբան .
Չը գիտէր նախանձ , նա՛ մեր տրտմասուն՝
Ոգւո՛ց պահապան :

Մէկ ձեռքը՝ Նարեկ , միւսն՝ Աւետարան՝
Քրտնէր ու տքնէր՝ ի խնդիր հօտին .
Իւր սիրտը՝ սիրոյ խնկասփիւռ խորան՝
Հընո՛ց էր հոգին :

Իւր ջերմ արտասուօք բուժուած են ստէպ՝
Ոգւո՛վ ու մարմնով բազո՛ւմ ախտաժէտք .
Առ նա կ'ընթանար ամեն երաշխէպ՝
Շա՛տ ցաւերէ՛ ետք :

Աստուած օժտեց զայն շնորհօք խանդակաթ՝
 Շունչին մէջ աշնակէս զօրութիւն մի դրաւ .
 Ոյր հանդէպ կ'առնէր՝ նոյն իսկ սիրտ երկաթ՝
 Փափկութիւնն ամբաւ :

Երեսուն ամեր խնամեց նա զիւր հօտ՝
 Անարատ կենօք և անբիծ վարուք ,
 Յիշատակ թողուց քաղցր իբր առաւօտ՝
 Ի՛նչ անուն սրբաշուք :

Եւ այսօր թէպէտ անցա՛ն քսան ամեր ,
 Այլ նա միշտ ի մեզ կ'ապրի ու կ'ապրի՛ .
 Այո՛ , կ'ապրի՛ նա , դեռ չէ՛ թառամեր՝
 Որդւո՛վն իւր բարի :

Եւ վարժապետն է դա մեր ծաղկոցին ,
 Գթութիւնն՝ դա միակ աւանդն է իւր հօր ,
 Վարժապետ անխոնջ , ցածուն , աղքատին՝
 Անունն՝ Գըրիգոր :

Քառասնամենի իւր կեանք՝ դժժնեղակ՝
 Վարժապետական հոգերով մաշուած .
 Մեծարա՛նք , եղբա՛րք , առ այդ հէ՛ք մըշակ ,
 Եւ չո՛ւք՝ ո՛վ Աստուած : . . .

1892 Մեկիսիկէ



Գ Ի Շ Ե Ր

Լո՛ւռ է բնութիւն , հանգչի՛ համայն , տխրի՛ անձն
 Իմ յուշ անցելոյն ,
 Հա՛ արշալոյս ծիրանեղարդ , մարին մարգրիտ աչեր
 աստեղց .
 Տակաւ տակաւ ծըլին ծաղկունք արձակեալ բոյրըս
 խնկասփեռ

Զի՞նչ երազես
 Սի՛րտ ազեկէզ .

Ըզսէ՞րդ խնդրես , ո՛հ , ո՛չ է նա , ամբաւ միջոցք
 անջրպետեն .
 Ուրեմն , ո՛վ ցաւք , ի զո՛ւր գոչեմ հառաջս հատեալ
 անյուսալից .
 Զո՛ւր երազոց գլեալ յանդունդս վտակս արտասուաց
 գնացուցանեմ . . .

Օհ շնաստառ
 Նուաղի՛մ խաղառ . . .

Ու՛ր ես , ո՛ կոյս , ո՛ւր ես , ո՛հ , յիմ սիրտ արեան
 գընան առուք ,
 Երբ քո այտիցդ աննըմանեաց աչացս հանդէպ նըկարին
 վարդք .
 Երբ հոյլ ի հոյլ խոզոպեացդ յիշեմ ըզպերձ ծաւա-
 լանալ

Լոյսդ ի ճակատ
 Կո՛յս վարդամատ :

Յաղբերց ականակիտ երբ ի յափուհս ես հասանեմ,
 ի հայելիսըն թափանցիկ զքոյդ համարիմ տեսանել
 տիպ .
 Յամեն ուրեք քո յիշատակ ամեն ուրեք ա՛հ քո ժը-
 պիտք :

Սէրդ՝ ինձ , ո՛ր կոյս ,
 Տայր կեանք և յոյս :

Գայցէ՞ արդեօք մի օր , ո՛վ Տէր , և կարացի՞ց գո-
 չե՛լ առ նէ
 — Ի՛մ ես , ո՛ր կոյս , երկինք բզբեզ ինձ շնորհեցին
 զթածաբար : —
 Գայցէ՞ մի օր և համբուրիւք ողորկեցե՛մ զնորին չըր-
 թունս .

Եւ յիւր գլխիկ
 Դիցե՛մ զծաղիկ :

Քանի՛ պսակս ոլորեցի վարսանաղիկ լոյս ճակա-
 տուդ
 Փթթինաղարդ ի ծաղկանց , զի երբ բաղդն յիս ժըմ-
 տեալ զուարճ
 Զիս դարձուսցէ ի գիրկդ , ո՛ր կոյս , ցանեմ յայնժամ
 ես լիաճեալն

Շուշանավարդ
 Ոսկեսաղարթ :

Այլ այնք , աւա՛ղ , փռտեցան , և ընդ նոսին ես
 կորուսի
 Զաշխոյժ , ըզխանդ և ըզկորով , ո՛հ , սեւացայ զերդ
 գերեզման .

Դու գէթ , լուսի՛ն , օ՛ն ի Սաղիմ , կա՛ց ի մահիճ փափ-
 կիկ կուսին
 Հե՛ղ քո ճաճանչ
 Գողտրիկն ի լանջ :

Հե՛ղ ըզնըշյլ քո զարծաթի ի գեղութեան յայն
 վեհարան ,
 Եւ զուարթուն օրիորդին ի վարդ դիմացն յուշիկ
 յուշիկ
 Ըմպեալ սիրով՝ անմահարար մի շաղ՝ փութով առիս
 դարձի՛ր ,

Յիս կաթեցո՛ ,
 Զիս զովացո՛ :

Եւ զիմ , լուսի՛ն , տխուր պատկեր ո՛հ նըկարեալ
 ի քո ճակատ՝
 Ընդ քեզ տար՝ զիս և նստեցո՛ վերայ մահճի չքնաղ
 կուսին
 Ո՛հ ես սիրեմ դիտել անդ նորին պայծառ դիմացն
 ըզփայլ

Նէ զուարթուն՝
 Երբ ննջէ քուն :

Տա՛ր , աղերսեմ , ո՛ր լուսին , և մինչ ի քնոյն զարթ-
 նուցու նա
 Տո՛ւր ինձ զանմահ ըզքո գեղ , զի երբ ածցեմ գիրկս
 ըզնովաւ
 Ոհ , ի սիրոյս ո՛չ չրտնուցու . . . տա՛ր , այլ խաբիմ ,
 ո՛վ ցնորք ունայն ,
 Հառաչք լըռի՛ն՝
 Են իմ բաժին . . .

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԽՆՁՈՐԸ

Ա.

Տարիներն կը բուրբին
Ես կը հալիմ օրն օրին,
Դեռ իմ մըտքէս չէ՛ ելեր
Յիշատակն այն խնձորին:

Երբեմն անուշ աչերով
Ինձ կ'ուտայիր սէր, գորով:
Հիմակ հեռո՞ւն կը փախչիս
Երեսդ ինձմէ պահելով:

Ըսէ՛ հիմակ ո՞ւր է, ո՞ւր՝
Խնձորիկն այն բոցահուր
Զոր ես դըրի ձեռքիդ մէջ
Համբոյրներովն իմ մաքուր:

Ըսէ՛, ո՞ւր են, ի՞նչ եղան
Մեր ուխտերն այն սրբազան,
Որով երբեմն արբեցած
Խօսէինք տատրակի նման:

Այս ինչքան շուտ մոռցար դուն
Քո երկնային քաղցրութիւն:

Ինչ շուտ սէրդ թողմեցաւ
Յիշատակով իւր անհուն:

Աղու աղու աչերովդ
Սիրովն այրիմ զինչ պարուդ,
Եկուր մէկ մ'ալ համբոյր տամ
Այդ ասկեթէ՛ւ մազերովդ:

Ե՛կ իմ փափուկ Աղաւնեակ,
Ահա՛ մարի հոգւոյս կրակ,
Ե՛կ իմ մեռած յոյսերուն
Տու՛ր կեանք ու ցո՛ղ անուշակ:

Բ.

Շատ մարդիկ խաղող կ'ուզեն,
Ու գինովնան ողկուղէն,
Ես ի՞նչ ընեմ քարս խաղող
Դու իմ գինին իմ մէջէն:

Քո հասակն է գեղուղէ՛լ
Մէկ տարուան նոճիի պէս.
Այդ հասակիդ կըրակով
Մոխիր դարձայ պարզապէս:

Երբ դուն կ'իջնես պարտիզակ
Կ'ուզեմ դիտել քու հասակ
Ականջդ ի վար փափուսալ
Մեր ուխտերը սիրունակ:

Քե՛զ կ'սպասեմ սիրտ—հառաչ
 Ժամուն դըրան միշտ առաջ.
 Երբ ամօթէ՞ դուն կարմրած
 Կ'անցնիս կ'երթաս դէպ առաջ:

Ի՞նչ կայ ի սէր արեւուդ
 Ա՛յդ քան մ'ըլլար դու անդուծ
 Մէկ մը ժպտէ՛ թշուառիս
 Անոյ՛ ժպտոյն աչերուդ:

Գոհար՝ ի մէջ գոհարաց
 Աստղիկ՝ ի մէջ աստեղաց
 Դու ինձ քան զամեն աղջիկ
 Ես միշտ աղուոր գերազանց:

Արի՛, սիրուն աղաւնի՛,
 Արի՛ տատրակ գեղանի
 Զըգէ՛ թեւերդ այդ ճերմակ
 Թող համբուրեմ ես զանի:



Ճ Գ Ն Ա Ժ Ա Մ Ը

Ա.

Օղին բազմեր սեղանին վրայ յաղթական
 Կը շողար վըճիտ,
 Խոստանալով գինովել վաղ անագան՝
 Ամեն սիրտ ու միտ:

Կը շողար միշտ անխօս, լռին, աներեր՝
 Շիչին մէջ բիւրեղ.
 Պատեհ ժամուն կատարելու զիւր մեծ դեր՝
 Խօսքերով բուրեղ:

Այդ հեղուկին վրայ գամուեր էր ամեն աչ,
 Հեղուկ պաղ, ցրտին,
 Ոյր բազդն է միշտ վեր հանել խինդ ու հառաչ,
 Ամենուս սրբտին:

Եւ խըմէինք ահումբ կազմած անոր շուրջ՝
 Ընկե՛րք եօթներին.
 Սպասելով որ հաճոյից խումբ մ'անուրջ՝
 Լեցընէ՛ հոգին:

Բաժակն անդուլ կը կատարէ զիւր շրջան
 Բո՛ց մ'է, որ թրթռայ.

Եւ հաճոյքը տիրէ լըռիկ ու անջան՝
Սրտին, հոգւոյն վրայ:

Այն ինչ խօսքեր, ինչ հոգեցողնց կատակներ՝
Լըսուին այն ժամուն.
Երբ մին կամ միւսն օ՛րս մը թռցնէ առ իւր սէր
Որ չա՛տ է հեռուն:

Եւ խինդ պահ մը նուրբ ամպով մը հ'ըսքողի
Կուգայ լըջութիւն.
Ու կարծես զիւր բընոյթ փոխէ խրոխտ օղի՝
Կ'առնու տխրութիւն:

Բ.

Այլ կ'անցնի՝ մոսայէն, կրկին դէմքերն կը վառին.
Խոյս՝ տայ սեւ մտածում.
Օղին դառնայ, բաժակը իրար կ'ընդհարին,
Ինչ յեղաշրջում:

Եւ պիւլպիւլի լեզու առեր կը խօսին
Ոգիքն այն կայտառ՝
Մինչդեռ վերջին շողն օրուան վեհ փարոսին
Կը շողայ վառվառ:

Այդ շողին մէջ կը վազվազէր խայտաղին՝
Ճանճ մը չարաճճի.
Մերթ շիշին շուրջ և մերթ սիրուն բաժակին
Բզզալով մոռացի:

Ճառագայթին մէջ կ'արշաւէր անդադար՝
Սէգ դւ յաղթական.
Մ'կըրտելով բզզիւններով իւր կայտառ
Շիշ ու բազմական:

Բայց գոհ չէ՝ ճանճն, կ'ուզէ շիշին մէջ մտնել
Հո՛ն գընէլ զիւր գահ.
Հէ՛ք անասնիկ, գիտէ՞ թէ հոն անարգել
Պիտի գտնէ՛ գահէ...:

Բ.

Եւ կը փորձէ, ճգնի՛, քրտնի քաջապէս
Հասնի՛լ իւր փառքին.
Եւ յաջողի՛ իսկ մտնելու վերջապէս՝
Շիշին մէջ անգին:

Մտնէ՛, ինչ փառք, և հոն քանի մը վայրկեան՝
Թռչալի՛ հեշտօրօր.
Ապա արբշիռ նետուի՛ օղւոյն աւազան՝
Յնորի՛ւք նորանոր:

Թշուա՛ռ ճանճիկ, թեւերն իրեն չօգնեցին.
Օղին էր սաստիկ.
Շարժե՛ց թեւերն, թափեց ճիգեր ահագին,
Բզզա՛ց իսկ մեղմիկ:

Իւր տագնապին մէջ շուտ ջանամբ հէք ճանճին
Հասնիլ յօգնութիւն:

Այլ տապալուէր էր, վախ, փափուկ իւր մարմին
Անխոց, անարիւն:

Հէ՛ք ճանճ, ինչ նոր կեանք, վայելքներ կ'երազէր
Շիշի՛ն մէջ փայլուն.

Ուր թըռչընէր բաղձանքներով հեշտասէր
Ուրախ, զմայլուն:


Կ'աճապարեմ, կը հանեմ զայն յուսաբեկ
Այն շողուն բանտէն.

Կը գգուեմ իսկ, այլ չը շարժիր նա երբէք՝
Մեռեր էր արդէն:

Եւ կը յուզուի՛մ, տեսնելով դառն այս վախճան
Տարաբաղդ ճանճին.

Եւ մոռացած վայրկեան մ'ամեն խըրախճան
Կ'ուլա՛մ առանձին...

1892 Հոկ. 15 Մեխիսիճէ



Ի Ղ Ձ Ք

ԱՌ ՀԱՄԱՅՆ ԲԵՌՆԱԿԻՐԾ



ԿՈՒՂԷԻ ԸԼԼԱԼ

Կ'ուզէի՛ ըլլալ աղբիւր զովացիկ
Որ երբ դուք յոգնած ձեր բեռներուն տակ
Մարմըրած սրտով ջուր, ջուր կանչէիք
Ձեր սրտին հոգւոյն մարկի ըզտաք:

Կ'ուզէի ըլլալ մի ձերմակ կարապ
Ունենալ արծուոյն թեւեր լայնարձակ,
Որ երբ ձեզ նեղէր արվին հըրատապ՝
Ձեզ պահպանէի իմ թեւերուս տակ:

Կ'ուզէի՛ ըլլալ ոգի՛ն զօրութեան,
Որ երբ բաղուկներդ ճնշէր յոգնութիւն,
Տայի ձեզ խկոյն թեւերս անսասան՝
Եւ թըռցընէի ձեզ որպէս թռչուն:

Կ'ուզէի՛ ըլլալ մի միլիոնատէր՝
Պաշտուի՛լ որպէս իշխան վեհաշուք՝

Տարին անգամ մը տալ ձեզ գէթ հրաւէր՝
Գէթ օր մը մեղմել ձեր քիրտն ու պասուք :

Իսկ թէ զըլանայր ինձ բաղդ անողոք
Պարգեւեւէլ ինչ որ կ'ուզէի լինել՝
Թէ միայն այսպէս սին փափագանօք
Պիտի կըտըրուէր օր մը կեանքիս թել :

Կ'ուզէի՝ ըլլալ գոնէ մի ծաղիկ՝
Դամբաններուդ վրայ բացուիլ յետ մահուան՝
Բաղեղի մը պէս փաթթուիլ սաստիկ
Ու ոսկորներուդ ըլլալ պահապան : . . .

1892

Ը Ս Է Ք

Ըսէ՛ք, աղջկո՛ւնք, ի՞նչ հրեշտակին է անուն,
Որոյ քան ըզմեզր անու՛շ է լեզուն .
Յուս իւր ծրփին փայլ փայլ վարսից ալիներ
Ոյց համբոյր տարիմամբ տան այգուն շաղեր :

Ըսէ՛ք, որո՞ւ է աղջիկն այն նազելի,
Ոյր պարանոց է ճերմակ գերդ ալի .
Ին՞չպէս կոչէ՛ք զայն հրեշտա՞կ, իսկուհի՞՞,
Որ աստղի մը պէս վառի ու վառի :

Ըսէ՛ք, այգուն մի նըռոյլն է գոհարի,
Որ վառի՛ յաւէտ և ոչ նպառի .
Կամ թէ երկնից արուսեա՞կն է սիրապաղ
Որ չողայ վէտ վէտ ի մէջ նազուհեաց :

Աւա՛ղ, ո՛վ կոյս, քանի՛ զբնութիւն խուզարկեմ,
Ամո՛ւլ է, չունի՛ քեզ անուն վըսեմ .
Ընկերուհիքդ ըզքեզ կանչեն չողաբեր,
Զի՛ վարդ ու ժըպիտ ցայտեն քո այտեր :

Իսկ ծընողքդ, որ կը ճանչեն քու հոգի,
Ձայնեն Բրաբիո՞ն, անուն կաթոգի .
Ո՛ր չքնաղ կոյս, անո՛ւնդ միայն յուզէ զիս,
Ե՛րբ ակնարկներովդ փթթես իմ հոգիս :

Խօսէ՛, ո՛վ կոյս, ա՛հ, թէ խօսքերդ ալ զլանաս,
Ու քերովքէից ժըպիտներդ մոռնաս .
Գերեզմանին մութ կը պատէ զիս անդէն .
Միթէ չէ՞ դամբան սիրտ մը քարեղէն :

ԾԱՐԱՌԻ ԵՆ

Ծարաւի՛ են ո՛հ, չուրթերս, ծարաւի՛
 Քաղցր համրոյրներուդ հրեշտա՛կդ իմ ծաւի.
 Ծարաւի՛ են, կո՛յս, աչերս՝ այդ գոհար
 Աչացդ մէջ յառիւ, սուզի՛լ անդադար.
 Ծարաւի՛ են, ո՛հ, մատներս դողդոջուն՝
 Գէթ թամ մի հանգչիլ ձեռքի՛դ մէջ փաղիուն.
 Ապա վարսերո՛ւդ մէջ գընալ ծածան՝
 Դընել հոն փունջ մը վարդերու գունեան.
 Կախե՛լ պարանոցդ մանեակ մ'ոսկեզօծ՝
 Որոյ գոհարքն են սրտիս կրակն ու բոց:
 Պիտ՝ ներե՛ս յայնժամ՝ ձըգել զիմ բազուկ
 Սեղմե՛լ հոգեթունդ քու մէջքը փափուկ...
 Ա՛հ, տէրեանցա՛ծ՝ բոլոր իմ յոյսեր,
 Անյուսութեան մռայլն են ընդ միշտ սուզեր.
 Մի անմահական ծպտովդ, Բրաբիո՛ն,
 Պիտի չընծիւղե՛ս բաղձերուն կոկոն,
 Թէ մերժես ժըպիտդ, ո՛վ կոյս նազելի,
 Որ դէմքիդ վրայ՝ զերդ ճաճանջ փայլի.
 Հեռի՛ չնորհներէդ, կո՛յս գլրդ ու առոյգ
 Պիտ՝ այրի՛, հաւնի՛ սիրտս որպէս պատրոյգ.
 Անցնի՛մ ես որպէս կայծ մը ճրրազի
 Աւա՛ղ, զիս զարկաւ սէրըդ շեշտակի՛:...

1885 Surbist

ԱՌ ԿՈՅՍՆ ՀՆԳԱՄԵԱՅ

Աղջի՛կդ հեղանազ
 Ի՞նչ կ'ուզես յինէն.
 Աչերդ հազիւ հազ
 Ակնարկել գիտեն:

Դու դեռ անմեղ ես, չգիտես ի՞նչ է սէր,
 Խօսէ՛. ի՞նչ կ'ուզես, շաքա՛ր թէ պատէմ
 Մի՛ փախչիր, եկուր պագնեմ քու աչեր՝
 Չ'ընես կեղծ նազեր, կեղծիքն ես կ'ատեմ:

Ե՛կ, անո՛ւշ աղջիկ,
 Մօրդ անգի՛ն գոհար,
 Տուր ինձ մէկ պաչիկ՝
 Տամ քեզի շաքար.

Բայց նա խոթողի անուշ խօսքերուս.
 Հեռու կը փախչի, ո՛վ անմեղութիւն.
 Շուարեր էի, չէր բռներ լեզուս,
 Կանչել, գիկել զայն խանդո՛վ եռանդուն:

Կարմրեր էր, կարմրեր՝
 Աղջի՛կն այն քնքուշ.
 Երեսն էր բացուեր
 Մի նորաբաց նուշ:

Այն կըրիկ, փափկիկ երեսին վրայ
 Փակցուցի մեղմով համրոյր մ'անուշիկ,
 Զո՛ւր ճնճըղիկի պէս նէ կը թրթռայ՝
 Կողոպտե՛ր էի աղջիկն այն փոքրիկ:

Բոլոր համբոյրներն
 Տուեր էր բռնի.
 Ի՞նչ ընէր ուրեմն
 Թշուա՛ռ աղաւնի:

Առ անմեղ ցամառն չքնաղն այն կուսիկ
 Արտասուեաց առատ կը թափէ կայլակ.
 Յետոյ մանրաքայլ և սուսիկ բուսիկ.
 Փախչի՛, պահուըտի՛ մօրը թեւուն տակ:

Թըռչըտէր թեթեւ
 Որպէս մի ճնճըղիկ.
 Եւ գլխուն ետեւ
 Խաղան հերք փափուկ:

Մանրիկ ու մանրիկ այսպէս քայլերով
 Գընա՛ց, հեռացա՛ւ աղջիկն այն սիրուն.
 Իր հետը տարաւ իմ սէր ու դորով
 Ու ա՛լ չը դարձաւ փոքրիկն այն թռչուն:



ԱՌ Պ. ՍԱՄՈՒԷԼ ՅԵՐԶԱՏԵԱՆ

Աղնիւ Սամուէլ,

Սիրունիկ նամակդ յիշատակնե՛ր յուզեց մտքիս
 մէջ և վերացա՛յ յանցեալն, ուր դու դպրոցական էիր՝
 ժիր, խոհուն, մոռացի ուշեղ, մանկի՛կ դպրոցական
 մը:

Ճիշդ չորս տարի կ'լինի. Կ'ուսանէ՛ր յայնժամ
 առոյգ դէմքդ՝, գեղուղէ՛ւ ճակատդ մատենիդ յա-
 ռած. կ'ուսանէ՛ր խանդավառ՝ անխոնջ թիթեանիկի
 նման: Անձնիւր մատեան՝ քե՛զ համար ծո՛վ մ'էր ի-
 մաստից. կ'թղթատէ՛ր անդուէ, կ'կարդայիր անխոնջ.
 կ'չտեմարանէ՛ր անյադ, հոս՝ մի ծաղիկ, հոն՝ մի
 աստղիկ, այլուր շաղեր ու չողեր կ'հաւաքէ՛ր և ա-
 մեն օր կ'ուսնանա՛ր, կ'ծաղկէր, կ'զեղոյր ուզեղդ
 նորանոր իմաստիւք և խորին հմտութեամբ:

Եւ ես՝ գիտելով մէն մի շարժումդ, կերպարիտ-
 փոխուած կ'երագէի մանուկն՝ իմաստնոյ, և ապագայդ
 կ'տեսնէի լուսով, յուսով, ճառագայթով ողորուն:
 Եւ այսօր, ճիշդ չորս տարի ետք՝ կ'տեսնեմ թէ՛-
 չե՛մ սխալած. թէ՛՝ երազներս իրացած են. թէ՛՝ մա-
 նուկն Սամուէլ իրօք եղեր է իմաստունն Սամուէլ:
 Ի՛նչ փառք, ի՛նչ մեծ աւետիս դաստիարակի մը հա-
 մար:

Թղթի՛կդ կ'հաստատէ գայս, թղթի՛կդ ըսի, ու-
 կայն ոչ, սրտիդ՝ ծաղիկն, հոգւոյդ՝ խուսկն պիտի
 ասէի. գեղափիթի՛թ ծաղիկ, վարդասփի՛ւռ խուսկ.
 խուսկ սիրաբոյր, խուսկ անմահաբոյր:

Այդ զգացմանց խունկին հոգեզմայլի՜կ բուրմամբն արբչիւ՝ ահա՛ կ'առնում գրիչս և կ'գրեմ' քեզ, ազնի՛ւ պատանի. կ'գրեմ' վերջ ի վերջոյ սթափած այն քաղցր պատրանքներէ, որք ընդ երկար օրօրեկէ ետք՝ այնքան անգթօրէն վերադարձուցին զիս ի ծոց առնողք իրականութեան:

Եւ ինչ անուշ, ինչ հոգեյոյզ պատրանքներ էին, զորս կրեցի, պատրանք՝ բարեկամացս կողմէն, պատրանք՝ հայրենակցացս կողմէն, պատրանք նոյն իսկ աշակերտացս կողմէն:

Եւ տակաւին, ո՛վ ազէտ, մինչեւ ցայօր կարծէի թէ՛ անձնուէր, անկեղծ, սիրական բարեկամներ ունիմ. բարեկամներ՝ ի Տարենտէ. բարեկամներ՝ ի Կիւրին. բարեկամներ՝ ի Գերմանիկ և յէլպիստան, այդ իմ ցանկալի՝ ծննդավայրն՝ ոյր անտարբերութիւն գերազանցեց՝ զիւր տգիտութիւն ու աղքատութիւն:

Այդ բարեկամներն ո՛ւր են այժմ. ի՞նչ են եղած. արդեօք մեռած են. արդեօք կորած են. ո՛չ ոք գիտէ, լո՛ւռ են սակայն, ա՛յս է ճշմարիտն, լո՛ւռ ամենեւին և ո՛ր գիտէ գուցէ յաւիտեան եւս լո՛ւռ պիտի մնան:

Ձարմանք, ո՛չ իսկ խօսքով մը, ո՛չ իսկ բառով մը ցոյց տուին ցարդ թէ կ'ապրին, թէ՛ բարեկամներ են, թէ՛ կ'ճանչեն զիս: Վա՛խ, բարեկամութիւնն, այսքա՛ն ուրեմն պիտի ստորնանայիր:

Քան զնոսա անտարբեր տեսայ, զորս — իմ աշակերտներս — կը կոչէի:

Երեքն և եթ ի նոսա Պ. Ստեփան Նահապետեան, Պ. Ե. Հաղարտպետեան եւ Պ. Յ. Փօլատեան, քո տարեկիցներն ու դասակիցները կ'ուգան քեզ հետ ի

հեռուստ քաջալե՛ր կարգալ ինձ՝ դառն յուսախաբութեանս մէջ: Դոքա՛ և եթ կ'իմութան վանել յինչն ամպերն մտահոգութեանց և սրբել քի՛րտն ճակատուս իւրեանց փաղափուշ լեզուաւն, անուշի՛կ ձայնովն, մանկայլին բարբառովն:

Եւ այժմ մինչ ամեն կողմէ ձախողուածք կը խռժեն վրաս, դո՛ւ և եթ նոցա հետ՝ թէպէտ հեռի, թէպէտ մանուկ՝ մէն միայնակ կ'շտապես ի հեռուստ ուղղել ինձ խանդ և խրախոյս: Օրհնեա՛լ ըլլաս:

Քո ձայնիկ՝ տկար այլ եռանդուն, կ'ոգեւորէ զիս. և կ'սթափիմ, և կ'զօրանամ և կ'պատրաստուիմ արիապէս ի դլուխ հանել զայն գործ՝ որում ձեռնարկած եմ անհուն խանդով:

Թող յայսմհետէ նախանձն գոռա՛յ ուժգին. թո՛ղ անձնասիրութիւնն անխնայ թափէ՛ զիւր նախճիր. թող ատելութիւնն մուր, թու՛ք տեղայ ճակարիս, ի՛նչ հոգ. նոքա բաւական բարձր պիտի գտնեն զիս և ես՝ ո՛րքան անշուք ու տկար՝ բաւական ատրիութիւն պիտի ունենամ վեհ ճակատ մը պարզելու նոցա առջեւ:

Եւ է՞ր այսպէս չ'ըլլայ:

Քո աղմու ձայնիկն, ուր կ'սօսի սիրտդ՝ պիւլպիւլ սիրոյ. քո սիրական բարբառն, ուր կ'երգէ՛ հոգիդ՝ աղաւնի՛ անմեղութեան, ո՞չ ապաքէն զիս կ'ձայնէ ի հեռատունէ: Է՛հ, այդ հրեշտակային ձայնդ քաղցունի՛ բա՛ւ իսկ է ներշնչելու ինձ այնքան կորով, որով պիտի կարող լինիմ արհամարհել ամեն թշնամանք, ի բա՛ց վանել ամեն երկիւղ, ըմբերանել ամեն չար լեզու եւ բարձրանա՛լ և վերանա՛լ և հասնի՛լ վերջապէս հոն՝ ուր կատարեա՛լ է յաջողութիւն:

Օ՛ն ուրեմն, պարզէ՛ անարատ ճակատդ, հոն՝

զետեղեմ ամենէն սուրբ համբոյրս. հօր՝ մը համբոյրն. համբոյրն մի աւագ-եղբօր, համբոյրն դաստիարակիդ՝ որ յար խորախորհուրդ մտածումներով պաշարուած է՝ ի տես այդ բարձրադիր ճակատուդ, ուր Արարչին ամենիմաստ մատն՝ աշխարհի ներդաշնակութեամբ դրօշմած է հանճարոյ վըսեմ կնիքն և մեծութեան տեսական տիպն:

Թո՛ղ միշտ բարձր մնայ այդ ճակատ. թո՛ղ յաւէտ փայլի հոն հոգւոյդ՝ հուրն, սրտիդ՝ սէրն, մաքիդ՝ մտածումներն իտէական: Օրհնեա՛լ ըլլաս:

1 Յուլիս՝ 1892 Մելիսինէ
Ներսէսեան վարժարան



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՆՁԵՐԼԵԱՆ



Այն ինչ հզօր կամք է, որ զքեզ կ'վարէ Խան-չերլեան:

Կ'դորձե՛ս անդուլ կ'ընթանա՛ս յուշիկ, կ'յաջողի՛ս անշուկ: Ներկայն չ'ունի՛ արժէք քեզ համար. աշխարհի համար արհամարհանք միայն ունիս: Ապագայի՛ն համար կ'ապրիս դու, եւ՝ Աստուած կրօ՛ն և եթ կ'յանկուցանեն զքեզ:

Իրօք խորհրդաւոր էա՛կ Ռեա դու:

Նկուն մարմին, անշուք կերպարան, անփայլ աչեր. - ահա՛ քո արտաքինն. - և՝ ոչի՛նչ, ոչի՛նչ կըրնայ ոք յուսալ ի քէն:

Անո՛նք միայն, որ զքեզ լրջօրէն ուսումնասիրած են, անո՛նք սակայն գիտեն թէ՛ դործօ՛ն միտ, վա՛ռ սիրտ և ազնիւ հոգի մը կ'բնակի յաւէտ այդ նիւթին մէջ:

Եւ՝ ո՞չ ապաքէն հոգիդ՝ այդ կրօնասէր հոգիդ է՝ մեծագործութեան խանդով բոցավառ՝ որ նուիրական էակի մը փոխարկած է զքեզ:

Եւ մեք՝ խորապէս համոզուած եմք թէ՛ դու՝ քո ամեստ դրից մէջ կարող եղար մեծ դեր կատարել ի Մելիտինէ և թէ՛ Ս. Երրորդութեան հրաշակերտ տաճարն՝ Գե՛ղ, քե՛զ միայն կ'պարտի իւր ընդարձակութեան այն կարեւոր մասն, որ աչեր խողովակու

չափ գեղ եւ շնորհ կ'աւարդէ այսօր առաջի հանրութեան :

Երախտագիտութիւնն առ քեզ, խանչերլեան, երախտագիտութիւնն՝ ի դիմաց այն ամեն ազգայնոց, որք իսկապէս գիտեն ըմբռնել թէ՛ ո՛րքան սուղի նըստած է այս մեծ կաթուղիէն Մելիտինեցւոյն համար :

Դո՛ւ՛ ճշմարիտ քրիստոնեայ եւ ուղիղ հետեւող բանին Քրիստոսի, կ'անտեսես անձնասիրութեան եւ նախանձու մղած բուռն պայքարներն եւ Քրիստոս միակ հարստութիւնն կազմող մեծարժէք կալուածն եկեղեցւոյդ նուիրելու չափ բարձրանալով՝ խոնարհ սիրտերու և ջերմեռանդն հոգիներու մէջ ապրի՛ն եւեթ կ'համարիս մեծագոյն հաճոյք եւ միայնակ փառք :

Աւետի՛ս քեզ, այժմէ՛ն իսկ սկսած է անմահութիւնդ. այժմէ՛ն իսկ կ'ողողեն ճակատդ՝ աղքատաց օրհնութիւնքն՝ — մեծագոյն փառապսակն ամենայն առաքիներաց : —

Երանի՛ ապա, հաղար երանի՛ քեզ, խանչերլեան :

1892 Մելիթիմէ.



Յաւարտ երգերու շնորհակալութեամբ կը հրատարակենք անուններն այն ազնիւ Անձանց, որք իւրեանց առատասիրտ նուէրներով սատարեցին գործոյս տպագրութեան : Իւրեանց համակրալիւ զգայմանց համար յիշատակելի են մասնաւորապէս ի Տարենտէէ՛ հետագայ ազնիւ Բարեկամք.

Մեծապատիւ Տիարք

Յովհաննէս Ժ. Ք. Նահապետեան

Սենեքերիմ Ա. Չէպիշեան

Սամուէլ Գ. Ֆէրհատեան

Գէորգ Ն. Նահապետեան

Եսայի Յ. Հաղարապետեան

Յովհաննէս Մ. Փօլատեան

Խաչատուր Յ. Թաթարեան

Համբարձում Ս. Թաշեան

Սենեքերիմ Տ. Վարդանեան

Ստեփան Ն. Նահապետեան

Եւ Կիւրինէն Մեծ. Ահարօն էֆ, Աբտալեան

Կը յիշեթամք նաեւ մեր Պատ. Բաթանորդաց անուանքն հրատարակել աստ.

Մելի՛Տիէ

	Օրինակ
Գեր. Մահալ եպիսկոպոս Սահակեան	4
Արժ. Կարապետ վարդապետ Ռչտունի	2
Արժ. Գրիգոր քահանայ	1
» Սարգիս քահանայ	1
» Փիլիպպոս քահանայ	1
» Յակոբ քահանայ	1
» Վահրամ քահանայ	1
Մեծ. Տիարք.	
Յովհաննէս Սարաֆեան	5

ՄԵԼԻՏԻՆԷ	Օրինակ
Սարգիս Տ. Դաւթեան	3
Դէորդ Պըլըգեան	5
Ստեփան Պէննէյեան	2
Պետրոս Որբերեան	1
Մահտեսի Մարտիրոս Զիւլալեան	1
Մահտեսի Յակոբ Քէփէնէկեան	1
Յարութիւն Ոսկերչեան	1
Հոգաբարձութիւն վարժարանաց	
Արամ Թ. Ոսկերչեան	1
Կարապետ Ճիզմէճեան	1
Յակոբ Գ. Թիֆթիքճեան	1
Դրիգոր Եղըճեան	1
Պատ. Ուսուցիչք Տիարք	
Դրիգոր Պ. Ասլանեան	1
Դրիգոր Թաչճեան	1
Համբարձում Պէննէյեան	1
Դրիգոր Տ. Դրիգորեան	1
Դրիգոր Արիաճեան	1
Դրիգոր Գալայճեան	1
Յարութիւն Ճըլճըլեան	1
Յակոբ Թաչճեան	1
Սերոբ Սաչաղլեան	1
Դրիգոր Ժամկոչեան	1
Յակոբ Սիսեան	1
Երուսաղէմ Տէտէյեան	1
Ազնիւ ուսանող Պարոնայք Ներսէսեան վարժա- րանի ի Զուքուր Տէրէ	
Եզեկիէլ Կուտիկեան	1
Սեդրակ Մոմճեան	1
Յովհաննէս Շաթաֆեան	1
Դրիգոր Ներսէսեան	1

ՄԵԼԻՏԻՆԷ	Օրինակ
Կարապետ Տամարաճեան	1
Սահակ Կէզիւրեան	1
Մարտիրոս Սաչաղլեան	1
Յովհաննէս Լիւլէճեան	1
Յարութիւն Թիթեռնիկեան	1
Նազարէթ Նազարէթեան	1
Յակոբ Կ. Ասլանեան	1
Քերոբէ Մոմճեան	1
Ճիւմալի Լարոզատէ	1
Մանուկ Խանցեան	1
Կարապետ Մոմճեան	1
Մինաս Թանտըրճեան	1
Նշան Պաճաղսրղեան	1
Կարապետ Տամարաճեան	1
Յարութիւն Սաչաղլեան	1
Ահարօն Սաչաղլեան	1
Աւետիս Աւետեան	1
Սարգիս Օճաղլեան	1
Պաղտասար Աղազարեան	1
Կարապետ Առաքելեան	1
Ազնիւ Երուսաղէմ	
Ազն. օրիորդ Իսկուհի Ահարոնեան	1
» Եսթեր Գարօղլանեան	1
» Ընթառամ Զիլինկիրեան	1
Ազն. տիկին Մարիամ Սիսիեան	1
» Զանազան Թէվէքելեան	1
Մեծ. Տիարք	
Տօթթօր Լեւոն Գալֆայեան	1
Յակոբ Գարրիէլեան	1
Սեդրակ Հաճընեան	2
Մկրտիչ Ոսկերչեան	1

ՄԵԼԻՏԻՆԷ	Օրինակ
Տօնապետ Գարողլանեան	1
Յակոբ Յովնանեան	1
Գրիգոր Ճիւղէլկեան	1
Առաքել Ֆ. Պապայեան	1
Յարութիւն Եազմաճըպաշեան	1
Կարապետ Թիւթիւնճեան	1
Կարապետ Սաչաքլեան	1
Յակոբ Կ. Ասլանեան	1
Յակոբ Բէրխանեան	1
Յովակիմ Քէսմէճեան	1
Սարգիս Կ. Կէօղլըբեան	1
Յակոբ Ս. Թիֆթիկճեան	1
Մարտիրոս Սաչակեան	1
Կարապետ Տօնապետեան	1
Մահտեսի Յարութիւն Թաճեան	1
Ստեփան Յ. Թաճեան	1
Նազարէթ Գարողլանեան	1
Ղազար Գարողլանեան	1
Սարգիս Պաղտասարեան	1
Մանուկ Պըռնազեան	1
Յակոբ Մ. Շէհրիկեան	1
Սենեքերիմ Թէրզի Եաղուպեան	1
Գրիգոր Ժամադորճեան	1
Յովհաննէս Քիւնտիպէկեան	1
Իսկէնաէր »	1
Սիմօն Ուլու Հօճայեան	1
Գէորգ Գ. Վէրէկեան	1
Միքայէլ Թէրխանեան	1
Մահտեսի Սարգիս Քէնտէրեան	1
Գէորգ Ս. Քէլլէեան	1
Յովհաննէս Խանչէրլեան	1

ՄԵԼԻՏԻՆԷ	Օրինակ
Գասպար Ագըլեան	1
Անտօն Անտօնեան	1
Յովհաննէս Սաչաքլեան	1
Աստուածատուր Բումեան	1
Մահտեսի Կարապետ Քէշիշեան	1
ԽԱՐԲԵՐԴ	
Պատ. Տիարք Ոսուցիչք	
Յովհաննէս Յարութիւնեան	1
Կարապետ Սողիկեան	1
Սողոմոն Աւետիսեան	1
Խաչատուր Պէնէյեան	1
Կարապետ Գալուստեան	1
Ազնիւ Ուսանող Տիարք Եփրատ Գողէճի	
Մկրտիչ Որբերեան	1
Ռուբէն Որբերեան	1
ակոր Նալբանդեան	1
Գրիգոր Ստեփանեան	1
Մարտիրոս Ճօղալեան	10
Արփեան Վարդանեան	1
Միսիթար Էրէցեան	1
Հայկակ Նազարեան	1
Ռուբէն Զարդտրեան	1
Աբրահամ Էօքսիւղեան	1
Սարգիս Մալէճմէզեան	1
Յարութիւն Շուշանեան	1
Տիգրան Զարիֆեան	1
Յարութիւն Վարդիկեան	1
Միքայէլ Գ. Քէշիշեան	1
Յ. Յ. Գալուստեան	1
Յակոբ Ասլանեան	1
Ա. Կ. Ն.	
Յակոբ Շահինեան	1

ԵԻԴՈԿԻԱ

Օրինակ

Մեծ . Տիարք	
Աւետիս Նազըշէան	2
Սամուէլ Ֆէրհատեան	2
Եւ շնորհիւ սոցա	
Յարգիւ Տէրտէրեան	1
Մ . Գրիգոր Գազէզեան	1
Հրանտ Պապիկեան	1
Յովհաննիկ Գանթարեան	1
Միհրան Թէմիւրեան	1
Կարապետ Գազլեան	1
Յովհաննէս Ֆէրհատեան	1
Նազարէթ Գայեան	1

ՍՍՄՍՕՆ

Տիար Աւետիս Կ . Կիւլպինկեան	10
Կիիթիւն	

Մեծ . Տիարք

Սիմոն Կէրկէրեան	1
Թադէոս Գասպարեան	1
Մ . Մկրտիչ Վ . Թօփալեան	1

ՏՍՐԱՆՏԷ

Մեծ . Տիարք

Յովսէփ Չէպիշեան	1
Խաչատուր Պապայեան	1
Կարապետ Թաշեան	1

ԿԵՍԱՐԻԱ

Մեծ . Տիարք

Միհրան Կիւտէնեան	1
Միհրան Հէքիմեան	1
Բ . Տ . Մկրտիչեան	1

ԱՏԱՆԱ

Տիար Գասպար Գաբրիէլեան	
------------------------	--

ԹՕՍԻԱ

Օրինակ

Տիար Թորոս Թաթարեան	1
ԱՄԵՐԻԿԱ (ՈՒԼԻԴԻ)	
Մեծ . Տիար Յ . Գաբրիէլեանէ	
Աւետիս Գաբրիէլեան (ի Քէմբրիջ)	1
Պետրոս Աւաքեղեան (ի Պօսթըն)	1
Ի Պ . Յակոբ Թիֆթիկճեանէ	
Յարութիւն Փափազեան (ի Լին)	1
Յովհաննէս Աճէմեան (ի Նիու Եօրք)	1
Նազարէթ Տօնապետեան (ի Լին)	1
Գիւտակ Դիմաքսեան (ի Սիւ)	1


ԷԼՊԻՍՏԱՆ

Մեծ . Տիարք

Գրիգոր Քէշիշեան	1
Մանուկ Գօճապաշեան	1
Մանուկ Պապալանեան	1
Յարութիւն Ժամկոչեան	1
Յովակիմ Նըրանեան	1
Մանուկ Շէշրիկեան	1
Գրիգոր Փասնաւուրեան	1
Տօքթօր Յովհաննէս Մակարեան	1
Միքայէլ Տէկիրմէնճեան	1
Ներսէս	1
Մինաս Չըպըքճեան	1
Յովհաննէս Քիշիշեան	1
Համբարձում Էրէցեան	1
Սարգիս Ահարօնեան	1
Յովհան Մեծատուրեան	1
Վարդապետ Գուլումճըպաշեան	1
Սարգիս Ժողովարեան	1
Սարգիս Կաթակեան	1
Իմաստուն Պապալանեան	1

Վ Բ Ի Պ Ա Կ Ք

Երես	Տող	Վերնագիր	Ուղիղ
39	16	Հոգիս	յոգիս
41	4	Հեծեծ	Հեծես
55	8	չեւ	չեւ
56	3	քաղցր է	քաղցր է
57	9	իւրեանց թեւ	յիւրեանց թեւ
60	4	վերայ	վրայ
,	24	բրարին	բրարին
62	9	վրսեմ	այն վրսեմ
64	3	որ	ուր
,	8	ջինջ	չինչ
,	24	ի գերեւ	իմ գերեւ
65	20	Ձայն	յայն
72	40	աշխարհս	յաշխարհս
73	7	վայելու թիւն	վայելու թիւն
77	49	ի սիրտս	սիրտս
78	45	ողին	ողիք
,	48	զարդարեր	զարդարեր
79	2	ի գաշտըս	գաշտըս
,	42	անցեն	անցցեն
85	6	արտասուս	յարտասուս
89	6	Այդ	Անդ
97	3	միշտ	մինչ
104	42	կրկին	երկին
116	40	գողցուէր	գողցուէր
144	23	օծէիր	օծեցիր
146	4	չուառիթ	չուառիդ
152	4	նամակներ	նամակներ
170	4	այնպիսի	այնպիսի
182	6	յորում	քան յորում
185	24	կարծիքը	կուրծքը
186	2	ա՛լ չես զգար	ա՛լ չըկաս...
,	26	առաջ	վերջը
187	28	քո եւ	եւ քո



19692

2013

